

ԱՐԵՒՄՏԱՎԱՅՈՑ ՀԱՐՁԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Գ Ի Տ Ա Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ

Մատենաշար 2

ՄԵԼԻՆԵ ՄԱԼԻՄՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ
1919-1921 ԹԹ.
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ
ՀԱՏ ՕՍՄԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ

9(47.925)
ch = 64

ԱՐԵՎԱՏԱՎՈՅ ՀԱՐՁԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԳԻՏԱԿԵՏԱՑՈՏԱԿԱՆ ՀԻՈՒԽԸՆԻ

ՄԵԼԻՔՆ ԱՆՈՒԽՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ

ԵՐԻՏՅՈՒՐՔԵՐԻ

1919-1921 թթ. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ԸՆՏԱՆԵՑԱՆ ՄԱՄՈՒՆՔ

Մատենագիր

2



2011

Հրատարակվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ՝

պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Սաֆրաստյան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի

Թուրքիայի քանի ավագ գիտաշխատող Անուշ Հովհաննիսյան

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ. Արսեն Ավագյան

Հրատարակության խմբագիր և

առաջարանի հեղինակ՝ բ.գ.թ. Հայկագուն Ալվորյան

Անումյան Մելինե

Ա. 640 Երիտրոբերի 1919-1921թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան
մամուլի/Մելինե Անումյան; Պատ. խմբ.՝ Ա. Ավագյան; Հրատ. խմբ. և առաջարանի
հեղ.՝ Հ. Ալվորյան; Արևմտահայոց հարցերի ուսումափր. Կենտրոն.- Եր.: Էնիք
Պրինտ, 2011, 290 էջ:

Մենագրության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են
դրվում 1912-1921 թթ. Ստամբուլում տպագրված օսմանյան «Ալեմդար» օրաթերթում
հրատարակված Յողագուտի, Տրապիզոնի, Խարբերդի (Մամուրեթ-ով Ազիզ) և Բյույնք
Դերեի (Բողազիչի) դատավարությունների նիստերը ներկայացնող հրապարակումները
ի հայերեն թարգմանությունները: Ժողովածուում չեն ընդգրկվել վերոնշյալ դա-
տաքանությունների դատավիճումները, քանի որ դրանք արդեն իսկ հայերեն թարգման-
վել ու հրատարակվել են: Առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում
նաև օսմաններին թարգմանված՝ Տրապիզոնի դատավարության մեղադրական եղ-
րակացությունը, որը հրատարակվել է «Ալեմդար» 1919 թ. ապրիլի 16-ի համարում:

ISBN 978-9939-52-348-4

ԱՌԱՋԱԲԱՆ

1919 թ. ապրիլի 28-ից հունիսի 26-ը Թուրքիայում տեղի ու-
նեցավ մի անսախաղեա դատավարություն. սուլթան Մեհմեդ 6-րդ
Վահիդեղինի հատուկ հրամանագրով կյանքի կոչված Պոլսի ուագ-
մական արտակարգ ատյանը քննում էր Հայոց ցեղասպանության
կազմակերպիչների ու իրականացնողների՝ երիտրութերի պա-
րագումների, կառավարության անդամների, կուսակցական, պե-
տական ու գինվորական բարձրաստիճան այլ պաշտոնյաների գոր-
ծը: Այդ դատավարության նպատակը հստակ ձևակերպված է մեծ
վեգիր Դամադ փաշայի հայտարարության մեջ. «Ես իմ առջև
նպատակ եմ դնում, փաստերը ձեռքիս, ցույց տալ ամբողջ աշ-
խարին, թե ու մ վրա է ընկնում իսկական պատասխանատվությու-
նը այդ սարսափելի հանցագործությունների համար»¹:

Անկախ դատավարական գործընթացի կազմակերպման
պատճառներից՝ փաստ է, որ դատարանը ապացուցեց «այդ սար-
սափելի հանցագործությունների» իրողությունը և ի լուր աշխարհի
հրապարակեց դրանց հեղինակների անունները, որոնց մի մասին
դատապարտեց մահվան, մյուսներին՝ երկարատև բանտարկության
ու տաժանակիր աշխատանքների: Դատավարության արձանագ-
րություններն ու որոշումները 1919-1920 թթ. հրապարակվել են
թուրքական «Takvim-i Vekayi» պաշտոնաթերթի հավելվածներում
«Նորին մեծություն փաղիշահի 1335 թ. (1919) մարտի 8-ի կայսե-
րական հրամանով կազմված ուազմական արտակարգ ատյանի
դատավարության արձանագրությունը» խորագրով:

Այս դատավարության իրավական, քաղաքական և պատ-
մական արժեքն այն է, որ Օսմանյան Կայսրության օրինական կա-
ռավարությունն աներկրայորեն ընդունում և դատապարտում է ե-

թիտթուրքերի կառավարության կողմից հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության ծրագրված ու կազմակերպված ընույթը: Իսկ այս, որ դա պետականորեն էր ծրագրված ու գործադրված, հաստատում է անձամբ Թալեաթը. դեռևս 1910 թ. Միություն և առաջադիմություն կուսակցության՝ Սալոնիկի կոմիտեի գաղտնի նիստում նա հստակ շարադրում է հայերի (նաև՝ կայսրության քրիստոնյա այլ ժողովուրդերի) ցեղասպանության ծրագիրը. «Դուք գիտեք, որ սահմանադրությամբ մահմեղականների և քրիստոնյաների հավասարություն է հաստատվել, բայց դուք բոլորդ միասին և ամեն մեկդ առանձին գիտեք և գտում եք նաև, որ դա անիրականանալի գաղափար է: Շարիաթը, մեր անցյալի ամբողջ պատմությունը, հարյուրհազարավոր մահմեղականների զգացմունքները և նույնիսկ իրենց՝ քրիստոնյաների զգացումը, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանականացման ամեն մի փորձի դեմ, անհաղթահարեցի պատնեշ են իսկական հավասարության համար: Ուստի հավասարության մասին խոսք անգամ չի կարող լինել մինչև այն ժամանակ, քանի դեռ մենք հաջողությամբ չենք պասկել կայսրության օսմանականացման մեր նպատակը»²:

Առողջ տրամարանությունը հուշում է, որ դատավարությանը պետք է հետևեր հաջորդ քայլը՝ հատուցումը, ինչն, ըստ էության, մոտ էր իրականություն դառնալուն. նոյն կառավարության կողմից 1920 թ. օգոստոսին ստորագրվեց Սկրի պայմանագիրը: Այս երկու կարևոր քայլերով թորդական իշխանությունները մասսամբ լուծում էին իրեշավոր հանցագործության դիմաց հայ ժողովրդին բարոյական և նյութական հատուցում տալու խնդիրը, ինչը կարող էր երկու ժողովուրդների և պետությունների միջև որակական նոր հարաբերությունների հիմք դառնալ:

Սակայն չպետք է մոռանալ, որ Առաջին աշխարհամարտուապարտված Օսմանյան Կայսրությունն այս քայլերն անում էր պար-

տաղրված: Շուտով քաղաքական հանգամանքները փոխվեցին հօգուտ կայսրության: Իսկ երբ օրինական կառավարության կողմից պետական հանցագործ հայտարարված ու հետախուզման մեջ գտնվող Քեմալը զավթեց իշխանությունը, հազիկ Նշմարելի առողջ տրամարանությանը փոխարինեց Օսմանյան Կայսրության բոլոր ժամանակների իշխանությունների դասական տրամարանությունը, որը, որպես պետական քաղաքականության ծրագրային դրույթ, դեռևս 1879 թ. հրապարակել էր մեծ վեճիր Քյամիլ փաշան. «Հայ ազգը վերացնելու, անհետ ու անօդիտ ընելու ենք: Եւ այս ի գովս հանելու համար բան չի պակսիլ մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրու, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ, կրոնական պատերազմ մը կը հրապարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք զենք էլ ունինք, զինվորություն էլ, աշխարհիս ամենմեծ տերություններն մեկը (իմա՝ Սևգիհան) և ամենեն հարուստը մեր զինակիցն է և մեր Ասիական աշխարհին երաշխավոր: Եւ եթե այդ հայ ազգը բնաջիջ լինի, և քրիստոնյա Եւրոպա կրոնակից մը փնտրե և չի գտնե տաճկական Ասիո մեջ, կը թողու զենք հանգիստ և այն ատեն կը զբաղինք ներքին գործերով և բարեկարգությամբ»³:

Իշխանության եկած Սուստաֆա Քեմալը հսկայական կայսրությունից ժառանգություն մնացած Թուրքիայի Հանրապետության հետագա մասնատումը կանխելու համար փաստորեն զնաց նախանշված ծանապարհով: Քեմալի կողմից երիտթուրքերի դատապարտում ակնկալող անգիտացի գործակալ Ֆրյուն Նրա հետ հանդիպման ժամանակ ներկայացնում է անգիտական կողմի տեսակետը. «Նախ և առաջ պարտավոր եք ընդունել Իթթիհաթ վե թերաքրի ոճրագործությունները»: Քեմալը ոչ միայն մերժում է այս առաջարկը, այլև բացահայտ հայտարարում երիտթուրքերի քաղաքա-

կանությունը շարունակելու իր մտադրության մասին. «Ես Միություն և առաջադիմություն կուտակցության ներկայացուցիչը չեմ... Սակայն Ձեր թույլտվությամբ պետք է ասեմ, որ Միություն և առաջադիմությունը հայրենասեր կազմակերպություն էր»⁴:

Նա լավ էր յուրացրել իր նախորդների, հատկապես վերոնշյալ մեծ վեգիր Քյամիլ փաշայի այն միտքը, թե «...աշխարհիս ամենամեծ տերություններն են մեկը (Անգլիան) և ամենեն հարուստը մեր գինակիցն է»:

Հետագա ողբերգական իրադարձությունները հաստատեցին Մուստաֆա Քեմալի ինքնակստահության արդարացվածությունը. 1920-23 թթ. նա ավարտին հասցրեց երիտրութերի կիսատ թողած գործը՝ ոչնչացնելով զանգվածային կոտորածներից մի կերպ փրկված հարյուրհազարավոր հայերի:

Սակայն հայերի ցեղասպանությունը չսահմանափակվեց 1915-23 թթ. զանգվածային տեղահանություններով ու կոտորածներով. այն շարունակվում է առ այսօր, քանի որ թուրքական սահմանադրությամբ Թուրքիայի բոլոր քաղաքացիները համարվում են թուրք: Եւ հայության այն բեկորները, որոնք այս կամ այն կերպ փրկվեցին ֆիզիկական մահից, բոլի կերպով իսլամացվեցին թրքացվեցին: Նույն ծակատագիրն ունեն տասնյակ միլիոնավոր քրդերը, ալիները, ասորիները, հույները, լազերը և այլք: Այս իրողությունը չեն թաքցնում անգամ Թուրքիայի բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ. պաշտպանության նախարար Գյունյուզը 2008 թ. նոյեմբերի 10-ին Բրյուսելում Արաթուրքի հիշատակի ոգեկոչմանը նվիրված արարողության ժամանակ ասաց. «Եթե այսօր Էգեյան շրջանում հույները և Թուրքիայի բազմաթիվ վայրերում հայերը շարունակին ապրել, արդյոք Թուրքիան կկարողանար նույն ազգային պետությունը լինել»⁵:

Թուրքական իշխանություններն ու պաշտոնական պատ-

մագրությունը նույնպես, ըստ Էության, չեն հերքում հայերի զանգվածային տեղահանության փաստը, նաև ընդունում են, որ այդ ընթացքում կոտորածներ ու սպանություններ են եղել (թեն խիստ նվազեցնելով տվյալները), որոնք որակում են որպես «ցավայի դեպքեր»: Նաև իրողություն է, որ հայերի տեղահանությունը, որպես արդարացում, բացատրում են պատերազմական վիճակի թելադրած անհրաժեշտությամբ, այսինքն՝ հայերի իր ապստամբական տրամադրություններով և թշնամուն (ուստական բանակին) աջակցելու պատճառաբանությամբ: Սակայն, անկախ պատճառաբանություններից, սրանով իսկ ընդունում են, որ այն ծրագրվել ու գործադրվել էր պետության կողմից:

Այսօր, երբ բազմաթիվ պետությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվում և դատապարտվում է Օսմանյան Կայսրությունում հայերի նկատմար գործադրված ցեղասպանության փաստը, Թուրքիայի կառավարությունը, թուրքական քաղաքական շրջանակներն ու պաշտոնական պատմագիտությունը ամեն կերպ փորձում են հարցը նենգափոխել՝ անգամ հաճախ հայերին վերագրելով կայսրության մահմեդական (նույն է թե՝ թուրք) բնակչության նկատմամբ ցեղասպանական գործողություններ:

Նույնիսկ հայերի նկատմամբ գործադրված ցեղասպանության հեղինակների ու առաջնորդների վկայությունները, որոնք անհերքելի վավերական ապացույցներ են, Թուրքիայի կառավարության ու նշված շրջանակների կողմից չեն ընդունվում ու ծանաչվում: Այս առումով հատկանշական է Թալեաթի օրագիրը, որը Մուրադ Բարդարչը աշխատասիրությամբ 2009 թ. հրատարակվեց Թուրքիայում: Այդ օրագրում տեղահանված հայերի թիվը անգամ թալեաթի վկայությամբ առնվազն երկու անգամ գերազանցում է այսօր թուրքական պաշտոնական շրջանակների կողմից ընդունված թիվը:

Աքսորված հայերի թիվը⁶

Վիլայեթներ և սանջակներ անվանումները	Տեղափոխված բնակչությունը
Սևկարայի վիլայեթ	47.224
Էրզրումի վիլայեթ	128.657
Աղանայի վիլայեթ	46.031
Բիրջիսի վիլայեթ	109.521
Հայեպի վիլայեթ	34.451
Հյուդավենդիգար	66.413
Դիարքեթիրի վիլայեթ	61.002
Սվասի վիլայեթ	141.592
Տրապիզոնի վիլայեթ	34.500
Մամութեթ-ուլ Ազիզի վիլայեթ	74.206
Իզմիրի սանջակ	54.370
Ջանիկի սանջակ	26.374
Քարեսիի սանջակ	8.290
Քարահիսարի սանջակ	7.327
Կայսերիի սանջակ	47.647
Մարաշի սանջակ	27.101
Նիղեթի սանջակ	5.101
Քոնիայի վիլայեթ	4.381
Ըդհանուր	924.158

Այլ հարց է, թե Հայեպի, Մարաշի, Աղանայի, Սվասի, Սևկարայի կամ ոռու-թուրքական ծակատից շատ հեռու այլ վիլայեթների հայերի տեղահանությունը թուրքական պաշտոնական տեսակետն արտահայտողները ինչպես են բացատրում։ Սակայն խնդիրը բոլորվին էլ նրանց բացատրությունը կամ տեղահանվածների ու սպանվածների թիվը չէ, որը իրականում անհամեմատ մեծ է, այլ

երևոյթի բնույթը, որև ամբողջությամբ համապատասխանում է ցեղասպանություն հասկացության իրավական սահմանմանը։⁷

Քաջ գիտակցելով այս հանգամանքը՝ Թուրքիայի պաշտոնական շրջանակներն ամեն կերպ փորձում են ցեղասպանության հարցը իրավական հարթությունից տեղափոխել գիտական բանավեճերի ոլորտ։ Ուշագրավ է, որ այս խնդիրի իրականացման համար Թուրքիայի կառավարությունը վերջին տարիներին որդեգրել է մի նոր մարտավարություն, այն է՝ Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու պատրակի տակ Հայոց ցեղասպանության ուրացման իր քաղաքականությանը մասնակից դարձնել նաև Հայաստանի իշխանություններին։ Այդ են ապացուցում երկու պետությունների միջև ստորագրված արձանագրություններում առկա այսօրվա փաստացի սահմանի վավերացման և «երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական անկողմնակալ ուսումնասիրություն» իրականացնելու համար ենթահանձնաժողով ստեղծելու կետերը։

Այսօր, երբ նոր թափ է ստացել Հայոց ցեղասպանության բուն էությունը նենգափոխնելու, պատասխանատվությունից ու հատուցումից խուսափելու թուրքական քաղաքականությունը, դրա սեանկությունը փաստող պատմական վկայությունների, արխիվային ու այլ վավերագրերի իրապարակումը առավել մեծ կարևորությամբ է օժտվում։ Այս տեսակետից Մ. Անումյանի ներկայացվող աշխատությունը կարևոր ներդրում է հարցը իրավական դաշտում դիտարկելու և գնահատելու առումով։ Ի վերջո պատմական անհերթելի փաստ է, որ Օսմանյան Կայսրությունը առաջին պետությունն է, որի դատարանը (սուլթանի կողմից կյանքի կոչված Ռազմական արտակարգ ատյանը) Հայոց ցեղասպանությանը տվել է իրավա-

կան գնահատական և այս դատապարտել որպես ծրագրված ու կազմակերպված իրողություն:

Հաերապետական Թուրքիան, որպես Օսմանյան Կայսրության իրավահաջորդ, որքան էլ շասքեր գործադրի, չի կարողանալու խոսափել այս դատապարության արդյունքների ճանաչումից ու սահմանված պատասխանատվությունից, որը բնականորեն հանգեցնելու է իրավահաջորդի համար պարտադիր մեկ այլ պարտավորության՝ Անդրի պայմանագրի տակ դրված Օսմանյան Կայսրության օրինական կառավարության ստորագրության ճանաչմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Լոյդ Զորց, Խաղաղության պայմանագրերի մասին ճշմարտությունը.** Մոսկվա, 1957, ռուսերեն, հատ. 2-րդ, էջ 200:
2. Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտրութերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1989, էջ 9:
3. «Փորձ», ազգային և գրական միամսնայ հանդէս, թիվ 7-8, Տփոխ, 1879, էջ 204-205:
4. **Sina Akşin, İstanbul Hükümetleri ve Milli Mücadele, s. 192.**
5. <http://arsiv.ntvmsnbc.com/news/465353.asp> (26.03.2011).
6. **Murat Bardakçı, Talat Paşa'nın Evrak-ı Metrûkesi, Everest Yayınları, 2009, s. 77.**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին պատմագրության մեջ ավելի շատ է ուշադրություն դարձվում այն փաստի վրա, որ իթթիհադականների՝ հայերի բնաջնջմանն ուղղված քաղաքականությունը Օսմանյան Կայսրության կողմից պաշտոնապես դատապարտվել է 1919-1921 թթ.՝ հազմական արտակարգ ատյաններում կայացած 60-ից ավելի դատավարությունների արդյունքում ընդունված դատավճիռների միջոցով: Այդ բոլոր դատական գործերը հարուցվել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան Կայսրությունում հայերի տեղահանության և կոտորածների (tehcir ve taktil) մեղադրանքով: Երիտրութերի կոսակցության և կառավարության անդամների՝ 1919 թ. ապրիլ-հուլիս ամիսներին տեղի ունեցած դատաքննությունների համար հիմք են ծառայել ոչ միայն հայերի տեղահանման և ոչնչացման ու Հայոց ցեղասպանության իրականացման մեջ կարևոր դերակատարում ունեցած Հատուկ կազմակերպությունը (Teşkilât-ı Mahsusâ) հիմնելու, այլ նաև՝ առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, տնտեսական չարաշահումներ թույլ տալու, սև շուկայում գործունեություն ծավալելու և երկրի անվտանգությունը խախտելու մեղադրանքները:

Սույն դատավարությունների կայացման փաստն ինքնին արժեքավոր է, քանզի, ինչպես նշում է Ն.Հ. Հովհաննիսյանը՝ Երիտրութերի դատավարության փաստաթղթերի մեծ մասն առաջին անգամ հայերենով հրատարակած օսմանագետ Ա.Հ. Փափազյանի «Հայերի ցեղասպանութիւնը ըստ Երիտրութերի դատավարութեան փաստաթղթերի» արժեքավոր գրքի առաջարանում, իենց այս դատաքննությունների արդյունքում ընդունված դատավճիռների միջոցով

Թուրքիան, ի դեմս սովթանական կառավարության, արդեն իսկ պաշտոնացին ճանաչել է Հայոց ցեղասպանությունը¹:

Դրա հետ մեկտեղ այս դատավարությունները կարևորվում են նաև հետևյալ առումով. ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության վերաբերյալ երիտրուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստերում կայացրած որոշումների մասին փաստաթղթերը ոչնչացվել են դեռևս ցեղասպանության ընթացքում, ինչպես նաև՝ հետագայում: Այսպես՝ 1918 թ. նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը Թալեաթի հետ Օսմանյան կայսրությունից ծողովրած Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և դիվանապահ դոկտոր Նազըմն իր հետ է տարել կոմիտեի հիմնական փաստաթղթերը: Այդ իրողությունը երիտրուրքերի կուսակցության անդամների դատավարության տարբեր նիստերում հաստատել են մեղադրյալներ Միհիաթ Շյուբրյու (Բլետան), Զիա Գյոքալփը և Ջյուչյութ Թալեաթը: Միևնույն ժամանակահատվածում՝ 1918 թ. հոկտեմբերին, նորընտիր վարչապետ Ահմեդ Իզզեթ փաշայի հրամանով ոչնչացվել է Հայոց ցեղասպանության իրականացման գործում մեծ դեր խաղացած Հատուկ կազմակերպության արխիվը²:

Հայերի բնաջնջման մասին գրավոր հրահանգներում հրամայվում էր դրանք ընթերցելուց հետո այրել կամ այլ ճանապարհով վերացնել: Նման փաստաթղթերի ոչնչացման փաստը հաստատող ցուցմունքներ են գրանցվել Օսմանյան Կայսրության տարբեր շրջանների հայերի տեղահանության և կոտորածների դատական նիստերում:

Անհետացած փաստաթղթերի մեկ այլ խումբ են կազմում Օս-

մանյան Կայսրության Ներքին գործերի նախարարությանը պատկանող որոշ վավերագրեր: Օրինակ՝ ասպարեզում չկան 1915 թ. հունիսի 10-ի հրահանգով հիմնված Լքված գույքի հանձնաժողովի գրանցամատյանները:

Ինչպես «Մի կողմ թող Դաշնակցության արխիվը, տե՛ս օսմանյանը» հոդվածում նշում է թուրք լրագրող և պատմաբան Այշե Հյուրը, նման փաստաթղթեր են վերացրել ոչ միայն տեղացի, այլ նաև՝ արտասահմանցի գործիչները: Այսպես՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում օսմանյան Գյևսպոր շտարի պետի պաշտոնում եղած գերմանացի Հանս ֆոն Սեբատը Գերմանիա վերադառնալիս իր հետ է տարել Գյևսպոր շտարին վերաբերող մեծ թվով փաստաթղթերը³:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան Կայսրության արտաքին գործերի և արդարադատության նախարարների պաշտոնները զբաղեցրած Հայիլ Մենթեշեի հուշերի համաձայն՝ Հայոց ցեղասպանության համակարգող ներքին գործերի նախարար Թալեաթը, որը նախկինում հեռագրատանն էր աշխատել, հատուկ հեռագրական գիծ էր անցկացրել դեպի իր տուն և հայերի ոչնչացմանը վերաբերող նամակագրությունը կատարել հենց այստեղից⁴:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի ոչնչացումը շարունակվել է նաև հանրապետական շրջանում, երբ կառավարության հրահանգով օսմանյան արխիվներից վերացվում կամ գաղտնի են պահպում կարևոր վավերագրեր:

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Թուրքիայի այն արխիվները, որոնցում որոշ չափով պահպանվել են տվյալ ժա-

¹ Ա.Ք. Փափազեան, Հայերի ցեղասպանությանը ըստ երիտրուրքերի դատավարութեան փաստաթղթերի, Լու Անձելս, 2005, էջ 2-3:

² Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İstanbul, 2002, s. 391.

³ Ayşe Hür, Taşnak arşivini bırak, Osmanlı arşivine bak, "Tarafl" Gazetesi, 25.05.2008.

⁴ Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, Yay. Haz. İsmail Arar, Hürriyet Vakfı Yayıncılık, İstanbul, 1986, s. 216.

մանակաշրջանին վերաբերող փաստաթղթեր, գրեթե միշտ անհասանելի են եղել արտասահմանցի և հատկապես հայ ուսումնասիրողների համար⁵, ապա ակնհայտ կդառնա նման վավերագրերի հասու լինելու առանձնահատուկ նշանակությունը, քանի որ Հայոց ցեղասպանության փաստագրման առումով կարևորվում են հատկապես օսմանյան փաստաթղթերը:

Նկատի ունենալով այս պարագան՝ Հայոց ցեղասպանության փաստի հաստատման առումով անզմահատելի են դադում 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի նիստերում, հատկապես՝ 1919 թ. երիտրութերի կուսակցության և կառավարության անդամների դատավարության ժամանակ ներկայացված մեղադրական եզրակացությունները, դատաքննության ընթացքում ունկնդրության արժանացած վկաների, ինչպես նաև՝ ամբաստանյաների ցուցմունքները. ընթերցված ծածկագիր հեռագրերը և, հատկապես, դատավճիռներն ընդգրկող փաստաթղթերի դերը: Դատական վավերագրերի շարքում առաջնահատուկ հիշատակման է արժանի Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատաքննության առաջին նիստում (1919 թ. ապրիլ 28) ներկայացված ամբաստանագիրը, որը բաղկացած էր 41 պաշտոնական ու կիսապաշտոն բնագիր փաստաթղթերից, ինչպես նաև՝ 1919 թ. հունիսի 5-ին երիտրութերի կուսակցության և կառավարության անդամների վերաբերյալ կայացված ընդհանուր դատավճիռը, ըստ որի՝ մահվան են դատապարտվել Հայոց ցեղասպանության ուսումնասիրողների համար շատ կարևոր աղբյուր կարող են ծառայել Օսմանյան կառավարության արխիվում գտնվող Ներքին գործերի նախարարության ծածկագիր փաստաթղթերը, որոնք հիմնականում ենթե են կենտրոնից դեպի գավառներ հեղափակած կարծ հեռագրեր, սակայն այսու այլ փաստաթղթերի մեջ գրեթե չեն պահպանվել հայերի տարագրության վերաբերյալ նյութերը: Օսմանյան կառավարական արխիվից հատուկ ընտրվել ու հրապարակվել են միայն թուրքական պաշտոնական տեսակետին նպաստով վավերագրերը: Այս փաստաթղթերը, որոնց թիվը գերազանցում է 1500-ը, տեղադրվել են համացանցում, տես՝ <http://www.devletarsivleri.gov.tr>.

Դասպանության գլխավոր պատասխանատունները:
«Գլխավոր դատավարություններ» անվամբ հայտնի երիտրութերի կուսակցության և կառավարության անդամների դատաքննությունների արձանագրություններն արարատառ օսմաներենով առաջին անգամ հրատարակվել են 1919 թ. վերջերին Ստամբուլում՝ «Ռազմական արտակարգ ատյանի արձանագրության մատյաններ» վերնագրով («Divân-i Harb-i Örfî Zabit Cerideleri»):

Գլխավոր դատավարությունների արձանագրությունները 1919-1920 թթ. սահմանափակ տպարանակով, դարձյալ արարատառ օսմաներենով, տպագրվել են նաև Օսմանյան Կայսրության պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վեքայի» («Իրադարձությունների օրացույց») հավելվածներում: «Թաքվիմ-ի վեքային» հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով 1919-1921 թթ. կայացած 63 դատական գործերից հրապարակվել է միայն 38-ին վերաբերող որոշ փաստաթղթեր:

Օսմանյան Կայսրության տարբեր շրջաններում հայերի կոտորածները կազմակերպած նահանգապետերի, գավառապետերի և այլ կառավարիչների դատաքննությունների վերաբերյալ կարևոր աղբյուր կարող են ծառայել նաև 1918-1921 թթ. Ստամբուլում տպագրված ինչպես օսմաներեն, այնպես էլ՝ հայալեզու, ֆրանսալեզու, և հունալեզու պարբերականները: Ժամանակի մամուլում են տպագրվել նաև «Թաքվիմ-ի վեքայի»-ում տեղ չզտած որոշ դատավարությունների արձանագրություններ, մեղադրական ակտեր ու դատավճիռներ⁶:

⁵ Հայոց ցեղասպանության ուսումնասիրողների համար շատ կարևոր աղբյուր կարող են ծառայել Օսմանյան կառավարության արխիվում գտնվող Ներքին գործերի նախարարության ծածկագիր փաստաթղթերը, որոնք հիմնականում ենթե են կենտրոնից դեպի գավառներ հեղափակած կարծ հեռագրեր, սակայն այսու այլ փաստաթղթերի մեջ գրեթե չեն պահպանվել հայերի տարագրության վերաբերյալ նյութերը: Օսմանյան կառավարական արխիվից հատուկ ընտրվել ու հրապարակվել են միայն թուրքական պաշտոնական տեսակետին նպաստով վավերագրերը: Այս փաստաթղթերը, որոնց թիվը գերազանցում է 1500-ը, տեղադրվել են համացանցում, տես՝ <http://www.devletarsivleri.gov.tr>.

Թուրք ուսումնասիրողների շրջանում գլխավոր դատավարությունների որոշ հատվածների առաջին տառադարձումը՝ արաբատառ օսմաներենից լատինատառի, 1988 թ. կատարել է պատմաբան Օսման Սելիմ Քոչահանովուն, որի կազմած «Իթբիհադականների հարցաքննությունն ու դատավարությունը» վերնագրով փաստաթերերի ժողովածուում լատինատառ օսմաներենով ներկայացված են օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանճնախմբի կողմից իրականացված հարցաքննության արձանագրությունները և Երիտրուքական կուսակցության ու կառավարության անդամների դատաքննության միջանի նիստերը⁷:

«Թարվիմ-ի վերայի» պաշտոնաթերթում իրատարակված գլխավոր դատավարությունների բոլոր նիստերի արձանագրություններն առաջին անգամ Հայրեդին Այղընի կողմից տառադարձվել են 1991-1994 թթ. Համբուրգի Հասարակագիտական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացված մի նախագծի շրջանակներում: Հետագայում Անկարայում ու Ստամբուլում մասնագետներից կազմված երկու խմբեր վերանայել են այդ առաջին ամբողջական տառադարձումը, ուղել տառադարձման ժամանակ թույլ տրված սխալները, սակայն վերոնշյալ երկու ժողովածուներն էլ տպագրվել են սույն օսմանյան բառապաշտուով և չեն համարվել ժամանակակից թուրքերեն հոմանիշներով: Այդ բացը լրացրել են միջազգային ճանաչում ունեցող ցեղասպանագետ, պրոֆ. Վահագն Դադրյանը և Հայոց ցեղասպանության փաստն ընդունող թուրք պատմաբան, «Կլարկ» համալսարանի Ցեղասպանությունների հետազոտման

հնարավոր կլինի գտնել հայերի կոտորածների մասին վկայություններ տպագրած պարբերականների ամբողջական հավաքածուները, տե՛ս

<http://www.chgs.umn.edu/histories/turkishArmenian/atrpCommonKnowledge.pdf> (19.03.2011).

⁷ Osman Selim Kocahanoğlu, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), İstanbul, 1988.

կենտրոնի տնօրեն, պրոֆ. Թաներ Աքչամը⁸, որոնց համատեղ կազմած ու 2008 թ. Ստամբուլում իրատարակած «Տեղահանություն և կոտորածներ. Ռազմական արտակարգ ատյանի արձանագրությունները: Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարությունը 1919-1922 թթ.» վերնագրով ժողովածուում ոչ միայն ներկայացված է գլխավոր դատաքննությունների ամբողջական արձանագրությունների՝ արաբատառ օսմաներենից լատինատառ օսմաներենի տառադարձված տարբերակը, այլ նաև դրանց ընթերցումը դյուրացված է՝ կից տրված թուրքերեն հոմանիշների շնորհիկ⁹:

Երիտրուքերի դատավարությունների արձանագրությունների առանձին հատվածներ իրատարակվել են նաև ֆրանսերեն, ռուսերեն ու հայերեն լեզուներով: Ֆրանսիացի հետազոտող Ժան Մարի Գառգուն 1975 թ. իրատարակած «Օրինակելի ցեղասպանություն. Հայաստան, 1915» աշխատության մեջ օսմաներեն բնագրից ֆրանսերեն է թարգմանել Յոզդատի, Տրապիզոնի և Խարբերդի հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուններին վերաբերող դատավճիռները¹⁰:

Երիտրուքերի կուսակցության և կառավարության անդամների դատավարության ամբաստանագիրն առաջին անգամ օսմաներենից հայերեն է թարգմանել և 1921 թ. Բուստոնում տպագրված «Մեծ ոժիրը» գրքում իրատարակել Արամ Անտոնյանը¹¹:

Նոյն մեղադրական ակտի ֆրանսերենից ռուսերեն թարգման-

⁸ Վահագն Դադրյանն ու Թաներ Աքչամը Երիտրուքերի դատավարություններին են անդամագլուխ նաև մի շարք մեմագրություններում, տե՛ս օրինակ, Vahagn N. Dadrian, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosid, Belge Yayınları, 1995. Vahagn Dadrian, Histoire du Génocide Arménien, Stock, 1996. Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İstanbul, 2002. Dr. Taner Akçam, Ermeni Tabusu Aralarınca Diyalogtan Başka Çözüm Var mı?, İstanbul, 2002.

⁹ Vahagn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", Divan-ı Harbi Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, İstanbul, 2008.

¹⁰ Jean-Marie Garzou, Un Génocide Exemplaire: Arménie 1915, Paris, 1975.

¹¹ Արամ Ա. Անտոնյան, Սեծ ոժիրը, Պուրըն, 1921:

ված տարբերակը «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ժողովածուում ներկայացրել են Մ. Գ. Ներսիսյանը և Ռ. Գ. Սահակյանը, որտեղ որոշ կրծատումներով բերված են նաև Տրապիզոնի և Խարբերդի դատավճիռները¹²:

Հայոց ցեղասպանությունից վերապրած և հետազոտող Հայկազն Գ. Ղազարյանը «Ցեղասպան թուրքը» գրքում թարգմանել և հրապարակել է օսմանյան «Թերջյուման-ը հարիբաթ» («Ճշմարտության մեկնաբան») օրաթերթի՝ 1920 թ. օգոստոսի 5-ի համարում տեղ գտած՝ Բարերդի հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուների վերաբերյալ կայացված դատավճիռը¹³:

Յոզդատի տեղահանության ու կոտորածների դատավարության մի շարք նիստերի արձանագրություններն օսմաններնից արևմտահայերեն է թարգմանել ու հրատարակել հայր Գրիգոր (Գրիգոր Կերկերյան)՝ «Եօզդատի հայասպանութեան վաերագրական պատմութիւնը» արժեքավոր աշխատությունում¹⁴:

Սույն դատավարությունների վերաբերյալ 1919-1920 թթ. ստամբուլյան մամուլից քաղված առանձին նյութեր հայերեն է թարգմանել ու հրատարակել նաև Զ.Ս. Կիրակոսյանը¹⁵:

Երիտրութերի կուսակցության և կառավարության անդամների, շրջանային պատասխանատու քարտուղարների դատական նիստերի արձանագրությունների, ինչպես նաև՝ Յոզդատի, Տրապիզոնի, Խարբերդի (Մամութեր-ուլ Ազիզ) և Բյույուք Դերեի (Բողազիչի) դատավճիռների հայերեն թարգմանությունը բնագրից կատարել է պրոֆեսոր Ա.Հ. Փափազյանը, որի «Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտրութերի դատավարության փաստաթղթերի» ժողովածուն առա-

¹² Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ. Սահակյան, Հեղափառ Արմեն և Օսմանյան Իմպերիա, Երևան, 1982.

¹³ Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968:

¹⁴ Գրիգոր, Եօզդատի հայասպանութեան վաերագրական պատմութիւնը, Նիւ Եռք, 1980:

¹⁵ Զ.Ս. Կիրակոսյան, Երիտրութերը պատմության դատաստանի առաջ, հասոր Երկրորդ, Երևան, 1983:

ջին անգամ տպագրվել է 1989 թ. Երևանում, իսկ վերահրատարակվել՝ 2005-ին Լու Անջելեսում¹⁶:

Սույն դատաքննություններին անդրադարձել է նաև թուրքական պաշտոնական պատմագրություն՝ ի դեմս թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) անդամ Ֆերուդուն Աթայի, որն իր «Տեղահանության դատավարությունները գրավյալ Ստամբուլում» վերնագրով աշխատությունում¹⁷ փորձ է անում խեղարյութերի դատաքննություններին առնչվող բազմաթիվ փաստեր կամ այլ մեկնաբանություններ տալ դրանց: Քանի որ սույն դատավարությունների կայացման փաստը և փաստաթղթերն անհերքելիորեն ապացուցում են, որ հայերի զանգվածային կոտորածները եղել են կանխամտածված և ծրագրված երիտրութերի կուսակցության և կառավարության կողմից, Հայոց ցեղասպանության փաստը համառորեն ժխտող թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները հարկադրված եղան այնուամենայնիվ անդրադառնալ իրենց համար այդքան ատելի այս դատավարություններին:

Ֆերուդուն Աթայի վերոհիշյալ աշխատության վերնագիրն անգամ բավարար է՝ ցոյց տալու, թե ինչ նպատակ է հետապնդել թուրքական պատմագիտական ընկերությունը և գրքի հեղինակը՝ այս մենագրությունը իրատարակելով: Վերնագրում իսկ ընդգծվել է, թե սույն դատաքննություններն իրականացվել են Դաշնակից պետությունների, հատկապես՝ Մեծ Բրիտանիայի ձնշման ներքո, որոնց վերահսկողության տակ էր գտնվում Ստամբուլը տվյալ ժամանակահատվածում¹⁸: Այստեղ միտումնավոր կերպով աշքաթող է արվում այն փաս-

¹⁶ Ա.Հ. Փափազյան, Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտրութերի դատավարության փաստաթերթի, Երևան, 1989, նույնը տեսն նաև՝ Լու Անջելես, 2005:

¹⁷ Ferudun Ata, İsgal İstanbulu'nda Tehcir Yargılamları, Ankara, 2005.

¹⁸ Թուրք գիտնականների մեջ այս փաստական առաջին անգամ շահարկել է Թարքը Զաքիր Թունայան, որին կրկնել են Ֆերուդուն Աթայ և Յոզդատի դատավարությանն անդրադաս Նեժեթ Բիլզին, տես՝ Tarik Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler, Cilt 3, Խնամ և

տը, որ այս դատական գործերը հարուցվել են ոչ միայն հայերի տեղահանման, այլ նաև՝ կոտորածների (taktil) մեղադրանքով։ Բացի այդ՝ Ֆերութուն Արան այս դատաքննություններին է անդրադառնում միայն պաշտոնական պատմագրությանը ձեռնտու դիտանկյունից՝ աղջատելով բազմաթիվ փաստեր։ Օրինակ՝ նա պնդում է, թե իբր դատական նիստերում մեղադրյալների դեմ ուղղված ցուցմունքներով հանդես են եկել միայն ազգությամբ հայ վկաները¹⁹, որոնք ուղղորդվել են վրեժմնդրության զգացումով, այնինչ Օսմանյան Կայսրության տարբեր շրջանների հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունների նիստերում հանդես են եկել ոչ միայն հայ, այլև՝ բազմաթիվ թուրք և այլազգի, անգամ՝ մինչև նախարարի և նահանգապետի մակարդակով մի շարք թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ։ Թուրք և այլազգի վկաների առաւտությամբ հատկապես աչքի է ընկել Տրապիզոնի հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունը։

Հարկ է նշել, որ առաջին՝ Ցողղատի և Տրապիզոնի դատաքննությունները կարևորվում են նաև նրանով, որ դրանց ընթացքում առանձին շրջանների դատական գործերի մեջ ամենաշատ վկայություններն ու ապացույցներն են թերվել կառավարությունից հրահանգներ ստացած տեղական իշխանությունների կողմից հայերի տեղահանման և ոչնչացման համակարգման ու վերահսկման վերաբերյալ։

Մենագրության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ ենք դնում 1912-1921 թթ. Ստամբուլում տպագրված օսմանյան «Ալեմդար»²⁰ օրաթերթում հրատարակված Ցողղատի, Տրապի-

զնի, Խարբերդի (Մամուրեթ-ով Ազիզ) և Բյուզութ Դերեի (Բողաջիշի) դատավարությունների նիստերը ներկայացնող հրապարակումների՝ մեր կողմից օսմաններն բնագրից կատարված հայերեն թարգմանությունները։ Ժողովածուում չենք ընդգրկել վերոնշյալ դատաքննությունների դատավճիռները, քանի որ, ինչպես վերը նշեցինք, դրանք արդեն իսկ հայերեն թարգմանվել են ու հրատարակվել։ Նշենք նաև, որ վերոհիշյալ դատավարությունների նիստերը չեն արձանագրվել «Թաքվիմ-ի վեքայիի» կողմից։ պաշտոնաթերթում տպագրվել են միայն դրանց դատավճիռները, իսկ «Ալեմդար» բավականին մանրամասն ներկայացրել է դատական նիստերը։ Առաջին անգամ մեր կողմից գիտական շրջանառության մեջ է դրվում նաև օսմաններնից թարգմանված՝ Տրապիզոնի դատավարության մեղադրական եղրակացությունը, որը հրատարակվել է սույն պարբերականի 1919 թ. ապրիլի 16-ի համարում։

«Ալեմդար» օրաթերթի համարների պատճենները մեզ է տրամադրել Ա.Գ. Ավագյանը, որին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը։

պալատի բաները Խմբիսացած «Ալեմդար» օրաթերթի պատասխանառու խմբագիրն է եղել Ուժի Զնադ Ռումինայը, իսկ տնօրենը՝ Սիմեոն Փեթիկանը Քաղաքացի։ «Ալեմդար» հրատարակվել է նաև «Թաքվիմի զաքեր» («Օրացույց-օրաթերթ») և «Թեշրիհ» («Մեկնարանում») անվանությունում պատճենացնելու համար։ Այս պատճենները պահպանվում են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի գրադարանում։

Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000, տե՛ս նաև՝ Nejdet Bilgi, Ermeni Tehciri ve Boğazlıyan Kaymakam Mehmed Kemal Bey'in Yargılanması, Ankara, 1999.

¹⁹ Նախարար Ֆերութուն Արան նաև պնդամբ հանդես է եկել նաև թուրք հայտնի դիվանագետ ու պատմաբան Քիլալ Շիմշիրը։ Տե՛ս Bilâl Şimşir, Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985.

²⁰ 1912-1921 թթ. Ստամբուլում տպագրված և գինադրարի շրջանում սովորական

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՒԴՐՈՍԻ ԶԻՆՍՊԱԿԻ ԿՆՔՈՒՄԻՑ ՀԵՏԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԹԽ-
ԼՈՐՏԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՍՈՒԹՅԱՆ ՊԱՏԱ-
ԽԱՍՏՈՒԽԵՐԻ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՀԵՏԱԲՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱՊԱԿԻ ԿՆՔՈՒՄԻՑ (1918 թ. ՀՈԿՏԵ- ԲԵՐԻ 30) ՀԵՏԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԹԽՈԼՈՐՏԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան Կայս-
ության պարտությունից հետո երկրու տիրում էր ծանր ու լարված
մթնոլորտ: Երբ 1918 թ. սեպտեմբերի 15-ին Դաշնակից պետություն-
ների գորքերը՝ Մակեդոնիայում ճեղքելով ռազմաճակատի գիծը,
սկսել էին ուղղակիորեն սպառնալ Ստամբուլին, երկրի իթթիհայա-
կան ղեկավարները հաշտություն էին խնդրել, սակայն Դաշնակիցնե-
րը չէին ցանկացել բանակցությունների մեջ մտնել նրանց հետ²¹:
1918 թ. հոկտեմբերի 7-ին Թալիաթ փաշայի կառավարությունը հրա-
ժարական էր տվել, իսկ նոյեմբերի 1-ի լոյս 2-ի գիշերը երիտրութե-
կան 7 պարագլուխները, ի դեմս վարչապետ Թալիաթի, նախարար-
ներ Էնվերի, Զեմալի, Նազըմի, Հատուկ կազմակերպության
(Teşkilât-ı Mahsusâ) ղեկավարներից մեկի՝ Շաքիրի, ինչպես նաև՝ ոս-
տիկանապետեր Բեղրիի ու Ազմիի, գերմանական հածանավով ծո-
ղովրել էին Օդեսա, այնտեղից էլ՝ Գերմանիա:²² 1918 թ. հոկտեմբերի

²¹ Шамсутдинов А.М., Национально-освободительная борьба в Турции 1918-1923, Москва, 1966, с. 15.

²² Фрпֆ. Գ. Տատրեան, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագի-
տական քննարկումներով, տպ. «Պայքար», 1995, էջ 5:

30-ին Դաշնակից տերությունների հետ գինադադարը Մուտքուսա-
կնքել էր նոր վարչապետ Ահմեդ Իզզեթ փաշայի կառավարությունը,
որն օսմանյան խորհրդարանում հավանության քվե էր ստացել 1918
թ. հոկտեմբերի 19-ին²³: Ի դեպ՝ Ահմեդ Իզզեթը սադրազամի (վար-
չապետի) պաշտոնում էր նշանակվել անձամբ Թալիաթ փաշայի նա-
խածեռնությամբ, քանի որ վերջինս, պատերազմի տարիների հան-
ցագործությունների, այդ թվում նաև՝ քրիստոնյաների ոչնչացման
համար պատասխանատվության կանչվելու մտավախությամբ նա-
խընտրել էր կառավարության ղեկավարի պաշտոնում տեսնել «իր
մարդուն»²⁴: Զինադադարի կնքումից հետո Դաշնակից պետություն-
ների գորքերը՝ Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ, մտել էին Ստամ-
բուլ և սկսել ուղղակալել Օսմանյան Կայսրության տարածքները:
Թեև զինադադարի պայմանները սպասվածի չափ ծանր չէին, բայց և
այնպես՝ օսմանյան կառավարությունն ու հասարակությունը տագնա-
պալից սպասման մեջ էին, թե ինչպիսին պիտի լինեն վերջնական
հաշտության պայմանագրի դրույթները²⁵:

Նոր վարչապետ Ահմեդ Իզզեթի՝ 1918 թ. հոկտեմբերի 19-ին
օսմանյան խորհրդարանին ներկայացրած ծրագրում ոչ մի քննադա-
տություն չկար ուղղված պատերազմի ժամանակ Միություն և առաջա-
դիմություն կուսակցության վարած քաղաքականությամբ: Անգամ
«տեղահանության դեպքը» բացատրվում էր «պատերազմական

²¹ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İstanbul, 2002, s. 390.

²² Անդ, էջ 388: Ինչպես իր հուշերում արծանագրում է բուրք լրագրող ու հանրապետական շրջանի պատգամավոր Ֆալիհ Ռոֆթը Արայիք. «Այն ժամանակ անձանց վրա դրված կնիքը «մարդ» բառն էր՝ Զեմալ փաշայի մարդը, Էնվեր փաշայի մարդը, Թալիաթ փաշայի մարդը... Լրանցից ամեն մեկն էր իր «մարդիկ» ունեն: Երբ խմբերը մեծացան, այլևս ծիչու դարձավ ասել՝ Էնվեր փաշայի թիմը (քայլան), Թալիաթ փաշայի թիմը, Զեմալ փաշայի թիմը», տես՝ Falih Rıfkı Atay, Zeytindeği, İstanbul, 1981, s. 38.

²³ Vahaku N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", Divan-ı Harbi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, İstanbul, 2008, s. 6.

դրության անհրաժեշտությամբ»²⁶: Հարկ է նշել, որ Ահմեդ Իզգեր փաշան ոչ միայն արգելվ էր դարձել իթթիհաղականների հետաքննությանը, այլև՝ անգամ հրահանգել ոչնչացնել այն բոլոր փաստաթղթերը, որոնք հնարավորություն կընծեռեին հետաքննություն սկսել ուժագործմների նկատմամբ: Կարչապետ դառնալուն պես նա հրամայել էր անմիջապես դադարեցնել Հատուկ կազմակերպության աշխատանքները և վերացնել տվյալ կազմակերպության արխիվը, բացի այդ՝ ապահովել էր, որպեսզի հայերի կոտորածների կապակցությամբ հետապնդվող կասկածյալներն ազատ կերպով հեռանան Ստամբուլից²⁷: Իզգեր փաշայի կառավարության կազմում ներկայացված էին առնվազն 4 հայտնի իթթիհաղականներ, որոնք գրադեցնում էին ուազմավարական նշանակություն ունեցող այնպիսի պաշտոններ, ինչպիսիք էին, օրինակ, արդարադատության, ուազմածովային և ներքին գործերի նախարարների աթոռները: Դրանք էին ներքին գործերի նախարար Ալի Ֆերհի Օքյարը, արդարադատության նախարար Հայրի Էֆենդին, որը նախկինում շեյխուլիսլամ (կրոնական առաջնորդ) էր եղել, ուազմածովային նախարար Ռատուֆ Օքքայը և ֆինանսների նախարար Զավիդ բեյը²⁸: Ավելին՝ նախքան Իզգերը վարչապետի պաշտոնում առաջադրված Ահմեդ Թևֆիկ փաշայի առաջ թալեաթը պայման էր դրել, որ Վերջինս իր վարչակազմում ընդգրկեր Միություն և առաջադիմություն կուսակցության երկու անդամի, հատկապես Զավիդին, սակայն Թևֆիկը չէր համաձայնվել իթթիհաղական նախարարներ ունենալ իր կառավարության կազմում ու չդիմանալով ժնշումներին՝ հրաժարվել էր սահրազամ դառնալու առաջարկից, և վարչապետ էր նշանակվել Ահմեդ Իզգերը²⁹:

²⁶ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 390.

²⁷ Տուլյո, էջ 391:

²⁸ Tariik Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler, Cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağıın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000, s. 40.

²⁹ Sabahattin Selek, Anadolu İhtilali, Cilt 1, İstanbul, 2000, s. 40. Ծառ չանցած Ահմեդ Թևֆիկը

իթթիհաղական, երիտթուրքական և հանրապետական շրջանների պատգամավոր, հայտնի լրագրող Յունուս Նադի Արալը լույսուի համաձայն՝ Թալեաթը հրաժարական տալուց առաջ զգուստ էր ապահովել երկու բան՝ Միություն և առաջադիմություն կազմակերպության (cemiyet) ցանցի՝ ամեն կերպ պահպանումը և իրեն հաջորդող կառավարության՝ ոչ պատահական լինելը³⁰: Դա բնականաբար պայմանավորված էր պատերազմի տարիներին կատարված ոճրագործությունների և հատկապես Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության ենթարկվելուց խոսափելու նպատակով:

Մուդրոսի գինադադարի կնքումից երկու օր անց՝ 1918 թ. նոյեմբերի 1-ին, տեղի է ունենում Միություն և առաջադիմություն կուսակցության համագումարը: Մոտ 120 պատվիրակ, կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից մշակված և համագումարին առաջարկվող բանաձից անտեղյակ, ունկնդրում են Թալեաթին: Վերջինս մանրամասն ներկայացնում է Բալկանյան պատերազմներից (1912-1913 թթ.) ի վեր կուսակցության գործունեությունը և Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան Կայսրության դրությունը: Համագումարում որոշում է կայացվում իթթիհաթ վե Թերաքքի կոսակցության լուծարման և վերջինիս ողջ ունեցվածքը նոր իհմնվելիք Թեզերրյութ (Վերածնունդ) կուսակցությանը հանձնելու մասին³¹: Ինչպես նշում է այդ ժամանակաշրջանն ուսումնասիրած թուրք պատմաբան Օսման Սելիմ Քոջահանօղլուն, այս որոշումն, անշուշտ, կայացվել էր ոչ թե համագումարի պատվիրակների կողմից, այլ ընդունվել էր իթթիհաղական պարագլուխների՝ օրեր տևած գաղտնի ժողովների արդյունքում, այն հավաքների, որոնց ընթացքում մանրակրկիտ կերպով

հաջորդում է Իզգերին:

³⁰ Yunus Nadi, Kurtuluş Savaşı Anıları, İstanbul, 1978, s. 8.

³¹ Osman Selim Kocahanoglu, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), İstanbul, 1988, s. 18.

բննարկվել էր իրենց և կուսակցության դրությունը, և անգամ նախապատրաստվել երկրից փախչելու ծրագիրը, որից տեղյակ էին ընդամենը 5-6 հոգի³²: 1918 թ. նոյեմբերի 1-ի լուս 2-ի գիշերը կուսակցության կենտրոնական կոմիտեի հիմնական փաստաթղթերն իր հետ էր տարել Թաթեաթի հետ հեռացած կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Նազըմը՝ այդպիսով մեջտեղից վերացնելով Հայոց ցեղասպանությանը վերաբերող ապացույցները³³: Նախապես էին որոշվել նոյնիսկ նոր՝ Թեջեղյուղ կուսակցության անվանումը, կանոնադրությունը և այն անձանց անումները, ովքեր կազմելու էին կուսակցության կորիգը³⁴: Նշենք, որ Թեջեղյուղ կուսակցությունը երկար կյանք չունեցավ և շուտով հեռացավ քաղաքական բատերեմից:

Մուդրոսի գինադադարի կնքումից հետո երկրի քաղաքական մքնուրուտում առկա տագնապալի դրության առաջացման և վաստատես կանխատեսումների մեջ զգալի դեր ուներ Երիտրուրբական կառավարության և կուսակցության՝ Հայոց ցեղասպանության հարցում ունեցած պատասխանատվության խնդիրը:

Հայոց ցեղասպանության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Երիտրուրբերի չորրորդ համագումարը, որը տեղի է ունեցել 1911 թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 9-ը: Այս համագումարի ժամանակ կուսակցության պատվիրակների մեծ մասն ընդունել է, որ կայսրության օսմանականացման համար գոյություն ունեղի:

³² Անդ:

³³ Դոկտոր Նազըմը, լինելով կուսակցության հիմնադիրներից մեկը և ամենահեղինակավոր անդամներն է կազմակերպության դիվանապահն էր: Նրա մոտ էր պահպում կուսակցության ողջ արխիվը, որի անհատացման և կապում նն Նազըմի անվան հետ, տես՝ Mithat Şükrü Blela, İmparatorluğun Çöküşü, Remzi Kitabevi, İstanbul, 1979, s. 112. Կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քառորդը Միհեմ Շյուրյուն այդ փաստը հաստատում է նաև Երիտրուրբական կուսակցության անդամների դատավարության երկրորդ նիստում՝ 1919 թ. մայիսի 4-ին, տես՝ Takvim-i Vekayi, 8 Mayıs, 1919, s. 20.

³⁴ Osman Selim Kocahanoğlu, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), s. 18.

Նի միայն մեկ ծանապարի, այն է՝ ոչ թուրք ժողովուրդների բոնի ուժացումը³⁵: Նոյն համագումարի փակ նիստում արդեն նախագծվել էին Օսմանյան Կայսրության ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի և հոգների բոնի թուրքացման ծրագրի իրականացման կոնկրետ միջոցառումները, որոնց շարքում նախատեսվում էին նաև բնակչության բոնի տարագրումը և բնաշնչումը՝ աջսորի ծանապարհներին կամ վերաբնակեցման վայրերում³⁶: Ինչպես ընդգում է Ա.Գ. Ավագյանը, «Արևամտյան Հայաստանի բնակչության բնաշնչման ծրագրի նախապատրաստումը, ամենայն հավանականությամբ, վերջնական տեսքի բերվեց երիտրուրբերի՝ 1913 թ. գարնանը կայացած կենտրոնական կոմիտեի նիստում»³⁷:

Այս առումով շրջադարձային եղավ 1913 թ., քանի որ Բալկանյան պատերազմներում պարտությունը Երիտրուրբերին դրդեց գոյնե կայսրության արևելյան շրջանները, այդ թվում՝ Արևամտյան Հայաստանը չկորցնելու համար դիմել դեռևս 1911 թ. համագումարում որպես ծայրահեղ միջոց ընդունված ոչ թուրքերի տարագրմանը³⁸: Բացի այդ՝ 1913 թ. հունվարին ուղմական հեղաշրջմամբ բացարձակ իշխանության հասած և հատկապես նոյն տարվա հունիսի 11-ին մեծ վեզիր Մահմուտ Շևքեթ փաշայի սպանությունից հետո երկրում բռնապետություն հաստատած իթթիհադականները հնարավորություն

³⁵ Arces Avakyan, Genoia'd 1915 r., Mekanizmy priinyatiya i ispolneniya reshenii, Erevan, 1999, c. 14.

³⁶ Անդ, էջ 16-17:

³⁷ Անդ, էջ 31: Նման պեղման ապացույց է նաև Հայոց ցեղասպանության ծրագրի հիմնական նշակողներից և իրականացնողներից Քեհաեղին Շաքիրի այցը Արևամտյան Հայաստան 1913 թ. ու նահանգապետերին հրահանմեր պարունակում գաղտնի ծրագրերի հանձնումը, տես՝ Ա.Գ. Ավագյան, 1915 թ. ցեղասպանության նախապատրաստական փուլը, Քեհաեղին Շաքիրի այցն արևելյան նահանգներ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» IV, Երևան, Ասողիկ, 2006, էջ 245-251:

³⁸ Երիտրուրբական կազմակերպությունը փորձամասնությունների տեղահանման, փոխանակման և արտաքսման զաղափարներն սկսել են շրջանառության մեջ դրվել ու ընճարկվել դեռևս 1909 թ. դոկտոր Նազըմի կողմից "Journal de Salonique" թերթին տված հարցազրույցով, տես՝ Yusuf Hikmet Bayur, Türk İnkılabı Tarihi, Cilt 1, Giriş: Berlin Muahedesinden Trablus Garp Savaşına Kadar, Maarif Matbaası, İstanbul, 1940, ss. 305-306.

ստացան իրագործելու 1911 թ. նախանշված ծրագիրը, իսկ վերջինիս, այսինքն՝ Հայոց ցեղասպանության իրականացման համար հնարավորություն ընծեռեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Թեև հայերի առաջին տեղահանությունն սկսվել էր դեռևս 1915 թ. մարտի 2-ին՝ Դյորթյոյի հայերի տարագրմամբ³⁹, բայց ցեղասպանության «օրինականություն» հաղորդելու նպատակով կոտորածների գիսավոր համակարգող՝ ներքին գործերի նախարար Թալեաթը, 1915 թ. մայիսի 14) 27-ին իրապարակեց ժամանակավոր հորջորջված «Տեղահանության մասին» (Tehcir Kanun-i Muvvakat) օրենքը⁴⁰, որն ընդունվել էր ապօրինի կերպով, քանի որ վարչապետ Սայիդ Հալիմ փաշան այն ստորագրել էր նախքան խորհրդարանի հավանությանն արժանանալը⁴¹: Չորս հոդվածից⁴² բաղկացած սույն օրենքի ամբողջական անվանումը հետևյալն էր. «Ժամանակավոր օրենք՝ պատերազմի ընթացքում կառավարության գործադրության դեմ դուրս եկողների նկատմամբ ռազմական գերատեսչության կողմից ծեռնարկվելիք միջոցառությունների մասին» (“Vakt-i Seferde İcraât-ı Hükümete Karşı Gelenler İçin Cihet-i Askeriyece İttihâz Olunacak Tedâbir Hakkında Kanun-i Muvvakat”)⁴³:

³⁹ Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Ankara, 1994, s. 20.

⁴⁰ Հայերի տեղահանության մասին որոշման ընդունման ժամանակ կատարվել են իրավական մի շարք խախտություններ, որոնք հետազոտվում բացահայտվեցին ու քննադատությունը լրացրեց: Հայրէ է նշել, որ էնվերի «Զկա օրենք, ստեղծի՛ այն» (“Yok kanun, yar kanun!”) մոտեցմամբ պատերազմի ժամանակ իրապարակվեցին բազմաթիվ ժամանակավոր օրենքներ (Kavanin-i Muvkattîye), այդ բիում և «Տեղահանության» ու «Լրայ գույքերի» ժամանակավոր օրենքները:

⁴¹ Փրոֆ. Վ. Տատրեան, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական ընմարկությունը, էջ 20:

⁴² Տեղասպանությունից վերապրած հետազոտող Հայկազն Ղազարյանը հայտնում է, թե Տեղահանության մասին օրենքն իրականում բաղկացած է եղել 8 հոդվածներից, որոնցից 5-ը զարդի են պահել, քանի որ վերաբերել են հայերի ունեցածքի բռնպարավմանը, տե՛ս Հայկազն Գ. Ղազարյան, Տեղասպան բոլորը, Համազգային տպարան, Պէյուր, 1968, էջ 328:

⁴³ Murat Bardakçı, Talât Paşa'nın Evrak-ı Metrukesi, Everest Yayımları, 2009, s. 25-26, տե՛ս նաև՝ “Meclis-i Vükela’nın Tehcir Kararı”, 30 Mayıs 1915, Osmanlı Belgelerinde Ermeniler, ss. 30-32.

Ինչպես նշում է Ռ.Ա. Սաֆրաստյանը, Թալեաթի կողմից վերոհիշյալ օրենքի շտապ նախապատրաստումն ու իրապարակումը պայմանավորված էր հատկապես դաշնակից 3 պետությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունների՝ 1915 թ. մայիսի 24-ին Օսմանյան Կայսրությանը հղած համատեղ նոտայով, որում խստորեն դատապարտվում էին հայերի զանգվածային կոտորածները. «Թալեաթի մոտ այն, ըստ երևոյթին, առաջացրել էր մտավախություն, որ ողջ մեղքը այդ ոճրագործությունների համար կրարովի միայն իր վրա: Փորձելով խուսափել դրանից՝ նա նախաձեռնեց մի այնպիսի գործընթաց, որի նպատակն էր խուսափել միայնակ պատասխանատու լինելու վտանգից և պատասխանատվությունը ոճրագործների համար դարձնել կոլեկտիվ՝ տարրալուծելով այն կառավարության անդամների միջև»⁴⁴:

«Տեղահանության մասին» օրենքի ընդունումից հետո Թալեաթի ջանքերն ուղղված էին միաժամանակ երկու նպատակի իրականացմանը. օրինական տեսք տալ հայերի տեղահանությանը և տարագրման ու կոտորածների պատասխանատվությունը դնել միայն կառավարության ու Միություն և առաջադիմություն կուսակցության վերնախավի առանձին անձանց, այլ ոչ թե կուսակցության վրա: Բացի այդ՝ Թալեաթ փաշան հետագայում պատասխանատվությունից խուսափելու և հայերի տարագրումը «արդարացնելու» միտումով 1916 թ. Ներքին գործերի նախարարության կողմից հրատարակել էր «Հայկական կոմիտեների նպատակները և հեղափոխական գործողությունները սահմանադրության հոչակումից առաջ ու հետո» գիրքը (“Ermeni Komitelerinin Amâl ve Harekât-ı İhtilâliyyesi İlân-ı Meşruiyetten Evvel ve Sonra”, İstanbul, 1916⁴⁵):

⁴⁴ Ռ.Ա. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Տեղասպանության ծրագրի ծագումնարանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 174-176:

⁴⁵ Միություն և առաջադիմություն կուսակցության անունը չվարկաբեկելու, տեղահա-

Թալեարն իր հուշերում գրում է. «Սկզբունքորեն զինվորական նախազգուշական միջոցառումից բացի որևէ այլ նպատակ չունեցող տեղահանությունն անխիղճ ու թուլակամ մարդկանց շնորհիվ վերածվել է ողբերգության: Ուզում եմ նշել, որ միայն այդ դեպքերի պատճառով ողջ կառավարությանն ու Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեին, ինչպես նաև՝ այս գործի հետ ոչ մի առնչություն չունեցած անդամներին մեղադրելն անիրավացի ու կամայական երևույթ է: Միություն և առաջադիմություն կուսակցության կոմիտեի անդամներն անչափ վշտացած են հայերի դեմ կատարված գործողությունների պատճառով և դեպքերը կանխելու համար միշտ ծգտել են ազդել կառավարության վրա»⁴⁶:

Խեղաքարտելով «Տեղահանության օրենքի»՝ իր իսկ կողմից պատրաստված լինելու փաստը Թալեարն իր հուշերում փորձում է արդարացնել նաև իրեն և պատասխանատվությունը դնել բանակի Գլխավոր շտաբի վրա. «Դրանից հետո Գլխավոր շտաբում մշակվեց «Հայերի տեղահանության» մասին մի օրենք և ներկայացվեց Նախարարների կազմին: Ես դեմ էի, որ այդ օրենքը լիովին կիրառվեր: Ժանդարմները՝ ամբողջությամբ, իսկ ոստիկանները՝ մասամբ, ընդգրկվել էին բանակում, ու նրանց փոխարինել էին միլիցիոներները: Գիտեի, որ եթե տեղահանությունն իրականացվեր այդ պայմաններում, շատ տգեղ հետևանքների էր հանգեցնելու: Հետևաբար, ապագայի մասին մտածելով, պնդեցի, որ այդ օրենքը չգործադրվի, և հաջողացրի հետաձեռ այդ օրենքի՝ ուժի մեջ մտնելը»⁴⁷:

Մինչեռ փաստերը վկայում են, որ Հայոց ցեղասպանության

նույրյուն արդարացնելու, տարագրայների ոչնչացման պատասխանատվությունից խուսափելու և դա միայն մի քանի մասնակի անձանց վկա բարդելու միտումն ակնհայտ է նաև Թալեար փաշայի հուշերու: Ի դեպք այս հանգամանքը է եղել հուշերը գրելու հիմնական դրապատճառը, տես' Aubrey Herbert, Ben Kendim. A Record of Eastern Travel, London, 1924, pp. 323-324.

⁴⁶ Tevfik Çavdar, Talât Paşa, Bir Örgüt Ustasının Yaşamöyküsü, 4. Baskı, İmge Kitabevi, 2001, s. 402.

⁴⁷ Talât Paşa'nın Hatıraları, H. Yalçın'ın Önsözüyle, İstanbul, 1958, s. 59.

ծրագիրը⁴⁸ մշակվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության ու գործադրվել՝ ողջ կառավարական ապարատի կողմից: Եվ դա ոչ մեկի համար գաղտնիք չէր. ուժագործությունն այնքան ակնհայտ էր, և հանցագործները՝ հայտնի, որ պատերազմի ժամանակ հարկադրյալ լուրջուն պահպանած օսմանյան մամուլը իթթիհադական կառավարության անկուսից հետո սկսեց ակտիվորեն քննարկել հայերի ոչնչացման իրողությունը: Տվյալ ժամանակաշրջանի օսմանատառ մամուլը, ինչպես նաև՝ Ստամբուլում լույս տեսնող այլաթեզու թերթերը մեծ տեղ հատկացրեցին հայերի տեղահանությունը և կոտորածները նկարագրող ու լուսաբանող հրապարակումներին⁴⁹: Հայերի հանդեպ կատարված հիշվում էր անեծքով: Մամուլում զգալի տեղ էր տրված նաև ականատեսների վկայություններին, և օսմանյան թերթերը կարևոր դերակատարում են ունեցել մի շարք հանցագործների բացահայտման խնդրում⁵⁰: Բացի այդ՝ այս հարցերը սուր վիճաբանությունների են տվել տարբեր օրաբերերի միջև⁵¹: Այս շրջանում լույս տեսան նաև իթթիհադի հայացինչ քաղաքականությունը մերկացնող այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են Ահմեդ Ռեֆիկի «Երկու կոմիտե, Երկու ոժիր»-ը (Ahmet Refîk (Altıñay), İki Komite, İki Kıtâl, İstanbul, 1919) և Հասան Ամօյի «Տեղահանության իրական

⁴⁸ Ինչպես ընդգծում է Ո. Սաֆրաստյանը, իենց «Տեղահանության մասին» օրենքը ինքնին դայոց ցեղասպանության ծրագիր է, որը ընդունվել էր օսմանյան կառավարության և հաստատվել՝ սուլթանի կողմից՝ օրենքի տեսք ստանալով, տես' Ո.Ա. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Տեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), էջ 189:

⁴⁹ Օսմաներն և Ստամբուլում իրապարակվող այլաթեզու մամուլում տպագրված նյութերի որոշ մասը հրատարակել է Գրիկեր (Գրիգոր Կերկերյան), տես' Գրիկեր, Եղողատի հայասպանութեան վաերագրական պատմութիւնը, Նիւ Երր, 1980, էջ 11-67: Օրաբերերում տպագրված հոդվածները մանրամասն վերլուծված են նաև Զ.Ա. Կիրակոսյանի «Երիտրութերը պատմության դաստաստի առաջ» վերնագրով աշխատության երկրորդ հաստորութեան, 1983:

⁵⁰ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 397.

⁵¹ Այդ մասին ավելի մանրամասն տես' Մ.Վ. Անույան, Մեծ Եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմար» օրաբերում, «Բանքեր Հայաստանի արխիվների», N 1 (107), Երևան, 2006, էջ 310-317:

պատկերը» (Hasan Amca, Tehcirin Gerçek Yüzü, Çerkes Hasan Bey'in Natüraları, "Alemdar", 19-27 Haziran, 1919)⁵²:

Ժամանակի օսմանյան մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներում շեշտվում էր Հայոց ցեղասպանության մեջ իթթիհաղի պատասխանատվությունը: Այսպես՝ օսմանյան «Ալեմդար» օրաթերթի Խմբագիրը՝ Ռեֆի Զևսի Ուլունայը, 1919 թ. մարտի 28-ին վերոնշյալ պարբերականում հրատարակված «Տեղահանության և կոտորածների կապակցությամբ» վերնագրով հոդվածում ընդգծում էր կոտորածների խնդրում բոլոր իթթիհաղականների մեղքի բաժին ունենալու հանգամանքը, այդ թվում և նրանց, ովքեր, տեղյակ լինելով հանդերձ, չեն միջամտել. «Ավագակախմից (նկատի ունի Միություն և առաջադիմություն կուսակցությանը-Մ.Ա.) շատ քիչ թվով մարդ ենք ճանաչում, որ տեղահանության ու կոտորածների խնդրում չունենա իր մեղքի բաժինը: Այդ ոճիրները գործողները մեղավոր են, նրանց գործիք եղողներն ել են մեղավոր, լոռություն պահպանողները՝ նոյնպես: Տեղահանությունը և կոտորածները Միություն և առաջադիմություն կուսակցության երեսէ խաղացած ամենահասարաւու ողբերգությունն էր: Անհնար է երկրի անունից չտիրել, մարդկության անունից այն չտել: Լոռություն, սպանիչ կերպով լոռություն պահպանելը միշտ նոյնպիսի ոճիր չէ, որպիսին կոտորելն է»⁵³:

Զինադադարի կնքումից հետո թուրքական մամուլում ու հասարակյանության մեջ բողոքների և քննադատությունների մեջ ալիք բարձրացրեց հատկապես Թալեաթի և երիտրութքական մյուս առաջնորդների գաղտագործի փախուատը երկրից: Ինչպես նշում է Վ.

⁵² Այս գրքերը թարգմանվել ու հրատարակվել են նաև հայերեն, տես՝ Ահմեդ Ռեֆիկ, Երկու կոմիտետ, երկու ոճիր, թարգմանությունը թուրքերենից ու առաջարանը՝ Ս.Պ. Սուլույանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1998, Յասան Ամշա, Տեղահանություն և ոչչացում (Տեղահանության իրական պատկերը), օսմաններնից թարգմանությունը, ներածականն ու ծանոթությունները՝ Ա.Գ. Ավագյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2007:

⁵³ Ա.Գ. Անուման, Եշվ., էջ 312-313:

Դադրյանը, օսմանյան մամուլում այդ ուշացած ափսոսանքի և վշտի ցուցադրումը ոչ միայն պարտության հետևանք էր, այլև՝ իրենց և որպես զոհ ներկայացնելու փորձ⁵⁴: Մինչդեռ, ինչպես իր հուշերում խոստովանում է Առաջին աշխարհամարտի ժամանակ օսմանյան խորհրդարանի նախագահի և արտաքին գործերի ու արդարադատության նախարարների աթոռները գրադեցրած Հայիլ Մենթեշեն, «Անատոլիայում շատ քիչ թուրքեր կային, որ առնչություն ունեցած չկանուն այդ տեղահանության գործի հետ»⁵⁵: Մեկ ուրիշ Հայիլ՝ Մենթեշեի անվանակից Հայիլ փաշան (Հայիլ Քութ), ով էնվերի հորեղբայրն էր և վեցերորդ բանակի հրամանատար էր նշանակվել 1916 թ. ապրիլի 19-ին, հայտնում է, որ երբ Բեքիրաղա Բյուլյույու կոչված կալանատանը անգիտած հրամանատարը հարցրել է նրա կողմից 300 հազար հայերի սպանության մասին, ինքը գրավոր կերպով տվել է հետևյալ պատասխանը. «300 հազար հայ... Կարող է ավելի կամ պակաս լինել. չեմ հաշվել: Որտեղ որ հավանական է եղել նրանց ապստամբությունը, քաղաքացիական իշխանություններին հրամայել եմ տեղահանել նրանց և աքսորել եմ տվել»⁵⁶:

Իթթիհաղականներին մեղադրելու և նրանցից զատվելու միտումը, ինչպես նաև՝ թրիստոնյանների կոտորածների հետ իրենց առնչություն ունենալու ժխտումը բնորոշ էր զինադադարի կնքումին հաջորդած առաջին ամիսներին, երբ Օսմանյան Կայսրությունն ու հասարակությունն իրենց զգում էին պարտվածի կարգավիճակում և սպասում Դաշնակից պետությունների վճուն: Այս ժամանակ մամու-

⁵⁴ Vahakn N. Dadrian, "Tehcir ve Taktik", s. 11.

⁵⁵ Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, Hürriyet Vakfı Yayınları, İstanbul, 1986, s. 239.

⁵⁶ Halil Paşa, İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş, Derleyen: Taylan Sorgun, Kamer Yayınları, İstanbul, 1997, s. 274. 1919 թ. օգոստոսի 8-ին բանտից փախած Հայիլ Թուրք երիտրութքական կուսակցության անդամների դատավարության մեղադրական ալյուս հիշատակվում էր որպես Հատուկ կազմակերպության անդամ, տես՝ Takvim-i Vekayi, No 3540, 5 Mayıs 1919, s. 5.

լում խիստ մեղադրանքներ էին տպագրվում՝ ուղղված իթթիհադականներին, ինչպես նաև սուր քննադատությունների էր ենթարկվում վերջիններիս վարած քաղաքականությունը, հատկապես՝ հայերի նկատմամբ: Անգամ Մուստաֆա Քեմալ (Աթաթուր) փաշան հայերի զանգվածային բնաջնջմանը տվել էր «խայտառակություն» բնորոշումը⁵⁷, իսկ նրա աջակցած «Մինրեր» օրաթերթը հայերի ոչնչացման գործողությունը որակել որպես «պատմության նկատմամբ կատարված ամենամեծ և ամենաաններելի»⁵⁸ գործողություն:

Հասարակությունը մամուխ միջոցով պահանջում էր ձերբակալել ու խստորեն պատժել հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուններին: Այսպես՝ «Ալեմդար» օրաթերթը գրում էր. «...կախաղաններն արժանի չեն այս մարդկանց: Այդ գլուխները, որ պետք է ջախջախել, անհրաժեշտ է կոճղերի վրա կտրել և օրեր շարունակ պահել՝ որպես խրատ»⁵⁹:

Օսմանյան մամուխ՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների հանդեպ ցուցաբերած մեծ հետաքրքրությունը շարունակվեց նաև հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով դատաքննությունների սկսվելուց հետո⁶⁰: Այս առումով հատկանշական է հատկապես «Ալեմդար» օրաթերթը, որը նաև սովորական պալատի բանբերն էր: Այսպես՝ օրաթերթի 1919 թ. ապրիլի 25-ի համարում տպագրվել էր սույն պարբերականի տնօրեն Ահմեդ (Փեղիվան) Քաղրիի բաց նամակը՝ ուղղված ռազմական ատյանի նախագահ Նազըմ փաշային⁶¹: «Ալեմդարի» տնօրենը բաց նամակում

⁵⁷ Vahagn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 11.

⁵⁸ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 395.

⁵⁹ Sina Akşin, İstanbul Hükümetleri ve Milli Mücadele, İstanbul, 1983, s. 199.

⁶⁰ Այս մեղադրանքը կայացած առաջին Յողատի դատավարությունն սկսվեց 1919 թ. փետրվարի 5-ին:

⁶¹ «Ալեմդար»-ում տպագրված այս հոդվածի ամբողջական բարգմանությունը տե՛ս Ս.Վ. Անումյան, Յողատի և Տրափիդի տեղահանության ու կոտորածների դատավարությունները ըստ «Ալեմդար» օրաթերթի. «Հայոց ցեղասպանության պատմության և

պատմում էր հայերի կոտորածների վայրագության մասին, նշում մը քանի պաշտոնյանների անուններ, ովքեր պաշտոնազրկվել էին կառավարության կողմից՝ կատարված չարագործությունների վերաբերյալ համապատասխան մարմիններին տեղեկացնելու պատճառով, ուղմական ատյանի նախագահին խնդրում ավելի լուրջ վերաբերվել ականատեսների վկայություններին և պատժել բոլոր հանցագործներին⁶²:

Հիշատակման է արժանի նաև «Ալեմդարի» գլխավոր խմբագիր Ռեֆի Զևադ Ովունայի հոդվածաշարը՝ նվիրված Հայոց ցեղասպանության խնդրին: «Ալեմդար» օրաթերթի գլխավոր խմբագիրը հայերի տեղահանությանն ու կոտորածներին, ինչպես նաև՝ դրանց վերաբերյալ հարուցված դատական գործերին անդրադարձող իր առաջնորդողներում հատկապես շեշտում էր երիտթուրքերի դատաքննություններն արագ իրականացնելու և հանցագործներին անմիջապես պատժելու անհրաժեշտությունը: 1919 թ. փետրվարի 14-ին տպագրված «Տեղահանության և կոտորածների կապակցությամբ» վերնագրով հոդվածում նա իր մտահոգությունն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ Թուրքիան հայերի կոտորածների դատաքննություններն իրականացնում էր հարկադրված, և որ դատավարությունների շարժադիր էր ծառայել ոչ թե արդարության վերականգնումը, այլ՝ ընդամենը Եվրոպայի առջև արդարադատ երևալու ցանկությունը⁶³: Նոյն հոդվածում Զևադն ընդգծում էր հայերի կոտորածների զանգվածային բնույթը. «Կառավարությունը տեղահանության և կոտորածների խնդրի կապակցությամբ դատարանին հանձնեց երեքից-հինգ հոգու: Միթե խնդիրն այդքանով ավարտվում է: Ինչպես

պատմագործության հարցեր», N 9, Երևան, 2004, էջ 72-74:

⁶² Ahmed Kadri, Divan-i Harbi Reisi Nazım Paşa Hazretlerine Açık Mektup, "Alemdar", 25 Nisan 1919.

⁶³ Refi Cevad, Tehcir ve Taktik Münasebetiyle, "Alemdar" 14 Şubat 1919.

կարելի է տեղահանությունն ու կոտորածները սահմանափակել նման շրջանակում»⁶⁴: 1919 թ. փետրվարի 20-ին հրատարակված «Ինչպիսին են եղել ուղեկառքի ձիերը» հոդվածում «Ալեմդարի» խմբագիրը շեշտում էր այն հանգամանքը, որ Յոզդատի դատավարության մեղադրյալներից Բողազույան գավառի կայսակամ (գավառապետ) Մեհմեն Քեմալը, ոժրագործ լինելով հանդերձ, ընդամենը պարզ գործիք է եղել Հայոց ցեղասպանության հեղինակների՝ գլխավոր պատասխանատունների ձեռքում, իսկ վերջիններս ոչ միայն դեռ չեն պատճենվել, այլև նույնիսկ չեն էլ կալանավորվել. «Ո՞վ է Քեմալ թեյը. Եթե ճշմարտությունը որոնելու լինենք, այն բաղկացած կլինի մի արյունոտ կացնից: Արդարադատությունը պետք է կտրի այդ կացինը գործել տված ձեռքը, իսկ այդ ձեռքերը, այդ ուղեղները դեռ ազատ շրջում են մեջ»⁶⁵: «Ալեմդար» օրաթերթի խմբագիրը 1919 թ. ապրիլի 9-ի համարում տպագրված «Ի պատասխան մի պաշտպանության» վերնագրով հոդվածում ընդգծում էր հայերի կոտորածների կանխամտածված բնույթը, մտահղացողի և կատարողի միասնական լինելը. «Ենթադրենք՝ որևէ մեկը հանցագործություն է կատարել: Բնականաբար չենք կարող այդ ոժրագործությունը նյութած ուղեղը և ի կատար ածած ձեռքը միմյանցից բաժանել: Դա ո՞չ օրենքը թույլ կտա, ո՞չ էլ բանականությունը: Եթե Քեհաեղին Շաքիրը ողբերգություններ հիացած ուղեղն էր, ապա Քեմալ թեյն ու իր հանցակիցները այդ ուղեղի չարագործությունները նախապատրաստող ձեռքերն էին: Օրենքը ձեռքն էլ է կտրում, ուղեղն էլ՝ հանգցնում»⁶⁶: Ուժի Զևսը մեկ այլ հոդվածում շեշտում էր ոժրագործներին ըստ արժանվույն պատճելու անհրաժեշտությունը. «Ընդամենը արդարություն ենք պահանջում մեր հոդվածներով: Արդարություն ասելով՝ ի նկատի ունենք

⁶⁴ Ան:

⁶⁵ Refî Cevad, Arabanın Beygirleri Nasıl İmiş?, "Alemdar", 20 Şubat 1919.

⁶⁶ Refî Cevad, Bir Müdafaâ Karşısında..., "Alemdar", 9 Nisan 1919.

բռնությանը համարժեք պատիժ: Այսօր քաղաքակիրթ աշխարհն ու մարդկությունը չեն կարող անտարեր մնալ պատոված աղիքների, հանգած աչքերի, ջնջսված ուղեղների հանդեպ: Չի կարելի մեծ հայրենասեր համարել այդ ողբերգական տեսարանների հեղինակներին: Միակ բանը, որ պարտավոր ենք ամել, մի ողջ ժողովրդի դեպի բնաշնչում տարած մարդասպաններին պատժելն է»⁶⁷:

Ճինադադարի շրջանում օսմանյան հասարակության և մամուլի կողմից հնչեցված սուր քննադատությունների ճնշման տակ հայերի տեղահանության և կոտորածների խնդիրն ընդգրկվեց նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան խորհրդարանի⁶⁸ օրակարգ, ու վերջինս դարձավ թեժ քննարկումների թատերաբեմ⁶⁹:

Թալեաթ փաշայի հրաժարականից հետո (1918 թ. հոկտեմբերի 7) օսմանյան խորհրդարանն իր աշխատանքները շարունակեց մինչև 1918 թ. դեկտեմբերի 21-ը⁷⁰: Հարկ է նշել՝ քանի որ պատերազմի պատճառով հնարավոր չէր եղել խորհրդարանային ընտրություններ անցկացնել, պատգամավորների պալատի օդինական ժամկետը մեկ տարով երկարաձգվել էր՝ 1876 թ. Սահմանադրության 70-րդ հոդվածին մեկ դրույթ ևս հավելելու միջոցով⁷¹:

1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին պատգամավորների պալատում և սենատում ամենաշատ քննակված խնդիրը դարձավ Օսմանյան Կայսրությունն Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշելու և հայերի կոտորածները կազմակերպելու մեջ մեղադրվողներին դատական պատասխանատվության ենթարկելու հարցը: Իթթիհադա-

⁶⁷ Refî Cevad, Ne Diyoruz, Ne İstiyoruz, "Alemdar", 10 Nisan 1919.

⁶⁸ Օսմանյան խորհրդարանը բաղկացած էր երկու պալատից՝ պատգամավորների պալատից ու սենատից:

⁶⁹ Օսմանյան խորհրդարանում կայսացած քննարկումների մասին ավելի մանրամասն տես Փոք. Վ. Տատրեան, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական ըննարկումներով:

⁷⁰ Tariq Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 654.

⁷¹ Osman Selim Kocahanoglu, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, s. 26.

կանոների՝ քաղաքական թատերաբեմից առերևոյթ հեռանալու և հատկապես պարագլուխների փախուստից հետո մինչ այդ լուսություն պահպանած պատգամավորները սկսեցին քննադատությունների տարափ տեղայ նախկին կառավարության հասցեին:

Թեժ քննարկումներն ու սուր վիճաբանությունները օսմանյան խորհրդարանում սկսվեցին 1918 թ. հոկտեմբերի 19-ի նիստում, որի ժամանակ իր վարչակազմի ծրագիրն էր ներկայացրել Ահմեդ Իզզեթ փաշան: Ծրագրի ընթերցումից հետո պատգամավորները խստորեն քննադատեցին կառավարության ներկայացրած ծրագիրը⁷², որով հետև Իզզեթ փաշան իր ծրագրում չէր ընդգրկել պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունները հետաքննելու հարցը⁷³: Քննադատություններին ի պատասխան՝ Ահմեդ Իզզեթ հայտարարեց. «Մենք անպայման արդարադատություն ենք խոստանում, որը գործադրելու ենք»⁷⁴: Հարկ է նշել, որ նորանշանակ Ահմեդ Իզզեթը ծրագրում միայն անդրադարձել էր հայերի և այլ քաղաքացիների՝ հետզիտե իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու թույլտվության և ամեն տեսակի վճասների փոխհատուցման անդրամեջշտությանը⁷⁵:

Հայերի կոտորածների հարցով լարված քննարկումներ են եղել նաև խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում: Թեժ վիճաբանությունների տեղիք էր տվել հատկապես 1918 թ. նոյեմբերի 1-ի լուս 2-ի գիշերը երիտրուրքական յոթ պարագլուխների փախուստը երկրից: Այս նիստում հայկական ջարդերի հարցն օրակարգ է բերվել տարբեր գրավոր առաջարկների, դիտողագրերի և հարցապահումների միջոցով: Այսպես՝ նախ Այդընի պատգամավոր Էմանուել էֆեն-

դին բարձրացրել է խորհրդարանի վերընտրության հարցը և ընդգծել, որ այս մեջիսը կապ է ունեցել նախկին կառավարության գործած ոմինների հետ, և որ նրա որոշ անդամներ, այդ թվում նաև՝ խորհրդարանի խոսնակ Հալիլ Սենթեշեն, անմիջականորեն առնչվել են տվյալ հանցագործություններից⁷⁶:

Այս սուր քննարկումներին մասնակցում էին նաև յոթ հայ պատգամավորներ. Թողանի (Սիսի) պատգամավոր Մատթեոս Նալբանդյանը, Իզմիրի (Զմյուտնի) պատգամավոր Օննիկ Իհսանը, Էրգորումի (Կարինի) պատգամավոր Հովսեփ Մադաթյանը, Հալեպի պատգամավոր Արթին Բոշգեզենյանը, Մարաշի պատգամավոր Հակոբ Խորլաթյանը, Մուշի պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանը, Սվասի (Սեբաստիայի) պատգամավոր Տիգրան Պարսամյանը⁷⁷, որոնք բոլորն էլ ընտրվել էին Միություն և առաջադիմություն կուսակցության ընտրացուցակով⁷⁸:

Նոյն նիստում ընթերցվել է Բաղդադի սանջակներից մեկից՝ Դիվանիեցից ընտրված պատգամավոր Ֆուադ բեյի՝ 10 կետից բաղկացած առաջարկը (takrir), որը հետագայում հիմք է տվել պատերազմական վարչակազմերի անդամներին հարցաքննած օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախմբի (Beşinci Şube) ստեղծմանը: Թեև Ֆուադ բեյը վերոնշյալ առաջարկը խորհրդարանին էր հղել դեռևս 1918 թ. հոկտեմբերի 28-ին, սակայն Հայոց ցեղասպանության պատասխանատուններից մեկը հանդիսացող խորհրդարանի խոսնակ

⁷⁶ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 400.

⁷⁷ Փռք. Վ. Տատրեան, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, էջ 12:

⁷⁸ Vahak N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 21. Հայերի բնաջնջմանը նվիրված իր գրքում օսմանյան սենատի անդամ Ահմեդ Ոնֆիկը զարմանք էր արտահայտում, թե այն ժամանակ, եթե Անասուլիայի հայերը քշվում էին Ղեր-Զոր և Կոտորվում, հայ պատգամավորները Ստամբուլում շարունակում էին ջերս կապեր պահպանել Թալիարի և հայերի ոչնչացումը կազմակերպած Երթիանի այլ պարագլուխների հետ, տե՛ս Ahmet Reşik, Kafkas Yollarında. İki Komite İki Kıtal, Temel Yayınlari, İstanbul, 1998, s. 177.

⁷² Ferudun Ata, İşgal İstanbul'u'nda Tehcir Yargılamları, Ankara, 2005, ss. 21-22.

⁷³ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 398.

⁷⁴ Անը, էջ 399:

⁷⁵ Ferudun Ata, İşgal İstanbul'u'nda Tehcir Yargılamları, s. 21.

Հայի Մենթեշի կողմից հարցը ծգծիլու պատճառով այն օրակարգ է բերվել միայն նոյեմբերի 2-ին, իսկ քննարկման առարկա դարձել՝ նոյեմբերի 4-ին⁷⁹:

Անմիջականորեն հայերի կոտորածները քննարկելու մասին 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում առաջարկ են ներկայացրել նաև Այդըն նահանգից ընտրված պատգամավոր Էմանուել էֆենդին և երկու հոգյան պատգամավորները: Վեց կետից կազմված սույն առաջարկով պատգամավորները պահանջել են պատժել Թալեաթին և վերջինիս հանցակիցներին՝ հայ ժողովրդի նկատմամբ կիրառված բռնությունների համար⁸⁰: Առաջարկի առաջին կետում նշված էր հետևյալը. «Հայ ազգին պատկանելուց բացի այլ մեղք չունեցող մեկ միլիոն մարդ, այդ թվում նաև՝ կանայք ու երեխաներ, սպանվել են և ոչնչացվել», իսկ հինգերորդ կետում անդրադառնում էր հայազգի պատգամավորներ Զոհրապի և Վարդգեսի սպանությանը⁸¹: Առաջարկը ներկայացնելուց հետո ելույթ ունեցած Էմանուել էֆենդին ընդգծել է, որ այդ դեպքերի համար պատասխանատունների թիվը չի կարող սահմանափակվել միայն 3-4 հոգով, և որ այս հանցանքները գործվել են մի ուժեղ հոսանքի կողմից: Պատգամավորն ակնարկել է նաև, որ այդ իրադարձությունների մեջ պատասխանատու էր ոչ միայն հիշյալ հոսանքը, այլ նաև՝ բոլոր նրանք, ովքեր աջակցել էին այդ հոսանքին, նոյնիսկ՝ ողջ ազգը⁸²: Էմանուել էֆենդու ակնարկը հարուցել է թուրք պատգամավորների դգոհությունը: 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում նաև արձանագրվել է այս խնդիր շուրջ առաջին քաղաքական առժակատումը՝ թուրք և հայ ու այլազգի պատգամավորների միջև. «...հայ երեսփոխաններ մերթ փաղաքշելով, մերթ սաստելով, մերթ ալ երկի-

մաստ կամ թաքուն արտայայտութիւններով, իրենց թուրք պաշտօնակիցներուն ասպարեզ կարդացին Մեծ Եղեռնի առնչութեամբ գործուած ոքրապարտ արարքներուն համար»⁸³:

Կերոկիշյալ նիստում հայերի տեղահանմանն ու ոչնչացմանն առնչվող երկրորդ առաջարկ է ներկայացրել Քոզանի պատգամավոր Մատթեոս Նալբանդյանը՝ մի քանի ընկերոց հետ միասին: Սույն առաջարկով պահանջվում էր չեղյալ հայտարարել Տեղահանության և Լքյալ գույքերի մասին ժամանակավոր օրենքները, և որպես հիմնավորում նշվում էր այդ օրենքների հակասահմանադրական բնույթը: Այս առաջարկին կառավարության անունից պատասխանած ներքին գործերի նախարար Ալի Ֆեթի Օքյարը խոստանում է այդ կապակցությամբ հետաքննություն սկսել⁸⁴:

Հայերի կոտորածների վերաբերյալ քննարկումներն օսմանյան խորհրդարանում շարունակվել են նաև Խզեթ փաշային հաջորդած Թևֆիկ փաշայի վարչապետության ժամանակ: Քննարկումները վերսկսվել են 1918 թ. նոյեմբերի 18-ին, երբ խորհրդարանի հաստատմանն է ներկայացվել Թևֆիկ փաշայի կառավարության ծրագիրը: Հալեպի հայ պատգամավոր Արթին Բոշգեզենյանը շեշտել է, որ եթե կառավարությունն իրոք ակնկալում է հաշտության բանակցություններից դրական արդյունք ստանալ, ապա դրա միակ ժանապարհը հայոց կոտորածների մեղավորներին դատապարտելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկելով է⁸⁵, իսկ ի պատասխան ներքին գործերի նախարարի արած այն արտահայտությանը, թե հետաքննություն սկսելու համար իրենք հայցերի են սպասում, պատգամավորն ասել է, որ այդ վերաբերմունքը ճիշտ չի կարող լինել, քանի որ մարդ չի մնա-

⁷⁹ Vahaku N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 21.

⁸⁰ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 401.

⁸¹ Խոսրով հայ պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Վարդգես Մերենգուլյանի մասին է: Անը, էջ 401-402:

⁸² Անը, էջ 403-404:

⁸³ Փրոֆ. Վ. Տատրեան, Յայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, էջ 19:

⁸⁴ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 405-406.

⁸⁵ Անը, էջ 409:

ցել, որ կարողանա բողոքել⁸⁶:

Հայկական ջարդերի խնդիրը քննարկման նյութ է դարձել նաև 1918 թ. նոյեմբերի 23-ի նիստում, որի ընթացքում հայ և հոգն պատգամավորները չեն սահմանափակվել միայն Միություն և առաջադիմություն կուսակցությանը մեղադրելով, այլ նաև խոսել են թուրքերի հավաքական պատասխանատվության խնդրի մասին⁸⁷: Նոյն նիստում Տրավիզոնի պատգամավոր Մեհմեդ Էմինը անչափ կարևոր տեղեկություններ է հաղորդել հայերի կոտորածների մասին հայտնելով, որ հայերին Սամսուն ուղարկելու պատրվակով նատեցրել են նավերը և ջրախեղի արել⁸⁸:

Հաջորդ նիստում հայ պատգամավորներից Մատթեոս Նալբանդյանը շեշտելով, թե «հայերը բնաջնջվել են», իսկ «Անատոլիան վերածվել համատարած գերեզմանոցի», ընդգծել է նաև, որ թուրքերը, որպես ազգ, չեն կարող խուսափել պատասխանատվությունից, իսկ որպես խնդրի լուծում պահանջել է բոլոր հանցագործների բացահայտումն ու պատժումը⁸⁹:

Հայերի տեղահանության ու կոտորածների խնդիրը քննարկվել է նաև օսմանյան սենատում: Սենատում այս հարցով առաջին քննարկումը տեղի է ունեցել 1918 թ. հոկտեմբերի 19-ին⁹⁰, երբ սենատի բացման առթիվ ելույթ ունեցած սենատի նախագահ (Իթթիհայի նախկին առաջնորդներից) Ահմեդ Ռեզան խոսրի մեջ հիշեցրել է «վայրենարար սպանված հայերի» մասին⁹¹: Երկու օր անց Ռեզան, ավելի հեռուն գնալով, հայտարարել է, թե հայերը բնաջնջվել են «պետության ձեռքով» կիրառության մեջ դրված «պաշտոնական»

քաղաքականության արդյունքում⁹²: 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում, երբ միևնույն ժամանակ հենց նոյն խնդրի շուրջ թեժ քննարկումներ էին տեղի ունենում նաև պատգամավորների պալատում, Հայոց ցեղասպանության ընթացքում վարչապետ Եղած Սայիդ Հայիմ փաշան, որը սենատի անդամ էր, առաջարկ է ներկայացրել սենատին, ըստ որի՝ առաջարկվում էր անհրաժեշտ հարցաքննությունն իրականացնելու համար իիմնել Գերագույն դատարան⁹³: Սենատի անդամները, որպես ուղեցուց ընդունելով Զյուրյուքսովու Մահմուդ փաշայի առաջարկը, որոշել են, տվյալ պահին սենատում առկա յոթ հանձնաժողովից բացի, սենատի 5 տարրեր մեծ հանձնաժողովների անդամների մասնակցությամբ ստեղծել նաև մի նոր՝ Հատուկ հանձնաժողով (Encümen-i Mahsus)⁹⁴: Ութ հոգուց բաղկացած այդ հանձնաժողովի վրա դրվել են նոյն պարտականությունները, ինչ՝ խորհրդարանի Հիմգերորդ հանձնախմբի⁹⁵, այսինքն՝ հարցաքննել կառավարությանը՝ պատերազմի ընթացքում գործած ոճրագործությունների կապացությամբ: Սենատի կողմից կազմված այդ Հատուկ հանձնաժողովը աշխատանքներն ամփոփել է 1918 թ. նոյեմբերի 9-ին, իսկ նրա ամփոփիչ գեկուցը ներկայացվել է նոյեմբերի 14-ի նիստում: Հանձնաժողովը որոշել էր հրապարակել Զյուրյուքսովու Մահմուդ փաշայի ձեռքի տակ գտնվող նյութերը, սակայն այս բոլոր նախաձեռնություններն անարդյունք են մնացել՝ 1918 թ. դեկտեմբերի 21-ին օսմանյան խորհրդարանի լուծարման պատճառով⁹⁶:

Այսպիսով՝ թե՛ պատգամավորների պալատում և թե՛ սենատում տեղի ունեցած այս թեժ քննարկումների ժամանակ փաստվեց Հայոց ցեղասպանության եղելությունը, և իիմնվեց օսմանյան խորհր-

⁸⁶ Անդ, էջ 409-410:

⁸⁷ Անդ, էջ 411-412:

⁸⁸ Անդ, էջ 414:

⁸⁹ Անդ, էջ 415-416:

⁹⁰ Ferudun Ata, İsgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 30.

⁹¹ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 32.

⁹² Անդ:

⁹³ Անդ:

⁹⁴ Անդ:

⁹⁵ Անդ:

⁹⁶ Անդ, էջ 37:

Դարանի Հինգերորդ հանձնախումբը, որը հարցաքննության ենթարկեց պատերազմի ընթացքում երկիրը դեկավարած Սայիդ Հալիմ ու Թալեաթ փաշաների կառավարության անդամներին՝ ի թիվս այլ հանցագործությունների և չարաշահումների՝ նաև հայերի տեղահանության ու կոտորածների կապակցությամբ:

2. ՀԱՅՈՑ ՏԵՂԱՄՊԱՍՈՒԹՅՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՆԵՐԻ
ԴԵՄ ԻՐԱԿԱՍԱՑՎԱԾ ՀԵՏԱԲՆԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զինադադարի շրջանում Օսմանյան Կայսրության՝ շատ արագ միջյանց հաջորդող կառավարությունների՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուններին բացահայտելու և դատապարտելու նախաձեռնությունն առաջին հերթին պայմանավորված էր հաշտության պայմանագրի դրույթները և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու ցանկությամբ, քանի որ կայսրությանը վերջնական կործանում էր սպառնում: Թուրքիայի վրա մեծ ազդեցություն ունեցավ հատկապես համաշխարհային հանրության՝ մեղավորներին միջազգային դատարանին հանձնելու պահանջը: Այսպես՝ առաջիններից մեկն իր ծայնը բարձրացրեց գերմանացի ականավոր գիտնական, արևելագետ Ֆոգեֆ Մարկվարտը՝ Գերմանիայի ժողովրդին կոչ անելով կառավարությունից պահանջել հանձնել սեփական երկրում ապաստան գտած «Էնվերին ու Թալեբարին՝ զանգվածային սպառնությունների մեղավորներին, այն հաշվով, որ նրանց դատի միջազգային դատարանը...»⁹⁷: Նման պահանջով հանդես եկավ նաև ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանը⁹⁸: Դատապարտող սուր հոդվածներով և աշխատություններով բողոքի ծայն բարձրացրեցին նաև տարրեր ազգությունների պատկանող ականավոր գործիչներ՝ Յոհաննես Լեփսիոսը, Արմին Վեգները, Անտուան Մեյեն, Ունե Պինոնը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրյուսովը, Հենրի Մորգենթաուն ու շատ ուրիշներ⁹⁹:

⁹⁷ Ո. Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 136-137:

⁹⁸ **Ա. Կ. Պողոսյան**, Գոյատևան պայքարի քառութիմերում, Երևան, 1988, էջ 155-157.

⁹⁹ Ա.Յ. Փափազեան, Դայերի ցեղասպանութիւնը ըստ Երիտրուլընի դատավարութեան մաստարդերի, Լու Աբելիս, 2005, էջ 21:

ու կոտորածների լուրջ տարածվել էր ողջ աշխարհով մեկ, Դաշնակից երկրները, հանձինս Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունների, 1915 թ. մայիսի 24-ին բռնորդի նոտա էին հղել Բ. Դուանը՝ իրապարակավ հայտարարելով, որ Օսմանյան Կայսրության այդ նոր ոճրագործությունները ուղղված են մարդկության և քաղաքակրթության դեմ, և որ դրանց համար իրենք պատասխանատու են ժամանչելու օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև՝ կոտորածներին մասնակից տեղական իշխանություններին¹⁰⁰: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Դաշնակից տերությունները փորձեցին կոտորածների պատասխանատուների նկատմամբ կիրառել միջազգային իրավունքի սկզբունքները, սակայն հաջորդ ամիսներին այդ նախաձեռնությունը հետզետե թուլացավ և, ի վերջո, զոհ գնաց քաղաքական խարդավանքներին, որոնք պայմանավորված էին Դաշնակից պետությունների շահերի հակասությամբ:

Տեղի տալով համաշխարհային հանրության ձնշման՝ Օսմանյան Կայսրության սովորան Մեհմեդ 6-րդ Վահիդեդինը (1918-1922) և հաճախ փոփոխվող կառավարությունների ներկայացուցիչները փոփացին պատժել Առաջին աշխարհամարտի տարիներին այստեղ կատարված ոճրագործությունների, մասնավորապես՝ հայերի տեղահանության ու կոտորածների հեղինակներին: Այս հարցում կարևոր դեր խաղաց նաև այն, որ 1918 թ. դեկտեմբերից իշխանության եկած կառավարությունները կազմվում էին Իթթիհադի հակառակորդ ու պատերազմի տարիներին հալածված Ազատություն և համաձայնություն (Hürriyet ve İtilâf) կուսակցության անդամներից:

Ահմեդ Իզգեր փաշան իր վարչապետության օրոր ներքին գործերի նախարար Ֆերհի Օքյարի միջոցով 1918 թ. հոկտեմբեր

¹⁰⁰ Զ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967, էջ 319:

ամսին հաղորդագրություն ուղարկեց կայսրության շրջաններ, որը նպատակ ուներ հետաքննել պատերազմի տարիներին հայերի դեմ կատարված հանցագործությունները: Հաղորդագրության մեջ նշոգձվում էր, որ հետաքննությունները պետք է իրականացվեն՝ «կասկածյալների պաշտոնից ու դիրքից անկախ»¹⁰¹:

Հայոց ցեղասպանության պատասխանատուների հետաքննությունը Օսմանյան Կայսրությունում գրեթե միաժամանակ կատարվում էր երեք տարրեր հետաքննիչ հանձնաժողովների կողմից: Դրանց մեջ առավել հայտնի է օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախմբի կողմից իրականացված հարցաքննությունը, որը կազմվեց Դիվանիերից ընտրված ազգությամբ արար պատգամավոր Ֆուադ բեյի հղած առաջարկի հիման վրա: Օսմանյան խորհրդարանի պատգամավորների պալատի ներքին կանոնադրության դրույթների համաձայն՝ այստեղ գործում էին իինգ հանձնաժողովներ: Ցուրաքանչյուր նստաշրջանի սկզբում վիճակահանությամբ կազմվող այդ իինգ հանձնախմբերից մեկն ստանձնում էր Գերագույն դատարանի պարտականությունները¹⁰²: Ֆուադ բեյի կողմից ներկայացված առաջարկով, որը նախատեսում էր Գերագույն դատարանին հանձնել Սայիդ Հայիմ ու Թալեբաթ փաշաների կառավարություններին, վիճակ հանվեց՝ այդ ուղղությամբ հարցաքննություն կատարելու համար, և դրա պարտականությունը դրվեց Հինգերորդ հանձնաժողովի վրա¹⁰³:

Ֆուադ բեյի հղած առաջարկում, որը բաղկացած էր առանց իիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և այլ մեղադրանքներ պարունակող 10 կետերից, հայերի տեղահանության խնդիրը շոշափված էր 5-րդ և 10-րդ կետերում: 5-րդ կետը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Իրավական ու մարդկային օրենքներին և

¹⁰¹ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", ss. 42-43.

¹⁰² Ferudun Ata, İsgal İstanbul'u'nda Tehcir Yargılamları, s. 35.

¹⁰³ Ան, էջ 36:

հատկապես մեր Սահմանադրության ոգուն ու տառին ամբողջովին հակասող ժամանակավոր օրենքներ, իրամաններ և դրույթներ իրապարակելով՝ երկիրը վերածեցին ողբերգությունների թատերաբեմի», իսկ 10-րդ կետում, առանց անունը հատակ նշվելու, հիշատակվում էր հայերի տեղահանության ու ոչնչացման մեջ մեծ դեր խաղացած Հատուկ կազմակերպությունը (Teşkilât-ı Mahsûsa). «Երկրի ներսում անկարգություններ իրականացրած ու կյանքի, գույքի և պատվի ազատության դեմ ուժնձգություններ գործած մի շարք ավագակալամբերի օժանդակելով՝ մասնակցեցին նրանց հեղինակած ողբերգություններին»¹⁰⁴:

Իր աշխատանքները 1918 թ. նոյեմբերին սկսած Հինգերորդ հանձնախումբը նախագահ Ընտրեց Աբդուլլահ Ազմիհն, իսկ քարտուղար՝ Շեմսենդիհն թեյին: Թեև հանձնախմբի անդամների մեծ մասը թուրքեր էին, սակայն ներգրավված էին նաև հայ, հոյն և արար պատգամավորներ¹⁰⁵: Հարկ է նշել, որ հանձնախմբի անդամների մեջ կային այնպիսի անձինք, ովքեր իրականում պետք է լինեին մեղադրյալի արռողին¹⁰⁶: Մինչև 1918 թ. դեկտեմբերի 7-ը տևած 15 նիստերի ընթացքում հարցաքննվեցին 15 նախարարներ, մեկ վարչապետ (Սայիդ Հայիմ փաշան) և երկու շեյխուլիսամ:

Հինգերորդ հանձնախմբի անդամները, որոնց մեծ մասն իթիհադական էր¹⁰⁷, խուսափում էին հայերի տեղահանությանը և կոտորածներին առնչվող հարցեր ուղղելուց՝ դա թողնելով արար պատգամավորներին: Այնուամենայնիվ, բոլոր հարցաքննվողներին էլ տրվում էին միևնույն հարցերը, որոնք հիմնված էին Ֆուադ թեյի առաջարկի 10 կետերի վրա: Թեև պատերազմի ժամանակ իշխանութ-

յուն եղած կառավարության անդամներն այս հարցաքննության ժամանակ խուսափել են ճիշտ պատասխաններից, ստել, ասել, թե իբր կառավարությունը տեղյակ չի եղել տեղահանության մասին, և փորձել հայերի տարագրությունը իիմնավորել «ուազմական միջոցամամբ», այնուամենայնիվ հարցաքննության ընթացքում արձանագրվել են նաև որոշ խոստովանություններ: Այսպես, օրինակ, արդարադատության նախարար Իբրահիմ թեյը նշել է, որ տեղահանության գործողությունն սկսվել է Տեղահանության մասին օրենքի ընդունումից շատ ավելի առաջ¹⁰⁸:

Սույն հանձնաժողովը հարցաքննված նախարարների մեկնաբանություններին և խոստովանություններին հավելել է նաև քազմաթիվ փաստաթղթեր, որոնց մեջ կային կոտորածներին վերաբերող խիստ գաղտնի հրահանգներ: Այս վավերագրերը հետազոյւմ հանձնվել են ուազմական ատյանների դատախազներին¹⁰⁹: Հինգերորդ հանձնախմբի իրականացրած հարցաքննության վերջնական նպատակն էր կասկածյալներին Գերագոյն դատարանին հանձնելը, որն էլ որոշվեց մեջլիսում կատարված քվեարկության միջոցով, սակայն 1918 թ. դեկտեմբերի 21-ին խորհրդարանը սովորական հրովարտակով լուծարվեց, և անհնար դարձավ հարցաքննության ենթարկվածներին Գերագոյն դատարան ուղարկելու մասին որոշման ընդունումը մեջլիսի կողմից¹¹⁰: 1919 թ. մարտի 17-ին տվյալ ժամանակաշրջանի վարչապետ Դամադ Ֆերիդ փաշայի հրամանով Հինգերորդ հանձնախմբի կողմից իրականացված հարցաքննության արձանագրությունները հանձնվեցին ուազմական ատյանի դատախազությանը¹¹¹:

¹⁰⁴ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 419.

¹⁰⁵ Osman Selim Kocahanoglu, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, s. 31.

¹⁰⁶ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 38.

¹⁰⁷ Հինգերորդ հանձնախմբի բոլոր անդամներն էլ ընտրվել էին 1915 թ. Միություն և պատգամություն կուսակցության ընտրացուցակով, տե՛ս նշվ. աշխ. 79-րդ էջ:

¹⁰⁸ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 423.

¹⁰⁹ Vahakn N. Dadrian, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosid, Belge Yayınları, 1995, s. 81.

¹¹⁰ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 424.

¹¹¹ Աշխ. էջ 454:

Հայոց ցեղասպանության պատասխանատուներին գտնելու ուղղությամբ կարևոր հետաքննություն է կատարել նաև Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովը (Tecrük-i Seyyi'ât) Tahkik-i Seyyi'ât Komisyonu), որը պատմությանը հայտնի է Մազհարի հանձնաժողով (Mazhar Komisyonu) անունով. քանի որ հանձնաժողովի նախագահն էր մինչև 1914 թ. ապրիլը Բիրլիսի նահանգապետի պաշտոնը զբաղեցրած Հասան Մազհարը: Դատավարություններին նախորդած հետաքննությունը հիմնականում իրականացվել է հենց այս հանձնախմբի կողմից: Թեև վերոհիշյալ հետաքննիչ հանձնաժողովի հիմնվելու մասին օսմանյան մամուլում հրապարակվում էր եղել միայն 1918 թ. նոյեմբերի 24-ին, քանի որ հանձնախումբը պաշտոնապես հիմնվել էր նոյեմբերի 23-ին, սակայն այն սկսել էր գործել դեռևս նոյեմբերի 13-ից:

Օսմանյան կառավարությունը 1918 թ. դեկտեմբերի 5-ին որոշել է վերոհիշյալ հանձնաժողովին կից ստեղծել նաև Արդարադատության ու Ներքին գործերի նախարարությունների անդամներից կազմված խառը հանձնաժողովներ, որոնք հետաքննությունը տեղում իրականացնելու նպատակով ուղարկվելու էին կայսրության շրջաններ: Սույն հետաքննիչ հանձնախմբերը թեև ընդգրկված էին ոստիկանության համակարգում, սակայն աշխատելու էին անկախությունը:

Մազհարի ղեկավարած հանձնաժողովի անդամներն էին Արդարադատության նախարարության իրավական գործերի տնօրենի տեղակալ Հարալամբոսը, վարչական տեսուչներ Էմին Հյուսնյուն և Օմերը, ինչպես նաև՝ Ստամբուլի Բողոքարկման դատարանի անդամ Արթին Մոսթիչյանը¹¹²:

Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովին, Օսմանյան քրեական դատարանների օրենսգրքի համապատասխան

¹¹² Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", s. 44.
¹¹³ Ferudun Ata, İsgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 65.

հոդվածների համաձայն, տրված էին լայն իրավասություններ, այդ թվում նաև՝ կասկածյալներին ձերբակալելու իրավունք¹¹⁴:

Մազհարի հանձնաժողովը հանդես եկավ նաև որոշ հավելյալ նախաձեռնություններով: Այսպես՝ սույն հետաքննող հանձնաժողովը, պաշտոնապես դիմելով կառավարությանը, պահանջեց, որպեսզի վերջինս մամլո գրասենյակի միջոցով մեկտեղի գինադադարի ժամանակաշրջանի թերթերում տպագրված այն բոլոր իրապարակումները, որոնք վերաբերում էին պատերազմի ընթացքում կատարված ոճրագործություններին: Հանձնաժողովը կարևորություն էր տալիս հատկապես թուրք և այլ ազգությունների պատկանող մուսուլման ականատեսների վկայություններին¹¹⁵:

Հանձնաժողովը, երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և Հատուկ կազմակերպությանը առնչվող խնդիրները և ընդգրկող 10 տպագիր հարց ուղղելով, գրավոր ու բանավոր ցուցմունքներ վերցրեց բազմաթիվ անձանցից, որոնց մեջ կային նաև խորհրդարանի 26 անդամներ: Թղթապանակներ նախապատրաստվեցին 130 հոգու վերաբերյալ, և պահանջվեց, որ տվյալ անձինք դատաքննության ենթարկվեն¹¹⁶: Մազհարի հանձնաժողովը երկու ամսվա ընթացքում ձեռք բերեց հայերի կոտորածների վերաբերյալ բազմաթիվ մեղադրական ապացույցներ, այդ թվում՝ ծածկագիր հեռագրեր¹¹⁷, պաշտոնական գրություններ, հրահանգներ ու հրամաններ, ինչպես նաև՝ ականատեսների վկայություններ: Ի դեպքում՝ վկաները հանձնաժողովին ցուցմունքներ էին տալիս երդվելուց հետո միայն¹¹⁸: Մազհարի հանձնաժողովը հետաքննությունն սկսելուց 3 շաբաթ հետո հայտնեց, որ արդեն

¹¹⁴ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 453.

¹¹⁵ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", ss. 44-45.

¹¹⁶ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, ss. 453-454.

¹¹⁷ Vahakn Dadrian, Histoire du Génocide Arménien, Stock, 1996, p. 507.

¹¹⁸ Raymond H. Kévorkian, La Turquie Face à ses Responsabilités. Les Procès des Criminels Jeunes Turcs (1918-1920), "Revue d'Histoire de la SHOAH le Monde Juif", N 177-178, Janvier-Août 2003, p. 189.

իսկ ծեռք են բերվել բավարար ապացույցներ, որպեսզի սկսվի դատավարությունը: Այս փաստաթղթերը 1919 թ. հունվարին հանձնվեցին Ստամբուլի ուսումնական ատյանին¹¹⁹: Սակայն Առաջին ռազմական ատյանը, վերոհիշյալ հետաքրննիշ հանձնաժողովների կողմից ծեռք բերված նյութերը թերի համարելով, իհմնեց նաև իր 5 հետաքրննիշ հանձնաժողովները, որոնք ևս հասու դարձան մի շարք հավելյալ տեղեկությունների¹²⁰: Այս բոլոր հետաքրննող հանձնաժողովների միջոցով ստացված ականատեսների վկայությունները, ծեռք բերված ծածկագիր հեռագրերը և այլ ապացույցներ տրամադրվեցին Հայոց ցեղասպանության մեջ մեղադրվողների դատաքրննությունն իրականացնող ռազմական դատարաններին:

Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրականացման մեջ մեղադրվողների առաջին ծերբակալությունները կատարվեցին 1918 թ. դեկտեմբերի սկզբներին Անկարայում, Չորումում և Արանայում: Կալանավորներին տեղափոխում էին Ստամբուլ: Նրանց շարքերում կային երիտրոլքական կուսակցության պարագլուխներ, պատգամավորներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, բարձրաստիճան գինվորականներ և այլ պաշտոնատար անձինք: 1919 թ. հունվար ամսվա սկզբին ծերբակալությունները դարձան ավելի զանգվածային¹²¹: Զանգվածային ծերբակալությունները շարունակվեցին նաև 1919 թ. փետրվար ամսին: Դեռևս հունվար ամսվա ընթացքում ազատազրկվել էին մոտ 40 բարձրաստիճան պաշտոնյաներ, հունվարի վերջերին ծերբակալված կասկածյաների թիվը հասավ 112 հոգու: Փետրվարին նոյնպես ծերբակալվել են պատգամավորներ ու նախկին նախարարներ՝ բոլորն էլ իթթիհաղականներ¹²², այդ թվում՝

¹¹⁹ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 454.

¹²⁰ Անդ:

¹²¹ Bilâl Şimşir, Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985, s. 35.

¹²² Տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում տպագրվող «Մեմերք» օրաթերթի համաձայն՝ 1919 թ. փետրվարի 16-ին Սիություն և առաջադիմություն կուսակցության

ներքին գործերի նախկին նախարար Իսմայիլ Զանփոլադը, սենատի նախկին նախագահ Հաջը Ադիլը, Միություն և առաջադիմություն կուսակցության նախկին քարտուղար Միհիաթ Շյութրյու Բիեղան, պատգամավորներ Հյուսիսի Զահիդ Յալընը և Զիա Գյորգալիքը¹²³:

Ստամբուլում ծերբակալվածներին ուղարկում էին Ռազմական նախարարությանը պատկանող ու Բերիաղա Բյույույյու անունը կրող կալանատուն: Նրանց շարքում էր նաև Բողազյանի կայմակամ (գավառապետ) Մեհմեդ Քեմալ բեյը, որը դարձավ հայերի զանգվածային ոչնչացումը կազմակերպելու մեղադրանքով մահվան դատապարտված առաջին պաշտոնյան:

Այդ ընթացքում Անտանտի երկրները, ձգտելով հավատարիմ մնալ 1915 թ. մայիսի 24-ին Բարձր դրանը հղած իրենց նոտային, նախ փորձեցին համատեղ ուժերով դատապարտել պատերազմի ժամանակ գործված ոճիրների և հատկապես Հայոց ցեղասպանության հեղինակներին: Այսպես՝ 1919 թ. հունվարին Փարիզում տեղի ունեցավ նախնական կոնֆերանս, որի արդյունքում ստեղծվեց մի հանձնաժողով, որն իրավասություն ստացավ գտնել պատերազմական հանցագործներին: Երրորդ ենթահանձնաժողով կոչված այդ մարմինը, որը հայտնի էր նաև «Տասնինգի հանձնաժողով» անունով, այլ ուժագործությունների հետ մեկտեղ քննեց նաև «պատերազմի ժամանակ կիրառված բարբարոսական և ապօրինի մեթոդները»: Հանձնաժողովը 1919 թ. մարտի 5-ին հանդես եկավ գեկուցմամբ, որում շեշտվում էին պատերազմի ժամանակ խաղաղ բնակչության հանդեպ կիրառված հետևյալ բռնարարքները՝ շարունակական բնույթ կրող ահաբեկչությունը, կոտորածները, անձնական սեփականության

ծերբակալված երևելի գործիչները ուսիհկանատնից ավտոմեքենաներով փոխադրվել էին ռազմական ատյանի կալանատուն: Տեղափոխման ընթացքում ուսիհկանների կողմից խստ միջոցներ էին ծեռնարկվել՝ միջադեպերի տեղիք չտալու ուղղությամբ, տես՝ Mevkûf İttihad Ercâmi, "Memleket", 17 Şubat 1919.

¹²³ Bilâl Şimşir, Malta Sürgünleri, ss. 57-58.

և հասարակությանը պատկանող գույքերի բռնագրավումն ու կողոպուտը, բռնագաղբն ու հարկադիր աշխատանքը¹²⁴: Հանձնաժողովի վերջնական գեկուցումն ընթերցվեց 1919 թ. մարտի 29-ին: Զեկուցումը հանգեց այն եզրակացությանը, թե «թշմամի երկրների այն բոլոր քաղաքացիները, ովքեր խախտել են մարդկային օրենքները կամ պատերազմական ավանդույթները, ենթակա են դատական հետապնդման»: Թեև գեկուցման մեջ բացահայտ կերպով չէր նշվում, բայց և այնպես սույն հանձնաժողովը հաշվի էր առել նաև Օսմանյան Կայսրության կողմից սեփական քրիստոնյա քաղաքացիների հանդեպ գործադրված ոճրագործությունները: Եենց այս հանձնաժողովի աշխատանքների շնորհիվ են Սկրի պայմանագրի մեջ ներառվել հայերի կոտորածների մեղավորներին դատական պատասխանատվության ենթարկելու դրույթները՝ 226-րդ, 228-րդ և 230-րդ հոդվածները¹²⁵:

Մեծ Բրիտանիան սկզբում մտադրված է եղել նաև սեփական դատարանի միջոցով դատապարտել պատերազմական ոճրագործներին¹²⁶: Այսպես՝ Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարությունը 7-ին Օսմանյան Կայսրության արտգործնախարար Մուստաֆա Ռեշիդ փաշայի հետ հանդիպման ժամանակ պատերազմական հանցագործներին դասակարգել էր հետևյալ երկու խմբում. 1. պատերազմի ընթացքում անգլիացի գերիների նկատմամբ բռնություններ գործադրածներ և 2. հայերի կոտորածների պատասխանատվությունը¹²⁷: Սակայն Ֆրանսիայի կարծիքով պատերազմական ոճրա-

¹²⁴ Vahakn Dadrian, Histoire du Génocide Arménien, p. 483.

¹²⁵ Անդ, էջ 484:

¹²⁶ Ուշագրավ է, որ իր հուշերում Մեծ Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջը հետևյալ կերպ է ներկայացնում այդ փաստը. «Դաշտության պայմանագրի առումով ակնհայտ էր, որ մենք չենք կարող այնպիսի պայմանագրի կնքել, որ ցրված հայ ժողովով թեկողները բռնվեն այն կեղեցի քահանույթին, որը սերունդներ շարունակ մորթել, բռնարել և քայլանել էր նրան ու շարունակել անարգել մինչև պատերազմի ավարտը», տե՛ս Լոյլ Ջորդ, Պրավда օ միրնի լուգուրաք, том երրորդ, Մոսկվա, 1957, ս. 398.

¹²⁷ Bilâl Şimşir, Malta Sür günleri, s. 32.

գործությունները դատելու իրավասությունը պետք է պատկաներ թուրքերին, իսկ Դաշնակից պետություններն ունենային միայն դատավարությունները վերահսկելու իրավունք: Զնայած Ֆրանսիայի դիրքորոշմանը՝ Մեծ Բրիտանիան չփոխեց այս հարցում իր ունեցած տեսակետը¹²⁸: Թուրքիայի կառավարությունը, ի դեմս վարչապետ Թեփիկ փաշայի, 1919 թ. փետրվարի վերջերին դիմելով չեզոք երկրներ Ըվեյցարիային, Դամիային, Խապանիային, Ըվեդիային ու Հոլանդիային, երկուական դատավորներ խնդրեց այս երկրներից՝ հայերի զանգածային ջարդերի պատասխանատուններին դատելու համար մի միջազգային դատարան իիմնելու նպատակով¹²⁹, սակայն Մեծ Բրիտանիան խոչընդոտեց այս նախաձեռնությանը¹³⁰, քանի որ մտադիր էր սեփական դատարանների միջոցով դատել պատասխանատուններին:

1919 թ. մարտի 5-ին Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարությունը ծովակալ Վերի միջոցով Բարձր դրամը հաղորդեց բրիտանական կառավարության մտադրությունը՝ պատերազմական հանցագործների վերաբերյալ, համաձայն որի՝ պահանջեց ծերրակալել մեղադրյալներին¹³¹: 1919 թ. մարտի 9-ին վարչապետ Դամադ Ֆերիդ փաշան այցելեց Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարություն և հայտնեց, որ կգործի՝ անգլիացիների ցանկությանը համապատասխան¹³²: Նոյն օրը անգլիացիների պահանջով ազատազրկվեցին պատերազմի տարիներին Օսմանյան Կայսրությունը դեկավարած կառավարությունների անդամները¹³³: Զերբակալությունները մեծ թափով շարունակվեցին նաև հաջորդ օրը՝ մարտի 10-ին, երբ կալանավոր-

¹²⁸ Անդ, էջ 41-42:

¹²⁹ Vartkes Yeghiayan, Malta Belgeleri, İngiltere Dışişleri Bakanlığı "Türk Savaş Suçluları" Dosyası, Belge Yayınları, 2007, s. 19.

¹³⁰ Bilâl Şimşir, Malta Sür günleri, ss. 62-63.

¹³¹ Zeki Saruhan, Kurtuluş Savaşı Günlüğü, I. Cilt, Mondros'tan Erzurum Kongresi'ne (30 Ekim 1918-22 Temmuz 1919), Öğretmen Yayınları, 1982, s. 160.

¹³² Bilâl Şimşir, Malta Sür günleri, s. 63.

¹³³ Zeki Saruhan, Kurtuluş Savaşı Günlüğü, s. 160.

վեցին վարչապետ Սայիդ Հալիմը, շեյխուլիսլամ Մուսա Թյագիմը, Ստամբուլի պատգամավոր Սալահ Ջինգյողը, սենատի նախագահ Ռիֆաթը, ներքին գործերի նախարար Ալի Մյունիֆը, հանրակրթական նախարար Շյուքրյուն, արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմին, ներքին գործերի նախարար Ֆերհին, Բոլուի պատգամավոր Հարիբը. Սինոպի պատգամավոր Հասան Ֆեհմին և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ¹³⁴: Ազատազրկվածների մեծ մասը կալանավորվում էր անգլիական ցուցակների համաձայն¹³⁵: Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից Օսմանյան Կայսրությանը ներկայացրած հանցագործների «սև» ցուցակներում հատկապես պետք է առանձնացնել այն 61 հոգու անունները, որոնց ցուցակը տրվել է 1919 թ. մարտի 15-ից ապրիլի 7-ը ընկած ժամանակահատվածում, քանի որ այդ անձինք կասկածվում էին հայերի տեղահանությունը և ոչնչացումը կազմակերպելու մեջ: Թուրքիայի կառավարությանը «սև» ցուցակներ էին ներկայացրել նաև ԱՄՆ-ը (5 հոգի) և Ֆրանսիան (12 հոգի): Ի դեպ՝ Ֆրանսիայի ցուցակում բոլոր կասկածյալների անունները համընկնում էին Մեծ Բրիտանիայի ցուցակում տեղ գտած անձանց հետ՝ բացառությամբ Յունուս Նադիի: Հավելենք, որ վարչապետ Դամադ Ֆերիդին հայերի ջարդերի պատասխանատուների ցուցակներ են ներկայացրել նաև ժամանակի Կ.Պոլսու հայոց պատրիարք Զավեն արքեպ. Տեր-Եղիայանը և Մխիթարյան միաբանության անդամները¹³⁶:

Զերբարկալվածների շարքում էին Իթթիհաթ վե թերաքքի կուսակցության նշանավոր անդամներ Ֆինանսների նախարար Զավիդ թեյք, լրագրողներ Յունուս Նադին ու Զելալ Նուրին, Անկարայի պատգամավոր Հիլմին, արդարադատության նախարար Իբրահիմ Փիրի-

¹³⁴ Yeni Tevkifler, "Memleket", 11 Mart 1919.

¹³⁵ Bilâl Şimşir, Malta Sürgünleri, s. 68.

¹³⁶ Hüsamettin Ertürk, İki Devrin Perde Arkası, İstanbul, 1996, ss. 288-289.

զաղեն, Զանքըրի պատգամավոր Ֆազը Բերքին, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Իզզեթը, արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեն և այլք¹³⁷: Հարկ է նշել, որ հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով ընդիհանուր առմամբ ծերբակալվել են 300 հոգի, որոնց մեջ եղել են նախարարներ, նահանգապետներ, գավառապետներ, ոստիկաններ ու ժանդարմներ¹³⁸:

Թեև ծերբակալվածների մեծ մասն արգելափակվում էր Բերքիրաղա բյույուլյու կոչվող գինվորական բանտում, սակայն նրանք չեն գտնվում խիստ հսկողության ներքո: Կալանավորներին շնորհված էին բանտին անհամապատասխան ազատություններ: Զերբակալվածներն ազատ ելումուտ էին անում մյուս բանտախցերը, այցի գնում միմյանց, խորհրդակցում իրար հետ, այդ թվում նաև՝ ապագադատալումներին հարմար պատասխաններ տալու հարցով: Նրանց այցելության եկած անձինք չեն խուզարկվում: Այցելուները, սննդից բացի, այլ իրեր պարունակող փաթեթներ էլ էին բերում կալանավորներին¹³⁹: Ի դեպ՝ հանցագործներին հաճախ էր այցելում նաև Մուտաֆա Ջեմալ (Աթաթուրք) փաշան¹⁴⁰: Կալանավորներին մեկ անգամ այցելել է նաև 15-րդ բանակային կորպուսի հրամանատար Թյագիմ Կարարեքիրը:

Հաշվի առնելով ազգայնական շարժման մեջ իթթիհադականների ունեցած մեծ դերը՝ այս կալանավայրը թերևս դարձել էր նոր՝ քեմալական շարժման կենտրոններից մեկը: Կալանավորները հնարավորություն ունեին խոսելու միմյանց հետ, իրենց մոտ կանչելու ցանկացած մարդու և տեղեկություններ ստանալու նրանից: Ինչպես իր հուշերում նշում է Հալիլ Մենթեշեն, հետաքննության համար պա-

¹³⁷ Taylan Sorgun, Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, Kamer Yayınları, İstanbul, 1998, s. 295.

¹³⁸ Osman Selim Kocahanoğlu, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, s. 39.

¹³⁹ Dr. Taner Akçam, Ermeni Tabusu Aralarınca Diyalogtan Başka Çözüm Var mı?, İstanbul, 2002, ss. 111-112.

¹⁴⁰ Taylan Sorgun, Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, s. 393.

տասխանատու պաշտոնյաները հաճախ գալիս ու քննարկումներ էին կազմակերպում մեղադրյալների հետ¹⁴¹: Այդ ազատություններն առաջին հերթին պայմանակորված էին այն հանգամանքով, որ երիտրուրքերը և նրանց կողմնակիցների մեծ մասը դեռ կարևոր պաշտոններ էին գրադեցնում Ռազմական, Ներքին գործերի և Արդարադատության նախարարություններում, ինչպես նաև՝ ոստիկանությունում: Այսպես, օրինակ, Յունուս Նադին իր հուշերում հայտնում է, թե ոստիկանատանն աշխատող Իթբիհադի կողմնակիցներից մեկը ձերքակալությունների ժամանակ հետևել է այստեղ տեղի ունեցող դեպքերին և օրվա մեջ 3-4 անգամ զանգահարելով իրեն՝ տեղեկություններ հաղորդել նախատեսվող ազատազրկումների մասին. «Այս իրավիճակում իմ հավանական ձերքակալման առնչությամբ գաղտնաբառ էինք որոշել, ըստ որի՝ «Հիվանդը լավ է» արտահայտությունը նշանակում էր վտանգ չկա: «Հիվանդի վիճակը մի քիչ վատացել է»-ն նշանակում էր, որ պետք է ավելի զգույշ լինել. իսկ «Հիվանդի վիճակը դեպի վատն է գնում» նախադասության իմաստն այն էր, որ նախանշաններ կան մեր ձերքակալման ուղղությամբ»¹⁴²:

Բանտային ոչ խիստ պայմանների հետևանքով գրանցվեցին նաև փախուստի մի քանի դեպքեր: Առաջինը Բերիրաղա բյույույու կալանատնից փախչել հաջողվեց հայերի ջարդարարներից Դիարբեքիրի նահանգապետ, բժիշկ Մեհմեթ Ռեշիդ բեյին¹⁴³, որը նաև Իթբիհաթ վե թերաքրի կազմակերպության առաջին 4 հիմնադիրներից մեկն էր¹⁴⁴: Ինչպես նշում է Միություն և առաջադիմություն կուսակ-

¹⁴¹ Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteş'in Anıları, ss. 237-238.

¹⁴² Yunus Nadi, Kurtuluş Savaşı Anıları, s. 19.

¹⁴³ Zeki Saruhan, Kurtuluş Savaşı Günlüğü, s. 114.

¹⁴⁴ Սեհներ Ուշիղն Առաջին համաշխահային պատերազմի տարիներին նաև ասորիների ոչնչացման հիմնական կազմակերպչներից եր: Նա այնպիսի դաժանությամբ էր իրականացնում Դիարբեքիրի վիլայեթի քրիստոնյաների սպանող, որ անգամ Թալեբազ ստիպած էր եղել նրան նամակ գրել, և Ուշիղը Դիարբեքիրի նահանգապետի պաշտոնից պելով՝ նշանակվել էր Անկարայի նահանգապետի պաշտոնում, տես՝ Arsen Avakyan, Գյուղա-

ցության գլխավոր քարտուղար Միդիաթ Շյուքրյու Բիեղան, Ուշիղի փախուստի կազմակերպչների հիմնական նպատակն էր նրան Անատոլիայի խորքերը հասցնելը, սակայն մի շարք անփութությունների հետևանքով այդ ծրագիրը ծախսվում է¹⁴⁵, և նա 1919 թ. փետրվարի 6-ին ինքնասպանություն է գործում Ստամբուլի Բեշիթքաշ թաղամասում, որտեղ շորջկալի մեջ է առնվում ոստիկանների կողմից: 1919 թ. օգոստոսի 8-ին բանտից փախուստի են դիմում նաև Էնվերի հորեղբայր Հայիլը և հայտնի իթբիհադական Քյուչյութ (Փոքր) Թալեաթը¹⁴⁶:

Տվյալ ժամանակաշրջանում Կոնստանդնուպոլիսում լուս տեսնող «Ժողովուրդ» հայկական օրաթերթի համաձայն՝ 1919 թ. սեպտեմբերին զինվորական բանտից փախչելու փորձ են արել նաև իթբիհադական Քարամյուրսելից Ալին և իր ընկերները, ովքեր միտումնավոր կերպով իրենք են առաջացրել բանտախցում, սակայն պահակների միջամտության շնորհիվ կրակը հանգցվել է¹⁴⁷:

Անմիջականորեն հայերի կոտորածների մեջ մեղադրվող ուրագործներին դատելու համար ուղամական դատարաններ հիմնելու առաջին նախաձեռնությունը գրանցվեց 1918 թ. դեկտեմբերի 14-ին, երբ այդ մասին իրապարակվեց սուլթան Մեհմեթ 6-րդի հատուկ իրովարտակը¹⁴⁸, որում նշված էր, թե երկրի տարրեր շրջաններում հիմնվելու էին ուղամական ատյաններ՝ տեղահանության հանցագործներին դատելու համար: Կայսրությունը բաժանվեց 10 դատաքննչական շրջանների:

1. Անկարայի, Բոլորի և Քաստամոնուի շրջանները,

¹⁴⁵ 1915 թ., ս. 48-49.

¹⁴⁶ Mithat Şükrü Bleba, İmparatorluğun Çöküşü, s. 62.

¹⁴⁷ Dr. Taner Akçam, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 112.

¹⁴⁸ «Ժողովուրդ» քաղաքական և հասարակական օրաթերթ, Կ.Պոլիս, 5 սեպտեմբեր, 1919, N 32 (278):

¹⁴⁹ Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), ss. 189-190.

2. Բոլորայի և Էղիոնեի վիլայեթները (նահանգներն) ու Զաքարայի սանջակը (Մարզը),
3. Տրապիզոնի վիլայեթն ու Սամսունի սանջակը,
4. Այդոնի վիլայեթը և Զանգրքալե ու Քարեսի սանջակները,
5. Քոնիայի վիլայեթն ու Էսքիշեհիր, Ջյութահիա, Քարահիսար և Անթալիա սանջակները,
6. Սվաս (Սեբաստիա) վիլայեթն ու Կայսերի (Կեսարիա) և Յոզդատ լիվաները (սանջակ),
7. Էրզրում, Վան, Բիրլիս վիլայեթները,
8. Դիարբերի (Տիգրանակերտ) և Մամուրեթ-ուլ Ազիզ (Խարբերդ) վիլայեթները,
9. Աղանա վիլայեթն ու Մարաշ սանջակը,
10. Ուրֆա, (Դեր) Ջոր և Այնթափ սանջակները¹⁴⁹.

Առաջին ռազմական ատյանն ստեղծվեց 1918 թ. դեկտեմբերի 16-ին. դատարանի նախագահ նշանակվեց Մահմուտ Հայրեթ փաշան¹⁵⁰: Օսմանյան Կայսրությունում ռազմական ատյանների գործութեալթյունը կարգավորվում էր 1910 թ. սեպտեմբերի 1-ին ընդունված «Զինված ավագակախմբերի ճնշման» ("Müselleh Çetelerin Tenkili") մասին որոշմանը համապատասխան: Տվյալ որոշման 24-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական դատարանների կողմից կայացված վճիռները պետք է հաստատվեին ռազմական դրության հրամանատարի կարգադրությամբ, իսկ մահվան դատավճիռները՝ սուլթանի վավերացմամբ¹⁵¹: Ըստ նոյն որոշման 25-րդ հոդված՝ ռազմական ատյանները պետք է կազմվեին մեկ նախագահից, չորս անդամներից ու մեկ դատախազից: Նախագահը և անդամներից երկուաը նշանակվելու էին Ռազմական նախարարության կողմից, իսկ մնացած երկու

անդամը՝ Արդարադատության: Ռազմական դատարաններում դատավարություններն անցնելու էին դրությաց¹⁵²: Դատավճիռները կայացվելու էին ձայների ճնշող մեծամասնությամբ: Դատապարտյալներն իրավունք չունեին բողոքարկելու դատավճիռները¹⁵³:

1918 թ. ստեղծված ռազմական ատյանի կազմի 7 քաղաքացիական անդամներից երեքը քրիստոնյա էին, սակայն այս դատարանների կազմերը հետագայում հաճախ էին փոփոխությունների ենթարկվելու:

1919 թ. հունվարի 8-ին Ստամբուլ կազմվում են առաջին, երկրորդ և երրորդ ռազմական ատյանները: Թեև ըստ օրենքի՝ հանցագործները պետք է դատվեին ոմքի գործադրված վայրում, սակայն 1919 թ. փետրվարի 5-ին Ստամբուլի ռազմական ատյանը Յոզդատի տեղահանության և կոտորածների պատասխանատունների դատավարության առաջին նիստում հատուկ վճիռ է կայացնում՝ մեղադրյալներին դատել մայրաքաղաքում¹⁵⁴: 1919 թ. մարտի 8-ին հրապարակված որոշմամբ դատարանները համարվում են «արտակարգ», և էական կարգավորությունը են արվում դատարանի կառուցվածքի և աշխատանքային ոմք մեջ: Հետագա ամիսներին ևս այլ փոփոխություններ են կատարվում¹⁵⁵:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտում Օսմանյան Կայսրության կրած պարտությունից և Մուդրոսի գինադադարի կնքումից

¹⁵² Թեև, ըստ սովորույթի, ռազմական ատյաններում իրականացվող դատաքննությունները հրապարակային չեն եղել, սակայն հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունները սկզբում բաց են եղել հասարակության առաջ, որպեսզի հանրությունը հանգվեր դրանց «անկողմնակալության» մեջ: 1918 թ. դեկտեմբերի 14-ին ռազմական դատարանների ստեղծման մասին որոշմանը կցվեց նաև դատական նիստերը դրուաց անելու մասին որոշմանը, սակայն 1920 թ. ապրիլի 23-ի որոշմամբ այդ դատաքննություններն սկսեցին փակ անցկացվել, տե՛ս Dr. Taner Akçam, Ermeni Tabusu Aralanırsın Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 98.

¹⁵³ Ferudun Ata, İsgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 75. 1920 թ. հոկտեմբերի 5-ին բողոքական վրա դրվագ արգելությունը է, տե՛ս նշվ. աշխ., էջ 273.

¹⁵⁴ Գրիգոր, Եղողափի հայաստանության վաերագրական պատմությունը, էջ 309-310:

¹⁵⁵ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 149.

¹⁴⁹ Osman Selim Kocahanoglu, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, ss. 37-38.

¹⁵⁰ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 133.

¹⁵¹ Ferudun Ata, İsgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 75.

հետո Երկրում առաջացած ծանր քաղաքական մթնոլորտում իիմնական մտավախություններից էր Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի ցեղասպանության կազմակերպման և իրագործման պատասխանատվությունից խուսափելը, ու միտում կար այն բարդելու միայն սահմանափակ քանակով անձանց (կուսակցական և կառավարական դեկապարների) վրա: Հետաքննող հանձնաժողովները նույնպես այդ ուղղությամբ էին գործում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՈՒԵՐԻ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻԹԹԻԿԱԿԱՆԿԱՆՆԵՐԻ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԴՐԱ ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԾԱՎԱՎՈԴ ՔԵՄԱԿԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

1. ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՌԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
(1919 թ. ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ԱՄՒՆԵՐ)**

Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների¹⁵⁶ դատաքննությանն¹⁵⁷ անդրադառնալիս պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները. նախ՝ դատավարության ժամանակ Օսմանյան Կայսրության իշխանությունները, ի դեմս սովորան Մեհմեդ 6-րդի ու վարչապետ Դամադ Ֆերհիդ փաշայի վարչակազմի ներկայացուցիչների, ծգտել են հայերի զանգվածային կոտորածները կազմակերպելու մեջ մեղավոր ճանաչել միայն Իթթիհաթ վե թերաքքի կուսակցությանն ու նրա ղեկավարած կառավարությանը և ոչ բոլոր պատասխանատուներին, և երկրորդ. իրենք՝ երիտթուրքերը ու

¹⁵⁶ Երիտրուքական կուսակցության և կառավարության անդամները սկզբում դատաքննվել են մասսին, սակայն դատավարության երկրորդ նիստում դատախազի պահանջով կառավարության անդամների գործի ուսումնափոխությունն առանձնացվել է: Այդիստով՝ 1919 թ. ապրիլի 28-ից մայիսի 17-ը թվով 7 նիստում դատաքննվել են իրենիքը վե թերաքի առաջնորդներն ու Յատուկ կազմակերպության նախագահը, ինչ 1919 թ. հունիսի 3-ից 26-ը՝ դարձայ 7 նիստում՝ կառավարության անդամները:

¹⁵⁷ Միերուն և առաջադիմություն կուսակցության ու կառավարության անդամների դատավարությունները պատմագրության մեջ հայտնի են նաև Գլխավոր դատավարություններ (Ana Davalar) անունով։ Գլխավոր դատավարությունների համար 1919 թ. հունիսի 5-ին կայացվել է մեծ ընդիհանուր դատավիճություն:

Արանց կողմնակիցները, ընդհակառակը, ամեն կերպ փորձել են չվարկաբեկել կոսակցության անուն՝ ծգտելով մեղքը բարդել միայն առանձին անհատների և ոչ թե կազմակերպության վրա:

Այսպես՝ 1919 թ. հունվարի 28-ին Ալի Ջեմալը¹⁵⁸ «Սարահ» օրաթերթում գրում էր. «4 կամ 5 տարի առաջ կատարվեց պատմության մեջ նախարեալ չունեցող ոძիր, մի հանցագործություն, որը սարսափ հարուցեց համայն աշխարհում: Եթե ուզում ենք պատկերացում տալ այդ ոճրագործության մասշտաբի և պայմանների մասին, ապա պետք է խոսենք ոչ թե 5-ից 10, այլ՝ 100 հազարավոր հանցագործների մասին: Արդեն բացահայտվել է, որ իրականում էլ այդ ողբերգությունը ծրագրված է եղել հրթիհարի կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումների հիման վրա»¹⁵⁹:

¹⁵⁸ Այլ թօնակը 1919 թ. մարտի 4-ից մինչև մայիսի 9-ը գրադեղորել է հանրակրթական նախարարի, իսկ 1919 թ. մայիսի 19-ից մինչև հունիսի 29-ը՝ ներքին գործերի նախարարի պաշտոնները:

¹⁵⁹ **Gülçek Günel**, *İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, Belge Yayınları*, İstanbul, 2006, s. 127.

¹⁶⁰ Խոսք զնում է Hürriyet ve İttilâf (Ազատություն և համաձայնություն) կուսակցության անդամներից կազմված կառավարության նախա:

յուն ասելով՝ չենք հասկանում օսմանյան ազգ: Միություն և առաջադիմություն կուտակցությունը ամբողջովին այլ ավագակախմրից էր բարեկացած: Տեղահանության և կոտորածների պատճառվ ոչ մի պատասխանատվություն չի ընկնում օսմանյան կառավարության և ազգի ուսերին: Կառավարությունն ու ժողովուրդը պատասխանատու կդառնան միայն այն դեպքում, եթե չդատապարտվեն տեղահանության և կոտորածների հեղինակներո»¹⁶¹:

Ինչ վերաբերում է իրենց՝ իթթիհաղականներին, ապա վերջիններս կուսակցության անդամների դատավարության ընթացքում, թուրք պատմաբան Օսման Սելիմ Ջոջահանօղլուի խոսքերով, «կյանքի գնով անզամ չեն մատնել կուսակցության գաղտնիքները». «Իթթիհաթ վե թերաքքի կուսակցությունը հիմնվել էր որպես գաղտնի կազմակերպություն, որի անդամները, Ղուրանի և գենքի վրա երդվելով, պատվի խոսք էին տվել մինչ մահ հավատարիմ մնալ այդ երդմանը: Նրանք կյանքի գնով անզամ չեն մատնել կուսակցության գաղտնիքները: Օրինակ՝ հարցաքննության և դատավարության ժամանակ նույնիսկ նրանք, ովքեր պետք եղածից ավելի տեղեկություններ ունեին Հատուկ կազմակերպության մասին, չեն մատնել այդ գաղտնի կազմակերպության ո՞չ կազմավորմանը, ո՞չ էլ կողմնակիցներին վերաբերող գաղտնիքները»¹⁶².

Կուսակցության անդամների դատաքննության ընթացքում երիտթուրթերի բռնած այդ դիրքորոշումը չի վրիհել ականատեսների ուշադրությունից ու հարուցել հասարակության որոշ շրջանակների վրդովմունքը և քննադատվել նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան մամուլում: Հատկապես խիստ են արծագանքել Ստարուլում տպագրվող «Սարահ» և «Ժողովուրդի ծայնը» օրաթերթերը: 1919 թ. մայիսի 8-ի համարում «Սուրբ Իթթիհատ» վերնագրի տակ «Ժողո-

¹⁶¹ Yalnız Taktil Değil, Tehcir de Dahil: Cemal Beyefendi'nin Beyanatı, "Alemdar", 17 Mart 1919.

¹⁶² Osman Selim Kocahanoglu, İttihat Terakki'nin Sorulması ve Yargılanması (1918-1919), s. 18.

Վոլորի ծայնը» պարբերականը գրում էր. «Սապահ խօսելով իթթիհատական պարագլիխներու դատավարութեան մասին, կը շեշտէ, ոչ առանց զայրոյթի, այն մտայնութիւնը, որ երեան կուգայ այդ դատավարութեան ընթացքին ամբաստանածներու տուած պատասխաններուն մէջ, որոնցով անոնք կը ջանան տակափն սրբացնել իթթիհատը, յայտարարելով, թէ ան մասնակից չէ եղած այն քստմնելի ոմիրներուն, որոնք վերածեցին ամբողջ երկիրը զարհութելի դժոխքի մը:

«Ամբաստանածները, կը գրէ Սապահ, կըսեն թէ իթթիհատը չէ ունեցած ոչ մէկ կապ «Միտաֆա-ի Միլլիէ»-ի¹⁶³, «Թէշքիլաթը Մախսուսէ»-ի եւ այլ տիրահոչակ ընկերութիւններուն հետ, որոնք պատերազմի տարիներուն ծձեցին ոչ միայն ազգին արիւնը, այլև ծուծը: Անոնք կուրանան, այն, այս կապը, բայց ատիկա ծանօթ է ամբողջ աշխարհին: Ամբաստանածները կըսեն նոյնպէս թէ Ընդհանուր Կերորնը և կամ իթթիհատը տեղեկութիւն չունին ջարդերու եւ ժողովուրդին շահադիտութեան հետեւանքով ենթարկած սովամահութեան մասին: (...) Կարելի՞ է միթէ գարշանք չզգալ այս լրենի յանդմութենէն և թանձր խաւարով պատած այս աղտոտ խղճմտանքներէն, որոնք ոչ մէկ կերպով կազդին արդարութեան լոյսէն: Կարելի՞ է միթէ չզգալ զգվանքով լեցուն զարմանք մը, տեսնելով որ կը պաշտանին տակափն այն մարդիկը, որոնք քշեցին երկիրը դէպի փորձութիւններու զարհութելի խորխորատը: (...) Այս մարդիկը ինչ պիտի պատասխանեն արդեօթ այն ծածկագիր հեռագիրներուն և փաստերուն, որ կը

¹⁶³ 1913 թ. հունվարին ազգային միասնությունն ապահովելու նպատակով իհմնված Ազգային պաշտպանություն (Müdafaa-i Milliye) կազմակերպությունը 1914 թ. հանրօգուտ է համարվել Պետական խորհրդի (Şurayi Devlet) կողմէց և կարևոր ծառայություններ մատուցել պատերազմի ժամանակ, տե՛ս Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 164. Թեև դատավարության ժամանակ իթթիհանականներն անընդհանուր են իրենց կազմ տվյալ կազմակերպության հետ, սակայն կուսակցության անդամների դատավարության 5-րդ միասնություններից Անկարայի պատասխանակիր ու Հատուկ կազմակերպության անդամ Աթիֆ Խոստովաններ, որ Ազգային պաշտպանություն կազմակերպությունը դրամական օժանդակություն է ցուցաբերել Հատուկ կազմակերպությանը, տե՛ս Taktik-i Vekayi, No 3543, 8 Mayis 1919, s. 31.

գտնին ամբաստանիչ մարմնի փաստացի որոշմագրին մէջ և որոնք անհերքելիօրէն կը հաստատեն թէ իթթիհատը ամենասերտ կապ ունեցած է «Թէշքիլաթը Մախսուսէ»-ին և ջարդերուն հետ: Թող ուրանան որբան կուգեն, թող պաշտպաննեն ու սրբացնեն իթթիհատը է՛ն ուռուցիկ պաշտպանողականներով, արժէք չունի, որովհետեւ իթթիհատը ալ մեռած է բարոյապէս ազգին համար»¹⁶⁴:

«Ժողովուրդի ծայնը» օրաթերթի խմբագրությունը, չհամաձայնվելով «Սաբահ»-ում տպագրված վերոհիշյալ հոդվածի վերջին նախադասության հետ, անում էր հետևյալ ճիշտ դիտարկումը. «Դժբախտաբար, հակառակ Սապահի զայրոյթին ու հավաստիացումներուն, իթթիհատը թէ՝ կապրի, եւ թէ՝ կը գործէ ամեն տեղ, նոյնիսկ հոս, Պօլսի մէջ, Սապահի քթին տակ: Որքան իրավունք ունէր կրթական նախարար Ալի Ֆէմալ պէյը, երբ կը գրէր Սապահին մէջ, ասկէ 1-2 ամիս առաջ, թէ՝ «որ Թուրքին մորթը քերելու ըլլաս, անոր տակէն իթթիհատմի մը դուրս պիտի գայ»:

Բացատրութիւններն անելորդ են»¹⁶⁵:

1919 թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդինի հատուկ իրամանագրով երիտրուրբական կուսակցության պարագլիխներն ու նախարարները հանձնվում են Ստամբուլի ուղմական արտակարգ ատյանին¹⁶⁶:

Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունն սկսվում է 1919 թ. ապրիլի 28-ին և շարունակվում մինչև նոյն տարվա մայիսի 17-ը¹⁶⁷: Դատավարության ժամանակ հեռակա կարգով մեղադրվում են 11, իսկ Եերկա՝ 20 կուսակցական

¹⁶⁴ «Սուլ-թը իթթիհատ», «Ժողովուրդի ծայնը» օրաթերթ, Կ. Պոլիս, 8 մայիս 1919, N 83-174:

¹⁶⁵ Ա.Յ.:

¹⁶⁶ Ա.Յ. Փափազեան, Զայերի ցեղասպանութիւնը ըստ երիտրուրբի դատավարութեան փաստաթերթի, էջ 23:

¹⁶⁷ «Թարվակմ-ի վերայի» պաշտոնաթերթում որպես դատավարության սկիզբ նշված 1919 թ. ապրիլի 27-ը սկսալմանը է, տե՛ս Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 86.

գործիչներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ: Դատաքննվել են ներկա հետևյալ պաշտոնյաները՝ վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, արտաքին գործերի նախարարներ Հալիլ Մենթեշեն և Ահմեդ Նեսիմին, արդարադատության նախարար Իբրահիմ Փիրիզաղեն, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Ջյուչյութ Թալեաթը, կուսակցության կենտրոնական կոմիտեի և Հատուկ կազմակերպության անդամ Ռոզա բեյը, կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միհեա Շյուբրյուն, կուսակցության կենտրոնական կոմիտեի և Հատուկ կազմակերպության անդամ Զիա Գյորալիքը, պարենավորման նախարար և կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Քարա Ջեմալը, հանրակրթական նախարար և Հատուկ կազմակերպության անդամ Ջյությութ բեյը, Ստամբուլի կայազորի հրամանատար և Հատուկ կազմակերպության անդամ Ահմեդ Ջևադը և Անկարայի պատգամավոր ու Հատուկ կազմակերպության անդամ Արիֆը:

Ենուակա կարգով դատվողներն էին՝ ներքին գործերի նախարար և վարչապետ Թալեաթը, ռազմական նախարար Էնվերը, ռազմածովային նախարար Ջեմալը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, հանրակրթական նախարար և Հատուկ կազմակերպության ղեկավարներից դոկտոր Նազըմը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և Հատուկ կազմակերպության Արևելյան վիլայեթների բաժանմունքի ղեկավար Բեհաեդին Շաքիրը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Ռյուսուին և հասարակական անվտանգության նախարար ու Հատուկ կազմակերպության անդամ Ազիզը:

Դատարանի կազմը բաղկացած էր հետևյալ անձանցից՝ նախագահ՝ ֆերիք¹⁶⁸ Նազըմ փաշա, անդամներ՝ գեներալ-մայորներ

¹⁶⁸ Ֆերիք զինվորական աստիճանը համապատասխանում է գեներալ-լեյտենանտի

Զերի, Մուստաֆա և Ալի Նազըմ փաշաներ ու գնդապետ Ռեջեփ Ֆերիքի բեյ: Դատախազ էր նշանակված Մուստաֆա Նազըմի բեյը:

Առաջին նիստում (1919 թ. ապրիլի 28) դատարանի նախագահը նախ, ըստ ընդունված կարգի, հաստատում է մեղադրյալների ինքնությունը, ապա դատական քարտուղարն ընթերցում է դատարանի այն որոշումը, ըստ որի՝ փախուատի մեջ գտնվող և հեռակա կարգով դատվող ամբաստանյալները մեղադրվում են երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, Հատուկ կազմակերպության հետ առնչություններ ունենալու և այլ ուրագործություններ կատարելու մեջ¹⁶⁹: Որոշման մեջ նշվում էր նաև, որ դատարանի նախագահը վերոհիշյալ մեղադրյալներին դատարան ներկայանալու համար տվել էր 10 օր ժամանակ, բայց քանի որ չեն ներկայացել, համարվում են օրինազանցներ ու գրկում քաղաքացիական իրավունքից, իսկ նրանց գույքը բռնագրվում է¹⁷⁰: Սույն որոշման ընթերցումից հետո նախագահը հաստատում է նաև մեղադրյալների դատապաշտպաններին, այնուհետև դատական քարտուղար Ծեֆիքի կողմից ընթերցվում է մեղադրական եզրակացությունը¹⁷¹:

Հարկ է առանձնահատուկ անդրադառնալ 41 միավոր պաշտոնական և կիսապաշտոնական բնագիր փաստաթղթերի հիման վրա կազմված մեղադրական ակտին, քանի որ այն բաղկացած էր այնպիսի խիստ կարևոր վավերագրերից, ինչպիսիք են ծածկագիր հեռագրերն ու բարձրաստիճան պաշտոնյաների և զինվորականների տված վկայությունները: Բացի այդ՝ Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարության ամբաստանագրում արձանագրված փաստերն օգտագործվել են նաև այլ դատաքննություններում:

Լուչմանը:

¹⁶⁹ Taksim-i Vekayi, No 3540, 5 Mayıs 1335 (1919), ss. 3-4.

¹⁷⁰ Անդ:

¹⁷¹ Անդ, էջ 4-9:

յունների ժամանակ, հանգամանք, որը մեկ անգամ ևս հաստատում է, որ հայերի կոտորածները համակարգվել են երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի ու կառավարության կողմից: Գլխավոր ամբաստանագրում տեղ գտած վավերագրերի մեծ մասը բաղկացած էր կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության անդամների կողմից հղված գաղտնի հրահանգներից ու ծածկագիր հեռագրերից: Մեղադրական ակտում նշվում էր, որ դատական գործի հիմնական նպատակը հայերի տեղահանման ժամանակ տեղի ունեցած ողբերգության հետաքննությունն է: Մեղադրական եզրակացությունն ընդգծում էր, որ հայերի բնաշնչումը նախապես որոշվել էր իթթիհաթ վե թերաքի կուսակցության կենտրոնական կոմիտեի մանրամասն բննարկումների արդյունքում: Այսպես՝ գրավոր կերպով վկայություն տված օսմանյան երրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիր փաշան հայտնել էր, թե հայերի հանդեպ կատարված վայրագրություններն ու կոտորածները, ինչպես նաև՝ ունեցվածքի կողոպուտը որոշված են եղել Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, և որ այդ ջարդերի իրականացման համար Բեհաեղին Շաքիրը¹⁷² երրորդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մարդասպաններ, որոնց ղեկավարել է անձամբ¹⁷³: Ամբաստանագրում շեշտվում էր, որ Միություն և ա-

ռաջադիմություն կուսակցության ղեկավարների կողմից բանտերից ազատված հանցագործներից ստեղծված Հատուկ կազմակերպության բուն նպատակն է եղել ոճրային արարքներ կատարելը, և նշվում, թե տվյալ կազմակերպությունը սերտ կապերի մեջ է եղել իթթիհաթ վե թերաքի հետ, և որ սույն կազմակերպության գլխավոր պաշտոնյաները հանդիսանում էին կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամները, նաև ընդգծվում, թե Հատուկ կազմակերպության ավագակները հետագայում օգտագործվել են տեղահանման ենթարկվող հայերի բնաշնչումը կազմակերպելու համար: Մեղադրական ակտն անդրադառնում էր նաև գաղտնի բնույթ կրող Հատուկ կազմակերպությանը և կենտրոնական կոմիտեին պատկանող փաստաթղթերի վերացմանը: Մեղադրական եզրակացության մեջ ընդգծվում էր, թե հայերի տեղահանության ընթացքում տարբեր ժամանակներում և վայրերում տեղի ունեցած հանցագործությունների հետաքննությունը բացահայտել է, որ այդ ոճիրները ոչ թե կրել են տեղական բնույթ, այլ կանխամտածվել և իրականացվել են մեղադրյալներից կազմված «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով ու գաղտնի հրամաններով, և որ լիովին ապացուցվել է, թե հայերի կոտորածները կատարվել են թալեաթի, Էնվերի և Զեմալի անմիջական հրամաններով ու գիտությամբ: Ամբաստանագիրն անդրադառնում էր կուսակցության պատասխանատու քարտուղարների, պատվիրակների և տեսուչների այն առանցքային դերին, որ նրանք ունեցել էին ցեղասպանության իրականացման գործում, և որպես օրինակներ մատնանշում էր Բոլուից և այլ վայրերից հայերի տեղահանությունն իրականացրած Բոլոսայի պատասխանատու քարտուղար Միդիատին, ինչպես նաև՝ հայերի ջարդերի կազմակերպիչներ Բալըբեսիրի տեսուչ Նազըմին, Զանքըրը պատասխանատու քարտուղար Զեմալ Օղուզին, Անկարա-

¹⁷² Հատուկ կազմակերպության անդամ Գալիք Կարդարն իր հուշերում գրում է, թե հայերի տեղահանման մասին որոշման ընդունումից հետո Բեհաեղին Շաքիրը դիմում է ակնառու իթթիհաթականներ Ջյուսր Սամիին և Սարանջալը Ջաքըրին՝ առաջարկելով իր հետ մեկնել էրզում և մասնակցել հայերի տեղահանությանը: Նրանց հարցին, թե ինչ է լինելու հայերի ունեցվածքի և սեփականության հետագա ճակատագիրը, և թե արդյոք այս ուղղությամբ որևէ ծրագիր կա, թե ոչ, Բեհաեղին Շաքիրը պատասխանում է. «Ի՞նչ ծրագիր պետք է լինի, ասացինք, չէ», հայերին տեղահանելու ենք... մնացած գլխի ընկեր», տե՛ս Իտիհա և Տերակի լունդ Դօնենլեր, Անլատ: Galip Vardar, Yazar: Samih Nafiz Tansu, İstanbul, Yeni Zamanlar Yayıncılık, 2003, s. 442.

¹⁷³ Հայերի է նշել, որ Վեհիր փաշայի թթապանակի մեջ մասը 1919 թ. սեպտեմբերին գողացվել է ուղղական ատյանից: Այդ անհետացած փաստաթղթերը եղել են հայերի կոտորածները հաստատող պաշտոնագրեր, տե՛ս «Ժողովուրդ» օրաթերթ, 9 սեպտեմբեր, 1919, N 35 (281):

յի պատասխանատու քարտուղար Նեջաթիին և այլոց¹⁷⁴: Մեղադրական ակտում ընդգծվում էր, որ իթթիհաղականներն օգտվել են Առաջին համաշխարհային պատերազմի ընծեռած հնարավորությունից՝ իրենց գաղտնի ծրագրերը (իմա՝ Հայոց ցեղասպանությունը) իրականացնելու համար: Ամբաստանագրում հերքվում էր նաև Մեծ Եղենի հեղինակների և այս փաստը ժխտող թուրք պատմաբանների այն «փաստարկը», թե տեղահանությունն իրականացվել է որպես ռազմական միջոցառում: Ըստ մեղադրական ակտի՝ հաշվի առնելով այն փաստը, որ, օրինակ, Բրոլուն¹⁷⁵ չէր համարվում պատերազմական գոտի, աներկրայորեն հավաստում է, որ հայերի տարագրումն ուղղված էր կուսակցության նպատակների և մտադրությունների իրականացմանը. Աման գործողությունները չին բխում ռազմական անհրաժեշտությունից: Դրանք ոչ պատճիչ գործողություններ էին, ոչ էլ կարգապահական:

Մեղադրական եզրակացությունը հատուկ անդրադառնում էր նաև հայերի բնաջնջման մեթոդներին, հայերի ունեցվածքի յուրացմանը և կատարված չարաշահումներին: Ամբաստանագրում շեշտվում էր, որ երիտրութերի կուսակցության անդամների մեծ մասը հարստացել էր հայերի անշարժ ու շարժական գույքերի կողոպտման հաշվին:

Ամբաստանագրում նշվում էր, որ կուսակցությունն ու կառավարությունը բացահայտ իրաման էին արձակել հայերի կոտորածների համար: Որպես ապացույց բերվում էր այն ծածկագիր հեռագիրը, որում իրահանգվում էր ոչնչացնել հեռացված հայերին: Փաստաթթում ընդգծվում էր, որ հայերի կոտորածների գործում, կուսակցության

յան կազմակերպության ցանցի հետ մեկտեղ, ներգրավված են եղել քաղաքացիական և ռազմական իշխանությունները, և որ ջարդերն ուղղորդվել ու վերահսկվել են Ներքին գործերի նախարարության և անձամբ նախարար Թալեաթի կողմից: Ամբաստանագրում շեշտվում էր նաև, որ հայերին պաշտպանել համարձակվող պաշտոնյաններին ու հասարակ մարդկանց սպառնացել էին պաշտոնագրկմամբ և անգամ մահապատժով: Որպես օրինակ էր մատնանշվում երրորդ քառակի հրամանատար Մահմուտ Քյամիլի ստորագրությունը կրող հեռուագիրը, ըստ որի բովանդակության՝ յուրաքանչյոր մահմեդական, ով կապաշտպանի որևէ հայի, կախաղան կրաքրացվի հենց իր տան դիմաց, իսկ նրա տունը հիմնովին կիրկիզվի: Եթե հային պաշտպանողը պետական պաշտոնյա է, ապա նա կիեռացվի աշխատանքից ու կիանձնվի ռազմական դատարանին:

Գլխավոր մեղադրական ակտում բերված էին նաև տեղահանված ու սպանված հայերի թվի մասին մի շարք վիճակագրական տվյալներ: Ըստ ամբաստանագրի՝ Անկարայից տեղահանվել էր 61 հազար, իսկ Դիարբեքիրից՝ 120 հազար հայ:

Ամբաստանագրում անդրադարձ կար նաև մեղադրյալների ու վերջիններիս դատապաշտպանների այն պնդմանը, թե ռազմական դատարանն իրավասու չէր դատելու նրանց, և որ իրենք պետք է դատվեն Գերագույն դատարանի կողմից: Դատախազը համարում էր, թե նախարարների ոճրագործությունները չեն կատարվել ի պաշտոն, այլ եղել են սովորական հանցագործություններ:

Ըստ մեղադրական եզրակացության՝ գլխավոր հանցագործներ էին համարվում Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Ջևադը, Բեհաեդին Շաքիրը, դոկտոր Նազըմը, Արիֆը, Ուզա և Ազիզ բեյերը, իսկ մասնակիցներ՝ Միղիար Շյուքրյուն, դոկտոր Ոյուսուիին, Քյուչյուր Թալեաթը, Զիա Գյոքալիը, Քարա Քեմալը, Ահմեդ Նեսիմին, Շյուքրյուն,

¹⁷⁴ Կուսակցության պատասխանատու քարտուղարների դատաքննությունն իրականացվել է 1919 թ. հունիսի 21-ից մինչև 1920 թ. հունվարի 3-ը, դատավճիռը կայացվել է 1920 թ. հունվարի 8-ին, տես «Թարգման-ի Վերայի» պաշտոնաթերի 3586, 3589, 3596 և 3772 համարներ:

¹⁷⁵ Գավառ Քաստանոնուում:

Հայիլը և Սայիդ Հայիմը:

Հարկ է նշել, որ ռազմական արտակարգ ատյանների՝ նախարարներին դատելու իրավասության խնդիրը մեղադրյաների դատապաշտանների կողմից դարձյալ բարձրացվում է դատավարության առաջին նիստում: Փաստաբանների կողեգիայի նախագահ և Իրավաբանական դպրոցի պրոֆեսոր Զելյալեղյին Արիֆի¹⁷⁶ գլխավորությամբ ամբաստանյալների շահերը պաշտպանող 16 դատապաշտաններն այդպիսով ձգտում էին ժամանակ շահել և հետաձգել դատը: Մեղադրյալների փաստաբաններն էին Հասան Հայրի Թանը և Զելալեղյին Արիֆը, ովքեր պաշտպանում էին ամբաստանյալ Սայիդ Հայիմին, Էսադը, Քյազզը և Թահսինը՝ Հայիլ Մենթեշին, Սաքին ու Էսադ Մուհիլսը՝ Ահմեդ Նեսիմիին, Սադեղյին Ֆերիդը՝ Եյուբյուին, Մահմուդ Մահիրը, Յուսուֆ Զեմալն ու Քադրին՝ Իբրահիմ Փիրիզադեին, Սադեղյին Ֆերիդը, Ահմեդ Ռամիզը և Մահմուդ Մահիրը՝ Միհիաթ Եյուբյուին, Հայդար Ռըֆաթն ու Խսմայիլ Թևֆիկը՝ Ջիա Գյոբալփին, Միշոն Վենտուրան՝ Զևադին և Ալի Հայդարը՝ Մուսա Քյազիմին և Հաշիմին¹⁷⁷:

Դատապաշտանները դատավարության և' առաջին, և' երկրորդ նիստերի ընթացքում հարցականի տակ են դնում ռազմական արտակարգ ատյանների՝ նախարարների նկատմամբ դատաքննություն իրականացնելու իրավասությունը՝ այն վերապահելով Գերագոյն դատարանին և իրենց առարկությունները փորձելով իմնավորել օսմանյան սահմանադրության մի շարք կետերով: Պաշտպանող կողմը մասնավորապես վկայակոչում էր սահմանադրության 31-րդ հոդվածը, համաձայն որի՝ հանցագործությունն ի պաշտոնե կատարելու

դեպքում նախարարներին իրավագոր էր դատելու միայն Գերագոյն դատարանը: Ըստ պաշտպանող կողմի՝ հանցագործության՝ անձնական բնույթ ունենալու դեպքում անգամ ընդդատությունը պետք է անցներ քրեական և ոչ թե ռազմական դատարաններին: Որպես փաստարկ քերվում էր նաև այն հանգամանքը, թե 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախարարներին հարցաքննած օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը որոշում էր կայացրել նրանց գործերն ուղարկել Գերագոյն դատարան¹⁷⁸:

Ռազմական ատյանը գլխավոր դատավարության առաջին (1919 թ. ապրիլի 28) և երկրորդ (1919 թ. մայիսի 4) նիստերի ժամանակ հերքեց դատապաշտանների փաստարկները ռազմական ատյանի անիրավասության վերաբերյալ: Նախ մերժվում էր հանցագործությունների՝ պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված լինելու փաստարկը. ընդգծվում էր, որ մեղադրյալները դատվում են ոչ թե որպես նախարարներ, այլ՝ գաղտնի ու դավադիր կազմակերպության անդամներ¹⁷⁹:

Ի պատասխան պաշտպան փաստաբանների՝ քրեական (և ոչ թե ռազմական) ատյանի իրավասությունը պաշտպանող փաստարկի՝ ռազմական դատարանը նշում է, որ շարունակում է գործել դեռևս Իթթիհատի իշխանության տարիներին հայտարարված ռազմական դրությունը, որի դեպքում, ըստ սահմանադրության՝ ռազմական դրությունը վերաբերող 113-րդ հոդվածի՝ բոլոր քաղաքացիական օրենքները ժամանակավորապես կասեցվում են¹⁸⁰:

Դատարանը նմանապես մերժում է ամբաստանյանների այն փաստարկը, ըստ որի՝ օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը որոշել էր նախարարների գործերն ուղարկել Գերագոյն

¹⁷⁶ Քետազայում քեմալական շարժմանը մասնակցած Զելյալեղյին Արիֆը դարձել է Անկարայի Մեծղիսի (Ազգային ժողովի) պատգամավոր, ապա՝ Միլլի մեծղիսի երկրորդ նախագահը, ավելի ուշ՝ նաև՝ արդարադատության նախարար:

¹⁷⁷ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 70.

¹⁷⁸ Takvim-i Vekayi, No 3540, 5 Mayıs 1335 (1919).

¹⁷⁹ Անդ:

¹⁸⁰ Անդ:

դատարան: Ռազմական ատյանի հերքման համաձայն՝ սովթանի կողմից խորհրդարանի լուծարման պայմաններում (1918 թ. դեկտեմբերի 21) Հինգերորդ համանախմբի անդամների քվեարկությունը չէր կարող օրինական համարվել: Եվ ի վերջո՝ ռազմական ատյանին մեղադրյալներին դատելու իրավունք էր շնորհվել սովթանի հատուկ ֆերմանով (իրովարտակով)¹⁸¹:

Կուսակցության անդամների դատավարության երկրորդ նիստում ևս (1919 թ. մայիսի 4) դատարանը հերքում է ռազմական ատյանի իրավասության խնդիրը հարցականի տակ դնող փաստարկները՝ ընդգծելով, որ այդ որոշումն ընդունվել է «առանց շեղվելու Ղուրանի փառապանծ օրենքներից և լի է Աստծո հանդեպ երկյուղածությամբ»¹⁸²:

Ռազմական ատյանների՝ կուսակցության անդամ նախարարներին դատելու իրավասության խնդիրն արժարծվել է նաև տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում իրապարակվող թերթերում: Հիշատակման է արժանի հատկապես «Ժողովուրդի ձայնը» օրաթերթը, որի էջերում տպագրվում են խնդիրը լուսաբանող մի շարք հոդվածներ: 1919 թ. մայիսի 3-ի համարում այս հարցի շուրջ իրենց տեսակետն են արտահայտում երկու հայտնի եվրոպացի իրավագետներ: Առաջինը, որը չէր ցանկացել իրապարակել իր անունը, շեշտում է մեղադրյալների ոչ թե որպես նախարար, այլ իրու գաղտնի կազմակերպության անդամ դատվելու հանգամանքը: Նոյն կերպ է խնդիրը մեկնարանում նաև երկրորդ մասնագետը՝ ֆրանսիացի ծանաչված փաստարան Սեզար Բոնիեն¹⁸³:

Նշված պարբերականի հաջորդ համարում հայ հայտնի իրա-

վարան Հմայակ Խոսրովյանը այս հարցի առնչությամբ գուգահեռներ է անցկացնում ֆրանսիական օրենսդրության հետ: Մասնագետը նշում է, թե նախարարներին դատելու իրավասությանը վերաբերող համանման օրենք առկա է նաև Ֆրանսիայի սահմանադրության մեջ, սակայն վերոհիշյալ օրենքը ոչ թե պարտադրում է, այլ՝ կարելիություն ենթադրում: Անդրադառնալով երիտրութերի կուսակցության անդամների դատավարությանը՝ հայ իրավաբանը պաշտպան փաստաբաններից պահանջում է մատնանշել որևէ բացառիկ օրենք, որը կիաստատի, թե սովորական դատարաններն իրավասու չեն դատելու նախարարներին: Որպես վերջնական փաստարկ՝ Խոսրովյանը հղում է կատարում դատարանի կողմից արդեն նշված այն փաստարկին, թե իթթիհադականների օրոք հայտարարված ու դեռևս շարունակվող ռազմական դրությունը կասեցնում է քաղաքացիական, այդ թվում և՝ սահմանադրական բոլոր օրենքները¹⁸⁴:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ դատապաշտպանների բերած այն փաստարկը, թե նախարարները հանցավոր էին ի պաշտոնե, համապատասխանում էր իրականությանը. թեև հայերի բնաշնչման որոշումն ընդունվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստերում, սակայն Հայոց ցեղասպանության պատասխանատվությունն ընկնում էր նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան կառավարության ամբողջ պետական ապարատի վրա, քանի որ «Տեղահանության մասին» որոշումը հաստատվել էր Նախարարների և Պետական խորհրդների կողմից, իսկ հայերի տեղահանությունն ու ոչնչացումն իրականացվել էր պետական օդակների և իշխանության միջոցով:

Կուսակցության և կառավարության անդամների երկրորդ նիստում՝ 1919 թ. մայիսի 4-ին, գլխավոր դատախազ Մուստաֆա Նազ-

¹⁸¹ Անդ:

¹⁸² Անդ, № 3543, 8 Mayis 1335 (1919).

¹⁸³ «Դատերազմական Ասեանը իրաւասո՞ւ է դատելու իթթիհատական բորենիները (մեր հետարանութիւնը)», «Ժողովուրդի ձայնը», 3 մայիս, 1919, N 79-170:

¹⁸⁴ «Պատերազմական Ասեանը իրաւասո՞ւ է դատելու իթթիհատական բորենիները (մեր հետարանութիւնը)», «Ժողովուրդի ձայնը», 4 մայիս, 1919, N 80-171:

մին հայտարարում է, որ նախարարների հարցաքննությունը դեռևս ավարտված չէ, և պահանջում է հետաձգել վերջիններիս դատաքննությունը¹⁸⁵: Դատարանի կազմն առանձնացնում է կառավարության անդամ եղած մեղադրյալների դատական գործերը և դրանք հետ ուղարկում դատախազություն: Այս մեղադրյալները պետք է դատվեին այն նախարարների հետ, որոնց հարցաքննությունը դեռ չէր ավարտվել, կամ ովքեր դեռ չէին ձերբակալվել¹⁸⁶. Այդպիսով՝ մինչև 1919 թ. մայիսի 17-ը ներկա կարգով քննվում են միայն Միդիար Շյությունի, Զիա Գյուքափի, Քյուչյուք Թալեաթի, Ռոզայի, Աթռֆի ու Զևայի, իսկ հետակա կարգով՝ թիշկներ Նազըմի, Բեհանդիին Շաքիրի, Ռյուսու- հիի և Ազիզի գործերը:

Կուսակցության անդամների դատավարության ժամանակ մեղադրյալները դատարանի նախագահին տված հարցերին պատասխանելիս տալիս են միանման ցուցմունքներ: Այս առումով մեծ դեր էր խաղացել այն, որ, ինչպես արդեն նշել ենք, ամբաստանյալներին բանտում հնարավորություն էր տրվել իրար հետ զրուցել ու քննարկել իրավիճակը և համարել ապագայում իրենց կողմից տրվելիք ցուց- մունքները: Հատկապես առաջին նիստերի ընթացքում ամբաստանյանները տալիս են խուսանավոր պատասխաններ, միաբերան ասում, թե տեղյակ չեն եղել հայերի կոտորածների մասին, ծևացնում, թե չեն հասկանում նախագահի հարցերը, ասում, թե բոլորովին չեն հիշում այն ժամանակվա դեպքերը:

Սակայն դատավարության հետագա նիստերի ժամանակ ամբաստանյալները չեն կարողանում շարունակել այդ ուազմավարությունը: Ռազմական ատյանի կազմը, տարբեր մեթոդների դիմելով, կարողանում է կոտրել նրանց համառությունը: Կուսակցության անդամների դատավարության վերջին նիստերում դատարանը կիրառում է

խաչաձև հարցաքննության մեթոդը, անսպասելիորեն որպես փաստ ընթերցել է տալիս մեղադրյալների սեփական ստորագրությունը կրող ծածկագիր հեռագրեր կամ բանավոր ու գրավոր վկայությունները: Այս բոլոր մեթոդներն արդյունավետ են լինում, և մեղադրյալները, հրաժարվելով կոշտ ժխտողական դիրքորոշումից, սկսում են հայտնել որոշ կարևոր տեղեկություններ:

Այսպես՝ դատավարության վեցերորդ նիստի ժամանակ (1919 մայիսի 14) Հատուկ կազմակերպության անդամ Աթիֆը խոստովանում է, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն օժանդակել է Թեղթիլյար-ը մահսուսային¹⁸⁷:

Նոյն նիստում վերոնշյալ մեղադրյալը հաստատում է նաև Հատուկ կազմակերպության ջոկատների՝ բանտից հանված հանցագործներից կազմավորված լինելու փաստը¹⁸⁸:

1919 թ. ապրիլի 10-ին Յոզդատի հայոց տեղահանության և կոտորածների դատավճռով կախաղան բարձրացված Բողազըյան գավառի կայմակամ Մեհմեդ Քեմալի մահապատժից հետո ներքաղաքական մքնոլորտը Թուրքիայում խիստ լարվում է: 1919 թ. մայիսի 15-ին, երբ Հունաստանը գրավում է Իզմիրը, արդեն իսկ լարված մքնոլորտն ավելի է շիկանում: 1919 թ. մայիսի 20-ից մինչև 23-ը զանգվածային ցոյցեր են կազմակերպվում Ստամբուլում: Քաղաքում անգամ լուրեր էին տարածվել, թե այն կալանատունը, որում արգելափակված էին բարձրաստիճան պաշտոններ ունեցած մեղադրյալները, այսինքն՝ Բերիրաղա Քյուլյուղու կոչված բանտը, զինված հարձակման էր ենթարկվելու միջտ այնպես, ինչպես Բաստիլը՝ ժամանակին¹⁸⁹: Ի դեպքում 1919 թ. մայիսին այս բանտում արդեն կալանավոր-

¹⁸⁵ Takvim-i Vekayi, No 3543, 8 Mayıs 1335 (1919).

¹⁸⁶ Ան, էջ 103:

¹⁸⁷ Vahakn N. Dadrian, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosit, s. 67. Բերիրաղա բյուլույու կալանավայրը հսկվում էր նաև բիշտանացիների և ֆրանսիացիների կողմից, տես՝ Bilâl Şimşir, Malta Sürgünleri, s. 113.

Ված էին առնվազն 250 հոգի¹⁹⁰: 1919 թ. մայիսի 23-ին Ստամբուլում տեղի է ունենում դատավարության դեմ ուղղված ամենազանգվածային ցուցը, որին մասնակցում են 200 հազար հոգի: Նրանց մեծ մասը իթթիհաղպահական էր¹⁹¹: Այս ցուցերը վկայում են, որ երիտրուրքերը դեռ շարունակում են մեծ ուժ ներկայացնել երկրություն: Վարչապետ Դամադ Ֆերիդի կառավարությունը լարվածությունը մեղմելու նպատակով ազատ է արձակում վերոհիշյալ կալանավայրում արգելափակված 41 բանտարկյալների, ովքեր կասկածվում էին հատկապես հայերի կոտորածների հետ առնչություն ունենալու մեջ¹⁹²: Դամադ Ֆերիդը նաև որոշում է ժամանակավորապես դադարեցնել կուսակցության անդամների դատաքննությունը:

Այս բոլոր իրադարձությունների ազդեցության տակ Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարի տեղակալ, ծովակալ Վեբը որոշում է Բերիրադա կալանատանն արգելափակված մյուս կալանավորներին տեղափոխել ավելի ապահով մի վայր¹⁹³: Հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիան սկսել էր չվստահել թուրքական դատարաններին, բացի այդ՝ մտադիր էր սեփական դատարանի միջոցով դատապարտել պատերազմական հանցագործներին: Ծովակալ Վեբը շատ շտապ պատրաստում է ամենավտանգավոր հանցագործների ցուցակը: 59 հոգուց բաղկացած այդ ցուցակում տեղ են գտնում առաջինը Մալթա աքսորվելիք անձանց անունները¹⁹⁴: 1919 թ. մայիսի 28-ին անգլիացիները 67 բանտարկյալի Բերիրադա Բյուլյույուր բանտից նավով տեղափոխում են Մալթա կղզի¹⁹⁵: Վերջին պահին գեներալ Միլնը (Մեծ

Բրիտանիա) նավ է նստեցնում ևս 11 հանցագործի¹⁹⁶: Աքսորյալների առաջին խումբը մեծ մասամբ բաղկացած է լինում իթթիհաղպահական հանցագործներից: Մեծ Բրիտանիային հանձնված ամբաստանյալների մեջ էին նախկին վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, հանրային գործերի նախկին նախարար Աբբաս Հալիմ փաշան, նախկին շեխուլիսլամ Հայրի էֆենդին, արտաքին գործերի նախկին նախարար Ահմեդ Նեսիմին, արդարադատության նախկին նախարարներ Հալիլը և Իբրահիմը, ներքին գործերի նախկին նախարար Խսայիլ Զանփոլադը, հանրային գործերի նախկին նախարար Ալի Մյունիֆը, հանրակրթական նախկին նախարար Շյութրյուն և պարենավորման նախկին նախարար Ջարա Ջեմալը¹⁹⁷:

Հարկ է նշել, որ Մալթա աքսորյալների մեջ են լինում նաև տվյալ պահին Ռազմական արտակարգ ատյանի կողմից դատաքննվող մի քանի մեղադրյալներ: Վերջիններիս՝ անգլիացիներին տրվելու մասին դատարանին է հայտնում Ստամբուլի պարետ, գեներալ-մայոր Սեյիդ փաշան, որի՝ ռազմական ատյանին հղած տեղեկագրում նշված էր, թե ամբաստանյալները 1919 թ. մայիսի 28-ին՝ չորեքշաբթի օրը՝ ժամը 2:30-ին, հանձնվել են Մեծ Բրիտանիայի իրամանատարությանը¹⁹⁸: Վերոնշյալ գրությունը դատարանում ընթերցվում է կառավարության անդամների դատաքննության առաջին նիստում՝ 1919 թ. հունիսի 3-ին: Դատարանի նախագահը հարցնում է դատախազի կարծիքը: Վերջինս առաջարկում է առանձնացնել Մալթա աքսորված մեղադրյալների դատական գործերը¹⁹⁹:

Այդպիսով՝ վերոհիշյալների թղթապահակներն առանձնաց-

¹⁹⁰ Bilâl Şimşir, Malta Sürgünleri, s. 96.

¹⁹¹ Zeki Saruhan, Kurtuluş Savaşı Günlüğü, s. 263.

¹⁹² Vahakn N. Dadrian, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosit, s. 170.

¹⁹³ Մեծ Բրիտանիան սկզբում մտադրություն ուներ Մալթայից բացի որպես աքսորավայր օգտագործել Դմիտրաստան ու Եգիպտոսը, տե՛ս Bilâl Şimşir, Malta Sürgünleri, s. 133.

¹⁹⁴ Անը, էջ 96:

¹⁹⁵ Պատերազմական հանցագործների աքսորը Մալթա թղթանացիների կողմից սկսվել է դեռևս 1919 թ. մարտին, եթե այստեղ էր արգելափակվել վեցերորդ բանակի նախկին

իրամանատար Ալի Իհսան փաշան: Թուրք բարձրաստիճան պաշտոնյաների աքսորը Մալթա շարունակվել է մինչև 1920 թ. նոյեմբեր: 20 ամսվա ընթացքում այստեղ են տեղափոխվել ընթանուր թվով 144 հանհագործներ, տե՛ս նշվ. աշխ. 89-րդ և 197-րդ էջերը:

¹⁹⁶ Անը, էջ 102:

¹⁹⁷ Ferudun Ata, İsgal İstanbul'u'nda Tehcir Yargılamaları, s. 206.

¹⁹⁸ Անը, էջ 205-206:

¹⁹⁹ Takvim-i Vekayi, No 3571, 13 Haziran 1919, s. 128.

Վում են՝ հետագայում քննվելու նպատակով, սակայն նրանք այդպես էլ մնում են անպատճիք: Թեև Մեծ Բրիտանիան սկզբում իրոք վճռականորեն մտադրված է լինում դատապարտել Մալթա աքսորված պատերազմական հանցագործներին, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներին, սակայն հետագայում նրա վճռականությունը հետզիետե թուլանում է, և Մեծ Բրիտանիան ցեղասպանության ոմքագործներին ի վերջո փոխանակում է անգլիացի ռազմագերիների հետ:

Մեծ Բրիտանիայի կողմից դատավարություն կազմակերպելու խնդրում ի հայտ եկած արգելքները չեն կրում միայն քաղաքական բնույթ: Հիմնական խնդիրներից մեկն էր ոմքագործությունները հաստատող ապացույցներ գտնելու հարցը: Այսպես՝ 1920 թ. կեսերին Ստամբուլում Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարության քաղաքական իրավունքի մասնագետ Լամբը մի բացատրագիր է ներկայացնում, որում մեկ առ մեկ նշվում են Հայոց ցեղասպանության պատասխանատուներին պատճելու համար անհրաժեշտ ապացույցներ գտնելու հարցում առաջացած դժվարությունները՝¹ 1. Կենտրոնական կառավարության կամ նահանգապետարանների իրավասուների կողմից տրված իրամանների կամ իրահանգների վերաբերյալ փաստաթղթեր գտնելու անկարելիությունը, 2. Դաշնակից պետությունների վարանումը՝ կոտորածների կազմակերպիչներին դատապարտելու հարցում, 3. Վիլայեթներում հասուն հայ տղամարդկանց մեծ մասի և գրեթե բոլոր մտավորականների սպանված լինելը և այլ հանգամանքները²⁰⁰:

Անգլիացիները անհրաժեշտ փաստաթղթերը գտնելու հույսով դիմում են նաև ԱՄՆ-ին, քանի որ վերջինս տիրապետում է կարևոր արխիվային նյութերի, սակայն Միացյալ նահանգները ևս չի ցանկա-

նում աջակցել Մեծ Բրիտանիային, որովհետև ամերիկացիները մտադիր չեն առձակատման գնալու քեմալականների հետ²⁰¹:

Թուրք ամբաստանյալների՝ Մալթա աքսորվելուն հաջորդած ամիսներին քաղաքական մթնոլորտը Թուրքիայում սկսում է փոխվել հօգուտ քեմալականների: Վերջիններս սկսում են հետզիետե ավելի հզորանալ, իսկ Ստամբուլի կառավարությունը՝ թուլանալ:

Զեմալական շարժումը ոչ այնքան ուղղված է եղել մեծ տերությունների, Օսմանյան կայսրությունը մասնատել և գրավել ցանկացող օտար ուժերի դեմ, որքան՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունների, ինչն առաջինն ապացուցում է Դողան Ավշըօլլում²⁰²: Այս տեսակետին են նաև թուրք պատմաբաններ Ֆիբրեթ Բաշքայան, Բասրըն Օրանը և Թաներ Աքչամը²⁰³: Ինչպես, օրինակ, նշում է Թաներ Աքչամը. «Դա բացահայտ երևում է թուրք ազգային պայքարի կրոռը եղած իրավունքի պաշտպանության կազմակերպությունների (Müdafaa-i Hukuk Cemiyetleri) ստեղծման մեջ ու կայացրած որոշումներում: Եթե հայացք զցենք այն շրջանների վրա, որտեղ հիմնվել են վերոհիշյալ կազմակերպությունները, ապա կտեսնենք, որ դրանք հիմնվել են այնտեղ, որտեղ եղել է հայկական կամ հունական վտանգ: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուտքոսի գինադադարի կնքումից հետո մինչև նոյն տարվա վերջը հիմնված առաջին 5 կազմակերպություններից 3-ը ստեղծվել են ընդդեմ հայկական փոքրամասնության, 2-ը էլ՝ հունական»²⁰⁴:

Զեմալական շարժումը նախաձեռնվել է Միություն և առաջնորդություն կուսակցության կողմից: Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իթթիհաթ վե թերաքքի կուսակցության

²⁰¹ Ayşe Hür, Malta Sürgünleri'ni Nasıl Bilirsiniz, "Tarafl", 28 Şubat 2010.

²⁰² Doğan Avcıoğlu, Millî Kurtuluş Tarihi 1835den-1995e, 1. Cilt, İstanbul, 1996.

²⁰³ А. Авакян, Черкесский фактор в Османской империи и Турции, (вторая половина XIX-первая четверть XX вв.), Ереван, из. "Гитутюн", 2001, сс. 250-251.

²⁰⁴ Dr. Taner Akçam, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, Su Yayımları, 2001, ss. 195-196.

Կենտրոնական կոմիտեն մանրամասն ծրագրեր է մշակել՝ պատերազմը տանով տալու դեպքում ծեռնարկվելիք քայլերի մասին²⁰⁵: Այդ ծրագրերից մեկն էլ նախատեսում էր, որ պարտության դեպքում զինված պայքարը շարունակվելու էր Թուրքիայի ներքին շրջաններում: Խոսքը երկարատև դիմադրության մասին էր²⁰⁶: Թալեաթ փաշան 1918 թ. սեպտեմբերին Գերմանիա կատարած այցից վերադառնալիս սեփական աչքով է ականատես դառնում բոլղարական բանակի կործանմանը: Թալեաթը Ստամբուլ է վերադառնում՝ լիովին վստահ, որ պատերազմն արդեն տանով է տրված, և անցնում դեռևս պատերազմի սկզբին մշակված ծրագրի իրագործմանը: Սուլորուի զինադադարի կնքումից մեկ օր անց՝ 1918 թ. հոկտեմբերի 31-ի գիշերը, Թալեաթն իր տուն է կանչում իթթիհադականներ Թարա Թեմալին ու Քարա Վասրֆին և ասում. «Տեսե՛ք, ձեզ ինձ մոտ կանչելուս հիմնական պատճառը Մուստաֆա Թեմալն է: Պայմանները շատ ծանր են: Այս խիստ պայմանների դեմ պետք է ինչ-որ քայլեր ծեռնարկել, բայց ովք է դա անելու: Պետք է ամուր մի ձեռք: Օրինակ՝ Մուստաֆա Թեմալ փաշան... Նա մաքուր անցյալ ունի: Ժողովուրդն էլ է սիրում նրան: Կարծում եմ, որ Մուստաֆա Թեմալ փաշան մի կարևոր գործ է ձեռնարկելու: Նրան պետք է օգնել»²⁰⁷:

Թալեաթը նրանց հաղորդում է, որ իրադրության մասին տեղյակ է նաև կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միհիաթ Ծյուքրյուն, որը հետևելու է իրավիժակին: Այս հանդիպումից որոշ ժամանակ անց՝ 1918 թ. հոկտեմբերի 13-ին, հիմնվում է քեմալական շարժման մեջ կարևոր ներակատարում ունեցած Քարաքուլ գաղտնի կազմակերպությունը²⁰⁸:

²⁰⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս E. J. Zürcher, *The Unionist Factor. The Role of Committee of Union and Progress in Turkish National Movement 1906-1926*, Leiden, 1984.

²⁰⁶ Taner Akçam, *İnsan Hakları ve Ermeni Sorunu*, ss. 223-224.

²⁰⁷ Taylan Sorgun, *Mütareke Dönemi ve Bekiraga Bölüğü*, ss. 44-45.

²⁰⁸ Քարաքուլ կազմակերպությունը իր անվանումը ստացել է հիմնադիրների՝ Թարա Թեմալի

Դարձյալ նոյն ժամանակաշրջանում փոխվում է նաև Հատուկ կազմակերպության անվանումը, և թեշքիլյաթ-ը մահսուսան վերածվում է Ընդհանուր իսլամական աշխարհի հեղափոխական կոմիտեի (Umumi İslâm Alemi İhtilal Komitesi), որի կազմավորման հիմնական նպատակն է դառնում Հայոց ցեղասպանության պատճառով հետաքրքրության մեջ գտնվող Հատուկ կազմակերպության անդամների պաշտպանությունը²⁰⁹:

Իրավունքի պաշտպանության առաջին կազմակերպությունները հիմնվել են անմիջականորեն Թալեաթ փաշայի ու Միհիաթյուն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ²¹⁰:

Քանի որ քեմալական շարժման սկզբնավորման ժամանակ թուրքերը, ի դեմս իթթիհադականների, մեղադրվում են քրիստոնյա բնակչության նկատմամբ ցուցաբերած բռնությունների և հատկապես հայերի կոտորածների մեջ, քեմալականները սկզբնական փուլում ձգտում են Դաշնակից պետություններին ամեն կերպ համոզել, թե իբր իրենք ոչ մի կապ չունեն Միհիաթյուն և առաջադիմություն կուսակցության հետ: Դա նկատելի է նաև Մուստաֆա Թեմալի՝ այդ ժամանակաշրջանում տված հարցազրոյցներից²¹¹: Բացի այդ՝ հասարակ ժողովորդի մեջ ևս «իթթիհադական» բառը գրեթե վերածվել էր հայրենիքի դավաճանի հոմանիշի: Սակայն իրականում քեմալական շարժումը նախաձեռնողների մեջ մեծ թիվ են կազմում Հայոց ցեղասպանության պատասխանատունները, իսկ այդ շարժման կորիգը՝ Հատուկ կազմակերպության անդամները: Հետագայում քեմալականների շարքերն են անցնում նաև Մալթա աքսորվածները, ովքեր հանրապե-

²⁰⁹ Քարա Վասրֆի անուններից, տե՛ս նշվ. աշխ. էջ 47-ը:

²¹⁰ Taner Akçam, *İnsan Hakları ve Ermeni Sorunu*, s. 491.

²¹¹ Այդ, էջ 197:

տական շրջանում գրադեցնում են կարևոր պետական պաշտոններ: Այսպես, օրինակ, Հայոց ցեղասպանության ժամանակ Բիթլիսի և Հալեպի նահանգապետը եղած և այստեղի հայերի կոտորածների համար պատասխանատու Արդուլիալիք Ռենդան Մալբայի աքսորից վերադառնալուց հետո գրադեցրել է Իզմիրի նահանգապետի, 1924-1930 թթ.՝ ֆինանսների, ազգային պաշտպանության և ռազմածովային նախարարների պաշտոնները, իսկ 1935 թ.՝ ընտրվել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ, հետագայում եղել է նաև պետնախարար: Հալեպ և Արանա վիլայեթներում կատարված տեղահանության ու կոտորածների պատասխանատու Շյուբրյու բեյը Մալբայից փախչելուց հետո որոշ ժամանակ գտնվել է Խոալիայում և Գերմանիայում, իսկ Թուրքիա վերադառնալուց հետո՝ դարձել պատգամավոր, ինչպես նաև՝ գյուղատնտեսության, արտաքին ու ներքին գործերի նախարար: Տեղահանության ժամանակ Վանի և Էրզրումի (Կարին) նահանգապետը եղած Հասան Թահսին Ուզերը, ով հայերի դեմ կոտորածները ղեկավարած լինելու մեղադրանքով աքսորվել էր Մալթա, Թուրքիա վերադառնալուց հետո եղել է Արդահանի, Էրզրումի ու Քոնիայի պատգամավոր: Միություն և առաջադիմություն կուսակցության գլխավոր քարտուղար Միդիաթ Շյուբրյու Բյեղան պատմազավոր է եղել հանրապետական շրջանում: Իթթիհաղի ժամանակ պատգամավորների պալատի նախագահի, ինչպես նաև՝ ներքին գործերի, արդարադատության և արտաքին գործերի նախարարի պաշտոնները գրադեցրած Հալիլ Մենթեշեն նոյնպես պատգամավոր է ընտրվել հանրապետական շրջանում: Ահմեդ Մուամմեր Զանքարդեշը, ով Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում եղել է Սվասի և Քոնիայի վային, հանրապետական շրջանում դարձել է պատգամավոր: Այս Մյունիֆ Եղենաղան, ով Մալթա էր աքսորվել Լիբանանում հայերի կոտորածների համար, քեմալական շրջանում դարձել է քաղաքա-

պետ ու պատգամավոր: Ինչպես նշում է Վարդես Եղիայանի «Մալթայի վավերագրերը»: Անգլիայի Արտաքին գործերի նախարարության «Թուրք պատերազմական հանցագործները» թղթապահնակը» գրքի առաջաբանի հեղինակ Այս Սայիդ Չեթինօղլուն, 1934 թ. ընդունված Ազգանունների մասին օրենքի հրապարակումից հետո նրանցից շատերը թաքնվել են նոր անվան տակ և այդպիսով կորցրել իրենց հետքը²¹²:

Երիտթուրքերի դատապարտումը քեմալական իշխանության կողմից ընկալվել է որպես Թուրքիայի մասնատման ծրագրի մի մաս: Երբ անգլիացի գործակալ Ֆրյուն Մուստաֆա Քեմալի ուշադրությունն է հրավիրում քեմալականների կողմից իթթիհաղականների հանցագործությունները դատապարտելու անհրաժեշտության վրա՝ ասելով, թե «Նախ և առաջ պարտավոր եք ընդունել իթթիհաթ վե թերաքքի ոճրագործությունները», Քեմալ մերժում է Երիտթուրքերի ոճիրները դատապարտելու առաջարկը. «Ես Միություն և առաջադիմություն կուսակցության ներկայացուցիչը չեմ... Սակայն Ձեր թույլտվությամբ պետք է ասեմ, որ իթթիհաթ վե թերաքքին հայրենասեր կազմակերպություն էր»²¹³:

²¹² Vartkes Yeghiayan, Malta Belgeleri, s. 12.

²¹³ Sina Akşin, İstanbul Hükümetleri ve Millî Mücadele, s. 192.

2. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԿԱՌԱՎԱՐԱԾ ԵՐԻՏՔՈՒԹՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԵՐԻ ԱՆԴԱՍՄԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (1919 թ. ՀՈՒՆԻՍ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐ)

Ուազմական արտակարգ ատյանը Գլխավոր դատավարությունը վերսկսեց 1919 թ. հունիսի 3-ին: Նիստում թեև ընթերցում են նաև Մալթա աքսորված մեղադրյալների անունները, սակայն Ստամբուլի պարետ, գեներալ-մայոր Սեյիդ փաշայի կողմից տվյալ ամբաստանյալներին անգիտացներին հանձնելու մասին տեղեկագրի ընթեցումից հետո նրանց գործերն առանձնացվում են:

Այդիսով՝ Գլխավոր դատավարության երկրորդ փուլում կամ կառավարության անդամների դատաքննության ժամանակ ներկա կարգով քննվում են նախկին շեյխովիլամ Մուսա Քյազիմի, փոստի և հեռագրատան նախկին նախարար Հյուսեին Հաջիմի ու սենատի նախկին նախագահ Ռիֆաթի գործերը: Այս դատավարության ժամանակ հեռակա կարգով շարունակում են դատվել նախկին վարչապետ Թալեաթ փաշան, նախկին ռազմական նախարար Զեմալ փաշան ու հանրակրթական նախկին նախարար դոկտոր Նազըմը:

Դատարանի կազմը հետևյալն էր. նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա փաշա, գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա, գնդապետ Ռեշեփ Ֆերդի բեյ²¹⁴:

Դատարանի նախագահը, ըստ ընդունված կարգի, նախ հաստատում է ամբաստանյալների ինքնությունը, որից հետո դատախազի տեղակալ Ֆերդիդուն բեյը ներկայացնում է 1919 թ. մայիսի 22-ին

կազմված մեղադրական եզրակացությունը²¹⁵, որի սկզբում անորադարձ է կատարվում կուսակցության թույլ տված օրինախախտումներին և չարաշահումների²¹⁶:

Այս ամբաստանագրում շեշտվում է, որ Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներն ընդգրկված են եղել կուսակցության առաջնորդների գաղտնի խմբավորման կազմում: Ըստ մեղադրական ակտի՝ ամբաստանյալներից ներքին գործերի նախարար Խսմայի Զանփոլադը ցուցմունք է տվել առ այն, որ կառավարությանը վերաբերող հարցերը հաճախ են քննարկվել կուսակցության կենտրոնական կոմիտեում²¹⁷: Ամբաստանագրի համաձայն՝ տարագրված հայերի քարավանները ենթարկվել են հատուկ կազմավորված հրոսախմբերի հարձակումներին, ովքեր բնաշնծել են նրանց ու կողոպտել նրանց պատկանող գույքը և ունեցվածքը²¹⁸: Մեղադրական եզրակացության մեջ ընդգծվում է նաև, որ կառավարությունը ոչ միայն չի պատժել այդ հանցագործներին, այլև պաշտոնագրել է այն բոլոր նահանգապետերին ու գավառապետերին, ովքեր իրաժարվել են իրականացնել տեղահանություններն ու կոտորածները²¹⁹:

Այս ամբաստանագրում ևս ընդգծվում է, որ հայերի կոտորածները նախապես ծրագրվել և իրագործվել են կուսակցության վերոնշյալ գաղտնի խմբավորման անդամների կողմից: Մեղադրական եզ-

²¹⁵Սույն մեղադրական եզրակացությունը կազմվել էր որպես կուսակցության անդամների դատաքննությանը կից մեղադրական ակտ:

²¹⁶Անդ. էջ 128-129:

²¹⁷Անդ. էջ 129:

²¹⁸Անդ:

²¹⁹Անդ. Այսպես, օրինակ, Ղիարբերի նահանգապետ Ռեշիդ բեյը (Սեհմեր Շահինգիրայ) մեղադրվել է Լիզե և Բեշիղի զջամների կյանքակամների սպանությունը կազմակերպելու մեջ, քանի որ վերջիններս հրաժանվել են իրականացնել հայերի տեղահանման ոչ շնչացման հրամանը, տես İtihad ve Terakkî'nin Kurucusu Üyelerinden Dr. Reşid Bey'in Hatalarları, "Sürgünden İntihara", Yayıma Hazırlayan: Ahmet Mehmetfendioğlu, İstanbul, Arba Yayımları, 1993, ss. 45-46.

րակացության մեջ նշվում է նաև, որ այդ գաղտնի խմբավորման առաջնորդներն են եղել կոսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ դոկտոր Բեհաեղին Շաքիրը, դոկտոր Նազըմը, ինչպես նաև՝ Ոհգա և Աթիֆ բեյերը, իսկ կոմիտեի հիմնական ծրագրերն իրագործվել են վարչապետ Թալեաթի, ինչպես նաև՝ ռազմական նախարար Էնվերի ու ռազմածովային նախարար Զեմալի կողմից:

Ամբաստանագրում ընդգծվում է նաև, որ կոսակցության որոշումների իրականացմանը ողջ էությամբ նվիրվել են կառավարության այնպիսի անդամներ, ինչպիսիք են վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, նախկին շեյխովիսլամ Հայդար Էֆենդին, հանրակրթական նախկին նախարար Հալիլը (Մենթեշեն), պետական խորհրդի նախկին նախագահ Իբրահիմ բեյը, արտաքին գործերի նախկին նախարար Նեսիմին և պարենավորման նախկին նախարար (Քարա) Զեմալը²²⁰:

Գլխավոր դատավարության երկրորդ փուլի նիստերի ընթացքում մեղադրյալների հարցաքննությունը հիմնականում կատարվում է պատերազմի ժամանակ Միություն և առաջադիմություն կոսակցության ունեցած գործունեության, պատերազմին մասնակցություն ցուցերերելու նախաձեռնության ու տեղի ունեցած չարաշահումների ուղղությամբ:

Գլխավոր դատավարությունների ամենանշանակալի առանձնահատկությունն այն է, որ դատաքննությունների ընթացքում ոչ մի վկա չի իրավիրվում և ունկնդրության արժանանում: Ի տարրերություն այս մեղադրանքով հարուցված մյուս դատական գործընթացների՝ սույն դատաքննությունների ընթացքում հարցաքննվում են միայն մեղադրյալները: Մեր կարծիքով՝ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս դատավարությունների մեղադրական եզրակացության մեջ նշվում է նաև, որ այդ գաղտնի խմբավորման առաջնորդներն են եղել կոսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ դոկտոր Բեհաեղին Շաքիրը, դոկտոր Նազըմը, ինչպես նաև՝ Ոհգա և Աթիֆ բեյերը, իսկ կոմիտեի հիմնական ծրագրերն իրագործվել են վարչապետ Թալեաթի, ինչպես նաև՝ ռազմական նախարար Էնվերի ու ռազմածովային նախարար Զեմալի կողմից:

յունները կազմվել էին խիստ մանրակրկիտ հետաքրքրության, բազմաթիվ ապացույցների, պաշտոնական ծածկագիր հեռագրերի ու վկաների ցուցմունքների արդյունքում:

Կոսակցության և կառավարության անդամների կամ Գլխավոր դատավարության ընդիանուր դատավճիռը կայացվում է 1919 թ. հունիսի 5-ին:

Դատին ներկա գտնվող մեղադրյալներն էին նախկին շեյխուլիսլամ Մուսա Քյազիմը, սենատի նախկին նախագահ Ոհֆաթը, փոստի և հեռագրատան նախկին նախարար Հյուսեին Հաշիմը, իսկ հեռակա կարգով դատավճիռ է կայացվում նախկին վարչապետ Թալեաթ փաշայի, ռազմական նախկին նախարար Էնվերի, ռազմածովային նախկին նախարար Զեմալի, հանրակրթական նախկին նախարար Դավիդի, փոստի ու հեռագրատան նախկին նախարար Օսքանի, առևտրի և հողագործության նախկին նախարարներ Սուլեյման Էլիստանի ու Մուստաֆա Շերեֆի վերաբերյալ:

Դատավճում նշվում է, թե իրականացված հարցաքննությունը, գործի մանրամասն հետաքրքրությունը և դատավճում բերված ռազմական ատյանի 5 հոդվածները հաստատում են Միություն և առաջադիմություն կոսակցության կատարած ոժագործությունները: Վերոհիշյալ հոդվածներից առաջինում շեշտվում է, թե Ռազմական ատյանի իրականացրած դատաքննության արդյունքում բացահայտվել է, որ Տրապիզոնում, Յողագլուխում և այլ վայրերում տեղի ունեցած կոտորածները կազմակերպվել և ուղղորդվել են Միություն ու առաջադիմություն կոսակցության պարագումների կողմից²²¹:

Դատավճուի համաձայն՝ հայերի կոտորածների որոշումը հիմ-

²²⁰ Takvim-i Vekayi, No 3571, 13 Haziran 1919, s. 129.

²²¹ Takvim-i Vekayi, No 3604, 22 Temmuz 1919, s. 218.

նականում համաձայնեցվել է Եռյակի միջև²²². Դատավճռում նշվում է, թե ի նկատի առնելով այն, որ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ու դոկտոր Նազըմի կատարած հանցագործությունները չափազանց ծանր են եղել, որոշվել է նրանց դատապարտել կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով, իսկ Զավիդի, Մուստաֆա Շերեֆի, Մուսա Քյազիմի համար ի նկատի է առնվել վերոհիշյալ հոդվածի երկրորդ և նոյն կայսերական օրենսգրքի 55-րդ - հոդվածի վերջին մասերը²²³:

Ըստ դատավճռի՝ դատին այդպես էլ չեն ներկայացել հեռագրատան նախկին նախարար Օսբանը և առևտորի նախկին նախարար Սուլեյման Էլբիստանը, քանի որ նրանք գտնվում են Եվրոպայում²²⁴:

Այդպիսով՝ 1919 թ. հուլիսի 5-ին կայացված դատավճռով Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազըմը դատապարտվում են մահվան, Զավիդը, Մուստաֆա Շերեֆը և շեյխուլիմամ Մուսա Քյազիմը՝ 15 տարվա աքսորի, իսկ Ուիֆաթ ու Հաշիմ բեյերն արդարացվում են²²⁵:

Հարկ է արձանագրել, որ ընդհանրապես հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքով իրականացված դատարանությունների արդյունքում ուազմական արտակարգ ատյանների դատական կազմերը մահվան դատավճիռներ կայացնելիս ավելի «շոայյ» են գտնվել փախուստի մեջ գտնվող դատապարտյալների հանդեպ:

Հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված մոտ 63 դատական գործերի արդյունքում կայացվել է ընդ-

հանուր թվով 20 մահապատժի դատավճիռ: Հատկանշական է, որ այդ մահապատիժներից միայն 3-ն են ի կատար ածվել, իսկ մնացած 17-ն ընդունվել են հեռակա կարգով, քանի որ դատապարտյալները գտնվել են փախուստի մեջ: Մահապատժի ենթարկված դատապարտյալները հետևյալ անձինք են՝ Բողազըյանի գավառապետ Մեհմեդ Ջեմալը (Յոզդատի դատավարություն), Երզնկայի ժանդարմերիայի հրամանատար, Հայրան Բաբա մականունը կրող Հաֆըզ Արդուլլահ Ավճին (Երզնկայի դատավարություն) և Բաբերդի կառավարիչ, հետագայում՝ Ուրֆայի գավառապետ Բեկրամզադե Նուսրեթը (Բաբերդի դատավարություն):

Ռազմական ատյանները խուսափել են մահվան դատապարտել դատարանում ներկա մեղադրյալներին, քանի որ հենց առաջին՝ Յոզդատի դատաքննության արդյունքում կախաղան բարձրացված Բողազըյանի գավառապետ Մեհմեդ Ջեմալի մահապատիժը (1919 թ. ապրիլի 10) խիստ վրդովմունքի տեղիք է տվել թուրք հասարակության մեջ: Նախ՝ մահապատժի արարողությունն ինքնին կատարվել է ոչ ընդունված կարգով: Ըստ օրենքի՝ կախաղանի դատապարտվածը մահապատժի էր ենթարկվում նախքան արևածագը, դատապարտյալի մարմինը հրապարակում էր մնում և 5-6 ժամ, ապա՝ անշուր կերպով թաղվում: Մինչդեռ Ջեմալի մահապատիժն ի կատար է ածվել կեսօրից հետո՝ ժամը 19:20-ին²²⁶: Արարողությանը մասնակցել են բարձրաստիճան պաշտոնյաներ ու հոծ բազմություն: Մահապատժից հետո Ջեմալի դիակը դրվել է Բայազետ մզկիթի լվացարանում: գործողություն, որն անթույլատրելի էր մահապատժի դեպքում²²⁷: Մահապատժի հաջորդ օրը մեծ շուրջով կազմակերպվել է Ջեմալի թաղման արարողությունը, որին մասնակցել են առավել քան 10 հազար ցուցարարներ: Ոճրագործ հոչակվել է «ազգային նահատակ», նրա այ-

²²² Թերևս ի նկատի ունի Թալեաթ-Էնվեր-Ջեմալ եռապետությունը:

²²³ Անը, էջ 219:

²²⁴ Դատարանը, մոտավորապես տեսյակ լինելով համեմեծ վերոհիշյալ մեղադրյալների գտնվելու վայրի մասին, այդպես էլ որևէ բան չի ծեռնարկել նրանց դեմ հետաքրքրություն սկսելու ուղղությամբ:

²²⁵ Անը:

²²⁶ Kemal Bey İdam Olundu, "Alemdar", 11 Nisan 1919.

²²⁷ Գրիկը, Եղղատի Հայասպանութեան գավառագրական պատմութիւնը, էջ 330:

րին ու զավակները՝ վերցվել ազգային խնամակալության տակ, և, ինչպես նշում է Արամ Անտոնյանը, «Այն թուրք ժողովուրդը որ հանրային հանգանակութեանց իր քանակը այն ատեն միայն կը բանայ, երբ վիզը կը սեղմեն, ինքնարերաբար, 5-10 օրուան ընթացքին 20 հազար օսմ. ուսկի գումար մը հանգանակելով, յանձնեց թէմալ պէյի այրիին»²²⁸:

Ներկա գտնվող ամբաստանյալների վերաբերյալ մահապատճի դատավճիռներ կայացնելուց խուսափելը պայմանավորված էր նաև դատավարությունների ծևական բնույթով: Սովորանական կառավարությանը հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուններին դատելուն է մղել առավելապես ոչ թե արդարադատություն գործադրելու ցանկությունը, այլ պատերազմում հաղթանակած պետությունների վրա նման տպավորություն թողնելու ծգտումը: Դա է ապացուցում նաև Հայոց ցեղասպանության ոժրագործներին մահապատճի ենթարկելու ժամանակացույցը: Այսպես՝ Ցողովատի դատաքնության արդյունքում դատին Ներկա գտնված մեղադրյալի վերաբերյալ մահապատճի որոշում է կայացվել, քանի որ Ցողովատի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում, և անհրաժեշտ էր Եվրոպայի առաջ արդար դատավարություններ կազմակերպելու տպավորություն թողնել: Ինչ վերաբերում է Հաֆզ Արդուլլահ Ավմիհի և Բեհրամզադե Նուսրեթի մահապատճներին, ապա նրանց մահվան դատավճուրն արձակվել են Սկրի դաշնագրի (1920 թ. օգոստոսի 10) կնքման նախօրեին և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու նպատակ են հետապնդել:

Սովորանական կառավարությունն այդպես էլ ոչ մի բան չի ծեռնարկել հեռակա կարգով մահվան դատապարտվածներին գտնե-

լու և վերջիններիս մահապատճներն ի կատար ածելու ուղղությամբ: Գլխավոր դատավարության արդյունքում մահապատճի դատապարտվածների շարքում Թալեաթը 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում սպանվում է հայ վրիժառու Սողոմոն Թեհերյանի կողմից, Էնվերը՝ 1922 թ. օգոստոսի 4-ին Միջին Ասիայում Կարմիր բանակի զորամասերից մեկի հետ ընդհարման ժամանակ (ի դեպ՝ զորամասի հրամանատարն էր ազգությամբ հայ Հակոբ Մելքոնովը), Զեմալը՝ վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի կողմից 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում, Սայիդ Հալիմը սպանվում է Հոռմում 1921 թ. Արշավիր Շիրակյանի կողմից, նոյն Շիրակյանը 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում սպանում է Զեմալ Ազմիհն ու Բեհատդիջն Շաքիրին, իսկ դոկտոր Նազըմը 1926 թ. Անկարայում կախաղան է բարձրացվում Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի դեմ մահափորդ կազմակերպելու մեղադրանքով:

²²⁸ Արամ Անտոնյան, Մեծ ոճիր, Պուրըն, 1921, էջ 272:

3. «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԱԽԱՍՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատախանատու քարտուղարների դատաքննությունը Ստամբուլի ուղղական դատարանում սկսվել է 1919 թ. հունիսի 21-ին ու տևել է մոտ 7 ամիս, քանի որ 1919 թ. հունիսի 28-ի նիստից հետո ուղղական արտակարգ առյանում կատարված փոփոխությունների պատճառվ դատաքննությունն ընդմիջվել է մինչև 1919 թ. հոկտեմբերի 6-ը:

Դատավարության սկզբում մեղադրյաները եղել են 7 հոգի, բայց երրորդ նիստում նրանցից մեկի դեմ հարուցված դատական գործը կարձվել է: Հետագա նիստերում ամբաստանյաների թիվը հասել է 12-ի, և դատավճիռ է կայացվել 12 մեղադրյաների վերաբերյալ:

Ամբաստանյաներն էին Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավենին, Բեյօղլուի պատասխանատու քարտուղար Հասան Սալահադինը, Էսրիշեհիրի պատասխանատու քարտուղար դոկտոր Բեսիմ Զյուհին, Բորսայի պատասխանատու քարտուղար դոկտոր Միհիհարը, Միրզյոնի պատասխանատու քարտուղարի տեղակալ Զևիթը, Հալեպի պատասխանատու քարտուղար Զեմալը, Էղիրնեի տեսուչ Աբդուլ Գանին, Ջոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ Աբդուլ Քադիրը, Քաստամոնուի պատասխանատու քարտուղարի տեղակալներ Մյունիրը և Հասան Ֆեհմին, Աֆին-Կարահիսարի ծեռնարկությունների լուծարման հարցերով նախկին պաշտոնյա Հայրեդինը:

Երիտթուրքերի կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարությունն սկսվել է դատարանի նախագահ Մուս-

տաֆա Նազըմ փաշայի նախագահությամբ, իսկ ավարտին հասցեի՝ նախագահ Էսադ փաշայի պաշտոնավարման ժամանակ:

Դատավարության սկզբում դատարանի կազմը հետևյալն էր. նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ գեներալ-մայոր Զերի փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա փաշա (հայտնի է նաև Նեմրութ կամ Քուրթ մականվամբ), գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա, գնդապետ Ռեջեփ Ֆերդի թեյ: Դատախազի պարտականությունը կատարել է դատախազի տեղակալ Ֆերհիդուն թեյը²²⁹:

Դատաքննության առաջին նիստում (1919 թ. հունիսի 21) դատարանի նախագահը հաստատում է մեղադրյալների ինքնությունը, որից հետո ընթերցվում է 1919 թ. հունիսի 19-ին կազմված մեղադրական եզրակացությունը, ըստ որի՝ ամբաստանյանները մեղադրվում են իթթիհաթ վե թերաքի կուսակցության անօրինական նպատակների իրագործման համար գործիք լինելու և երկրի ներսում անվտանգությունը խախտելու մեջ²³⁰: Մեղադրյալները դատապաշտպան են պահանջում, և նիստը հետաձգվում է:

Հաջորդ նիստում, որը կայանում է 1919 թ. հունիսի 23-ին, բոլոր մեղադրյալները փորձում են հերքել իրենց մեղսագրվող մեղադրանքները, նոյնիսկ նրանցից մի քանիսը պնդում են, թե իրը չեն լսել հայերի տեղահանության մասին, «իրենց շրջաններից տեղահանություն չի եղել» և «որա մասին տեղեկացել են միայն հետազայում»²³¹:

Երրորդ նիստում, որը տեղի է ունենում 1919 թ. հունիսի 28-ին, դատարանի նախագահի հրահանգով արձանագրող քարտուղարն ընթերցում է մի քանի հայ վկաների՝ դատարանին հղած հեռագիրը: Վկաները հայտնում են դատարանին, որ մեղադրյալներից էղիրնեի տեսուչ Աբդուլ Գանիի տված ցուցմունքները չեն համապատասխա-

²²⁹ Takvim-i Vekayi, No 3586, 28 Haziran 1919, s. 161.

²³⁰ Անդ, էջ 163-164:

²³¹ Takvim-i Vekayi, No 3589, 5 Temmuz 1919, ss. 165-175.

նում իրականությանը, քանզի առկա են բազմաթիվ ապացույցներ, որոնք հաստատում են նրա մասնակցությունը Էդիրնեի հայերի տեղահանությանը: Վկաները խնդրում են նաև մի արդարադատ հանձնաժողով ուղարկել Էդիրնե՝ ծշմարտությունը բացահայտելու նպատակով²³²:

Դատախազի տեղակալ Սաքիր բեյը հայտնում է դատարանին, որ նման հանձնաժողով ուղարկելու անհրաժեշտություն չկա:

Միևնույն նիստում հարցաքննված մեղադրյալ Զյուհին նշում է, որ տեղահանության առնչվող հանցագործությունների մեջն ընկնում է կառավարության վրա, քանի որ հենց վերջին էր «Տեղահանության մասին» օրենքն ընդունել²³³:

Այս նիստից հետո ոպգմական արտակարգ ատյանում կատարված փոփոխությունների պատճառով դատաքննությունը երկար ժամանակով ընդմիջվում է ու վերսկսվում միայն 1919 թ. հոկտեմբերի 6-ին: Դատախանատու քարտուղարների դատավարությունն այդուհետ շարունակվում է Ալի Ռոզա փաշայի վարչապետության օրոք: Երկար ընդմիջումից հետո վերսկսված դատաքննության ժամանակ փոխված են լինում նաև դատարանի կազմն ու նախագահը²³⁴:

Հոկտեմբերի 6-ի նիստում մեղադրյալների դատապահշտպանները դատարանից պահանջում են անիրավասու հայտարարել իրեն՝ այս գործը քննելու առումով, սակայն դատարանը մերժում է նրանց պահանջը²³⁵:

Նմանատիպ նախաձեռնությամբ են հանդես գալիս նաև մեղադրյալները: 1919 թ. հոկտեմբերի 18-ին ամբաստանյալները դիմում են Ռազմական նախարար Զեմալ փաշային՝ խնդրելով իրենց

դատաքննությունը հանձնել մեկ այլ դատարանի: Զեմալ փաշան խնդրագրի մասին հաղորդում է դատարանին, քայլ ատյանը պատասխանում է, թե դատավարությունն ավարտին է մոտենում, և որ դրա կարիքը բոլորովին չկա²³⁶:

Պատասխանատու քարտուղարների դատավարության հինգերորդ նիստը տեղի է ունենում 1919 թ. հոկտեմբերի 27-ին: Այս նիստում մյուս մեղադրյալների գործերին է կցվում նաև Զանքըրը պատասխանատու քարտուղար Զեմալ Օղուզի²³⁷ թղթապանակը: Վերջինս մեղադրվում է Ստամբուլից Զանքըրը աքսորված հայերի սպանության մեջ²³⁸: Նիստում ընթերցվում է աքսորյալների շարքում եղած քահանա Կարապետյանի գրավոր ցուցունքը, որում նշվում է, թե Զեմալ Օղուզը կազմակերպել է Անկարայից Այաշ տարագրված 5 նշանավոր հայերի սպանությունը²³⁹: Դարձյալ նոյն նիստում ընթերցվում է Քաստամոնուի նախանգաղետ Ռեշիդ փաշայի վկայությունը, որը վերաբերում է Քաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմիին: Քաստամոնուի վային վկայում է, թե ինքը Հատուկ կազմակերպության նախագահի ստորագրությամբ մի գրություն է ստացել Բեհաեդին Շաքիրից, որը հաղորդում էր Քաստամոնուի հայերին տեղահանելու անհրաժեշտության մասին, և քանի որ ինքը չի ենթարկվել այդ հրամանին, պաշտոնից հեռացվել է: Նախանգաղետը նաև տեղեկացնում է, թե Քաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին քարոզչություն է ծավալել իր դեմ ասելով. «Ռեշիդ փաշան ոչ թե թուրքերի վային է, այլ՝ հայերի»: Մեղադրյալ Հասան Ֆեհմին ոչ մի պարզաբանում չի կարողանում անել վերոհիշյալ

²³⁶ Ferudun Ata, İsgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 226.

²³⁷ Զեմալ Օղուզը հիշատակվում է նաև Սիություն և առաջադիմություն կուսակցության անդամների մեղադրական եղակացության մեջ, տե՛ս Takvim-i Vekayi, No 3540, 5 Mayıs 1919, s. 7.

²³⁸ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", 153.

²³⁹ Ան:

²³² Takvim-i Vekayi, No 3596, 13 Temmuz 1919, s. 205.

²³³ Ան:

²³⁴ Ferudun Ata, İsgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 226.

²³⁵ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", 153.

Վկայության առնչությամբ²⁴⁰:

Դատաքննության վեցերորդ նիստում, որը կայանում է 1919 թ. նոյեմբերի 3-ին, ընթերցվում են Զանքըրըի պատասխանատու քարտուղար Զեմալ Օղուզի դեմ ուղղված գրավոր ցուցմունքները, և ունկնդրության են արժանանում մի շարք վկաներ: Նիստում դատական քարտուղարը կարդում է Զանքըրըում հայ ու թուրք վկաների տված գրավոր ցուցմունքները, որոնք բոլորն ել ուղղված են լինում վերոնշյալ ամբաստանյալի դեմ: Վերջինս փորձում է հերքել բոլոր մեղադրանքները²⁴¹:

Դատավարության յոթերորդ (1919 թ. նոյեմբերի 12) և ութերորդ (1919 թ. նոյեմբերի 22) նիստերում ունկնդրության են արժանանում ցեղասպանությունից վերապրած հայերը: Այսպես՝ դեղագործ Գրիգոր վկայում է, որ Ստամբուլից Զանքըրը տարագրված 180 հայերից միայն 30-ը են ողջ մնացել, և որ հայերի կոտորածներն իրագործել է Զեմալ Օղուզի ենթակայության տակ գտնվող թեշքիլյար-ը մահսուսայի ավագակախումբը, իսկ Զանքըրըում մնացած վերջին 5 հայերին դուրս են հանել քաղաքից ու ժամապարհին հանձնել մի հրոսակախմբի, որն էլ սպանել է նրանց:

Ութերորդ նիստում ցեղասպանությունից վերապրած հայ ժարտարապետ Միմոնը, որն աքսորված է եղել Զանքըրը, դատարանին վկայում է, թե վերոհիշյալ 5 հայերի սպանության ժամանակ ինքը եղել է Զանքըրըում, և որ ժամարմերիայի հրամանատարը հայերի կոտորածների վերաբերյալ իրեն ասել է, թե «դա կառավարության գործն է» ու այդ ուղղությամբ հետաքննություն չի կատարել²⁴²:

Ամբաստանյալներից Զեմալ Օղուզը 1919 թ. դեկտեմբերի ու 1920 թ. հունվարի դատական նիստերի ընթացքում ծնացնում է, թե

ինչպարզել է, անընդիատ վիճարանում դատարանի նախագահի հետ և նոյնիսկ ինքնասպանության փորձ անում: Ի վերջո համոզում է դատարանի կազմին, որ իրեն ուղարկեն հոգեբուժարան: Թեև սկզբում ատյանը մերժում է նրա դիմումը, սակայն տասներորդ նիստում (1919 թ. դեկտեմբերի 29) նրա դատական գործն առանձնացվում է²⁴³:

Զեմալ Օղուզը 1920 թ. մայիսին դատաքննվում է հարյուրապետ Նուրեդինի հետ միասին: 1920 թ. մայիսի 27-ին նրան դուրս են գրում իիվանդանոցից և նորից բերում կենտրոնական բանտ, քանի որ դատարանը նրան դատապարտում է 5 տարի և 4 ամիս ազատազրկման, ապա Մեծ Բրիտանիայի Գերագոյն կոմիսարության պահանջով 1920 թ. օգոստոսի 2-ին հանձնվում է անգլիացիներին, ովքեր 1920 թ. սեպտեմբերի 30-ին հայերի կոտորածների մեջ մեղադրվող մի շարք այլ թուրք պաշտոնյաների հետ նրան էլ են աքսորում Մալթա²⁴⁴:

Կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատաքննության տասնմեկերորդ (1920 թ. հունվարի 1) և տասներկուերորդ (1920 թ. հունվարի 3) նիստերում ունկնդրության է արժանանում պաշտպանող կողմը՝ ի դեմս դատապաշտպանների և մեղադրյալների:

Դատավճիռը կայացվում է 1920 թ. հունվարի 8-ին: Դատավճիռը արձանագրվում է, որ Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղարների և պատվիրակների դատաքննության արդյունքում պարզվել է, որ կուսակցությունը ողջ երկրի իշխանությունն իր ծեռքում կենտրոնացնելուց հետո կատարել է տեղահանություններ, կոտորած ու կողոպուտ: Տարագրված հայերից մի քանիսի տները վերածվել են կուսակցության ակումբների և կա-

²⁴⁰ Անդ, էջ 154:

²⁴¹ Անդ:

²⁴² Անդ:

²⁴³ Անդ, էջ 155:

²⁴⁴ Անդ, էջ 88:

հավորվել լրված գույքով²⁴⁵.

Դատավճռում ընդգծում է նաև, թե Քաստամոնուի հայերը թիւ են եղել ընդհանուր բնակչության թվի համեմատ, և Տեղահանության օրենքի համաձայն՝ նրանք չպետք է աքսորվեին: Ըստ դատավճռի՝ երբ այստեղի նահանգապետ Ռեշիդը չի ենթարկվել իր շրջանի հայերին տեղահանելու հրահանգին ասելով՝ «Ես ձեռքերս արյան մեջ չեմ թաթախի», Քաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին անմիջապես հեռացրել է նրան պաշտոնից ու վայի նշանակել Արթիֆին, որը փութաջանորեն իրականացրել է տեղահանությունը և տեղիք տվել ողբերգական դեպքերի²⁴⁶:

Դատավճռի մեջ նշվում է, որ բոլոր պապույցներն ու փաստերը լիովին հաստատում են, որ հայերի ջարդերն իրազործել է Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից հիմնված Հատուկ կազմակերպությունը, իսկ կուսակցության պատասխանատու քարտուղարներն օժանդակել և դյուրացրել են այդ գործը²⁴⁷:

Կուսակցության պատասխանատու քարտուղարների վերաբերյալ կայացված դատավճռի համաձայն՝ ամբաստանյալներից Քաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին մուտքաման բնակչությանը շարունակաբար հայերի դեմ իրակրելու, սեփական նախաձեռնությամբ նահանգապետին պաշտոնազրկելու, հայերի գույքը յուրացնելու, իր կողմից նշանակված նոր նահանգապետ Արթիֆի հետ հայերի տեղահանությունն իրականացնելու համար դատապարտվում է 10 տարվա տաժանակիր աքսորի:

Ըստ դատավճռի՝ չնայած Բոլորի հայության թիվը թիւ է եղել, և նրանք, ըստ օրենքի, չպետք է ենթարկվեին տեղահանության, սակայն մեղադրյալներից Բոլորի նախկին պատասխանատու քարտու-

ղար Միդիաթը հրահրել է տեղի բնակիչներին, որպեսզի վերջիններս ցոյց անեն ասելով՝ «Չենք ուզում հայերին»: Ապա վերոհիշյալ ամբաստանյալը պաշտոնից հեռացնել է տվել Բոլորի գավառապետի տեղակալ Ալի Իլմի թեյին, քանի որ վերջինս ընդդիմացել է տեղահանությանը: Այդպիսով՝ վերոնշյալ մեղադրյալը նպաստել է տեղահանության իրականացմանը: Դատարանն այս հանցագործությունների համար Բոլորի պատասխանատու քարտուղար Միդիաթին նոյնպես դատապարտվում է 10 տարվա տաժանակիր աքսորի:

Ամբաստանյալներից Էդիրնեի տեսուչ Արդուլ Գանին, դատավճռի համաձայն, մեծ ազդեցություն է գործել տեղահանության գործի վրա, գինված իրոսակախմբերի հետ շրջել ամենուր, բռնագրավել հայերի դրամը, դիզել մեծ հարստություն: Դատավճռում նշվում է նաև, որ թեև վերոհիշյալ մեղադրյալը ցուցմունք է տվել առ այն, թե իրը տեղահանությունն Էդիրնեում կատարվել է ընդամենը մեկ գիշերվա ընթացքում, և հայերի միայն մեկ քարավան է աքսորվել, սակայն դատարանը հարցում է արել Էդիրնե ու պատասխան ստացել, որ հայերի տարագրությունն այստեղ իրականացվել է երեք քարավաններով, որոնք ուղարկվել են Դեր Զոր: Քանի որ Արդուլ Գանիի դեմ նոյն մեղադրանքով դատական գործ էր հարուցվել նաև Էդիրնեի տեղահանության դատական գործի շրջանակներում, դատարանը որոշում է նրա դատավճիռն ըստ այդմ կայացնել:

Պատասխանատու քարտուղարների վերաբերյալ դատավճռով մեղադրյալներից Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավճի թեյը որոշ անձանց անօրեն կերպով բանտարկել տալու համար դատապարտվում է 9 ամսվա ազատազրկման:

Մնացած ամբաստանյալներին դատարանն արդարացնում է²⁴⁸:

²⁴⁵ Takvim-i Vekayi, No 3772, 10 Şubat 1920, s. 3.

²⁴⁶ Անդ, էջ 4:

²⁴⁷ Անդ:

²⁴⁸ Անդ, էջ 4-6:

4. ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԴԱՏԱԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերի կոտորածների կազմակերպիչների պատասխանատվության խնդիրը Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանների կողմից քննվել է նաև՝ ըստ Օսմանյան Կայսրության տարբեր շրջանների: Գլխավոր դատավարությունները ներառյալ՝ կարելի է արձանագրել շուրջ 63 առանձին դատական գործերի դեպքեր, որոնք բոլորն էլ հարուցվել էին հայերի տեղահանման ու կոտորածների (*tehcir ve taktil*) մեղադրանքով: Խոսքը միայն Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում կայացած դատավարությունների մասին է, քանի որ 1919-1921 թթ. նման դատաքննություններ են իրականացվել ոչ միայն Օսմանյան Կայսրության մայրաքաղաքում, այլ նաև՝ տարբեր նահանգներում ու գավառներում²⁴⁹:

Օսմանյան Կայսրության տարբեր նահանգների և գավառների հայության տեղահանության և կոտորածների դատավարությունների մասին տեղեկություններ են պահպանվել տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում հրատարկվող ինչպես օսմանատառ, այնպես էլ հայալեզու, ֆրանսալեզու, հունալեզու և անգլալեզու մամուլում²⁵⁰: Նաև օրաթերթեր ամենայն մանրամասնությամբ ներկայացրել են ռազմական ատյանում կայացած դատական նիստերի ընթացքը: Եղել են նաև պարբերականներ, որոնցում տպագրվել են միայն դատաքննության կարևոր հատվածների մասին հրապարակումներ:

Ցողղատի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահա-

նության և զանգվածային սպանությունների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում: Դատը (18 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը: Մեղադրյալները սկզբնապես 3 հոգի են եղել՝ Ցողղատի մութասարիքի, Բողազլյանի կայմակամ Քեմալը, Ցողղատի ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը և Ցողղատի վաքրֆային վարչության նախկին պաշտոնյա Ֆեյյազ Ալին: 17-րդ նիստում վերջինիս գործն առանձնացվել է՝ հետագայում քննելու նպարակով, բայց մնացել է թղթի վրա²⁵¹: Դատավճիռը կայացվել է ապրիլի 8-ին, համաձայն որի՝ ամբաստանյալներից Բողազլյանի կայմակամ Քեմալը դատապարտվել է մահվան²⁵², իսկ ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի²⁵³:

Տրապիզոնի դատական գործը (20 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. մարտի 26-ից մինչև մայիսի 20-ը: Դատավճիռը կայացվել է մայիսի 22-ին: Դատին ներկա գտնվող ամբաստանյալները 7 հոգի էին՝ Մուստաֆա Նուրին, Մեհմեդ Ալին, Ցուսուֆ Ռըզան, կայմակամ Թալեաթը, Ալի Սայիթը, Նիազին և Նուրին: Տրապիզոնի դատավարության 16-րդ նիստում Ցուսուֆ Ռըզայի գործն առանձնացվել է և հետագայում քննվել Սիություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատական գործում: Տրապիզոնի դատավարության ընթացքում հեռակա կարգով քննվել են նաև Տրապիզոնի նահանգապետ Զեմալ Ազմիի և կուսակցության պա-

²⁴⁹ Ֆեյյազ Ալին բանտից ազատ է արձակվել, որպեսզի հնարավորություն ունենա ներկայանալ մեկ այլ շրջանում գտնվող դատապահն, որը պետք է քններ իր գործը, սակայն նա ուղևորվել է Անկարա և պատզամավոր ընտրվել նորարաց Անկարայի Ազգային ժողովում, տես *Vahakn N. Dadrian, Taner Akçam*, “Tehcir ve Taktıl”, s. 194.

²⁵⁰ Քարկ է նշել, որ Քեմալ մասնամբ ընդունել էր իր մեջը՝ ասելով, թե ինըն ընդամենը բարեխոնդեն կատարել է կառավարությունը ստացված հրահանգը, տես *Tehcir ve Taktıl Muhakemesi, “Alemdar”*, 28 Mart 1919. Նա կախաղան բարձրամալուց անմիջապես առաջ և փորձել է արդարանալ նոյն փաստարկով, տես Գրիկը, Ցողղատի հայասպանութեան վաերագրական պատմութիւնը, էջ 1:

²⁵¹ *Takvim-i Vekayi*, No 3617, 7 Ağustos 1919 ss. 1-2.

²⁴⁹ *Vahakn N. Dadrian, Taner Akçam*, “Tehcir ve Taktıl”, s. 149.

²⁵⁰ Սույն դատավարությունների մասին տեղեկություններ հաղորդած բոլոր թերթերի անվանութեան տես Գրիկը, Ցողղատի հայասպանութեան վաերագրական պատմութիւնը, էջ 34:

տասխանատու քարտուղար Նայիլ բեյի գործերը: Դատավճռի համաձայն՝ Զեմալ Ազմին և Նայիլը հեռակա կարգով դատապարտվել են մահվան, Մեհմեն Ալին՝ 10, իսկ Մուստաֆան և Նորիխն՝ մեկական տարվա ազատազրկման²⁵⁴: Դատարանի կազմը, Նիազիի և Թալեթի մեղավորությունը հաստատող փաստերը շրջանցելով, արդարացրել է նրանց²⁵⁵, իսկ առողջապահության տեսուչ Ալի Սայիրի դատարնությունը, իրը թե «որոշակի հանցանշան չինելու պատճառվ», կարծվել է: Հարկ է նշել, որ Ալի Սայիրը մեղադրվում էր ոչ միայն հայ երեխաների սպանության, այլ նաև՝ տիկին Արսլանյանի գարդեղենը հափշտակելու մեջ: Ալի Սայիրին ներկայացված մեղադրմաների մեջ կար նաև մեկ այլ՝ շատ ուշագրավ մեղադրանք, ըստ որի՝ Ալի Սայիրը հիվանդանոցում թունավորել էր Վարդան անվամբ ոուսահատակ մի հայի²⁵⁶: Հետագայում նրա դեմ առանձին դատաքննություն է կատարվել՝ Տրավիդոնի Կարմիր մահիկ հիվանդանոցում գագի և այլ միջոցներով հայերի թունավորման մեղադրանքու²⁵⁷:

1920 թ. հոկտեմբերին ավարտվել է Տրավիդոն նահանգի

²⁵⁴ Takvim-i Vekayi, No 3616, 6 Ağustos 1919, ss. 1-3.

²⁵⁵ Օդիմակ՝ Տրավիդոնի դատաքննության 1919 թ. ապրիլի 26-ի նիստում ընթերցվել է տրավիդոնի Սուլրադի գրավոր վկայությունը՝ Նիազիի կողմից լրված գուրք յուրացման վերաբերյալ, տե՛ս Dünan-ı Harbi'de Trabzon Tehcir ve Taktik Muhakemesi, "Alemdar", 27 Nisan, 1919.

²⁵⁶ Ուսահատակ Կարդանին Տրավիդոնում ջրասույզ էին արել 40 հայ կուսակցական գործիչների և մուսավականների հետ մեկտեղ, սակայն Վարդանը, լինելով շատ ճարպիկ լողորդ, կարողացել էր կապաս ծնոթերով լրապով՝ ափ հասնել: Դա այնքան էր զարմացրել հայերի ոչնչացությ հակող ոստիկաններին, որ վերջիններս որոշել էին չսպանել նրան, այլ տանը Կարմիր մահիկ հիվանդանց: Սակայն, 1919 թ. ապրիլի 7-ին դատարանին ցուցմունքներ տված վկա ֆրանսահպատակ Վիտալիի խորեռով, այստեղ Կարդանին թունավորելով սպանել էր թժիկ Ալի Սայիրը, տե՛ս Trabzon Tehcir ve Taktik Muhakemesi, "Alemdar", 8 Nisan, 1919. Թեև Ալի Սայիրը՝ հիվանդանոցում կատարած բռնապերումները հաստատող վկայություններ են տվել նաև Տիգրան Նարդիկանը, տիկին Սանիկը, Տրավիդոնի վերաբնիշ դատարանի նախագահ Յիլմին և ուղիղներ, սակայն դատարանը բռնավորումների մասին Ալի Սայիրի դեմ եղած վկայությունները «քավարար» չի համարել:

²⁵⁷ Taner Akçam, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 90.

Յոմրա գավառի հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունը²⁵⁸: Սույն դատական գործի մեղադրյալներն են եղել հարյուրաբետ թեփիքը, կրտսեր լեյտենանտ Սալիմը և ստամբուլցի Մոհիլսը: Ըստ մամուլում հրապարակված տեղեկությունների՝ թեփիքը դատապարտվել է 10 տարվա տաժանակիր աքսորի: Մյուս մեղադրյալների դատավարությունը շարունակվել է: Յոմրայի դատավճռում նշվել է, որ թեփիքը 1915 թ. հունիսի 15-ին տեղահանության մասին 19 կետից բաղկացած մի հրահանգագիր է ստացել Տրավիդոնի նահանգապետ Զեմալ Ազմիից: Հարկ է ընդգծել, որ Յոմրա գավառի դատավարության ժամանակ հանդես եկած վկաների մեծ մասը եղել են թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր վկայել են, թե այստեղ հայերին լցող են մակույկները և Աև ծովում խեղդամահ արել²⁵⁹:

Տրավիդոնի դատավարության մեղադրյալներից թժիկ Ալի Սայիրի առանձնացված գործը բննվել է 1919 թ. հուլիսի 8-ից դեկտեմբերի 21-ը: Ալի Սայիրը մեղադրվում էր Տրավիդոնի Կարմիր մահիկ հիվանդանոցում գագի և այլ միջոցներով հայերի թունավորման մեջ²⁶⁰: Սույն դատաքննության նիստերում ունկնդրության արժանացած վկաները հայտնել են, թե ըստ իրենց հասած տեղեկությունների՝ ամբաստանյալը մորֆինով թունավորել է հայ երեխաներին և պարկերի մեջ լցնելով՝ սպանել նրանց: Ավելին՝ դեռևս դատի առաջին նիստում (1919 թ. հուլիսի 8) մեղադրյալի դեմ ուղղված զեկուցմամբ հանդես եկած թժիկ Զիա թյօր վկայել է, որ Ալի Սայիրը մանուկներին սպանել էր ներարկման միջոցով, ապա պարկերը լցնելով՝ ոչնչացրել: Չնայած այս բոլոր վկայություններին՝ դատարանն արդարացրել է մեղադրյալին՝ վերոնշյալ մեղադրանքները հաստատող ականա-

²⁵⁸ Ան, էջ 91:

²⁵⁹ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 179.

²⁶⁰ Taner Akçam, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 90.

տես վկա չգտնվելու հիմքով²⁶¹: Բժիշկ Ալի Սայիրի արդարացումը ուազմական ասյանի կողմից մեկն է այն բազմաթիվ օրինակներից, երբ դատարանն ազատ է արձակել մեղադրյալին՝ չնայած վերջինիս մեղավորությունը հաստատող փաստերին ու վկաներին: Տրապիզոնի նահանգապետ Զեմալ Ազմիհ հրահանգով Ալի Սայիրի կատարած թունավորումների և սպանությունների մասին իրենց ուսումնասիրություններում վկայում են նաև հայ հետազոտողներ Ս. Ակունին, Մ. Գուշակյանը և որիշներ: Այսպես՝ Ակունին Ալի Սայիրին տալիս է մանկասպան բնորոշումը²⁶², իսկ Գուշակյանը հայտնում, որ Տրապիզոնի հոյների մետրոպոլիտի խնդրանքով նրա մոտ հավաքված մոտավորապես 600 որբացած հայ երեխաները մանկատներում տեղավորվելու պատրիարքով խվել են մետրոպոլիտի ծեռքից, նրանցից 150-ին անձամբ թունավորվել է բժիշկ Ալի Սայիրը, իսկ մնացածները հանձնվել են մակույկավարների պետ Քայրաքթարօղի Ռահմիին, որը երեխաներին լցրել է պարկերը և ծովում խեղդամահ արել²⁶³: Բացի այդ՝ Տրապիզոն նահանգի տեղահանության և կոտորածների դատաքննության համար կազմված մեղադրական եղրակացության մեջ նշվում էր, որ Ալի Սայիրին պետք է մեղավոր ժանաչել «հայ երեխաներին մեծ կողովներով տեղափոխողների հանցագործ գործողություններին աջակից լինելու մեջ»²⁶⁴: Ինչ վերաբերում էր թունավորման դեպքերին, սույն ամբաստանագիրը կազմած դատախազ Ֆերիդոնը թուների տեսակը պարզելու համար առաջարկում էր կատարել դատարժ-

²⁶¹ Vahaku N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", s. 168.

²⁶² Խ. Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920, էջ 179:

²⁶³ Մ. Գուշակյան, Տրապիզոնի և Սամսոնի նահանգներու տեղահանությունն ու ջարդերը, Գերսամ Սահրոնեան (խմբագրապետ՝ «Զարթօնքի»), Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), Պյուրու, Ասլաւ տպարան, 1965, էջ 472: Տրապիզոնի առողջապահական տեսուչ Ալի Սայիրի՝ հայ երեխաներին թունավորելու մասին տես նաև Զ. Ա. Կիրակոսյան, Երիտրութերը պատմության դատաստանի առաջ, գիրք Երկրորդ, Երևան, 1983, էջ 216:

²⁶⁴ Trabzon Taktıl ve Tehciri. İddianamenin Kiraati, "Alemdar", 16 Nisan, 1919.

կական փորձաքննություն՝ տեղում դիազննություն կատարելով²⁶⁵:

Հարկ է նշել, որ Տրապիզոնի հիվանդանոցում հայերի թունավորման դեպքերի կապակցությամբ 1921 թ. հունվարին դատական գործ է հարուցվել նաև բժիշկ Ավնիի դեմ, որի դատավարության ընթացքի վերաբերյալ մամուլում տեղեկություններ չեն հաղորդվել²⁶⁶:

Բյույուք Դերեի կամ Բողազիչի դատավարությունը²⁶⁷ տեղի է ունեցել 1919 թ. մարտի 23-ից մինչև մայիսի 24-ը: Մեղադրյալներն էին Բյույուք Դերեի ոստիկանապետ Աբդուլ Ջերիմը, Բաքերի խանութպան սալոնիկցի Ռեֆիք Հոփօզ բեյը և թաղապետ (muhtar) Ջելալ Էֆենդին: 1919 թ. մայիսի 6-ի նիստում մեղադրյալների թիվն ավելացել է ևս մեկով՝ ի դեմս Հաֆզը Մահմուդի: Դատավճիոն ընդունվել է 1919 թ. մայիսի 24-ին, ըստ որի՝ Աբդուլ Ջերիմը դատապարտվել է 1, իսկ Ռեֆիքը՝ 2 տարվա ազատազրկման: Մյուս մեղադրյալներն արդարացվել են²⁶⁸:

Մամուրեթ-ով Ազիզի կամ Խարբերդի դատաքննությունն իրականացվել է 1919 թ. հուլիսի 28-ից մինչև 1920 թ. հունվարի 10-ը: Խարբերդի դատը հարուցվել էր հետևյալ մեղադրյալների նկատմամբ: Խարբերդի նախկին նահանգապետ Սաբիթ, Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Բեհեդին Շաբիթ, կուսակցության պատվիրակ Ռեսնելի Նազրի, Խարբերդի նախկին գավառապետ Ասրմ, Խարբերդի նախկին պատմագվորներ Սաֆվեթ ու Հաջը Սայիդ, Դերսիմի պատգամավոր Մեհմետ Նուրի և Մամուրեթ-ով Ազիզի հանրակրթական տեսուչ Ֆերիդ: Դատավճիոը կայացվել է 1920 թ. հունվարի 13-ին, համաձայն որի՝ Բեհեդին Շաբիթը հեռակա կարգով դատապարտվել է մահվան,

²⁶⁵ Անը:

²⁶⁶ Vahaku N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", s. 183.

²⁶⁷ Սահմուլի բաղամասերից է: Սահմուլում հանդիպում է նաև որպես Յենիշոյի և Թարարիայի տեղահանության դատավարություն:

²⁶⁸ Takvim-i Vekayi, No 3618, 9 Ağustos 1919, ss. 1-2.

իսկ Ռեսնելի Նազըմը, դարձյալ հեռակա կարգով, 15 տարվա տաժանակիր աքսորի: Դատարանն արդարացրել է դատին ներկա գտնվող մեղադրյալներին²⁶⁹:

Բարերդի դատավարությունը տեղի է ունեցել 1920 թ. մարտի 15-ից մինչև հուլիսի 4-ը: Տվյալ դատական գործը հարուցվել էր Ուրֆայի նախկին գավառապետ Բեհրամզադե Նուսրեթի և Փիրե Սեհմեդ անվամբ հայտնի լեյտենանտ Մեհմեդ Նեջաբիի նկատմամբ: Վերջինս դատաքննության ժամանակ փախուատի մեջ էր գտնվում: Ըստ դատավճորի՝ երկու ամբաստանյաներն էլ դատապարտվել են մահվան: Բարերդի դատավճորը չի արձանագրվել “Tâkvim-i Vekayi” օրաթերթում. պաշտոնաթերթում հրապարակվել է միայն սուլթանի կողմից դատավճորի վավերացումը, իսկ դատավճորն ամբողջությամբ տպագրվել է “Tercüman-ı Hakikat” («Ճշմարտության մեկնաբան») օրաթերթ՝ 1920 թ. օգոստոսի 5-ի համարում, որը թարգմանել և հրապարակել է հայ հետազոտող Հայկազն Գ. Ղազարյանը: Բարերդի դատավճորում դարձյալ ընդգծվում էր այն փաստը, որ հայերի կոտորածների հրամանը տվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեն և այդ հրամանը հատուկ սուրհանդակների միջոցով ուղարկել շրջաններ. «...բազմազան վայրերու մէջ տեղի ունեցած ողբերգական ջարդերու շուրջ մինչեւ հիմա Պատերազմական ատեանին կողմէ կատարուած դատավարութեանց եղակացութիւնը եղած է այն, թէ յիշեալ ոժիրները նախ և առաջ իթթիատ վե Թերազզը մեմիյերին Ընդհանուր Կեղրոնին մէջ կանխամտածուած եւ որոշուած են»²⁷⁰: Բարերդի դատավճորում նշվում էր նաև, որ մեղադրյալ կազմակերպել էր 20.000 հայերի կոտորածը, ինչի համար նրա պաշտոնը բարձրացրել էին²⁷¹: Բեհրամզադե Նուսրեթը

մահապատժի է ենթարկվել 1920 թ. օգոստոսի 5-ին Ստամբուլի Բայազետ հրապարակում²⁷²:

Երգն Բարերդ գավառի և շրջակա բնակավայրերի տեղահանության պատճառով մեղադրվել է նաև այստեղի գավառապետ Յուսուֆ Զիան, որի առանձին դատաքննությունն սկսվել է 1921 թ. հունվարին և ավարտվել փետրվարին՝ ամբաստանյալի արդարացման մասին դատավճռով²⁷³:

Երգնկայի դատական գործը հարուցվել է «տեղահանության ընթացքում հայերի սպանությունների և բնաշնչման», ինչպես նաև՝ նրանց ունեցվածքի կողոպտման մեղադրանքներով²⁷⁴: Երգնկայի տեղահանության և կոտորածների գործով սկզբում դատական հետապնդման են ենթարկվել Երգնկայի նախկին գավառապետ Մեմլիկը, ժանդարմերիայի հրամանատար, նաև հյուրանոցատեր Հաֆրա Արդուլլա Ավինին, Երգնկայի նախկին պատգամավոր Հալեքը, Հաջի Վահիդզադե Ռըզան, Դերսիմի ցեղապետերից Քըրմո Յուսուֆը, ժանդարմերիայի ենթասպա Արսլանը և Դանզիկ նահիեի (գավառակ) կառավարիչ, ցեղապետ Քերոն²⁷⁵:

Սակայն, ինչպես նշվում է սուլթանի կողմից դատավճորի վավերացման մէջ, Հաջի Վահիդզադե Ռըզան դատաքննության ընթացքում վախճանվել էր, ինչի պատճառով նրա դեմ հարուցված դատական գործը կարճվել էր, իսկ Երգնկայի գավառապետ Մեմլիկն աքսորվել էր Մալթա, և նրա գործն առանձնացվել էր՝ հետագայում քննելու նպատակով: Երգնկայի դատավճռով քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ և զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածներով հեռակա կարգով մահապատժի են դատա-

²⁶⁹ "Takvim-i Vekayi", No 3771, 9 Şubat 1919, ss. 3-6.

²⁷⁰ Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը, էջ 298:

²⁷¹ Ան:

²⁷² Ան:

²⁷³ "Alemdar", 6 Ağustos 1919.

²⁷⁴ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", s. 179.

²⁷⁵ Mahkumiyet, "Takvim-i Vekayi", N 3917, 31 Temmuz 1920.

²⁷⁶ Ան:

պարտվել Երզնկայի պատգամավոր Սաղըրզադե Հալեթը, ավազակապետ Քըրմ Յուսուֆը և Երզնկայի ոստիկանության ննժասպա Արսլանը:

Երզնկայի ոստիկանության հրամանատար Հաֆլզ Արրուլլահ Ավճիի ներկայությամբ անցկացված դատաքննության արդյունքում Վերջինիս նկատմամբ մահվան դատավճիռ է կայացվել, որն ի կատար է ածվել 1920 թ. հունիսի 22-ին²⁷⁶:

Զաթալջայի փոստի և հեռագրատան տնօրեն Օսման Նուրիի դատավարությունն սկսվել է 1919 թ. օգոստոսի 4-ին: Ամբաստանյալը մեղադրվում էր հայերի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող փաստաթղթերն այրելու մեջ²⁷⁷: Հաջորդ նիստում գլխավոր դատախազը դատարանից խնդրել է ազատ արձակել մեղադրյալին, քանի որ Վերջինս վերոհիշյալ փաստաթղթերը այրել էր իր ղեկավարի հրամանով²⁷⁸:

Զանքըրըում Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզի և հարյուրապետ Նուրեյինի դեմ դատական գործ է հարուցվել Ստամբուլից Զանքըրը տարագրված հայերի սպանության մեղադրանքով: Զանքըրըում Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզն ընդգրկված է եղել նաև կուսակցության պատասխանատու քարտուղարների դատաքննության մեղադրյալների ցանկում: Նրա գործը պատասխանատու քարտուղարների դատավարության տասներորդ նիստում (1919 թ. դեկտեմբերի 29) «հիվանդության» պատճառով առանձնացվել է, և 1920 թ. հունվարի 27-ից սկսվել է նրա առանձին դատաքննությունը: Դատավճիռը կայացվել է

1920 թ. փետրվարի 8-ին, համաձայն որի՝ Ջեմալ Օղուզը հանցավոր է ճանաչվել հայ բժիշկ Զիլինկիրյանի և վերջինիս 4 ընկերների սպանության մեջ: Ըստ դատավճության՝ Ջեմալ Օղուզը դատապարտվել է 5 տարի և 4 ամիս, իսկ փախուատի մեջ գտնվող մեղադրյալ Նուրեյինը՝ 6 տարի և 8 ամիս տաժանակիր աքսորի²⁷⁹:

Նահիեների (գավառակների) կառավարիչների²⁸⁰ դատական գործը հարուցվել էր Ներքենդ նահիեի կառավարիչ Վեջիիի, Բահչեցիը նահիեի կառավարիչ Ալի Շուտրիի, նախկին բանտապետ Իբրահիմի և վերջինիս ընկերների դեմ՝ «թալանի, կողոպուտի, տեղահանության ու կաշառակերության» մեղադրանքներով: Ընդհանուր թվով 6 ամբաստանյալների սույն դատաքննությունն սկսվել է 1919 թ. նոյեմբերի 27-ին: 1919 թ. դեկտեմբերի 3-ին կայացած նիստում վկասերժանտ Սյուլեյմանը հանդես է գալիս բանտապետ Իբրահիմի դեմ ուղղված մանրամասն ցուցմունքներով, ըստ որոնց՝ Իբրահիմը գենքեր հավաքելու պատրվակով հայերին հավաքել է մի դպրոցում և ծեծել բոլոր նրանց, ովքեր ասել են, թե զենք չունեն: Հենց առաջինն էլ ծեծի է ննժարկվել հայ քահանան²⁸¹:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ ամբաստանյալի հանցագործությունները հաստատող վկայություն է գրանցվել նաև Ադարազարի անվանիներից Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Համիդ թեյի դատաքննության ժամանակ: Մեղադրյալ Համիդը տվյալ դատավարության 1919 թ. օգոստոսի 6-ի նիստում վկայել է, թե տեղահանության ժամանակ ինքը գտնվել է Ադարազարում, այդ ընթացքում «զենք գտնելու» մտադրությամբ Ստամբուլից այստեղ է ժամանել բանտապետ Իբրահիմը, որը հայե-

²⁷⁶ Bir Caninin İdami, "Peyâm-i Sabah", 30 Temmuz, 1336 (1920).

²⁷⁷ «Ժողովուրդ» քաղաքական և հասարակական օրաթերթ, Կ.Պոլիս, 6 օգոստոս, 1919, N 7 (253):

²⁷⁸ «Ժողովուրդ», 7 օգոստոս, 1919, թի 8 (254):

²⁷⁹ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", s. 160-161.

²⁸⁰ Սամուլում հանդիպում է նաև որպես Խզմիթի, Բահչեցիի կամ Ներքենդի դատավարություն:

²⁸¹ Անը, էջ 165:

րին հավաքել է Եկեղեցում և այստեղ սկսել գենք հավաքել գավազանի հարվածներով²⁸²:

Նահիեի կառավարիչների դատաքննության չորրորդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. դեկտեմբերի 7-ին, ամբաստանյալների մեղավորությունը հաստատող ցուցմունքներ են տվել ոչ միայն հայ, այլ նաև՝ թուրք վկաներ, ովքեր հայտնել են, որ բանտապետ Իբրահիմն ու Բահչեջիք գավառակի կառավարիչ Ալի Շուտրին կտտանքների են ենթարկել հայերին և կողոպտել նրանց գույքը: Դատավճիռն ընթացվել է 1920 թ. փետրվարի 29-ին, որի համաձայն՝ մեղադրյալներից Իբրահիմը, որը գտնվում էր փախուստի մեջ, դատապարտվել է 15, ժանդարմ Ֆայիջը՝ 3 տարվա ազատազրկման, Դերբենդ գավառակի կառավարիչ Վեջիիհն՝ 2 և Բահչեջիք գավառակի կառավարիչ Ալի Շուտրին՝ 1 տարվա տաժանակիր աքսորի: Ինչ վերաբերում է մյուս ամբաստանյալներին՝ սերժանտ Ահմեդին ու Հասանին, ապա վերջիններս դատապարտվել են 4 ամիս ազատազրկման²⁸³:

Աղարազարի Երևելիներից Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Համիդ թեյի դատի առաջին նիստը կայացել է 1919 թ. օգոստոսի 4-ին: Համիդ թեյի դեմ դատական գործ էր հարուցվել՝ Աղարազարի հայերի տեղահանության և գոյքի կողոպտման մեղադրանքով: Աղարազարի գավառապետ Ռեշայի Լյուգիեթը հանդես է եկել ամբաստանյախ մեղավորությունը հաստատող ցուցմունքներով, սակայն դատաքննության վերջին նիստում, որը կայացել է 1920 թ. փետրվարի 16-ին, դատախազը պահանջել է արդարացնել մեղադրյալին: Դատարանն ազատ է արձակել Համիդին²⁸⁴:

Ամասիայի դատական գործը հարուցվել է Ամասիայի կառա-

վարիչ (մոլթասարրիֆ) Սըրրըի, ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թեփիկի, Ամասիայի Երևելիներից Հասանի դեմ: Տվյալ ժամանակաշրջանում հրապարակվող թերթերի համաձայն՝ սույն դատավարության շրջանակներում հեռակա կարգով քննվել են նաև բազմաթիվ այլ մեղադրյալների գործեր: Դատարանի կազմում կատարված փոփոխությունների պատճառով Ամասիայի դատավարությունը երկար է տևել և ի վերջո ավարտվել ամբաստանյալների արդարացմամբ²⁸⁵:

Դեր Զորում հայերի կոտորածների առնչությամբ Ստամբուլի ու ազմական արտակարգ ատյաններում կայացել են երեք տարրեր դատավարություններ: Դրանցից մեկը հարուցվել էր Դեր Զորի ոստիկանապետ Մուստաֆա Օքբեջի դեմ, որի դատաքննությունն սկսվել է 1921 թ. հունվարի 20-ին: Նոյն տարվա մարտին մեղադրյալն արդարացվել է՝ «նրան հասցեագրվող մեղադրանքները չհաստատվելու» հիմքով²⁸⁶:

Դեր Զորում կազմակերպված հայերի ջարդերի հաջորդ դատական գործը հարուցվել է փախուստի մեջ գտնվողը, Դեր Զորի նախկին կառավարիչ (մոլթասարրիֆ) Սալիհ Զեքիի դեմ²⁸⁷: Բավականին կարծ տևած սույն դատաքննության արդյունքում մեղադրյալ հեռակա կարգով դատապարտվել է մահվան: 1920 թ. ապրիլի 28-ին ընդունված դատավճում ընդգծվում էր, որ «դատաքննության ժամանակ հարցաքննված բազմաթիվ վկաների ցուցմունքների համաձայն՝ Դեր Զորի կառավարիչ Զեքին Օսմանյան Կայսրության տարրեր

²⁸⁵ Անդ, էջ 169:

²⁸⁶ Անդ, էջ 170:

²⁸⁷ Դեր Զորի կառավարիչ Սալիհ Զեքիի կատարած ոճագործությունների մասին հիշատակվում էր նաև Երիտրութերի կուսակցության և կառավարության անդամների կամ գլխավոր դատավարության մեղադրական ակտում, տես՝ Takvim-i Vekayi, No 3540, 5 Mayıs 1919, s. 6. Զեքիի կողմից այստեղ հայերի գանգվածային ոչնչացման կազմակերպումը և իրագործումը մանրամասն նկարագրված են Արամ Անտոնյանի «Մեծ ոինքը» գրքում, տես՝ Ա. Անտոնյան, Մեծ ոինքը, էջ 105-112:

²⁸² Divan-i Harp'te Hamid Bey'in Muhakemesi, "Tasvir-i Efkâr", 7 Ağustos 1919.

²⁸³ Vahak N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktik", s. 166.

²⁸⁴ Անդ, էջ 168:

շրջաններից դեպի Դեր Զորի սանջակ տեղահանված բազմաթիվ հայերի, դարձյալ տեղահանության պատրվակով, աքսորել է այլ շրջաններ՝ իր իսկ կողմից հրոսակեներից կազմված հեծյալ ու հետիոտն չեթեների միջոցով, և որ նրա պարտադրանքով այս հրոսախմբերը ճանապարհին մեղադրյալի ներկայությամբ հարձակվել են հայերի վրա, հափշտակել վերջիններիս մոտ գտնվող դրամները և իրերը, շատերին դաժանաբար սպանել ու ոչնչացրել Խաբուր գետի ավազանի հեղեղատներում»²⁸⁸:

Ներ Զորու կազմակերպված հայերի կոտորածների առնչությամբ երրորդ դատական գործը հարուցվել է կոմիսար Իրահիմի դեմ: 1921 թ. փետրվարի 27-ին սկսված այս դատի հետագա ճակատագրի մասին մամուլում տեղեկություններ չեն հրապարակվել²⁸⁹:

Եղիրների հայերի տեղահանության մեղադրանքով դատական գործ է հարուցվել նաև կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ դատված Էղիրների տեսուչ Արդուկ Գանիի²⁹⁰, վաքրֆային վարչության տնօրեն Սադրեդդինի, գյուղատնտեսության հարցերով տնօրեն Ավնիի, Ռըֆարի և Հայրուլլահի դեմ: Մեղադրյալների շարքում է եղել նաև Սերվեթը, որը դատավարության ընթացքում մահացել է, և գործը կարծվել է: Այս դատի վերջին նիստը կայացել է 1921 թ. հունվարի 1-ին: Դատավարությունն ավարտվել է բոլոր մեղադրյալների, այդ թվում նաև՝ Էղիրների տեսուչ Արդուկ Գանիի արդարացման մասին դատավճռով²⁹¹: Այնինչ, կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավճռի համաձայն, վերջինս զգալի մասնակցություն էր ունեցել տեղահանության գործի

²⁸⁸ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", ss. 715-716.

²⁸⁹ Անը, էջ 180:

²⁹⁰ Թեև Արդուկ Գանին երիտրուքերի կուսակցության պատասխանատու քարտուղարների վերաբերյալ դատավճռով մեղապոր էր ճանաչվել, սակայն վճռվել էր նրա գործը կցել Եղիրների դատավարությանը, և ըստ այդմ վճռ կայացնել, տես' Takvim-i Vekayi, No 3772, 10 Şubat 1920, s. 6.

²⁹¹ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", s. 171.

վրա, զինված հրոսակախմբերի հետ շրջել ամենուր, բռնագրավել հայերի դրամը, դիզել մեծ հարստություն²⁹²:

Էղինի²⁹³ հայերի տեղահանության առնչությամբ 1921 թ. հարուցվել են երկու տարբեր դատական գործեր: Դրանցից առաջինը վերաբերել է Մեհմեդօղլու իբրահիմին, իսկ երկրորդը՝ Քասափ Սուստաֆային: Այս երկու դատաքննություններն էլ տեղի են ունեցել գրեթե միաժամանակ: Երկու ամբաստանյալներն էլ արդարացվել են²⁹⁴:

Կրետացի Նեջարի էֆենդու դատավարությունն սկսել է 1919 թ. հուլիսի 13-ին: Միություն և առաջադիմություն կուսակցության անդամ Նեջարին մեղադրվում էր Դիարբեքիրի շրջակայքում կազմակերպված հայերի կոտորածներին մասնակցելու և Հատուկ կազմակերպությանն անդամակցելու մեջ²⁹⁵: Մեղադրյալն արդարացվել է և ազատ արձակվել²⁹⁶:

Խարբերդի կայմակամ Ասըմ բեյի դատն սկսվել է 1920 թ. դեկտեմբերի 30-ին և ավարտվել 1921 թ. մարտի վերջերին՝ մեղադրյալի արդարացմամբ²⁹⁷:

1920 թ. հունվարի 20-ին Զարամյուսելի տեղահանության ժամանակ հայերի գույքի կողոպտման մեղադրանքով սկսվել է Ռըֆարի, փախուստի մեջ գտնվող քանտապետ Իրահիմի²⁹⁸, քարամյուսելցի Ալիի, գործակալ Խմայիլի և իմամ Սելահեդդինի դատաքննությունը: Քանի որ մեղադրյալներից Ռըֆարը եղել է Մալթա աքսորված ոժրագործների շարքում, նրա գործն առանձնացվել է: Դատին ներ-

²⁹² Takvim-i Vekayi, No 3772, 10 Şubat 1920, ss. 5-6.

²⁹³ Սերկային Թեմային զավակի նախկին անվանումը:

²⁹⁴ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", ss. 171-172.

²⁹⁵ Taner Akçam, Ermeni Tabusu Aralarinden Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 92.

²⁹⁶ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", ss. 172-173.

²⁹⁷ Անը, էջ 173:

²⁹⁸ Քանտապետ Իրահիմի գործը հեռակա կարգով քննվել է նաև նահիեի (զայսուայ) կառավարիների դատաքննության ժամանակ, որի արդյունքում ամբաստանյալ դրամապարտվել է 15 տարվա ազատազրկման, տես' Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", s. 166.

կա ամբաստանյալներին դատարանն արդարացրել է²⁹⁹:

Քըղիի հայերի տեղահանության և կոտորածների կապակցությամբ Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում իրականացվել են երկու տարբեր դատաքննություններ: Առաջին դատական գործը հարուցվել է Թիմուր բին Խամայիի դեմ՝ Հակոբ անվամբ հայի սպանության մեղադրանքով: Սույն դատավարության վերջին նիստում, որը կայացել է 1921 թ. փետրվարի 28-ին, ամբաստանյալն արդարացվել է՝ վկաների ցուցմունքներում առկա հակասությունների և բավարար չափով ապացուցների բացակայության հիմքով³⁰⁰: Քըղիի հայերի տեղահանությանն առնչվող հանցագործությունների կապակցությամբ դատական գործ է հարուցվել նաև Դեմիրի և Ջիլելի Դուրսունի դեմ: Դատաքննության վերջին նիստում (1921 թ. մարտի 6) Ջիլելի Դուրսունն արդարացվել է, իսկ Դեմիրի հանդեպ սահմանված պատժի մասին մամուլում տեղեկություններ չեն հրապարակվել³⁰¹:

Մոսուլի նախկին գլխավոր հրամանատար Նևաթ բեյի դատաքննության շրջանակներում վկայություններ են արձանագրվել մեղադրյալ՝ աքսորյալ հայերի մոտից մետաղյա դրամներ խելու մասին: Մոսուլի քաղաքապետի խորհրդական Զերքեզ Բեքիրի տված ցուցմունքի համաձայն՝ Նևաթը փակել է տվել հայերի բոլոր խանութները, նրանց աքսորել դեպի անպատճերը և սպանել տվել: 1919 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած նիստում ընթերցվել է Ստամբուլի մաքսատան վարչության վիճակագրական գրասենյակի քարտուղարներից Զեմալի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Մոսուլում «հայ կանայք ծնծի են ենթարկվել ողջ գիշեր»: Քանի որ Նևաթը 1919 թ. մայիսի 28-ին բրիտանացիների կողմից Մալթա աքսորված մեղադրյալների շարքում է եղել, նրա դատավարությունը հետաձգվել է և

²⁹⁹ Անդ, էջ 174:

³⁰⁰ Անդ:

³⁰¹ Անդ, էջ 174-175:

այլևս չի շարունակվել: Վերոհիշյալ մեղադրյալը հետազայռմ՝ 1921 թ. սեպտեմբերի 6-ին, փախել է աքսորավայրից³⁰²:

Մոսուլում հայերի հանդեպ կատարված բռնությունների կապակցությամբ դատական գործ է հարուցվել նաև հարյուրապետոր Ֆերիդի և Զեքերիայի դեմ, որոնց դատն սկսվել է 1919 թ. հունիսի 2-ին: Մեղադրյալներից Զեքերիան դատավարության ժամանակ գտնվել է փախուստի մեջ, որի պատճառով նրա դատավարությունը կայացել է հեռակա կարգով: Երկու ամբաստանյալներն էլ արդարացվել են³⁰³:

Մոսուլի տեղահանության կապակցության դատական գործ է հարուցվել նաև Մոսուլի պատգամավոր Ֆևզիի դեմ, որն ավարտվել է 1920 թ. հունվարի 30-ին՝ մեղադրյալի արդարացմամբ³⁰⁴:

1921 թ. հունվարի 20-ին սկսվել է Սվասի և Թոչիսարի հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Սույն դատական գործով մեղադրվում էին Թոչիսար գավառի նախկին կայմակամ Նարին, Սվասի ժանդարմերիայի հրամանատար, հարյուրապետ Ալի Շեֆիքը և առևտրական Բալըզադե Օմեր Ռաուֆը: Դատավծիոր կայացվել է 1921 թ. փետրվարի 1-ին, ըստ որի՝ մեղադրյալներն արդարացվել են³⁰⁵:

Հայերի տեղահանության գործին մասնակցության մեղադրանքով դատական գործ է հարուցվել Սիրիայի փոխնահանգապետ Թևֆիքի դեմ, որն ավարտվել է 1921 թ. փետրվարի 24-ին: Մեղադրյալը դատապարտվել է 6 ամս ազատազրկման³⁰⁶:

Օսմանյան Կայսրության տարբեր շրջաններում կատարված հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով 1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում կայացել են

³⁰² Անդ, էջ 175-177:

³⁰³ Անդ, էջ 178:

³⁰⁴ Անդ:

³⁰⁵ Անդ:

³⁰⁶ Անդ, էջ 179:

Նաև նահանգների, գավառների կառավարիչների և առանձին անհատների այնպիսի դատավարություններ, որոնց հանգուցալուման մասին մամուլում տեղեկություններ չեն հրապարակվել³⁰⁷:

Նման դատաքննությունների շարքում հիշատակման են արժանի Բիլեջիքի³⁰⁸, Չանաքքալեի, Դիարբեքիրի (Տիգրանակերտ), Գիրեսումի (Կերասուն), Իզմիրի (Սիկոմելիա), Ջասրամոնոի, Քըրքիլիսէի, Թոնիայի, Մուշի և Յալովայի դատական գործերը³⁰⁹:

Օսմանյան Կայսրության տարբեր շրջանների հայության տեղահանության և կոտորածների դատական գործերի առնչությամբ կարելի է արձանագրել հետևյալ օրինաչափությունը. Եթե առաջին դատավարությունների դեպքում դատարանը համեմատաբար խիստ պատիճներ է սահմանել մեղադրյալների նկատմամբ, ապա հետագա դատաքննությունների ժամանակ նկատելի է ամբաստանյալների ազատ արձակման դեպքերի աճ: Այս առումով, բնականաբար, նշանակյալ դեր է կատարել Երկրության քեմալական շարժման ծավալումը և պարտվողական տրամադրությունների թոթափումը:

Ժամանակաշրջանի մամուլը ևս հետզիետե կորցրել է սկզբնական մեծ հետաքրքրությունը դատավարությունների հանդեպ, դատավարություններ, որոնք օսմանյան օրաթերթերի կողմից 1919 թ. սկզբներին ստացել էին «պատմական» որակումը: Մամուլի հետաքրքրության նվազումը պայմանավորված էր ոչ միայն քեմալա-

³⁰⁷ Քեմալական գործերի՝ Ստամբուլ մտնելուց հետո դատավարությունների նյութերն առգրավվել են, և դրանց հետագա ճակատագիրն անհայտ է: Ըստ որոշ տեղեկությունների՝ ներկայում դրանք պահպանվում են Թուրքիայի գինուածությունների Գլխավոր շտաբի ATASE վեհական գլուխությունում, որտեղ գիտնականների մուտքը արգելված է:

³⁰⁸ Բիլեջիքի հայերի բնաջնջման մեղադրանքով ծերբակալվել եր նաև թուրք հայտնի գրող Օրիհան Թեմայի հայրը՝ Արդուլա Օրիհան, որը բանտից սպանացել էր հայերի տեղահանության և ոչնչացման մասին «Ալեմդար» օրաթերթում հուշեր տպագրուա Հասան Ամջային (Չերքեզ Հասան): Այս սպանակիք ազդեցությամբ վերջինս դադարեցրել էր իր հուշերի հրատարակումը, տես՝ Հասան Ամջա, Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը), էջ 14-15:

³⁰⁹ Vahakn N. Dadrian, Taner Akçam, "Tehcir ve Taktıl", ss.179-183.

կանոնների հաղթանակի ակնկալիքով, այլ նաև այն հանգամանքով, որ 1920 թ. ապրիլի 23-ի որոշմամբ հայերի տեղահանության և կոտորածների դատավարություններն սկսել էին դռնփակ անցկացվել, որոնցից մամուլ ու հանրությունը անտեղյակ էր մնում:

Առավելապես կարևորվում են տեղահանության և կոտորածների դատավարությունների շարքում առաջինը կայացած Յոզդատի և Տրապիզոնի դատական գործերը, քանի որ այս դատաքննությունների ընթացքում ամենաշատ վկայություններն ու ապացոյցներն են թերվել կառավարությունից իրահանգներ ստացած տեղական իշխանությունների կողմից հայերի տեղահանման ու ոչնչացման համակարգման ու վերահսկման վերաբերյալ: Բացի այդ՝ տվյալ դատավարությունների ժամանակ հանդես եկած վկաները իմբնականում եղել են թուրքեր և այլ ազգությունների պատկանող մահմեդականներ, և ոչ թե՝ «միայն հայեր»³¹⁰, ինչպես փորձում են ներկայացնել թուրք պատմաբան ու դիվանագետ Բիլալ Շիմշիրը և թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչ Ֆերուդուն Արան: Ավելին՝ Տրապիզոնի դատավարության ընթացքում մեղադրյալների դեմ վկայություններ են տվել բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են Վանի նախկին նահանգապետ Նազմեր, Էրգրոսի նախկին նահանգապետ Թահսինը, ուազմածովային նախարար Ավճին, դատական քննիչ Քենանը, Տրապիզոնի և Լազուստանի գործերի շտաբի պետ, գնդապետ Մուհեթարը, լեյտենանտ Ակմեդը և շատ ուրիշներ³¹¹:

³¹⁰ Տրապիզոնի դատաքննության ժամանակ լսվել են նաև ֆրանսիացի վկաներ, տես՝ Trabzon Tehcir ve Taktıl Muhâkemesi, "Alemdar", 8 Nisan 1919. Trabzon Tehcir ve Taktıl Muhâkemesi, "Alemdar", 9 Nisan 1919.

³¹¹ В. Дадрян, Обзор материалов турецкого военного трибунала по оввинчению в Геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, "Геноцид-преступление против человечества (Материалы I Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995 г.)", отв. ред. академик НАН Республики Армения В. А. Микаелян, Москва, 1997, сс. 33-34.

Հարկ է նշել նաև, որ Յոզդատի դատական նիստերի ժամանակ և հատկապես 1919 թ. փետրվարի 22-ի նիստում ընթերցվել են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր, հատկապես՝ ծածկագիր հեռագրեր, որոնց վավերականությունը հաստատելուց հետո է միայն ռազմական դատարանը մահվան դատապարտել թեմային³¹²:

Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 12-ին Յոզդատի կառավարիչ (Մոլոքասարիիֆ) Ջեմալ թեյը գրավոր ցուցմունքներ էր տվել հետաքննիչ հանձնաժողովին, համաձայն որոնց՝ տեղահանության գործի մեջ ընդգրկված էին եղել նաև տեղի ոստիկանները: Յոզդատ քաղաքից ու շրջակա գյուղերից տարագրված հայերը կոտորվել և բնաշնչվել էին ոստիկանների, հրոսակախմբերի ու բնակչության կողմից³¹³:

Յոզդատի դատավարության երրորդ նիստում հաստատվել է, որ Յոզդատի հայերի կոտորածներին տեղի բնակչության մասնակցությունն ապահովվել ու խրախուսվել էր մեղադրյալներ թեմայի և թեժիքի կողմից: Այսպես՝ քաղայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդը վկայել է. «Թեմալը հայոց ողբերգության թատերաբեմերից Գյուլեր գավառակում (նահիենում)³¹⁴ կատարված կոտորածի առնչությամբ ասել էր. «Թատերական ներկայացման ենք գնում»: Մեղադրյալը, Գյուլերի մահմեղական բնակչության ֆանատիկ զգացմունքները գրգռող ելույթ ունենալով, ապահովել էր, որպեսզի ջարդերին մասնակցեր նաև տեղի բնակչությունը: Թեմալը, տառապող ժողովորի հեծեծանքները և տաճանքները դիտելով, նարգիլ էր ծիսել, իսկ ժանդարմերիայի հրամանատար թեժիկը, ելույթ ունենալով, խրախուսել էր բնակչության մասնակցությունը կոտորածին և հրացանով անձամբ սպանել երեք հոգու»³¹⁵:

³¹² Գրիկեր, Եոզդատի հայսապանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 66:

³¹³ Անը, էջ 125:

³¹⁴ Գավառակ, որը գտնվում էր Յոզդատից 12 ժամ հեռավորության վրա:

³¹⁵ Tarihi Muhakeme, "Alementar", 10 Şubat 1919.

Միևնույն նիստում Լևոն Ֆերիդը նշել է. «Կոտորածի թատերաբեմ դարձած Գյուլերում 6000 հոգու սպանությունը հայտնի է այն դիակների շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրի մարմնի անդամները կտրատված են եղել որևէ կողմից: Դա հայտնաբերվել է բժշկական հանձնաժողովի կողմից կատարված դատարժշկական զնումների շնորհիվ»³¹⁶:

Նոյն նիստի ժամանակ անդրադարձ է եղել նաև բողոքական հայերի տեղահանությանը, ովքեր ըստ օրենքի չպետք է ենթարկվեին աքսորի: Ըստ քաղայցվոր Հայկի՝ «...երբ իր մայրը թեմալ թեյին ասել էր, թե ինքը բողոքական է, և խնդրել տեղահանության չենթարկել իրեն, թեմալը պատասխանել է, թե իր կարծիքով բոլորը մեկ են՝ բողոքական, թե կաթոլիկ. բոլորը հայ են և հեռանալու են»³¹⁷:

1919 թ. փետրվարի 11-ին տեղի ունեցած չորրորդ նիստում հանդիս է եկել վկա Արթինը, որը հայտնել է. «...հայերին ութ-ութ կապել են իրար և Յոզդատից դուրս տարել, խվել են հայերի մոտ գտնվող թանկարժեք իրերը, դրամը, կողոպտիչները կանանց հարբեցրել են Օսման փաշա դերվիշների մենաստանի մոտակայքում, Յոզդատի մոլոքասարիիֆի տեղակալ, Բողազլյանի կառավարիչ թեմալ թեյը 500 հեծյալ ավագակախմբով եկել է Գյուլեր, մահապատժի են ենթարկել նախ՝ քահանայի փոքրիկ երեխային, ապա՝ կնոջը և այնուհետև՝ քահանային, որից հետո թեմալը, դուդուկ նվագելով, քաջալերել է մարդասպաններին՝ ասելով՝ «Դուք չգիտեք՝ ինչպես կոտորել»: Չեթեները (ավագակախմբերը) թեմալ թեյի այս խոսքերից հետո սկսել են ամենայն դաժանությամբ կոտորել ամեն պատահա-

³¹⁶ Անը:

³¹⁷ Անը: 1915 թ. մարտի 2/15-ի գաղտնի հրահանգի համաձայն՝ Դեր Զոր աքսորման ենթակա էին նաև օտարահպատակ հայերը, տե՛ս Ա. Ավագյան, 1915 թ. Օսմանյան Թուրքիայում օտարահպատակ և վաստառող հայերի տեղահանման խնդիր վերաբերյալ (բոլոքական արխիվի մեջ փաստաթղթի հիման վրա), «Բանբեր Հայաստանի ախոհիներու», թիվ 2 (106), Երևան, 2005, էջ 194-197:

Ֆի»³¹⁸:

Միևնույն նիստում որպես վկա ցուցմունքներով հանդես է եկել նաև Յոզդատի նախկին պատգամավոր Շաքիր բեյը, որը դատարանին հայտնել է, թե ինքը տեղի կառավարչին դիմել է հայերի կոտորածները դադարեցնելու համար, բայց՝ ապարդյուն³¹⁹.

Յոզդատի դատաքննության 1919 թ. փետրվարի 12-ի նիստում դատարանին տրված վկայությունների շարքում հիշատակման են արժանի հատկապես հայ վկա Աօթնի Վառվառյանի ցուցմունքները, որոնք առնչվում էին նաև բռնի կրոնափոխման դեպքերին. «...Այդպես բերվեցինք Օսման փաշա դերվիշների մենաստան, այնտեղ էր գտնվում նաև յոզդատի ոստիկան Նուման Էֆենդին, և ահա այստեղ գտնվող Ֆեյյազ բեյն ու Նուման Էֆենդին վերցրեցին մեզ մոտ գտնվող դրամները և հրամայեցին մեզ ուղարկել Ֆեներ, գիշերը ինձ և մեկ-երկու աղջկա ևս ասացին՝ «Ձեզ մուտքման ենք դարձնելու մնացե՞ք այստեղ», և պահեցին: Մյուաներին տարան 50-60 սայլերով: Այդ օրն այնտեղ է եղել նաև մեղադրյալ Թեմալ բեյը: Զեռքին թուր՝ եկավ մեզ մոտ և հետևյալն ասաց իր մարդկանց. «Եթե դուք սրանց բոլորին էլ, ինչպես որ հարկն է, չսպանեք, ե՞ս ծեզ կսպանեմ: Միթե մեր մայրեն այսօրվա համար չեն մեզ ծնել: Դե՛հ, ինչ եք կանգնել, գնացե՞ք, կոտորե՞ք: 6 տարեկանից մինչև 70 տարեկան՝ բոլորին - կոտորեք»: Այնտեղ հենց իմ աչքի առաջ կոտորեցին բոլոր մարդկանց՝ ցորեն հնձելու պես, ինձ էլ մորս գրկից խլեցին՝ սպանելու համար, հարվածեցին զիսիս: Սպանվածների գրպանները դատարկեցին, երեկոյան մեզ ուղիղ տարան կայմակամություն: Այդ կառավարիչ Թեմալ բեյն այնտեղ մեկ անգամ ևս ծեծեց ինձ և սեփական ձեռքերով խլեց զգեստի տակ գտնվող 1 լիրայի հասնող գումարը, ապա ուղեկցորդներին հրամայեց սպանել ինձ, սակայն վերջիններս ինձ

³¹⁸ Tarihi Muhakeme, "Alemdar", 12 Şubat 1919.

³¹⁹ Անդ:

փախցրեցին ու տարան Փուլ գյուղը, որտեղ Աղրգյուղել անվամբ մի ժանդարմ, ինձ իր հետ վերցնելով, տարավ Խնջիրի գյուղը, այստեղ տասնապետ Ահմեդն ինձ 6 ամիս պահեց իր տանը, ապա ես փախս այն ախոռից, որտեղ ինձ փակել էին»³²⁰: Դատախազի այն հարցմանը, թե Օժենին ինչպես է ազատվել կոտորածից, վերջինս պատախանեց, թե իսլամ է ընդունել և այդպիսով փրկվել մահից³²¹:

Լոյն նիստում հանդես եկած վկա Ազնիվ Իբրահիմոյանը ռազմական ատյանին հայտնել է, թե մոտ 860 տուն ոչ մահմեդական բնակչություն էր բռնագաղթեցվել, ինքն էլ էր եղել նրանց մեջ, մի մասն ուղարկվել էր Թաշփընար և այստեղ կոտորվել, իսկ մեղադրյալ Թեմալ բեյն իր ոճիրների համար վաստակել էր «մսագործ կայմակամ» մականունը³²²:

1919 թ. փետրվարի 15-ին կայացած 6-րդ նիստում վկա Ստեփանը ցուցմունքներ է տվել առ այն, որ նախ՝ Գյուլլեր, ապա՝ Էլեքչիլեր արսորված հայերը կացիներով, քլոնգներով և գերանիներով սպանվել են տեղի գյուղացիների կողմից³²³: Վկան հայտնել է, որ ջարդին ներկա են եղել նաև ամբաստանյաները, և որ կոտորվել է իրենց ողջ գյուղը³²⁴: Լոյն նիստում հայերի կոտորածների փաստը հաստատող վկայություններ է տվել նաև տիկին Աննիկը, որը նշել է, թե առաջին և երկրորդ քարավաններից առանձնացվել են տղամարդիկ, իսկ երրորդից՝ գեղեցիկ կանայք, և մնացած հայերը՝ կոտորվել³²⁵:

1919 թ. փետրվարի 18-ին կայացած 7-րդ նիստում հանդես եկած վկաներից Անկարայի 15-րդ կորպուսի հրամանատար, գնդա-

³²⁰ Tarihi Muhakeme, "Alemdar", 13 Şubat 1919.

³²¹ Անդ:

³²² Անդ:

³²³ Katî ve Tehcir Da'vâsi, "Memleket", 16 Şubat 1919.

³²⁴ Անդ:

³²⁵ Անդ:

պետ Հայիլ Ռեջային վկայել է, որ «ըստ մայոր Շահար թեյի³²⁶ ստացած ծածկագիր-հեռագրի՝ Բողազլոյանում բնաշնչվել էին 2-ից 3 հարյուր հայեր»³²⁷.

«Հայիլ Ռեջայի- Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովում էլ են ինձ հարցրել, թե Բողազլոյանից հեռագիր ստացել եմ, թե ոչ։ Կարծեմ՝ նման մի հեռագիր է ստացել Շահար թեյը, այն վերաբերել է 2-3 հարյուր հայերի բնաշնչմանը։ Հեռագիրն ինձ մոտ չէ։ Այն պետք է որ հղված լինի Կայսերից Անկարա»։

Դատախազ- Ինչ պատճառներից ելնելով է Ռազմական գերատեսչությունը գրադպատ տեղահանության խնդիրներով։

Հայիլ Ռեջայի- Տեղյակ չեմ։ Ինձ նման հեռագիր հասավ, ես էլ այն հանձնեցի զիսավոր իրամանատարությանը։ Շահար թեյից չեմ հարցրել պատճառների մասին։ (...)

Դատախազ- Որտեղից է Շահար թեյը նման տեղենկություն ստացել։

Հայիլ Ռեջայի- Բողազլոյանից»³²⁸։
Նոյն նիստում լսել են նաև ազգությամբ հոյն վկա Հրիսթարի Անդրեյադիսին, որը հանդես է եկել հետևյալ վկայությամբ. «331 թ. (1915) հուլիսի 24-ին՝ ուրբաթ առավոտյան, իրաման եկավ, և Զեմալ թեյը³²⁹ տեղահանությունն սկսեց։ Արսորյալների առաջին խումբը հաջորդ օրը տարագրվեց Սվաս։ Երկրորդ խումբը նոյնպես Սվաս ուղարկվեց։ Հայերի երրորդ խումբն աքսորվեց Կայսերի։ Այդ ժամանակ Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակը³³⁰ հայերին բնաշնչելու վերաբերյալ բանավոր իրամաններ տվեց։ Զե-

³²⁶ Շահար թեյը եղել է Կեսարիայի 15-րդ կորպուսի իրամանատարը։

³²⁷ Tarihi Muhakeme, "Alemdar", 19 Şubat 1919.

³²⁸ Katıl ve Tehcir Da'vâsi, "Memleket", 19 Şubat 1919.

³²⁹ Յոզգատի մութասարդիքը։

³³⁰ Յոզգատում Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակը եղել է Նեջարի թեյը։

մալ թեյը չհամաձայնեց դրան։ Գնաց Չորում։ Լսեցինք, որ պաշտոնից հեռացվել է։ Նրան փոխարինեց Թեմալը։ Լսեցինք, որ բնաշնչվել են միայն Բողազլոյանի հայերը։ (...)

Այնուհետև ժողովրդին զոյգ-զոյգ տարել են Բաղլըայի և Բեզլիհանի կողմերը։ Լցրել են մի փարախի մեջ, որի շորջը ծահճոտ է եղել, և այնտեղից երեք-երեք կամ հինգ-հինգ հանելով՝ սպանել։ Փախած-թաքնվածներին էլ բացահայտելու նպատակով ասել էին, թե իսլամ ընդունածները փրկվելու են, սակայն երբ փախածները դուրս էին եկել իրենց թաքստոցներից, նրանց էլ էին կոտորել»³³¹։

Յոզգատի դատաքննության 9-րդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 22-ին, դատարանի նախագահ Հայերեթ փաշան դատական քարտուղարին խնդրում է ընթերցել մի շարք ծածկագիր հեռագրեր, որոնցից մեկում դիվիզիոնի իրամանատարը կորպուսին էր հաղորդում Բողազլոյանում 1500 հայերի սպանության մասին, իսկ մյուսում, որը կրում էր 207 համարը, նշվում էր, որ Բողազլոյանում և շրջակա բնակավայրերում բնաշնչվել էին 360 հայեր³³²։

Սույն դատական գործընթացի 10-րդ նիստում, որը կայացել է 1919 թ. մարտի 5-ին, վկաներից ունկնդրության է արժանացել Թոքաթի մոլթասարիֆը, որը ասել է, թե հայերի սպանությունների փաստը հայտնի է եղել բոլորին³³³։

Նոյն նիստում որպես վկա լսվել է նաև վարչական տեսուչ Նեղիմ թեյը, որը հայտնել է, թե ըստ իրեն հասած խոսակցությունների՝ տարագրված 140 հոգանոց հայկական քարավանին գիշերը փակել են մի փարախում և զավագաններով ոչնչացրել։ Վկան նաև շեշտել է, որ հայերին աքսորել են որոշ գյուղերից, և որ ծանապարին նրանք

³³¹ Katıl ve Tehcir Da'vâsi, "Memleket", 19 Şubat 1919.

³³² Katıl ve Tehcir Da'vâsi, "Memleket", 23 Şubat 1919. Սույն նիստում ընթերցված մյուս ծածկագիր հեռագրի մասին տես Գրիկեր, Յոզգատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 61։

³³³ Katıl ve Tehcir Da'vâsi, "Memleket", 6 Mart 1919.

Ենթարկվել են ավագակախմբերի հարձակումներին³³⁴:

Այս նիստում ևս ընթերցվել է Շահար բեյի գեկուցումը, ըստ որի՝ Բողազլյանի տեղահանության ժամանակ կատարվել են սպանություններ և չարաշահումներ: Ներկայացվել են ևս երկու գեկուցում: Դրանցից առաջնում, որը հաղորդվել էր ժանդարմերիայի կողմից, նշվում էր, թե 36 հայերից 11-ը սպանվել էր հրոսակախմբերի կողմից, և մյուսները կոտորվել էին հետագայում, իսկ երկրորդ գեկուցումը, որի վրա նշված էր «գաղտնի» բառը, վերաբերում էր Բողազլյանի տեղահանությանը³³⁵:

Յոզդատի դատավարության ընթացքում բացահայտվել է, որ հայերի քարավանները հսկելու նպատակով պետության կողմից ուղարկված մարդիկ ևս տեղի բնակչությանը հրահրել են հայերի դեմ: Այսպես՝ 1919 թ. մարտի 24-ի նիստում դատախազ Հարալամբը էֆենդին ամբաստանյալ Քեմալին հարցել է, թե հայերի քարավանները հսկելու և կարգուկանոնը պահպանելու նպատակով ուղարկված Արդուլլահը ինչու էր խառնակչություններ հրահրել բնակչության մեջ: Դատախազը եզրակացրել է, թե պետական պաշտոնյաների առկայության պայմաններում պետության կողմից նման անձանց ևս ուղարկելը հատուկ նպատակ էր հետապնդելիք³³⁶:

Ամբաստանյալ Քեմալ բեյի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն՝ ինքը ստորադասներին հրամայել էր տեղահանությանը վերաբերող հրամանների մի մասն ընթերցելուց հետո այրել: Այդ մասին Քեմալին հիշեցվել է նաև 1919 թ. մարտի 24-ի նիստում: Թեև Քեմալ բեյը փորձել է հերքել իր իսկ ցուցմունքը, սակայն դատախազ Հարալամբը էֆենդին հաստատել է այդ փաստը.

«Նախագահ- Հանցագործությունների հետաքննիչ հանձնա-

³³⁴ Katıl ve Tehcir Da'vâsi, "Memleket", 7 Mart 1919.

³³⁵ Այս:

³³⁶ Divan-ı Harb'de Tehcir Muhakemesi Başladı, "Alemdar", 25 Mart 1919.

ժողովին Ձեր տված ցուցմունքների համաձայն՝ տեղահանությանը վերաբերող փաստաթղթերի մի մասը կարդալուց հետո այրելու հրաման է եղել, իսկ մնացածը որտեղ է:

Քեմալ բեյ- Բողորն էլ պահպանվել են, էֆենդի: Ճիշտն ասած՝ այդ օրը շատ հոգնած էի. ութուն հոգով մի վագնում էինք: Եվ քանի որ քոնս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:

Դատախազ- Ես, Հետաքննիչ հանձնաժողովի անդամ լինելով, հայտնում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը. 3-4 ժամ մտածել է, հետո՝ գրել»³³⁷:

Միևնույն նիստում դատարանի նախագահի կողմից հիշատակվում է Յոզդատի հոգենորդի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, համաձայն որի՝ մյութին փորձել է խրատել Քեմալին, իսկ վերջինս ասել է. «Դու կառավարությունից բարեգո՞թ ես»³³⁸:

Սույն դատաքննության ընթացքում ամբաստանյանները փորձում էին իրենց արդարացնել՝ վկայակոչելով կառավարության կողմից ստացված հրամանները: Դատախումների ընթացքում նրանց տված ցուցմունքների համաձայն՝ կառավարությունը գոյության միջոցներ չեր տրամադրել հայերի քարավաններին³³⁹:

Յոզդատի դատավարության 1919 թ. մարտի 27-ի նիստի ժամանակ նոյն փաստարկով է իրեն փորձում արդարացնել ամբաստանյաններից Քեմալ բեյը.

«Նախագահ- Ճիշտն ասա. հայերին բնաջնջելու մտադրությունները անձնական, թե մեկ այլ դրդապատճառ ունեին:

³³⁷ Այս:

³³⁸ Այս:

³³⁹ Այս:

Թեմալ բեյ- Քա'վ լիցի, փաշա', հայերին բնաջնջելու հրահանգ երբեք չեմ տվել:

Նախագահ- Միթթ Յոզդատը գործողությունների թատերաբեմից դուրս էր:

Թեմալ բեյ- Ռ'չ, էֆենդի':

Նախագահ- Ինչո՞ւ մի խումբ աքսորյալներ բռնագաղթեցվեցին առանց փոխադրամիջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում:

Թեմալ բեյ- Միջոցներ չկային, էֆենդի', ես կատարել եմ կառավարության կողմից ստացված հրամանը»³⁴⁰:

Միևնուն նիստում դատարանին ցուցմունքներ տված վկա Մթիմեդ բեյը, որն անզորիպատակ գնդապետ էր, հայտնի է, թե ինքն անձամբ է տեսել, թե ինչպես են կացիններով ու դաշույններով հայերին կոտորում³⁴¹: Մթիմեդ բեյը նշել է, որ հայերին կոտորել են Թարաքուշ լեռնահովտում³⁴²:

Դարձյալ 1919 թ. մարտի 27-ի նիստում հանդես եկած վկա Ալյուտարի մութասարրիֆ Մթիմեդ Ալի բեյը չի բացառել հայերի կոտորածներին պաշտոնյաների և տեղի բնակչության մասնակցության հավաճականությունը, սակայն ըստ վկայի ցուցմունքի՝ դա հնարավոր էր կառավարության կողմից տրված գաղտնի հրամանի դեպքում միայն³⁴³:

Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկայությունների շնորհիվ լիովին հաստատվել է, որ այստեղ տեղի ունեցած

³⁴⁰ Tehcir ve Taktıl Muhakemesi, "Alemdar", 28 Mart 1919.

³⁴¹ Ան:

³⁴² Katl ve Tehcir Da'vası, "Memleket", 28 Mart 1919.

³⁴³ Tehcir ve Taktıl Muhakemesi, "Alemdar", 28 Mart 1919.

ջարդերը, թունավորումները, ջրախեղի անելու գործողություններն ուղղորդվել են Տրապիզոնի նահանգապետ Զեմալ Ազմիի կողմից, որն իր հերթին հրահանգներ էր ստացել կենտրոնական կառավարությունից³⁴⁴:

Սույն դատավարության ընթացքում մեղադրյալներն անգամ չեն թաքցնում, որ հայերի կոտորածների կազմակերպիչների մեծ մասը դեռ չեր ձերքակալվել, և հազարավոր հայասպաններ էին գտնվում ազատության մեջ: Օրինակ՝ ամբաստանյալներից Նիազին Տրապիզոնի դատաքննության 1919 թ. մարտի 26-ի նիստում հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ. «Ձեզ ավելի հարմար է բոլոր գավառներում մեկական հետաքննող հանձնաժողով կազմել և մեզ պես անմեղների դատել՝ այն դեպքում, երբ հազարավոր մարդասպաններ ազատ թրև են գալիս»³⁴⁵:

Տվյալ դատաքննության ընթացքում բազմաթիվ վկայություններ են եղել հայերի քարավանների՝ ճանապարհներին կոտորածների ենթարկված լինելու և ծովում ջրահեղձ արվելու մասին: Մասնավորապես 1919 թ. ապրիլի 1-ին կայացած նիստում հանդես եկած վկաներից Նևարեթի ցուցմունքների համաձայն՝ հայերի քարավանները «պաշտպանելու» նպատակով որպես ուղեկցորդ էր նշանակվել 50 ժանդարմ, որոնք, սակայն, ճանապարհին սպանվի էին ենթարկել անդամալոյց և ուժասպառ հազարավոր մարդկանց, իսկ պարկերի մեջ լցված երեխաներին՝ գետերում խեղդել³⁴⁶:

Դատաքննության 1919 թ. ապրիլի 3-ի նիստում ընթերցվել է քաղիայցվոր Միրանուշի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Միություն և

³⁴⁴ Երիտրուքական կառավարության կողմից Դայոց ցեղասպանության որոշման ընդունման մասին մանրամասն տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումարանությունը (1876-1920 թթ.), էջ 168-189:

³⁴⁵ Trabzon Tehciri, "Alemdar", 27 Mart 1919.

³⁴⁶ Divan-i Harb-i Örfi'de Trabzon Tehciri Muhakemesi, "Alemdar", 2 Nisan 1919.

առաջադիմություն կուսակցության որոշ անդամներ կոտորել էին հայ տղամարդկանց³⁴⁷: Մինույն նիստում ներկայացվել է նաև մեկ այլ քաղաքացիոր կոնց ցուցմունքները, համաձայն որոնց՝ Զեմալ Ազմիի հրահանգով Քումբակ ուղարկելու պատրվակով ծերբակալված տղամարդկանց ոչնչացրել էին՝ մի մասին գնդակահարելով, իսկ մյուսներին՝ ջրախեղ անելով³⁴⁸: Քաղաքացիոր նշում էր նաև, որ ոստահպատակ Վարդանին թունավորել էին հիվանդանոցում, հայ երեխաների մի մասին ուղարկել Դեյիրմենդերե գետի ուղղությամբ, իսկ մյուս մասին, Նիստի ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել³⁴⁹: Նույն նիստում մեղադրյաներից գավառապետ Թալեաթը իր զարմանքն է արտահայտել այն փաստի կապակցությամբ, որ վերոհիշյալ քաղաքացիոր տեղյակ է եղել նման կարևոր որոշումների մասին, քանի որ, ըստ ամբաստանյայի, «այդ գործը խիստ գաղտնի բնույթ է կրել»³⁵⁰:

Դատավարության 1919 թ. ապրիլի 7-ի նիստում ունկնդրության արժանացած ֆրանսահպատակ վկա Վիտալիի ցուցմունքների համաձայն՝ Տրապահոնից բռնագաղթեցվել էր մոտ 18.000 հայ³⁵¹:

Հաջորդ նիստում, որը կայացել է 1919 թ. ապրիլի 8-ին, ազգությամբ ֆրանսիացի վկա Փերլորանը հայտնել է, որ տեղահանությունը Տրապահոնում կատարվել է 5 օրվա ընթացքում և թաղամաս առ թաղամաս, և հայերի իրերը խլվել են նրանցից՝ սահմանից դուրս գալուն պես³⁵²:

1919 թ. ապրիլի 12-ի նիստում վկայությամբ հանդես եկած

ժամադրմերիայի ավագ լեյտենանտ, հայերի տեղահանության համար պատասխանատու իրամանատար Մյունիքը ցուցմունքներ է տվել առ այն, որ Պետական պարտքի գրասենյակի տրապահոնյան մասնաճյուղի պաշտոնյայից իրեն հասած տեղեկությունների համաձայն՝ հայերին բեռնավորել են լաստանավերը և ծովը նետելով՝ խեղդել³⁵³:

Սույն դատաքննության ընթացքում որպես վկա ցուցմունքներով հանդես եկած բարձրաստիճան պաշտոնյաներից պետք է հատկապես առանձնացնել Վանի նախկին նահանգապետ Նազըմ բեյին և Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ավճի փաշային: Վանի կուսակալը 1919 թ. ապրիլի 30-ի նիստում դատարանին տեղեկություններ է տվել Զեմալ Ազմիի կատարած բռնությունների, ինչպես նաև՝ Նորի և Մեհմեդ Ալի բեյերի՝ մի հայ կոնց ու երեխաներին ջրահեղձ անելու մասին³⁵⁴: Ըստ Նազըմ բեյի՝ 18 հայ ծերունի էլ ջրախեղդ էին արվել Օրդոնի գավառապետ Ֆայիրի հրամանով³⁵⁵:

Նույն նիստում վկայություններ է տվել նաև Տրապահոնի վերաբենիչ դատարանի նախագահ, Լքված գույքի հանձնաժողովի անդամ Հիլմի բեյը, ըստ որի՝ տարագրված հայերը բնաջնջվել են ճանապարհներին և խեղդամահ արվել ծովում³⁵⁶: Մինույն նիստում դատարանի նախագահը շեշտել է «ողբերգական դեպքերին» տեղի դատախազի միջամտության անհրաժեշտությունը, որին ի պատասխան՝ վկա Հիլմի բեյը նշել է, որ դատախազը չէր կարող միջամտել³⁵⁷:

Նույն օրը հայերի՝ մակույկավարների պետ Յահյայի³⁵⁸ կող-

³⁴⁷ Divan-ı Harbi-i Örfi: Trabzon Taktıl ve Tehcîr Muhâkemesi, "Alemdar", 4 Nisan 1919.

³⁴⁸ Անդ:

³⁴⁹ Անդ:

³⁵⁰ Անդ:

³⁵¹ Trabzon Tehcîr ve Taktıl Muhâkemesi, "Alemdar", 8 Nisan 1919.

³⁵² Trabzon Tehcîr ve Taktıl Muhâkemesi, "Alemdar", 9 Nisan 1919.

³⁵³ Divan-ı Harbi-i Örfi'de Trabzon Tehcîr Muhâkemesi, "Alemdar", 13 Nisan 1919.

³⁵⁴ Trabzon Tehcîr Muhâkemesi, "Alemdar", 1 Mayıs 1919.

³⁵⁵ ծովությունից այնը, Կ.Պոլիս, 1-ը մայիսի, 1919, N 77-168:

³⁵⁶ Անդ:

³⁵⁷ Անդ:

³⁵⁸ Ենթերի համախոհներից Յահյա Քահյան հետագայում դարձել է ազգայնական շարժման

մից ջրախեղոյ արվելու մասին վկայություններ է տվել Տրապիզոնի Ռազմական առաքումների հանձնաժողովի նախագահ Էթիեմը³⁵⁹:

1919 թ. մայիսի 5-ին ընթերցվել է ռազմածովային նախարար Ավճի փաշայի գրավոր վկայությունը, համաձայն որի՝ Զեմալ Ազմին հայերին կոտորելու նպատակով հատուկ ավագակախմբեր էր կազմելու սպանել տվել հայ բժիշկներին և առողջապահական պաշտոնյաներին³⁶⁰:

Տրապիզոնի դատավարության ընթացքում գրանցվել է մեկ այլ հետաքրքիր վկայություն, որը վերաբերում էր Կովկասից գաղթած մահմեդական և քրիստոնյա վրացիների՝ հայերի կոտորածներին մասնակցելուն: Ըստ «Ժողովուրդի ձայնը» օրաթերթի՝ Տրապիզոնի դատավարության 14-րդ նիստում (1919 թ. մայիսի 5) ընթերցված ռազմածովային նախարար Ավճի փաշայի գրավոր վկայության համաձայն՝ Կովկասից Տրապիզոն գաղթած քրիստոնյա և մահմեդական վրացիներից այստեղ կազմվել է “Légion géorgienne” («Վրացական լեգեոն») անոնք կրող հատուկ մի գունդ, որը ճանապարհներին հարձակումներ է գործել հայերից բաղկացած քարավանների վրա³⁶¹:

Նոյն նիստում ցուցմունքներ տված Հյուսենի խոսքերով՝ Տրապիզոնի գլխավոր բանտապահ Սովեյմանը հրոսակախմբեր էր կազմել հայերին կոտորելու նպատակով, իսկ Օրդուի գավառապետ Ֆայիքը 2 «մավունա»³⁶² կին ու երեխա ջրախեղոյ անելու հրաման էր տվել: Ականատեսը հայտնում էր, որ նրանց լաստանավ էին նստեց-

ականու գործիներից մեկը: Սպանվել է մեկ այլ ականավոր ներկայացուցիչ Թոփալ Օսմանի կողմից՝ Արարուրքի հրահանգով, տես՝ Ա. Ավակյան, Վերկեսու ֆակտոր Յ Օսմանսկու և Տուրքիա, ս. 344-345.

³⁵⁹ Ժողովուրդի ձայնը, 1-ը մայիսի, 1919, N 77-168:

³⁶⁰ Երկու «մավունա» կին ու տղայ ծովը կը թափեն, «Ժողովուրդի ձայնը», 6-ը մայիս, 1919, N 81-172:

³⁶¹ Այս:

³⁶² Թուրքերենից թարգմանարար՝ բենանավ, լաստանավ:

րել իբրև թե Սամսուն ուղարկելու պատրվակով, մինչդեռ հաջորդ օրը ծովեզերքը լի էր նրանց դիակներով³⁶³: Հայերին և հոյներին ջրահեղձ անելու միջոցով ոչնչացնելու մասին վկայություններ է տվել նաև Լազիստանի, Զանիկի և Տրապիզոնի շրջանների հետաքրթությամբ գրադադար դատական քննիչ Քենանը, ըստ որի համոզմունքի՝ վերոնշյալ դեպքերի հեղինակն է եղել հենց ինքը՝ նահանգապետը³⁶⁴:

1919 թ. մայիսի 13-ի նիստում վկաներից ունկնդրության է արժանացել Հատուկ կազմակերպության դեկավարներից գերմանացի փոխգնդապետ Շթանգենի համարգն ու թարգմանիչը եղած հեծելազորային լեյտենանտ Հարուն թեյը, որը ցուցմունք է տվել այն մասին, թե ինքը լսել է հիվանդանոցում հայերի բունավորման դեպքերի և Սամսունում ու շրջակայքում հայերի ոչնչացման մասին³⁶⁵:

«Ակեմդար» օրաթերթի 1919 թ. ապրիլի 16-ի համարում հրապարակված՝ Տրապիզոնի հայերի տեղահանության ու կոտորածներին վերաբերող ամբաստանագործում ընդգծվում էր տվյալ նահանգում կատարված ահասարսութ կոտորածների զանգվածային բնույթը:

«...Տրապիզոն վիլայեթում Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կառավարության կողմից հայերի տեղահանության վերաբերյալ ընդունված որոշումների գործադրման ընթացքում նախ՝ հայ տղամարդկանց և ապա՝ կանանց ու երեխաներին նշանակված վայրեր տեղափոխելիս նրանց մի մասն անգրաբար սպանվել է Դեյիրմենդերեի³⁶⁶ կողմերում, իսկ կանայք ու երեխաներն

³⁶³ Երկու «մավունա» կին ու տղայ ծովը կը թափեն, «Ժողովուրդի ձայնը», 6-ը մայիս, 1919, N 81-172:

³⁶⁴ Divan-i Harbi-i Örfide Trabzon Tehciri Muhâkemesi, “Alemdar”, 11 Mayıs, 1919. Այդ մասին նաև տես՝ մզ դատավարության Տրապիզոնի ջարդարարներուն, «Ժողովուրդի ձայնը», 11 մայիս, 1919, N 86-177:

³⁶⁵ Divan-i Harbi-i Örfide Trabzon Tehciri Muhâkemesinde İsticvâbâtının Hitamı “Alemdar”, 14 Mayıs, 1919.

³⁶⁶ Գետ Տրապիզոնում:

Էլ բեռնավորվել են նավակմերը և ջրախեղի արվել: Հայերի մի մասին էլ, իբր բուժման նպատակով, քունավորել են տարրեն միջոցներով Կարմիր մահիկ հիվանդանոցում, որից հետո կողոպտվել է նրանց գույքը, դրամը և թանկարժեք իրերը: Ողջ մարդկության կողմից անեծքով ու նողկանքով հիշվելու արժանի նման անամոթ արարքների ու հանցագործությունների համդանած և այժմ փախուստի մեջ գտնվող Տրապիզոնի նահանգապետ Զեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբաշելի Նայիլի, ինչպես նաև՝ դատարանում ներկա գտնվող Մեհմեն Ալիի, Մուստաֆայի, Նիազիի, Նուրիի և մյուս հանցակիցների մասնակցությունն այդ վիթխարի կոտորածին հիմք են տայիս պատիժ սահմանելու համար: Նրանց հետաքննությունը, նախ և առաջ, բխում է օրենքի անհրաժեշտությունից: Եվ ի վերջո՝ ովքեր են Ազմին ու Նայիլը: Սրանք ոչ թե պետական կամ վարչական պաշտոնյաներ են, այլ՝ ինը տարի առաջ պետության դեկը պատահաբար ձեռք զցած, առանձին կամ միասին կատարված բռնությունների, կոտորածների, անօրինականությունների, անհատնում չարաշահումների արդյունքում սովորական կառավարության այսօրվա ողբայի վիճակին հասցրած կործանիչ ձեռքերից ու վայրենի ուղեղներից բաղկացած Միություն և առաջադիմություն կոչված ավագակախմբի հանցագործ ներկայացուցիչներն են Տրապիզոնում»³⁶⁷:

«...Բնականաբար, միայն Զեմալ Ազմին ու Նայիլը չեն կարող այդ ահուելի սպանդն իրականացնել: Վերոհիշյալ ավագակախմբի ոճարային մտահղացումները կյանքի կոչելու համար բազմաթիվ գործիքների կարիք էր զգացվում: Գաղափարը և կիրառվող մեթոդն էլ այն էր, որ որպես գործիք ընտրվեն պրիմիտիվ, սահմանափակ, արագ ազդեցության տակ ընկնող, սեփական ջանքերով առաջընթած

գրանցելուն անկարող մարդիկ: Անկասկած է, որ թիւ թե շատ գարգացած մեկը չէր կարող ողջ մարդկությանը հուզած այդ ոճիրների մասնակիցը դառնալ...»³⁶⁸:

Այսպիսով՝ 1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով քննվեցին մոտ 63 տարրեր դատական գործեր: Թեև հայերի կոտորածների հետաքննությունը շրջան առ շրջան իրականացնելը գործնական տեսանկյունից ավելի նպատակահարմար էր, սակայն, ըստ էության, տեսականորեն այդ դատավարությունները կարող էին ամփոփվել նաև մեկ դատական գործի շրջանակներում և ավարտվել մեկ ընդիհանուր դատավճռով, քանի որ խնդրո առարկան միևնույն ոճարային էր: Ուշագրավ է, որ մեկ ընդիհանուր դատաքննություն իրականացնելու առաջարկներ ինչել են նաև ժամանակի մամուլում: Այսպես, օրինակ, «Ալեմդար» օրաթերթի խմբագիր Ռեֆի Զևադ Ովունայը 1919 թ. մարտի 28-ին վերոնշյալ պարբերականում իրատարակված «Տեղահանության և կոտորածների դատավարությունները» հոդվածում գրում էր. «Դատավարության՝ Յոզդատին վերաբերող հատվածն ավարտվելու է, ապա սկսվելու է Տրապիզոնի խնդիրը, այնուհետև՝ Դիարբեքիրը և այլն, և այլն: Քանի որ տեղահանություն և կոտորածներ են կատարվել Օսմանյան Կայսրության բազմաթիվ վիլայեթներում, դեռ պատկերացրեք՝ երբ կավարտվեն դրանք ամրողացնելում: Այդ դեպքում անհրաժեշտ է որևէ բանական, օրինական և տրամաբանական ելք գտնել: Այդ ելքը կա: Ավելի միշտ՝ այն ընկալում ենք ոչ թե որպես ելք, այլ՝ միակ օրինական ճանապարհը, որին մինչև այժմ էլ պետք է հետևած լինեինք: Տեղահանություններն ու կոտորածները կրում են համընդիհանուր բնույթ: (...) Այդ իսկ պատճառով առանձին-առանձին հետաքննություններն անհ-

³⁶⁷ Անդրեաս Արքայի առաջնորդության մասին առաջարկը առաջարկության մեջ՝ Տրաբզոն Տակտիլ և Տեհչիր Իդդիանամենի Կիրատի, «Alemdar», 16 Nisan, 1919.

բաժեշտ չենք համարում: Պետք է կազմակերպել մի դատավարություն, որը կլինի հասարակական հայցի հիման վրա: Խնդիրը պետք է լուծվի ընդհանուր դատավճռով»³⁶⁹:

Մինչեռ հայերի կոտորածների կազմակերպիչների դատաքննությունները շրջան առ շրջան իրականացնելը արտակարգ ռազմական ատյանին ժամանակ շահելու և դատավարությունները Դաշնակից պետությունների առաջ շահարկելու հնարավորություն էր տալիս, հանգամանք, որը չէր վրիպել նաև հակաթթիհաղական մամուլի ուշադրությունից: Նոյն Ռեֆի Զևազ «Ինչպիսին են եղել ուղեկառքի ծիերը» հոդվածում շեշտում էր, որ 1913 թ. Մահմուտ Շևքեթ փաշայի սպանության հեղինակներին դատապարտելու և վերջիններիս մեջ նաև թագավորական ընտանիքի անդամին կախաղան բարձրանելու համար ընդամենը մի քանի օր էր պահանջվել երիտրութեական կառավարությունից: Իսկ Յոզդատի դատավարության ժամանակ սպանական ատյանը ձգձգում էր դատը՝ անհմաստ հարցեր ուղղելով մեղադրյալներին, որոնց հանցավորությունն ապացուցված էր բազմաթիվ փաստաթղթերով ու վկայություններով³⁷⁰:

Դատավարությունների ընթացքում երկրում փոխսկեց նաև քաղաքական մթնոլորտը: Արդեն հիմնականում քեմալականներով Շերկայացված վերջին օսմանյան խորհրդարանի պատգամավորները 1920 թ. փետրվարի 20-ին հանդես եկան Դամադ Ֆերիդ փաշայի դեմ դատական գործ հարուցելու առաջարկով, քանի որ վերջինս թափականին հետևողական էր հայերի կոտորածների պատասխանատուններին բացահայտելու առումը³⁷¹: Քեմալականների ճշշումների պատճառով Դամադ Ֆերիդը 1920 թ. հոկտեմբերի 17-ին հարկադրված եղավ հրաժարական տալ: Նրան փոխարինեց քեմալականների հան-

դեպ բայրացակամ տրամադրված թեժիկ փաշան: Վերջինիս պաշտոնավարման ընթացքում՝ 1920 թ. նոյեմբերի 8-ին, ծերբակալվեցին Բարերի դատավճիռն արձակած դատավորները:

Հարկ է նշել, որ մինչ այդ էլ ուղմական արտակարգ ատյանի դատավորները, դատախազները և դատարանում որպես վկա հանդիս եկած անձինք ահարեկումների էին ենթարկվում երիտրութերի կողմից, որոնց մեծ մասը դեռ շարունակում էր պաշտոններ զբաղեցնել Ռազմական, Ներքին և Արդարադատության նախարարություններում, սակայն դատավորների ծերբակալման դեպքն անհախաղեալ էր: Նրանց դեմ քրեական գործ հարուցվեց՝ Բեհրամզադե Նուարեթին մահվան դատապարտելու կապակցությամբ: 1921 թ. փետրվարի 2-ին դատավոր Նեմրութ Մուստաֆա փաշան դատապարտվեց 7, դատարանի անդամներից Ռեշեփ փաշան և Ռեշեփ բեյը՝ 5-ական, իսկ Ֆեթթահ բեյը՝ 3 ամիս ազատազրկման: Ըստ Գրիկերի՝ դատավոր Մուստաֆա փաշան դատապարտվեց ուղմածովային նախարար Ավնի փաշային խստորեն հարցաքննելու համարձակություն ունենալու պատճառով³⁷²:

Իսկ հայերի բնաջնջման համար մահապատժի ենթարկված ընդամենը 3 օճրագործներից 2-ը՝ Մեհմեն Քեմալը և Բեհրամզադե Նուարեթը, հերոսացվեցին քեմալականների կողմից: Այսպես, Բեհրամզադե Նուարեթի մահապատժի օրը՝ 1920 թ. օգոստոսի 5-ին, Անկարայի մեջլիսը, ի նշան հարգանքի, 10 րոպեով դադարեցրեց իր աշխատանքը: Դարձյալ Անկարայի մեջլիսի 1920 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած որոշման համաձայն՝ թոշակ տրամադրվեց Քեմալի ըն-

³⁶⁹ Refi Cevad, Tehcir ve Taktıl Muhakemeleri, "Alemdar", 28 Mart 1919.

³⁷⁰ Refi Cevad, Arabanın Beygirleri Nasıl İmiş?, "Alemdar", 20 Şubat 1919.

³⁷¹ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 585.


³⁷² Գրիկեր, Եղբատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 307: Ըստ Ֆերդուն Արայի՝ Նեմրութ Մուստաֆա փաշան և դատարանի անդամները մեղադրվում էին Բեհրամզադե Նուարեթի վերաբերյալ երկու միջանցից տարբեր դատական արձանագրություններ կազմած լինելու մեջ: Նեմրութ Մուստաֆան չէր ընդունել իրեն հասցեազնող այդ մեղադրանը և բողոքարկել էր այն, տես' Ferudun Ata, İsgal İstanbul'u'nda Tehcir Yargılamaları, ss. 284-285.

տանիքին, նոյն տարվա դեկտեմբերի 25-ին որոշում կայացվեց Բեհրամզադե Նուսրեթի ընտանիքին թոշակ նշանակելու մասին³⁷³:

Ամփոփելով նշենք, որ Երիտրուրքերի դատավարություններն ուղղված են եղել ոչ թե ամբողջ կուսակցության, այլ միայն նրա վերնախավի դեմ, որի վրա է բարդվել թե՛ հայերի ոչնչացման և թե՛ Օսմանյան Կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու մեղքը: Ընդ որում՝ այդ մոտեցումը մշակվել էր հենց Իթիհադի կողմից, որպեսզի անհաջողության դեպքում կուսակցությունը փրկվեր, և պատասխանատվություն կրեին միայն նրա դեկավարները: Դա է հաստատում նաև այն փաստը, որ Թեղեղդյուտ կուսակցության կազմավորման որոշման մեջ նշված էր, թե Իթիհադի բարձրաստիճան պաշտոնյաները չեն կարող անդամագրվել տվյալ կուսակցությանը:

Հարկ է նաև նշել, որ Երիտրուրքերի կուսակցության՝ 1919 թ. կայացած դատավարությունն ուղղված էր ոչ այնքան Իթիհադի հանցագործություններն ամբողջությամբ բացահայտելուն, այլ՝ որոշ չափով կոծկելուն, և որ հայերի ոչնչացման համար պատասխանատվության խնդիրը և թուրքիայի հարցում բրիտանացիների վարած քաղաքանությունը նպաստեցին քեմալական շարժման ձևավորմանը:

³⁷³ Taner Akçam, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 556. Այսօր ևս Բողազյանում կարելի է հանդիպել հերոսի կոչմանն արժանացած հայասպան Թեմալի արձանը, ինչ վերաբերում է մյուս ոճազործին՝ Բեհրամզադե Նուսրեթին, ապա Ուրֆայում նրա անվամբ է անվանակոչվել տարրական դպրոց ու պողոտա:



تریزون تهییر و تقبل حاکمی

شیوه علطفانی
لایلر تهییر، پاریز، ۱۹۱۹
پرنس شوئیلی، شیوه علطفانی

دون سات ۱۰۳۰ ھـ ناطق بانات و باسته
رجس باشات «مل مات بک ملندی
حیانکنر تدن هارند» و سوانه خادمه مل
سات بک من کیله ملاره ملارند و لندین
وشت تادن امکا کند موگره یه استخدام
اوئوب اول دین یله و بکن بیان اندرو
بیدلی. شاهد تهییر ائسند طرزونه چوندی
اعلام ائک اوزره اون ایکید طیه و خام
ویلینه کندیں طرزونه ایکن نـ

օսմانلی

پاۋسات ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԵՐՈՒՄ ԿԱՅԱՏԱ

تـیـاهـیـنـ مـوـجـوـدـ اـوـ مـادـامـ
تـیـاهـیـنـ مـوـجـوـدـ اـوـ مـادـامـ
نـیـانـ کـنـدـیـ تـوـنـدـهـ

خـرـبـ چـلـدـنـیـ وـ مـوـسـیـ الـبـاـكـ مـسـلـلـ

اـشـدـیـ اـلـهـ حـجـ وـ مـلـاـقـهـ تـهـیـیـرـ وـ طـرـزـونـهـ

وـ مـلـادـ آـرـسـلـانـ کـنـدـیـ سـلـیـمـ ԱـՏ~Ա~Կ~Ա~Ր~ՈՒ~Թ~Յ~ՈՒ~Ն~Ե~Ր~Ի~

مـوـلـوـرـیـکـنـهـ تـلـ اـیـنـزـرـ وـ سـوـنـهـ تـلـ
ایـشـبـکـ؟ـ

نـیـازـیـ اـنـدـیـ اـتـهـ طـرـزـونـهـ سـرـطـ

اتـشـنـهـ عـلـیـ تـجـازـانـ مـاـلـرـنـیـ قـوـدـاـرـقـ اـوزـرـهـ
تـقـبـیـلـهـ وـ تـنـابـیـلـنـ مـاـلـرـنـیـ قـیـمـتـهـ

وـ صـقـقـ تـلـ اـیدـنـ قـبـهـ طـاـنـ اـولـنـ اوـزـرـهـ وـ
مـاـلـوـهـ بـیـلـرـ اـموـالـ مـنـوـکـهـ اـیـسـیـ چـوـرـدـوـ

بـهـ نـیـازـیـ اـنـدـیـ طـرـزـونـهـ اـموـالـ مـنـوـکـهـ
قـوـمـبـیـرـنـکـهـ اـموـالـتـ سـوـرـتـ خـنـدـهـ

اوـزـوـنـیـاتـنـ بـوـرـقـ کـنـدـیـنـکـ اـموـالـ مـنـوـکـدـنـ
آـلـشـ اـولـبـیـنـ مـاـلـرـنـیـ مـنـایـمـدـهـ اـیـچـ چـوـزـ چـایـ

هـنـازـهـ مـنـایـمـدـهـ مـنـایـمـدـهـ اـیـشـبـکـهـ اـولـ گـوـرـمـلـهـ

بـوـنـ مـنـابـعـ بـتـ طـرـقـنـ چـوـیـ مـدـبـرـقـ وـ لـسـلـبـلـهـ
مـذـکـورـ مـاـلـرـنـیـ نـیـازـیـ اـنـدـیـ اـوزـرـنـهـ قـلـیـ
ایـمـرـنـ وـ بـرـیـلـنـ اـمـرـکـ خـلـافـ حـیـثـ اـولـبـیـنـ

وـ اـلـ مـرـیـ بـهـ اـیـهـ مـکـنـوـرـ وـ لـاـلـ وـ لـاـلـ

شـاهـدـ فـرـائـزـ تـبـمـنـدـ مـوـسـيـ وـ ئـالـ طـرـزـونـ

نقوی و قلچ

٢٥٣٢

جشن معاشر من مکون شم اوقتو

حفلاتی

٢٠٢٠

نحوی و قلچ

١٩٣٧

٢٠٢٠

گوشه‌الدین

عیسی حبیب اهمندان دو قور ساده کان عزیز آذینه را بر عده

حبیب اهمندان دو قور نسبت باید این امر اتفاق نداشت.

اشت اراده سینه‌ک اجرات دنخانه ناظری مأمور در

١٩٣٨ دست ١٩٣٨

دسته ناظری

مدخل

دانادر

گوشه‌الدین

دو سعادت دیوان حرب عرضی هفت خفته نهضه طمعه

سکریپت ششم شهید دود دیگ شرقی بخدمات روحانیان از داده

منقاد طریق میر ای ای خود علی ای ای کلشی خل عدیه

آهمندان کله، سرویی یکشیخ کاهه زناده ای ای حربه چنی

شیر الدین، پیاده یکشیخ سات، منقاد شاقد قاج و سواری

یکشیخ صری بکل مأمور این خد

اشت اراده سینه‌ک اجرات هر یه مأمور در

١٩٣٩ دست ١٩٣٩

مال ناظری

نوبل

شکر

مداده فره

*

گوشه‌الدین

استیوال دیوان حرب عرضی مستطلیانک عدم آفیسه بناء

شیری پیک غریش ماسه هر عنی ای است اسکندر چشی

حمد فضل، عکنه گیز شروع دارمیں بیزاردن احمد خلیص و خازم

و دعوی و بکل مدن هر اندیه قیم او اتفاق نداشت.

اشت اراده سینه‌ک اجرات هر یه و دعل و ماله ناظری

مأمور در

١٩٣٩ دست ١٩٣٩

مال ناظری

مدعل

اسباب مدل

نوبل

سلامان دسم عالیسی

دو تک سلامان دسم مالیس بیدزده کان جمهه جایع شریمه

بیو دلکش

نحوی و قلچ

گوشه‌الدین

هیک تئیبه مدیر موبیکه تکثور طاش منصرف سان قلچ
نیعنی اتفاق

لکش اراده سینه‌ک اجرات داخله انتری مأمور در

١٩٣٩ دست ١٩٣٩

مال ناظری

مدعل

دانادر

گوشه‌الدین

حدود حبیب موبیسی قسم منهان یک ابری قاعده بدربرت
من حقوق آنکه کنندن ماذون دو قور لطف بک نیعنی اتفاق

اشت اراده سینه‌ک اجرات هبی ناظری مأمور در

١٩٣٩ دست ١٩٣٩

مال ناظری

مدعل

دانادر

گوشه‌الدین

اوچنجی صفت دعل منشائک امور جزاب مدیری مأمور در
لک نیعنی اتفاق

و اراده سینه‌ک اجرات هبی ناظری مأمور در

١٩٣٩ دست ١٩٣٩

مدعل ناظری

سدراط

دانادر

*

ՑՈՉՂԱՏԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ

ԿՈՏՈՐՈՇՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԼԻՍՏԵՐԸ

Երեկ սկսվեց պատմական դատավարությունը

Դազմական արտակարգ ատյանը, որը լիազորված է քննելու տեղահանության և կոտորածների պատճառով [հայերի] կրած վնասները, երեկ կեսօրից առաջ՝ ժամը 10-ին, նիստ գումարեց և սկսեց դատավարությունը: Դատարանի կազմը բաղկացած էր ներքոհիշյալ անձանցից: նախազահ՝ Հայրեթ փաշա, անդամներ՝ Մուստաֆա և Նադիր փաշաներ, Ծերեթ և Արթին էֆենդիներ: Մեղադրող կողմը ներկայացնում էր դատախազ Սամի բեյը:

Ինչպես որ մեղադրամներից բողազլյանի կայմակամ (զավառապետ) ու Յոզդատի մոլասարրիֆի տեղակալ (սանջակի փոխկառավարիչ) Զեմալը, Յոզդատի ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը և Յոզդատի վաքրֆային վարչության նախկին պաշտոնյա Ֆեյյազ Ալին ներկա էին անձնապես, այնպես էլ իրենց տեղերում էին դատապաշտաններ Սահերդին Ֆերի, Սալահադին, Հալիթ, Հայրի, Մահիր ու Հասան Բասրի բեյերը:

Նախազահի հրամանով ընթերցվեց հետաքննիչ հանձնաժողովի մանրամասն որոշումը, այնուհետև ունկնդրության արժանացավ դատախազ Սամի բեյի որոշումը, ապա լսվեց նաև քաղիացվորի կարգավիճակով հանդես եկող փաստաբան Լևոն Ռեմզի էֆենդի՝ տեղահանության ու կոտորածների ողբերգություններին վերաբերող հայտարարությունը: Վերոհիշյալ Լևոն Ռեմզի էֆենդին ասաց. «Տառացիորեն կիսում եմ դատախազ Սամի բեյի հիմնավորված և արդար հայտարարությունը»:

Դատապաշտպանները հայտարարեցին՝ քանի որ Լևոն Ռեմզի էֆենդի³⁷⁴ ունի քաղաքացիություն կամ առաջարկություն և ներկայացնի իր լիազորված լինելու մասին հավատարմագիրը։ Լևոն Ռեմզի էֆենդին հանդես եկավ այդ հայտարարությունը ժխտելուն ուղղված մեկնաբանություններով, որից հետո հայտարարվեց, թե դատախազը հարմար է գտել, որ Լևոն էֆենդին հանդես գտնում է քաղաքացիությունը և այդ առաջարկը։

Այնուհետև մեղադրյալները հայտարարեցին, թե այս դատարանն իրավասու չէ քննելու իրենց գործը, իսկ դատապաշտպանները հանդես եկան դա հաստատող հայտարարությամբ, բայց դատախազը ապացոյցներով հիմնավորեց, որ տվյալ դատարանի կողմից մեղադրյալների դատաքննության իրականացումը համապատասխանում է օրենքին։

Նիստն ընդմիջվեց մինչև ետկեսօր՝ դատապաշտպանների պահանջով, ովքեր ցանկանում էին ճանորդանալ փաստաթղթերին։

Կեսօրից հետո՝ ժամը 13:40-ին, նիստը վերսկսվեց, և վերոնշյալ դատարանի կազմը պատրաստ վիճակում սկսեց դատավարությունը։ Դատապաշտպանները նորից հայտարարեցին, թե իրենց պաշտպանյալները ստամբուլակ չեն, և այդ դատարանը՝ իր յուրահատկությամբ, իրավասու չէ իրականացնելու նրանց դատաքննությունը, դատախազ Սամի թեյն էլ պնդեց, թե իրավասու է, որից հետո՝ ժամը 14:10-ին, դատարանի կազմը նորից հեռացավ խորհրդական սենյակ։

Ժամը 14:55-ին դատարանի կազմը վերսկսեց նիստը, որի ժամանակ ընթերցվեց դատարանի՝ մեղադրյալների գործը քննելու իրավասության մասին որոշումը։

Դատապաշտպաններն ասացին, թե պաշտպանյալներից թեմալը տեղահանության և կոտորածների խնդրի կապակցությամբ նախկինում դատաքննվել և արդարացվել է Յոզդատի բողոքարկան դատարանի կողմից, և որ օրենքին հակասում է նրա՝ միևնույն հարցով վերստին դատվելը։

Դատախազը սույն հարցի առնչությամբ հանդես եկավ որոշ դատողություններով, որից հետո թեմալ թեյից պահանջեցին, որպեսզի պատասխանի որոշ հարցերին։ Նախագահն այդ հարցով դիմեց թեմալ թեյին, որին ի պատասխան՝ վերջինս հայտնեց, թե ինքը նախկինում դատվել է տեղահանության և կոտորածների մեղադրանքով։ Թեմալը բացասական պատասխան տվեց դատարանի նախագահի հետևյալ հարցին։ «Զեզ դատելու համար կալավորել են»։ Թեմալի բացասական պատասխանը ծիծաղ հարուցեց ունկնդիրների շարքերում, ապա նախագահը հայտարարեց. «Քանի որ օրենքին հակասում է, որ սպանության գործով դատվող որևէ անձ ձերբակալված չինի, ապա կարելի է ենթադրել, թե այդ դատաքննությունը որևէ կապ չի ունեցել սպանության հարցի հետ»։

Դատապաշտպանները վերոհիշյալ գործի մասին դարձյալ հանդես եկան հայտարարությամբ, իսկ դատախազը հիմնավորումներ թերեց՝ ի պաշտպանություն մեղադրյալի դատաքննության։ Այնուհետև դատարանի կազմը նորից քննարկեց այդ հարցը և որոշեց այդ համագամանքի մասին հեռագրով հարցում անել Յոզդատ և դատը հետաձգել մինչև փետրվարի 8-ը՝ ժամը 13:00։

6-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

³⁷⁴ Լևոն Ռեմզին դատարանում ներկայացնում էր իր 115 սպանված ազգականների շահերը։

Ռազմական ատյանի ունկնդրությանը

Երեկ կեսօրից հետո՝ ժամը 14:15-ին, սկսվեց Բողազլյանի կայմակամ Քեմալի, Յոզդատի ժամդարմերիայի հրամանատար Թևքիկի և վաքրֆային վարչության պաշտոնյա Ֆեյյազի դատավարությունը, որոնց դատաքննությունը շարունակվում է՝ տեղահանության և կոտորածների մեջադրանքով:

Դատարանի կազմի և դատախազի պաշտոնները գրադեցնում էին այն անձինք, որոնց անունները հիշատակել էինք անցած նիստի մասին հոդվածում, միայն դատապաշտպանների թիվը, արդեն չափազանցության հասնելով, ավելացել էր ևս մեկով. դատապաշտպաններին էր միացել նաև փաստաբան Հյուսնյու թեյը:

Քաղիայցվորի կարգավիճակով հանդես էին գալիս փաստաբան Հմայակ Խոսրովյանը, Հակոբ Բաիրին և Սոլրենյան էֆենդին: Նիստի սկզբում [Մեղադրյալների] դատապաշտպաններից Հայիդ թեյը, երկու կողմերի կազմակիրման մասին իր առարկությունն արտահայտելով, հայտարարեց, թե որպես քաղիայցվոր դատարանին դիմած Կարապետ Քյուրքչյանի որդին և Հայկ Խանջյանը, ըստ օրենքի, նախ և առաջ պետք է ներկայացնեն իրենց ժառանգականության մասին փաստաթղթերը: Դատախազը պահանջեց, որ նրանց դիմումներն ընդունվեն ոչ թե որպես ժառանգորդ, այլ՝ քաղիայցվոր: Դատարանը ներկայացրեց դրա մասին որոշումը, որից հետո որպես քաղիայցվոր հանդես եկող Հմայակ Խոսրովյանը հայտարարեց, թե անցած նիստի ժամանակ Վաճի իրադարձությունների մասին դատախազի արած մեկնարանությունները³⁷⁵, որոնք նպատակ ունեին որպես մեղմացուցիչ հանգամանք ներկայացվել՝ ի նպաստ Յոզդատի

³⁷⁵ Դատախազ Սամի թեյը Յոզդատի դատավարության հենց առաջին նիստում՝ 1919 թ. փետրվարի 5-ին, իր ճառում փորձել էր պղնել, թե հայերն ապստամբական շարժումների պատճառով աղիք էին տվել կոտորածների համար:

ողբերգությունների հեղինակ հանցագործների, այն ակնարկը, թե հայերը գործիք են եղել արտասահմանցիների համար, անհամատեղի են արտակարգ ատյանի կազմվելու նպատակի հետ, քանի որ այս դատարանում քննվելու են բացառապես կոտորածներին ու տեղահանությանն առնչվող խնդիրներ, և հակառակ կողմի նկատմամբ գործադրվելու է արդարադատությունը: Ըստ Հմայակ Խոսրովյանի՝ դատախազը վերոհիշյալ մեկնարանություններով խախտել է մեղադրող կողմի չեզոքությունը: Խոսրովյանը պահանջեց դատախազի պաշտոնից հեռացնել նրան և հայտարարեց, թե անընդունելի են հայերին ուղղված զրպարտությունները: Քաղիայցվորներից Սոլրենյան էֆենդին, այդ կապակցությամբ իր առարկությունը ևս հայտնելով, լրեց դատարանի դահլիճը:

Դատախազ Սամի թեյը նշեց, թե Վաճի դեպքերի մասին խոսելու անհրաժեշտությունը թիսել է ի պաշտոնների մեջահանությանը և կոտորածներին առնչվող խնդիրների էությունը բացահայտելուն ուղղված համակողմանի հետաքննության արդյունքում ձեռք բերված տեղեկություններից, և որ ինքը, ենելով իր պաշտոնից, հարկադրված է եղել մեկնարանել այդ իրադարձությունները: Դատախազը հայտնեց նաև, թե հիմնական անդամի մերժումը չի կարող կիրառվել դատախազների առնչությամբ:

Քաղիայցվորների լիազորները հանդես եկան երկար-բարակ պարզաբնուումներով: Այնուհետև ներկայացվեց Յոզդատու Քեմալի՝ գույքի հափշտակման մեղադրանքով քրեական դատարանում մեղադրյալի բացակայությամբ կայացված դատավճիռը, ըստ որի՝ Քեմալը դատապարտվել էր երեք ամսվա ազատազրկման: Քեմալի առարկություններից պարզվեց, որ վերոհիշյալ դատաքննությունը իրականացվել է իր ներկայությամբ, որի արդյունքում արդարացվել է:

Ապա դատարանի նախագահը հարցաքննեց Թևքիկ, Քեմալ

ու Ֆեյյազ բեյերին:

Երբ ժամը հասավ 16:30-ը, նախագահը հաղորդեց, որ նիստն ավարտվում է, և Կշարունակվի առաջիկա երկուշաբթի օրը՝ Կեսօրվա ժամը 13:00-ին:

9-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

Պատմական դատավարութուն

Նիստ երրորդ

Երրորդ նիստի առաջին մասը. Երեկ՝ երկուշաբթի օրը, տեղի ունեցավ Բողազլյանի տեղահանությանն ու կոտորածներին վերաբերող դատական գործի երրորդ նիստը: Նախագահը նիստի սկիզբն ազդարարելուց հետո մեղադրյալներին հայտնեց, որ վերջիններիս հարցաքննությունն ավարտված է, և այժմ ընթերցվելու են փաստաթղթերը:

Քաղիայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդ էֆենդին, նախագահից խոսքի իրավունք ստանալով, խնդրեց, որ նախքան մեղադրյալների փաստաթղթերի քննարկումը՝ ընթերցվեն երկու կողմերի դիմումները, որոնք հանձնվել են դատարանին: Ընթերցվեց Սիրքեջի³⁷⁶ բնակիչ, յոզդացի Կարապետ էֆենդու միջնորդությունը, որն անդրադառնում էր Բողազլյանի տեղահանության ու կոտորածների փուլերին:

Դատախազն ասաց, թե անհրաժեշտ է Կարապետ էֆենդուն ընդունել որպես քաղիայցվոր:

Որպես դատապաշտպան ներկա էր Հյուսեին Հյուսնու էֆենդին: Դատախազ Սամի բեյը, այդ միջնորդությանն անդրադառնալով,

նշեց, թե այստեղ այլ կասկածյալներ էլ են հանդիպում, և որ վերջիններիս նկատմամբ նոյնպես հետաքննություն է կատարվելու: Դատարանի կազմը Կարապետ էֆենդուն որպես քաղիայցվոր ընդունելու մասին հարցը քննարկելու նպատակով ինուացավ խորհրդակցական սենյակ:

Երրորդ նիստի երկրորդ մասը. Երեք քառորդ ժամ տևած քննարկումից հետո դատարանի կազմը վերադարձավ դատական դահլիճ: Որոշման մեջ նշվում էր, թե մյուս մեղսակիցների դատավարությունն արագացնելու նպատակով որոշում է կայացվել Կարապետ էֆենդուն քաղիայցվորի կարգավիճակ տալու մասին ծանուցագիր ուղարկել նրան:

Քաղիայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդ էֆենդին խոսեց այն մասին, թե այն դեպքում, երբ կենտրոնից հրաման էր ստացվել, ըստ որի՝ հայ զինվորականների ընտանիքները ենթակա չեն տեղահանությանը, ու չնայած այդ կապակցությամբ ստացված բազմաթիվ հրամաններին՝ նման բազում ընտանիքներ են տարագրվել: Լևոն Ֆերիդ էֆենդին ասաց, որ թեև Մեհաբեթ Կարապետ էֆենդին հայտնելով, թե բանակում իր որդիներից մեկը՝ կրտսեր, մյուսն էլ՝ ավագ լեյտենանտ է, իսկ ամենափոքրն էլ Ստամբուլում պատկանում է զինվորական դասին, խնդրել է, որ իր ընտանիքը նոյնպես օգտվի այդ կապակցությամբ բացառություն անելու մասին կենտրոնի հրամանից, սակայն թեմայը պատասխանել է, թե հարկադրված է տեղահանության մասին օրենքը գործադրել նաև Կարապետ էֆենդու հանդեպ և չի կատարել վերջինիս խնդրանքը:

Այնուհետև Լևոն Ֆերիդ էֆենդին, անդրադառնալով թեմայի՝ գաղթականների նկատմամբ ցուցաբերած անարդարություններին, ասաց, թե խոսքը վերաբերում է Կարապետ էֆենդու ընտանիքի անդամներին, որոնց մատները պոկել են, և որ դրա դրդապատճառն է

³⁷⁶ Թաղամաս Ստամբուլի Ֆարիի շրջանում:

եղել անձնական շահը:

Լևոն Էֆենդին նշեց, որ Քեմալն այդ հանցագործությունը կատարել է կանխամտածված կերպով, քանի որ վերջինս հրամայել էր մատից դուրս չեկող մատանու համար կտրել մատը:

Այնուհետև մանրամասներ ներկայացվեցին Մեհաբեթ Էֆենդու ընտանիք՝ Քեմալի դաժանությունների հետևանքով կրած նյութական վնասի մասին, որը կազմեց 1800 հատ հարյուրանոց կանխիկ դրամ, որին գումարվում էին նաև վատահորդ Մարիայի վրա գտնվող թանկարժեք զարդերը և կանխիկ դրամը:

Մեղադրյալներից մոլորարիֆի տեղակալ Քեմալը հայոց ողբերգության քատերաբեմներից Գյովլեր նահիենա (գավառակում) կատարված կոտորածի առնչությամբ ասել էր. «Գնում ենք քատրոն դիտելու»: Մեղադրյալը, Գյովլերի մահմեդական բնակչության ֆանատիկ զգացմունքները գրգոռող ելույթ ունենալով, ապահովել էր ողբերգություններին նաև տեղի բնակչության մասնակցությունը: Քեմալը, տառապող ժողովորդի հեծեծանքներին և տանջանքներին հետևելով, նարգիլե էր ծխել, իսկ ժանդարմերիայի հրամանատար Թևֆիկը, ելույթ ունենալով, խրախուսել էր բնակչության մասնակցությունը կոտորածին և իր հրացանով անձամբ սպանել երեք հոգու:

Լևոն Ֆերիդ Էֆենդին նշեց, թե Ֆեյյազ Ալի բեյի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության համախոհը լինելու մասին ենթադրությունը շատ հեշտ է ապացուել՝ վերոնշյալ ընկերության թղթապանակների միջոցով, և որ թե՛ նրա ընտանիքի անդամներից ու թե՛ ընկերներից շատերը կիաստատեն, որ նա եղել է տվյալ կուսակցության անդամ: Հայտնեց նաև, որ Ֆեյյազ Ալին նույնիսկ շատ ակտիվ դերակատարություն է ունեցել [Յոզդատի] նախկին մոլորարիֆ Քեմալ բեյի պաշտոնազրկման մեջ³⁷⁷, և որ մեղադրյալն իր դեկավա-

րության տակ գտնվող Յոզդատի ակումբ էր զնացել նվազախմբով:

Լևոն Ֆերիդ Էֆենդին իր եզրակացության մեջ նորից մանրամասնում էր, որ այդ երեք հանցակիցները՝ Ֆեյյազ, Թևֆիկ ու Քեմալ բեյերը, տեղահանության ժամանակ Կարապետի ընտանիքից կողոպտել են 1800 լիրա կանխիկ դրամ, 3620 լիրա արժողությամբ մի գորգ, 13 սենյակի բոլոր իրերը, 1000 լիրա արժողությամբ կանացի զարդեղները, որոնց ընդհանուր արժեքը կազմում էր 8000 լիրա:

Դատախազը հարցրեց, թե մեղադրյալներին վերագրվող սպանությունները միայն այդ երեքն են եղել, թե ոչ, և խնդրեց հայտնել զոհերի անունները:

Լևոն Էֆենդին նշեց, թե սպանված բազմաթիվ անձանցից ինքն առանձնացրել է երեք հոգու, որոնցից մեկի անունը եղել է Ալթինօղլու Միթե, իսկ մյուսների անունները չգիտի:

Մեղադրյալ Քեմալ բեյն ըմբռստանալով պատասխանեց, թե իր դեմ ուղղված տեղեկությունները և Լևոն Էֆենդու մեկնաբանություններն ամբողջությամբ զրպարտություն են և հավելեց. «Ո՛չ Գյովլեր եմ զնացել, ո՛չ եղել եմ այնտեղ, ո՛չ այդ մարդկանց եմ ճանաչում, ո՛չ էլ մատ կտրելով՝ մատանի եմ վերցրել: Նման որևէ պաշտոնյա չկա, որ այդ աստիճան անբարո կողոպուտ իրականացնի՝ հասարակ զգացմունքով ներշնչված»:

Ապա ժանդարմերիայի հրամանատար Թևֆիկ բեյն ըմբռստանալով ասաց, թե ինքը միայն երկու անգամ է մասնակցել տեղահանության գործողություններին. առաջինը եղել է Սվասում, երկրորդ՝ Կայսերի-Հալեա ժանապարհի վրա, իսկ մեկ այլ անգամ լիազորված է եղել ճնշելու հայ պավագաներին:

Նախագահ- Երբ Դուք այնտեղի հրամանատարն էիք, այդ

դար (պատվիրակ) Նեչարին, 1915 թ. հուլիսի 20-ին գալով Յոզդատ, հաղորդել էր հայերին կոտորելու հրամանը, սակայն Յոզդատի մոլորարիֆ Զօմալը հրաժարվել էր գործադրել այդ հրամանը, որի պատճառով էլ պաշտոնանկ էր արվել Նեչարի կողմից:

³⁷⁷ Միություն և առաջադիմություն կուսակցության Անկարայի պատասխանատու քարտու-

Երկու քարավանից բացի՝ այլ քարավան չի ուղարկվել:

Թևֆիկ թեյ- Գուցե և ուղարկվել է իմ իշխանության կողմից:
Նախագահը շեշտելով, թե քանի որ իրամանատարը եղել է
Թևֆիկ թեյը, պետք է որ տեղյակ լիներ բոլոր փաստաթղթերի մա-
սին, հարցրեց տեղահանությանը վերաբերող անդորրագրերի մասին:
Թևֆիկ թեյը պատասխանեց, թե անդորրագրերն ուղարկվել են գերա-
գույն իշխանություններին: Նախագահը տեղեկություններ պահանջեց
դրանց մասին, Թևֆիկը նախագահից խնդրեց չորս ժամ ժամանակ,
որպեսզի տեղեկանա իշխանություններից: Երբ ասաց, որ տեղյակ չէ,
թե իր բացակայության ժամանակ ով է իրեն փոխարինել, ստացավ
հետևյալ պատասխանը. «Պետք է որ իմանաք, թե ով է Զեզ փոխա-
րինել»:

Թևֆիկը հայտնեց, որ իմանականում որպես փոխարինող է
թողել գումարտակի քարտուղարին:

Այնուհետև դատախազը, խոսքի իրավունք ստանալով, խնդ-
րեց հարցնել, թե եթե այդ տեղահանությունը կատարվել է կառավա-
րությունից ստացված իրամանների և օրենքի հիման վրա, ապա մո-
թասարիփի տեղակալ Թեմալ թեյը պետք է, ինչպես հարկն է, հաս-
կանար դրանք ուսումնասիրելու անհրաժեշտությունը, և արդյոք Թե-
մալ թեյը զգացնել է, թե ոչ, թե ինչպիսի վնասներ կարող էին հասցել
[հայերին] տեղահանության ժամանակ: Թեմալը պատասխանեց, թե
որևէ բան ուսումնասիրելու համար պետք է իրազեկվել դրա մասին, և
հավաստիացրեց, թե նրանք [հայերը] անվտանգ կերպով տեղ են
հասել:

Դատախազ- Այսինքն՝ լրված իրերը ոչ մի հարձակման չեն
ենթարկվել:

Թեմալ թեյ- Ո՞չ:

Լևոն Ֆերիդ Էֆենդի- Կոտորածի թատերաբեմ դարձած

Գյուլլեր գյուղու 6000 հոգու սպանությունը հայտնի է այն դիակների
շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրի մարմնի անդամները կտրատված
են որևէ կողմից: Դա հայտնաբերվել է բժշկական հանձնաժողովի
կողմից կատարված բժշկական զննումների շնորհիվ:

Նախագահ- Նման մասշտաբի դեպք է պատահում, իսկ մու-
թասարիփը տեղյակ չէ:

Թեմալ- Տեղյակ չեմ, փաշա', տեղյակ չեմ:

Թեմալի այս խոսքերն աղմկոտ ծաղրանք հարուցեցին ունկն-
դիրների շարքերում:

Դատապաշտապան Հալիդ թեյ- (Ոտքի է կանգնում և ունկն-
դիրներին մատնացոյց անելով՝ ասում)- Հարգելի' փաշա, խախտ-
վում է դատարանի վեհությունը: Նորին մեծություն փադիշահի անու-
նից արդարարադատությունն իրականացնող դատարանի ուշադրութ-
յանն եմ հրավիրում:

Այս խոսքերի վրա ունկնդիրները լուցին:

Զաղիայցվոր Հայկ էֆենդին, Թեմալ թեյի ժխտողական խոս-
քերից հետո խոսելու թույլտվություն ստանալով, հայտնեց, որ երբ իր
մայրը Թեմալ թեյին ասել է, թե ինքը բողոքական է, և խնդրել տեղա-
հանության չենթարկել իրեն, Թեմալը պատասխանել է, թե իր կարծի-
քով բոլորը մեկ են՝ բողոքական, թե կաթոլիկ. բոլորը հայ են և հեռա-
նալու են:

Նախագահը հարցրեց դատախազի կարծիքը: Վերջինս ասաց
հետևյալը.

-Լրանց ցուցմունքներում հակասություն չկա: Միաբերան մեր-
ժում են:

Նախագահի պատվերով ներկայացվեցին համապատասխա-
նաբար Թեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ Ալի թեյերի նախկին ցուցմունքները:

Թեմալ թեյը, առարկություններ հայտնելով նախկինում արձա-

նագրված իր ցուցմունքում տեղ գտած այն խոսքերի առնչությամբ, որոնք վերաբերում էին Միություն և առաջադիմություն կուսակցությանը, նշեց, որ ինքը տեղյակ չէ, թե վերոհիշյալ կուսակցությունը ումից է բաղկացած եղել, և որ ինքը Յոզեֆ Ֆրանց Առաջատում չի եղել այն ժամանակ, երբ այդուն է այցելել վերոնշյալ կազմակերպության պատվիրակ Նեջարի բեյը, որի ցուցմունքը հակասում է իր ցուցմունքին:

Թևիկ բեյի ցուցմունքների ընթերցումից հետո վերոհիշյալը նաև ասաց, թե ինքը տեղյակ չի եղել իին քարավանի տեղահանության մասին, որը կատարվել է իր պաշտոնավարության ժամանակ:

Դատարանի կազմը ըննարկում արեց, որից հետո Թեմալ բեյն հիշեցրեց, որ ինքը նախկինում ասել էր, թե այրված փաստաթղթերը վերաբերել են տեղահանությանը: Թեմալը հայտնեց, որ այդ փաստաթղթերը գոյություն ունեն, և որ ինքը, թերևս, սխալմամբ է նման բան ասել:

Հետո էֆենդին նշեց, թե ինքը տեղյակ է, որ այրված փաստաթղթերը վերաբերել են հայերի բնաշնչմանը և պարզաբանումներ պահանջեց՝ այդ հրամանների բովանդակության և հրապարակման վայրի առնչությամբ: Թեմալը համառորեն կրկնեց իր վերոնշյալ ցուցմունքը ասելով, թե տեղահանության մասին հրամանները չեն այրվել:

Այնուհետև անդրադարձ եղավ Թևիկ բեյի ցուցմունքին, որը վերաբերում էր հողատարածքի հարցին: Թևիկը հայտնեց, որ այդ ազարակը հայերին չի պատկանել. այն եղել է էմիրության հողատարածքը, և որ դա կարող է հաստատվել Յոզեֆի գրանցամատյաններով: Այդ տաճ մասին Թևիկը բեյի տված տեղեկություններից հետո վերջինս մի փաստաթուղթ ներկայացրեց դատարանին ասելով. «Ես իմ այդ տունը վարձակալության եմ տվել՝ ըստ այս փաստաթղթերի, շարժական գույքը գրանցված է այս մատյանում, որի համաձայն՝ շարժական գույքը հանձնել եմ Լքյալ գույքի հանձնաժողովին»:

Թևիկն այնուհետև, Ույիհանների խնդրին անդրադարձով, պնդեց, թե դա զրպարտություն է:

Դատախազն ասաց, թե հարցերի ժամանակ հիշատակված տեսուչ Նեղիմ բեյն Իզմիթից ուղարկված հեռագրում հայտնել է, թե ինքը չի կարող գալ Ստամբուլ, և իր ցուցմունքները տալու է Իզմիթի դատարաններին, մինչդեռ տվյալ անձնավորության ցուցմունքներն անչափ կարևոր են, և դատարանի նախագահին խնդրեց միջոցներ ծեռնարկել այդ ցուցմունքները Ներքին գործերի նախարարությունից ստանալու համար: Դատախազը հավելեց նաև, որ եթե մեղադրյալները վկաներ ունենան՝ ի պաշտպանություն իրենց, ապա նրանց պետք է ժամ առաջ ծանուցագրեր ուղարկել և ապահովել դատավարության ընթացքն արագացնելու մասին գերազույն խորհրդի կարգադրության իրականացումը:

Նախագահը հայտարարեց, որ որոշվել է դատը շարունակել հաջորդ օրը՝ ժամը 13:00-ին:

10-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

Պատմական դատավարությունը

Ռազմական արտակարգ ատյանը երեկ իր հատուկ գրասենյակում նիստ գումարեց եվրոպական ժամով ժամը 13:00-ին: Քանի որ այս նիստում նախատեսված էր վկաների հարցաքննությունը, [դատարանի] նախագահ Հայրեթ փաշայի ծեռքի տակ գտնվող գրության համաձայն՝ համապատասխանաբար դատարան կանչվեցին տեսուչ Նեղիմ բեյը, Յոզեֆի նախկին պատզամավոր Շաքիր բեյը, Սարգիս էֆենդու դուստրը՝ Ալիսը, Յոզեֆի նախկին մութասարրիֆ Զեմալ բեյը, Ուիֆաթ էֆենդին և Օհաննես էֆենդու որդի Ստեփանը:

Ի վերջո՝ ցուցմունք տալու համար որպես վկա ամբիոն հրավիրվեց դատարանում Արեկա գտնվող 17 տարեկան մի պատանի՝ Արթին անունով։ Վերջինս հայտնեց, որ ճանաչում է վկաներին։

Արթին էֆենդին վկայեց նաև, որ զրկանքի ժամանակ քուրբան բայրամ տոնի հինգշաբթի օրը ծերբակալվել է Յոզդատի ժանդարմերիայի գինվորների կողմից, հայերին ութ-ութ կապել են իրար և Յոզդատից դուրս տարել, խել են հայերի մոտ գտնվող թանկարժեք իրերը, կանխիկ դրամը, Կողոպատիշները կանանց հարբեցրել են Օսման փաշա դերվիշների մենաստանի մոտակայքում, Յոզդատի մութասարրիֆի տեղակալ, Բողազլյանի կայմակամ Թեմալ թեյը 500 հեծյալ ավագակախմբով ենել է Գյովլեր գյուղ, հայերին գերի են վերցրել գիշերվա ժամը 12-ից հետո, քանի որ նրանց ժամկետը լրացել էր, քահանային հիշեցրել են կրոնական արարողություն կատարելու անհրաժեշտության մասին, մահապատճի են ենթարկել նախ՝ քահանայի փոքրիկ երեխային, ապա՝ կնոջը և այնուհետև՝ քահանային, որից հետո թեմալը, դուրուկ նվագելով, քաջալերել է մարդապաններին՝ ասելով. «Դուք չգիտեք՝ ինչպես կոտորել»։ Չեթեները (հրոսակախմբերը) թեմալ թեյի այս խոսքերից հետո սկսել են ամենայն դաժանությամբ կոտորել ամեն պատահողի։ Արթինը զգալով, որ մայրն էլ է սպանվելու, փախել-գնացել է Կայսերի։

Այս ցուցմունքները լսելուց հետո դատարանի նախագահը հրամայեց ընթերցել Հանցագործությունները հետաքննող լուծարված հանձնաժողովի կողմից նախկինում արձանագրված նույն վկայի ցուցմունքները։ Վկան իր նախկին ցուցմունքում հայտնում էր, թե Գյովլերի կոտորածի ժամանակ ինքն էլ էր ուժից վիրավորվել։ Այն դեպքում, եթե Հանցագործությունները հետաքննող հանձնաժողովին ներկայացրած ցուցմունքում ասել էր, թե ուշաբակվել էր՝ մեռածի պես, դատարանում տված վկայության ժամանակ նշում էր, թե կոտո-

րածի ժամանակ փախուատի էր ոիմել։

Դատախազ Սամի թեյ (ոիմում է նախագահին)- Ես հակասություն եմ տեսնում այս ցուցմունքում։ Մի անգամ ասած է եղել, թե ես՝ Արթինս, ավագանու որդու վրա կատարված հարձակումից անմիջապես հետո փախել եմ, իսկ հիմա ասում է, թե վիրավորվել է։ Ինչպես կարող է այդպես լինել։ Հետո, մեկ-երկու հոգու սպանությունը տեսնելով, անհետացել է, իբրև թե նորից եկել է Հատուկ կազմակերպության տեղը և իբրև թե այնտեղ գինվորների միջից գտել է կայմակամին ու գեկուցել վերջինիս, և իբրև թե կայմակամն էլ իրեն ճնշել է։ Տասներկու տարեկան մեկն այդ ինչպես կարողացավ նման բանի խիզախել։

Վկան, դատախազի խոսքերին ի պատասխան, ասաց, թե դեպքերն ընթացել են հենց այնպես, ինչպես ինքն է պատմել. քանի որ այնտեղ դեպի Կեսարիա տանող ժանապարհն էր, ինքն էլ այդ ժանապարհով է գնացել։

Նախագահն այնուհետև մեղադրյալներին հարցրեց, թե վերջիններս ասելիք ունեն, թե՞ ոչ։ Թեմալ թեյը, ոտքի կանգնելով, ընդգծեց, որ պատանու ցուցմունքներում տեղ գտած հակասությունն ակնհայտ է, և որ քարավաններից մեկն ուղարկվել է Հալեպ, իսկ մյուսը՝ Սվաս, ինքը թուրբան բայրամի ժամանակ գտնվել է Յոզդատում և Գյովլեր չի գնացել ու հավելեց։

-Այդ ամենը զրպարտություն է, որը ամբողջությամբ հակասում է իրականությանը։

Ապա թեմալ թեյը պահանջեց, որ եթե Արթին թեյն իբրև թե տեսել է իրեն կոտորածի վայր դարձած Գյովլեր գյուղում, թող հայտնի, թե ինչ տեսք ու հագուստ է ինքն ունեցել այդ պահին։

Վկան նշեց, որ պահանջվող պարզաբանումները չի կարող նշանակվում են այս դատախազի պատասխանությամբ։

տալ, քանի որ շատ ժամանակ անցած լինելու պատճառով այդ հանգամանքները չի հիշում:

Քեմալ բեյը, դիմելով նախագահին, ասաց.

-Այդ դեպքում ինչպիս է ինձ ժանաչում:

Նախագահ- Ամեն պահի գլխում չի մնա: Նոյնիսկ ես որոշ ժամանակ հետո չեմ կարողանա Ձեզ հիշել:

Արված հրավերից հետո եկավ Յոզդատի նախկին պատգամավոր Շաքիր բեյը և երդվեց՝ ըստ ընդունված կարգի:

Շաքիր բեյը ենթադրեց, թե իր արձակուրդի ընթացքում, երբ վերադարձել է Յոզդատ, պետք է որ այնտեղ գտնվեր տեղահանության ժամանակ: Տեղահանվածների մեկ ուրիշ քարավան ուղարկվել էր նախկին մոլորդարիֆի կողմից: Շաքիր բեյը հայտնեց նաև, որ հայ տղամարդիկ առաջին անգամ աքսորվել են կոմիտեջիլյան հետ կապ ունենալու պատճառով, որոշ քարավաններ ուղարկվել են ընտանյոք հանդերձ: Նա նշեց նաև, թե ինքն անձամբ չի տեսել մոլորդարիֆի սկսած տեղահանությունը, ինչպես նաև՝ Քեմալ բեյի՝ ավարտին հասցրած ողբերգություններից որևէ պատահիկ: Վերոհիշյալը հավելեց նաև, որ երբ վերադարձել է Ստամբուլ, ըստ իր լսածի տեղեկացած իրադարձությունների վրա է հրավիրել համապատասխան մարմինների ուշադրությունը, սակայն իր այդ նախաձեռնությունը, դժբախտաբար, ոչ մի արդյունքի չի հանգեցրել: Շաքիր բեյը կրկնելով, թե ոչ մեկին չի կարող որպես հանցագործ մեղադրել, առաջ քաշեց այն միտքը, թե մեղադրյալը [Քեմալը] ի պաշտոնե կկարողանար արգելք լինել այդ ողբերգությանը:

Նախագահ Հայրեթ փաշա- Դուք այն ժամանակ պատգամավոր էիք. կայմակամին չնախազգուշացրեցիք՝ որպես պատգամավոր:

Վերոհիշյալն ի պատասխան ասաց, թե նախազգուշացրել է, բայց՝ պարզուն: Նախագահ Հայրեթ փաշան հարցրեց, թե այդ հանգամանքների մասին հեռագրով նահանգապետարան և նախարարություն հաղորդեն է, թե՞ ոչ: Շաքիր բեյը պատասխանեց, որ դրան խոչընդոտ է եղել գրաքննությունը:

Նախագահի՝ «Ինչո՞ւ» այդ խնդիրների մասին չխոսեցիք խորհրդարանուն: Հարցին ի պատասխան՝ Շաքիր բեյը նշեց, թե այս հարցը քննարկել է իր ընկերոց՝ Քասըմ էֆենդու հետ, և քանի որ պատգամավորները պատասխանատու չեն որոշ օրենքների համար, ինքն այլս չի գրաղվել այդ հարցով:

Երբ նախագահը պարզաբանումներ պահանջեց այդ կապակցությամբ, դատախազ Սամի բեյը, խոսելու իրավունք ստանալով, ասաց:

-Փաշա', վկայի պաշտոնն իրոք որ բարձր է: Վկայի գործողությունների համար իրեն քննադատելը տեղին չէ: Բնական է, որ որպես պատգամավոր՝ նա պատասխանատու չէ այս հարցում:

Ապա դատախազը խնդրեց նախագահին, որ վերջինս վկային հարցաքննի Զեմալ բեյի պաշտոնազրկման և Քեմալ բեյի՝ այդ պաշտոնում նշանակման առնչությամբ: Շաքիր բեյը նշեց, որ բնակչությունը և երկիրը այդ մարդուց փրկելու համար իր գրասենյակում դիմել է նահանգապետին, իսկ Զեմալ բեյը, ըստ խոսակցությունների, հեռացվել է թուլության պատճառով:

[Դատարանի] անդամներից Արթին էֆենդին նոյնպես պահանջեց, որ Շաքիր բեյը հայտնի, թե որն էր Զեմալ բեյին հասցեագրված թուլության բնույթը, պատմի Յոզդատի հարցերին պատասխանատու ներկայացուցչի մասնակցության մասին, նշի, թե ումից էր բաղկացած Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կազմը: Շաքիր բեյը պատասխանեց, թե տեղյակ չէ:

Այդ պահին քաղիայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդ Էֆեն-ովին խնդրեց հարցնել, թե արդյոք Շաբիր բեյը տեղեկություններ ունի՞ Թալեաթ փաշայի՝ ոչ մահմեդական ընդհանուր բնակչության բնաջնջմանն ուղղված հրամանի մասին։ Շաբիր բեյը պատասխանեց, թե բացարձակապես տեղյակ չի եղել նման հրամանի մասին։

Այսուհետև դատարան հրավիրվեց երրորդ վկան, որի անունազգանունն էր Մկրտիչ Սերբիլյան։ Նա ևս հայտնեց, թե ծանաչում է միայն Թեմալ բեյին, ապա պատմեց այն ամենը, ինչ տեսել էր այդ դեպքի ժամանակ։ Նրա ցուցմունքը շատ տպավորիչ էր։ Ասաց, որ Վերջին դեպքերին ականատես էր եղել ամծամբ։

Դատախազի ուշադրությունը ևս գրավեց այն, որ վերոհիշյալ վկայի ցուցմունքը շատ կազմակերպված էր և շղթայական։ Դատախազը, դիմելով նախագահին, ասաց։

-Նա մեր վկան է։ Միգուցե կասեն, թե իր ցուցմունքները հոդինված են։ Ես չէի ասի, թե սուս է խոսում, միայն թե կիսնդրեի այդ դեպքի առնչությամբ կատարել հարցաքննություն։

Վկան ասաց.

-Հորինված չէ. ասում եմ այն, ինչին ականատես եմ եղել։ Ըստ էության՝ ես միջնակարգ դպրոց եմ ավարտել։

Ապա դատապաշտպան Հայիդ բեյն ասաց, թե փաստաբանները, իրենց մասնագիտության անհրաժեշտությունից ենթելով, լեզվական հմտություններին տիրապետելու դեպքում անգամ չեն կարողացել այդչափ անթերի ցուցմունքներ տալ և հոդված հրապարակել, որում գրանցված են տեղի ունեցած դեպքերի անգամ օրն ու ժամը։

Թեև դատարանում գտնվող վկանների շարքում ներկա էին նաև կանայք, սակայն ժամանակի սղության պատճառով որոշվեց դատը շարունակել չորեքշաբթի օրը՝ ժամը 13:00-ին, իսկ Ներիմ բեյին հզմիթից դատարան կանչելու համար ծանուցագիր ուղարկել

նրան։ Նիստն ավարտվեց ժամը 16:00-ին։³⁷⁸ 12-ը փետրվարի, 1919, «Ալեմդար» ժամանակակից առաջնային ազգային աշխատավոր ազգային գործադրություն ներկայացնելու ժամանակու մշտին ցըսավելմատ թիւ գործուոց Կոտորածների և տեղահանության հանցագործությունները

Դատն սկսվեց ժամը 13:30-ին՝ Հայրեթ փաշայի նախագահությամբ։ Նախորդ արձանագրության ընթերցումից հետո, անցած նիստում ընդունված որոշման համաձայն, դատարանի ունկնդրությանն արժանացավ յոզդատցի օրիորդ Օժեն Ղազարոսը, որն ասելով, թե մեղադրյալներին ճանաչում է, հայտնեց։

-Դամազանի տոնին գենքեր որոտացին։ Դրանից երեք-չորս ամիս անց՝ մի առավոտ, ով որ իր խանութը բացելու համար դուրս էր գալիս, անմիջապես ձերբակալվում էր։ Թեոխս ինքն էր հանձնվել։ Մեկ ամիս հետո մունենիկը դիորվ դուրս եկավ փողոց և կանանց դիմելով՝ հայտարարեց. «Դուք էլ եք տղամարդկանց հետևից հերթով ուղարկվելու ուրբաթ օրը տեղահանվելու եք», մինչդեռ այն օրը գաղթի մասին իրենք էին շտապ որոշում ընդունել, սայլ էին նստեցնում վերմակից ու անկողնուց բացի այլ բան չվերցրած մեր մարդկանց, մեր փեշերի տակ կար 70 լիրայի չափով գումար։ Այդպես բերվեցինք Օսման փաշա դերվիշների մենաստան, այնտեղ էր գտնվում նաև յոզդատցի ոստիկան Նուման էֆենդիին³⁷⁸, և ահա այստեղ գտնվող Ֆեյյազ բեյն ու Նուման էֆենդին վերցրեցին մեզ մոտ գտնվող դրամները և հրամայեցին մեզ ուղարկել Ֆեներ, գիշերն ինձ և ևս մեկ-երկու աղջկա ասացին. «Ձեզ մուսուլման ենք դարձնելու. մնացե՞ք այստեղ», և պահեցին։ Մյուսներին մոտ 50-60 սայլերով տարան։ Այդ օրն այնտեղ էր նաև մեղադրյալ Թեմալ բեյը։ Զեռքին թուր՝ եկավ մեզ

³⁷⁸ Պատիկանապետ, որի վրա էր որպես Սորգուն գյուղի հայերին կոտորելու պարտականությունը։

մոտ և իր մարդկանց հետևյալն ասաց. «Եթե դուք սրանց բոլորին էլ, ինչպես որ հարկն է, չսպանեք, ե՞ս ծեզ կսպանեմ: Միթե մեր մայրերն այսօրվա համար չեն մեզ ծնել: Դեռ, ինչ եք կանգնել, զնացեք, կոտորեք: Վեց տարեկանից մինչև յոթանասուն տարեկան՝ բոլորին կոտորեք»:

Այնտեղ հենց իմ աչքի առաջ կոտորեցին բոլոր մարդկանց՝ ցորեն հնձելու պես, ինձ էլ մորս գրկից խլեցին՝ սպանելու համար, խփեցին զլիսիս: Սպանվածների գրպանները դատարկեցին, երեկոյին մոտ մեզ ուղիղ տարան կայմակամություն: Այդ կայմակամ թեմալ բեյն այնտեղ մեկ անգամ ևս ծեծեց ինձ և սեփական ծեռքերով խլեց զգեստիս տակ գտնվող մեկ լիրայի չափ գումարը, ապա ուղեկցորդին հրամայեց սպանել ինձ, սակայն ուղեկցորդներն ինձ փախցրեցին ու տարան Փոլ գյուղ³⁷⁹, որտեղ Աղջոյուղի անվամբ մի ժամդարմ, ինձ իր հետ վերցնելով, տարավ ինչիրի գյուղ³⁸⁰, որտեղ տասնապետ Ահմեդն ինձ և ամիս պահեց իր տանը, ապա ես փախա այն ախոռից, որտեղ ինձ փակել էին:

Այն հարցին, թե արդյոք թեմալ բեյն անձամբ մարդ սպանել է, թե ոչ, Օժենը պատասխանեց, թե չի տեսել թեմալի՝ մարդ կոտորելը, բայց նկատել է, թե ինչպես է, թուրք ծեռքին այս ու այն կողմ գնալով, դրամ բաժանում:

Թեմալը հայտարարեց, թե իրեն ուղղված մեղադրանքները սուտ են: Օժենը հավելեց նաև, որ Թևֆիկ էֆենդուն առնչվող որևէ բան չի տեսել, սակայն ականատես է եղել, որ թեմալն այդ հրամանը տվել է հենց կառավարության շենքի առաջ:

Դատախազի այն հարցմանը, թե Օժենն ինչպես է փրկվել կոտորածից, վերջինս պատասխանեց, թե իսլամ է ընդունել և այդպիսով ազատվել մահից:

³⁷⁹ Փոլ գյուղը ներկայում գտնվում է Էլազիջ նահանգի Ալյոն զավառում:

³⁸⁰ Ինչիրի գյուղը ներկայում գտնվում է Բուլոս նահանգի Յանիշեհիր զավառում:

Նախագահը հարցուեց, թե ով է եղել այդ ավազակախմբի պետը: Օժենը հայտնեց, որ նրանց մեջ եղել են Թոփալ Շյուքրյուն, Մահմուդ, Բողթեփելի, Սեհմեդ ու Համդի էֆենդիները, իսկ նրանց զիսավորել է Ֆեյյազ բեյը:

Դատապաշտպաններից մեկը քննարկման առարկա դարձրեց այն հարցը, ըստ որի՝ օրիորդ Օժենը եղել է տասնութ տարեկան, և քանի որ տվյալ ավազակախմբը բացահայտ չի գործել, ապա անհրաժեշտ է այդ խնդիրը հաստատել: Խնդիրը կարևորվում է վկայության տեսանկյունից: Դատախազը նոյնպես նմանատիպ կարծիք արտահայտեց: Այդ հանգամանքը քննարկվեց. որոշվեց համապատասխան վայրից պարզել, թե աղջիկը երր է ծնվել, և ստանալ թժկի զննումը:

Այնուհետև վկաներից ունկնդրության արժանացավ Ազնիվը³⁸¹: Նա ասաց, թե ուրբաթ օրը՝ առավոտյան, բոլոր հայերը՝ ծեռքերը կապած, հանվել են տներից, այն օրը, երբ ինքը զնացել է իր ծերբակալված ազգականներին տեսնելու, Ֆեյյազ բեյն այնտեղ է եղել, Ֆեյյազն իր մատից խլել է իր մատանին: Իր զիսին սպառնալիքներ են տեղացել, որպեսզի հայտնի, թե որտեղ է թաքնվել իր հայրը, որի պատճառով էլ վախից նրանց ասել է հոր թաքստոցի մասին: Հորը ծեծելով տարել են: Մոտ 860 տուն ոչ մահմեդական բնակչություն է բռնագաղթեցվել, ինքն էլ է եղել նրանց մեջ, մի մասն ուղարկվել է Թաշփունար³⁸², նրանք այստեղ կոտորվել են, իսկ ներկա գտնվող թեմալ բեյին կոչել են «մսազործ կայմակամ»:

Դատախազը հարցեր ուղղեց վկային՝ որոշ կետերի առնչությամբ, որոնց ի պատասխան՝ Ազնիվը հայտնեց, թե գեղեցիկներին և երիտասարդներին առանձնացնում էին, իսկ տղամարդկանց բոլորին՝ կոտորում:

³⁸¹ Ազնիկ իրանոսյանը ցեղասպանությունից վերապրած վկա էր:

³⁸² Գյուղաքաղաք, որը ներկայում գտնվում է Ալբարյ նահանգի հարավային հատվածում:

Ֆեյազ բեյը նշեց, թե վերոհիշյալ մատանին ինքը գնել է 26 իրայով երկուս ու կես տարի հետո՝ Լուծարման հանձնաժողովից:

Այնուհետև հարցաքննվեց զինվորական բժիշկ Հայկ Էֆենդին: Վերոհիշյալն ասելով, թե ծանաչում է բոլոր երեք մեղադրյալներին էլ, հայտնեց, որ Թեմալը սպանել է տվել 93 հոգու: Վկան ահազին պարզաբնութեր արեց Թեմալ բեյի ավագակախմբի կազմավորման ու տեղահանության գործողությունների վերաբերյալ:

Վկաներից չեն ներկայացել Հայի Ռեջայի բեյը, Մարտիրոսը, Վերոնիկան, Ռժֆարը, Ստեփանը, Թերզին և Արիսը:

Յոզդատուա գտնվող վկաների առնչությամբ, քաղիայցվոր Լևոն Ռեմզիի և դատապահտպան Սահեղին բեյի տված ցուցմունքների հիման վրա, որոշվեց վկաների մի մասին ծանուցագիր ուղարկել և նրանց ծախսերը հոգալ մեղադրյալների գրպանից, իսկ դատը հետաձգել մինչև փետրվարի 15-ը:

13-ը փետրվարի, 1919 թ., «Ալեմդար»

Դատմական դատավարություն

Հայերի տեղահանության և կոտորածների կապակցությամբ Ռազմական արտակարգ ատյանում ընթացող Թեմալ, Թեմիկ և Ֆեյյազ բեյերի դատաքննությունները շարունակվեցին երեկ՝ ժամը 13:00-ին, ինչպես որ նախապես որոշվել էր:

Իրենց համար նախատեսված տեղերում էին գտնվում դատարանի կազմը, դատախազը, դատապահտպանները, քաղիայցվորների ներկայացուցիչներ Լևոն Ռեմզի և Հայկ Էֆենդիները: Նիստի բացումից հետո, երբ պարզվեց, որ վկաներից Արիսը չի եկել, ինչպես պահանջում էր օրենքը՝ ստուգվեց հաջորդ վկայի՝ Ստեփանի որդի

Օհաննեսի ինքնությունը³⁸³, որից հետո վկան երդվեց և հարցաքննվեց կոտորածի առնչությամբ:

Օհաննեսը մանրամասն պատմեց իր իմացածն ու տեսածը³⁸⁴: Նա անվճուական պատասխաններ տվեց մեղադրյալների և դատախազի հարցերին: Ի վերջո՝ Սահեղին Ֆերիդ բեյն սկսեց նախագահի միջոցով հարցեր ուղղել վկային՝ որոշ հանգամանքներ պարզելու նպատակով: Վկան կակազեց: Սահեղին բեյը պնդեց, որ պատասխանի: Դատախազը պահանջեց, թե քանի որ վկայի նախակին գրավոր ցուցմունքի և դատարանում արած հայտարարության միջև ընդգծված հակասություն է նկատվում, ապա թող վկան իր այդ ցուցմունքները համապատասխանեցնի իրար:

Այնուհետև վկային սկսեց հարցեր տալ Թեմիկ բեյի դատապահտպան Համի բեյը: Վկան շփոթվեց, իրեն կորցրեց ու շնորհացավ պարզաբնումներ անել:

Դատախազն ասաց, թե թող վկան կշռադատելով պարզաբնի իր ցուցմունքը՝ գիտակցելով իր տված վկայության լրջությունը՝ վկան դարձյալ հանդես եկավ անվճուական ցուցմունքներով³⁸⁵: Նրա վկայությունը բավարար համարվեց դատարանի կողմից, և Ստեփանը լրեց դահիճը:

Այնուհետև վկաներից դատարան կանչվեցին Արշալուսի³⁸⁶

³⁸³ Վկայի ճիշտ անունն իրականում Օհաննեսի որդի Ստեփան է: Թեև «Ալեմդար» օրաբերք 1919 թ. փետրվարի 11-ին կայացած Յոզդատի դատավարության շրորող ժաման հրապարակման մեջ ճիշտ է նշում տուն վկայի անունը, սակայն այս նշանումը ցրացողը պիտի է հայտնում այն:

³⁸⁴ Ըստ «Մենքներ» օրաբերք 1919 թ. փետրվարի 16-ի համարի՝ Ստեփանը ցուցմունքներ էր տվել առ այն, որ նախ՝ Գյուլլեր, ապա՝ Ելբջիլեր արտօրված հայեր կացմնելու, քլոնգներով և գերանդիներով սպանվել էին տեղի գյուղացիների կողմից: Վկան հայտնի էր, որ ցարիկն ներկա էին եղել նաև ամբաստանյալները, և որ կոտորվել էր իրենց ուղ գյուղ:

³⁸⁵ Դատարանում որպես վկան հանդես եկած անձինք ահարեկումների էին ենթարկվել երիտրուրերի կողմից: Անհայտ է, որ այս վկայի վրա է ճնշում գործադրվել: Այդ պատճենով է նրա ցուցմունքների միջև որոշ հակասություններ կան:

³⁸⁶ Թաշչյան Արշալուսի ցեղասպանությունից վերապրած էր:

որդին՝ Մարտիրոսը³⁸⁷, և գնդապետ Հայիլ Ռեջայի բեյը³⁸⁸. պարզվեց, որ վերջիններս չեն եկել, որից հետո դատարան հրավիրվեց Վերոնիկա անվամբ մի կին, որը երդվելուց հետո հարցաքննվեց: Սակայն նրա ձայնը չէր լսվում. դատական կատարածուն պատվիրեց բարձր խոսել: Վկան հայտնեց, որ չգիտի, թե Թեմալ, Թեֆիկ և Ֆեյյազ բեյերը կոտորածին մասնակցել են, թե ոչ: Դատախազը նշեց, որ համապատասխանություն չկա նաև այս վկայի՝ նախկինում արձանագրված ցուցմունքի և այժմյան խոսքերի միջև: Թեմալը նույնպես հանդես եկավ վկային ուղղված որոշ հարցերով: Այդ կերպ լիովին բացահայտվեց վկայի ցուցմունքներում տեղ գտած հակասությունը, և այս վկան էլ հեռացավ: Ապա առանց դատարանի հրավիրի ներս մտավ Բեատրիս անվամբ մի աղջիկ³⁸⁹, որի անունը նշված չէր դատախազության կողմից հանճնված գրության մեջ: Մեկ ուրիշ աղջիկ էլ օգնություն և աջակցություն խնդրեց դրսից: Այդ պահին դատապաշտպանները առարկեցին, թե խախտվում է օրենքը: Դատարանը, չնայած դատապաշտպանների օրինական առարկություններին, հարցաքննեց նաև այդ աղջկան: Քաղիայցվորներից Հայկը, ոտքի կանգնելով, ասաց, թե այդ վկանները դատարան են հրավիրվել՝ իր կողմից նախապես ներկայացված ցուցակում նշված անունների համաձայն, և քանի որ ինքը վերջերս հայտարարությամբ է հանդես եկել իր ժառանգների անունից, իիմա էլ իրավիճակի մասին կիաղորդի հենց իր անունից:

Դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ անհրաժեշտ համարելով քննարկել այդ խնդիրը: Երեք քառորդ ժամ տևած քննարկումից հետո բացվեց երկրորդ նիստը: Ընթերցվեց այն որոշումը, ըստ որի, գինվորական քրեական օրենքի համաձայն՝ մե-

ղադրող կողմի բոլոր վկանների հարցաքննությունից հետո կհարցաքննվեն նաև պաշտպանող կողմի վկանները, իսկ առայժմ ծանութագրեր կուղարկվեն Ստամբուլում գտնվող վկաններին:

Դատն ավարտվեց ժամը 16:30-ին³⁹⁰: Հայտարարվեց, որ այն կշարունակվի երեքշաբթի օրը՝ ժամը 13:00-ին:

16-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

Պատմական դատավարություն

Տեղահանության և կոտորածների խնդիրները դատաքննելու թագորված ռազմական ատյանը, երեկ Արդարադատության նախարարությունում գտնվող քրեական դատարանի սրահում նիստ գումարելով, շարունակեց դատավարությունը: Դատն սկսվեց 13-ն անց 13-ին: Դատարանի կազմը չէր փոխվել, և դատախազ Սամի բեյը, դատապաշտպաններ Սադերին Ֆերիդ, Հայրի, Հյուսնյու Սալահադինն ու Համիդ բեյերը, ինչպես նաև՝ քաղիայցվոր պատանիներ Արթին Ջյուրչյանը և Հայկն ու լիազոր ներկայացուցիչ Լևոն Ռեմզի է-ֆենդին գտնվում էին իրենց հատկացված տեղերում: Որպես մեղադրող կողմի վկա դատարան ներկայացած Անկարայի հինգերորդ գորաբանակի հրամանատար, գնդապետ Հայիլ Ռեջայի բեյը երդվելուց հետո հանդես եկավ տեղեկություններով: Վկան հայտնեց, որ կայմակամ Շահար բեյից ստացված ծածկագիր-հեռագրից հետո Բողազլյանում բնաջնջվել են 2-ից 3 հարյուր հայեր: Գնդապետ Հայիլ Ռեջայի բեյը տեղեկություններ տվեց տեղահանության և կոտորածների մա-

³⁸⁷ Մարտիրոս Թաշշյան:

³⁸⁸ Սանասարըցի գնդապետ Հայիլ Ռեջային եղել էր Անկարայի հինգերորդ գորաբանակի հրամանատարը:

³⁸⁹ Բեատրիս Կառվայանը ցեղասպանության ականատեսներից էր:

³⁹⁰ 1919 թ. փետրվարի 15-ին կայացած նիստում հայերի կոտորածների փաստը հաստատող վկայություններ է տվել նաև տիկին Աննիկը, որը նշել է, թե առաջին և երկրորդ քարավաններից առանձնացվել են տղամարդիկ, իսկ երրորդից՝ գեղեցիկ կանայք, իսկ մնացած հայերը՝ կոտորվել, տես' Kart ve Tehcir Da'vası, "Memleket", 16 Շաբաթ 1919.

սին: Դատախազ Սամի բեյը հարցեր ուղղեց վկային, իսկ դատապաշտպաններից Սաղեդին բեյն առարկեց վկայի ասածներին: Վկան պատասխանեց նրանց, որից հետո նրա վկայությունները քավարար համարվեցին, և նա դուրս եկավ դատարանի դահլիճից: Այնուհետև վկաններից դատարան իրավիրվեց դերձակ Ալիսը. պարզվեց, որ չի եկել: Ապա դատարանի դահլիճ կանչվեց երկաթուղային ծառայող Հրիստոքի Փանդալիի էֆենդիի³⁹¹, որը երդվելուց հետո ցուցմունքներ ու տեղեկություններ տվեց³⁹²: Այս անձնավորությունը, իր ցուցմունքները սկսելով ժամը 13:15-ին, դրանք ավարտեց ժամը 15-ին քառորդ պակաս: Մեղադյաններ թեմալը, թեմիկը և Ֆեյջազը նրա դեմ հանդես եկան բավականին մանրամասն հայտարարությամբ: Վերջապես դատապաշտպաններից Հայրի բեյը նախագահին խնդրեց Հրիստոքի էֆենդիոց հարցնել, թե երբեմ որևէ ռազմական ատյանի կողմից հրավիրված եղել է, թե ոչ, և եթե եղել է, ապա որ խնդրի առնչությամբ: Նախագահը տվեց դատապաշտպանի առաջարկած հարցը: Հրիստոքի էֆենդին տվեց ոչ հստակ պատասխան: Պարզվեց, որ ինքը իսլամին և կառավարությանն ուղղված փիրավորանքներով հանդես եկած լինելու պատճառով թեմալ բեյի կողմից ուղարկվել է Կայսերի ռազմական ատյան:

Այնուհետև վկաններից հարցաքննվեց Սիմոն էֆենդիի³⁹³, որի

³⁹¹ Ըստ «Մեմլեքեր» օրաթերթի՝ սույն վկայի անունը էր Հրիստոքի Անդրեյանիս:

³⁹² Ազգությամբ հույն վկա Հրիստոքին դատարանին հայտնել է, որ Սիուրյուն և առաջադիմություն կուսակցության պատվիրակ Նեջարին բանավոր հրամաններ էր տվել հայերին բնաջնջելու վերաբերյալ: Յայերին գոյգ-գոյգ տարել էին Բաղրամյայի և Թեղիհանի կողմերը, լցրել մի փարախ մեջ, որտեղից երեք-երեք կամ հինգ-հինգ հանելով՝ սպանել: Փախած-քարվածներին էլ բացահայտելու նպատակով ասել էին, թե իսլամ ընդունածները փրկվելու են, սակայն երբ փախածները դուրս էին եկել իրենց քարսոցներից, նրանց էլ էին կոտորել, տե՛ս Katî ve Tehcir Da'vâsi, "Memleket", 19 Şubat 1919.

³⁹³ Վկաններից խարթերցից Սիմոն Թաթեռուն իրավաբանություն էր ուսանել Ստամբուլում, որտեղից 29 տարեկան հասակում աքսորվել էր Յոզգատ: Նա ռազմական ատյանին վկայել է. «Յոզգատում տեղականություն և կոտորած բատերն ընկալվել են որպես հոնամշներ», տե՛ս Գրիկեր, Եղողատի: Դայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը, Նիւ Երքը, 1980, էջ 265:

խոսքը բավականին հակիրծ եղավ: Վկան նշեց, որ ինքը միայն այդցան տեղեկություններ ունի: Լևոն Ռեմզի էֆենդու պնդումից հետո ցանկացավ խոսել դեպքերի մասին, բայց չկարողացավ:

Վկաններից եկել էին նաև Սարգիսը³⁹⁴ և մեկ ուրիշ անձ ևս: Վկա Գեղամը, տեղահանության մասին խոսելով, առանձնապես շանդուարձավ կոտորածներին³⁹⁵: Վերջինս մեղադրող կողմի և անդամներից Մուատաֆա փաշայի հարցերին պատասխանելուց հետո հեռացավ:

Ապա ընթերցվեցին Յոզգատի մյութիքի Աբդուլլահ էֆենդու այն ցուցմունքները, որոնք նա հայտնել էր դատարանին: Այդ ցուցմունքները թեմալի դեմ էին ուղղված: Վերջինս բազմաթիվ կետերի առնչությամբ հայտնեց իր առարկությունը և համոզիչ կերպով ապացուցեց հակառակը:

Այնուհետև դատարանի կազմն ունկնդրեց մեղադրող կողմի այն հայտարարությունը, որը վերաբերում էր դատարանի հրավերին չարձագանքած վկաններին, որից հետո դատարանի կազմը հեռացավ քննարկումների: Կես ժամ տևած քննարկումներից հետո հաղորդվեց, որ հրավիրված վկանները պետք է ժամանեն Իզմիրից և այլ վայրերից ու արդեն ճամփա են ընկել, իսկ մյուս վկաններին դարձյալ ծանուցագիր, մի քանիսին էլ՝ հրավեր կուղարկվի: Դատարանի կազմը հայտնեց նաև, որ որոշվել է, որպես վկա, ծանուցագիր ուղարկել նաև կայմակամ Շահար բեյին: Հայտարարվեց, որ նիստն ավարտվեց, և կշարունակվի հինգշաբթի օրը՝ ժամը 13:00-ին:

19-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

³⁹⁴ Սարգիս Կառվայան:

³⁹⁵ Ըստ «Մեմլեքեր» օրաթերթի՝ Գեղամը դատարանին հայտնել էր, որ հայերին բնաջնջել էին Յոզգատի ժամդարմները, տե՛ս Katî ve Tehcir Da'vâsi, "Memleket", 19 Şubat 1919.

Ուզմական ատյանի ուսկնդրությանը

Տեղահանությանը և կոտորածներին վերաբերող խնդիրները դատաքննելու լիազորված ուզմական արտակարգ ատյանը երեկ՝ ցերեկվա ժամը 13 անց 24-ին, քրեական դատարանի դահլիճում շարունակեց Թեմա, Թևֆիկ և Ֆեյյազ թեյերի դատը: Քանի որ վկաներից Ռոֆաթ էֆենդին և դերձակ Ալիսը, որոնց անցյալ նիստում որոշել էին կանչել ու հարցաքննել, չէին եկել, դատարան հրավիրվեց գնդապետ Ծահար թեյը, որը հանդես եկավ տեղեկություններով: Ծահար թեյը հայտնելով, որ Բողազլյանի հայերի տեղահանության մասին ոչ մի պաշտոնական տեղեկություն չի ստացվել, ասաց նաև, թե Յոզդատի հետախուզությունը բարեխիճ չի աշխատել, իսկ այն հեռագրերը, որոնց առնչությամբ ասվել էր, թե կորպու էին հղվել, հավանաբար կարող էին, առանց խորանալու, նույնությամբ հաղորդված լինել, դրանք ստացվել էին կրտսեր հրամանատարից:

Դատախազ Սամի թեյը համառոտ կերպով ներկայացրեց առկա հեռագրերի բովանդակությունը:

Ծահար թեյն ասաց. «Դա ես չեմ գրել: Նա գրել է այն, ինչ ես ստացել եմ իմ ենթակայից: Բացի այդ՝ այն օրերից մոտ չորս ու կես-ինգ տարի է անցել: Լավ չեմ կարողանում մտարերել»:

Դատախազ Սամի թեյը, դարձյալ բազմաթիվ հարցեր ուղղելով, տեղեկություններ պահանջեց Ծահար թեյից, սակայն վերջինս համառորեն կրկնեց իր նախկին խոսքերը և նշեց. «Ես չեմ կարող տալ այնպիսի տեղեկություններ, որոնք հիմնված են զգացմունքների ու խոսակցությունների վրա»:

Դատարանի կազմի անդամներից Նադիր և Մուստաֆա փաշաները նույնպես որոշ հարցեր տվեցին, բայց Ծահար թեյը հայտնեց, թե ինքն այլ տեղեկությունների չի տիրապետում, որից հետո դատա-

խագ Սամի թեյն ասաց.

-Քանի որ Ծահար թեյը Հետաքննիչ հանձնաժողովում ցուցմունքներ տալու ընթացքում ևս նոյն կերպ համառել է, ոստիկանական վարչությունը առգրավել է նրա մոտ գտնվող ճանապարհորդական փաստաթղթերը և թույլ չի տվել վերադառնալ իզմիր: Թեև անվիճելի փաստ է, որ Ծահար թեյն արդարամիտ ու պատվավոր անձնավորություն է, սակայն վերոնշյալ հանգամանքը մի քիչ կասկածի տեղի է տալիս:

Ծահար թեյը պատասխանեց.

-Կառավարությունը կարող է անհրաժեշտ համարել թույլ չտալ ինձ ծանապարհորդել ու Ստամբուլից դուրս գալ, սակայն տարօրինակ է, որ մեղադրող կողմը որևէ կապ է տեսնում այդ հանգամանքի և իմ վկայության միջև:

Այնուեւսև անդամներից Արթին Մոսթիջյան էֆենդին սկսեց հարցերի տարափ տեղալ և Ծահար թեյից ստացած պատասխաններից հետո ասաց. «Կարծում եմ, որ եթե հեռագրերն ընթերցվեն, մի փոքր նեղվելու եք»:

Ծահար թեյը նշեց. «Եթե իմանայի, որ Ձեր հարցերի տեղատարափի տակ եմ ընկնելու, հետո մի ծոցատետր կվերցնեի»:

Երբ դատարանի կազմը տեսավ, որ Ծահար թեյը քիչ էր մնում՝ ուշաթափվեր կամ մեղադրող կողմի արած վերջին հայտարարությունից, կամ էլ Արթին էֆենդու՝ այդ ոգով ասած խոսքերից հոլովելով, վկային անմիջապես աթոռին նստեցրին: Նա մի քանի րոպե նստած հանգստացավ, ապա թույլ տվեցին, որ վկան դուրս գա դատական դահլիճից՝ մի քիչ մաքուր օդ շնչելու:

Ապա դատական դահլիճ թերվեց վկա ժամկոչի որդի Արթինը, որին որոշել էին կալանաբերմամբ կանչել: Դատարանի կազմի անդամները նրա անձը տեսնելուն պես ասացին, թե նա ներկայացել

Է ԱԿ Աախսկին նիստերից մեկին և հանդես է եկել վկայությամբ: Թաղիայցվորի լիազոր Լևոն Ռեմզի էֆենդին խնդրեց նորից հարցաքննել այդ վկային, սակայն Ծրա խնդրանքը մերժվեց:

Վկաներից Փանդելիդիսը չէր ներկայացել: Քանի որ պարզ-վեց, թե Արշալույսը գնացել է Յոզդատ, դատախազության պահան-ջով ընթերցվեց այդ կապակցությամբ վերոհիշյալի՝ Հետաքննիչ հանձնաժողովի կողմից արձանագրված ցուցմունքը, որն ուղղված էր Քեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ բեների դեմ:

Դատապաշտպան Հայրի թեյը, անմիջապես ոտքի կանգնելով, ասաց. «Հետաքննիչ հանձնաժողովը նման իրավասություն չունի. այդ մարոր կա'մ պետք է անձամբ ներկայանա, կա'մ էլ Ենթարկվի դատական հարցաքննության»:

21-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

Տեղահանության դատավարությունը սկսվեց

Երեկ՝ ժամը մեկն անց իխունիհնգից սկսած, շարունակվեց Յողղատի տեղահանության և կոտորածների դատավարությունը։ Դատարանի կազմը բաղկացած էր ներքոիհշյալ անձանցից։ Նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ Զեքի Մուստաֆա փաշա, Ալի Նազըմ փաշա և գնդապետ Ռեզեր Ֆերդի թեյ։ Դատախազի պաշտոնում հանդես էին գալիս Հարալամբր էֆենդին և նրա տեղակալը։ Դատարանի կազմի՝ դատական դահլիճ մտնելուց հետո նախագահի հրամանով թևիթիկ և ֆեյյազ թեյերը դահլիճից որուս եկան։ Ներս թերվեց Քեմալի թեյը, և հարզաքննությունն սկսվեց.

Նախագահ- Ի՞նչ ծնով եք տեղահանության վերաբերյալ իրաման ստացել՝ բանավոր, թե՞ գրավոր, անուղղակի կերպով, թե ուղղակի:

Ձեմալ բեյ- Տեղահանության ընթացքում եղել եմ Բողազոյացի կայմակամը։ Հայերին տեղահանելու հրաման եմ ստացել, որն էլ հաղորդել եմ ժանդարմերիայի հրամանատարին։ Կազայի (գավառի) կենտրոնում տեղահանությունը կատարվում էր ժանդարմերիայի հրամանատարի միջոցով, իսկ կազայից դուրս բնակվողները ուղարկվում էին նահիեի կառավարչի կողմից։

Նախագահ- Ու՞մ էր վերաբերում տեղահանությունը: Արդյոք - բացառություններ արվում էին:

Ձեմալ թեյ- Տեղահանությունը վերաբերում էր հայերին: Բացառություններ կատարելու վերաբերյալ շատ հրամաններ եմ ստացել: Դրանց տարաբնույթ լինելու պատճառով չեմ կարողանում մտաբերել: Բացադիկ դեպք էին համարվում բողոքականները և զինվորական տարիքում գտնվողները: Տեղահանության հրամանը հասել է հուլիսի 21-ին, սակայն չեմ հիշում, թե երրվանդից է սկսել գործադրվել: Օգոստոսի 6-ին Յոզեֆատ էի գնացել: Կարծեմ՝ վերադարձիս արդեն ավարտվել էր:

Նախագահ- Քանի ընտանիքից և առավելագույնը՝ քանի բնակչից էին բաղկացած լինում տեղահանվածների քարավանները:

Ձեմալ բեյ- Զգիտեմ, թե քարավանները քանի հոգուց են բաղկացած եղի: Ցուցակները կազմվում էին ժանդարմի կողմից:

Նախագահ- Պետք է որ իմանաք, թե քանի ընտանիք է ուղարկվել:

ԶԵՄԱԼ բԵյ- ԺանԴարմԱ էՐ Կազմում: ԶԵՐ Խոնարհ ծառան
տեղյակ չէ:

Նախագահ- Ո՞ր ճանապարհներով էիք ուղարկում: Այսինքն՝ ոստիկանին իրահանգում էիք՝ «Սրանց տվյալ ճանապարհով տվյալ վայրը հասցըթք»:

կողմից, իսկ ժանդարմի կողմից՝ հսկում:

Նախագահ- Ձեզ էր վստահված ամրող ընակչության հողատարածքը, տունը և պատիվը՝ առանց սեղի և հավատքի խտրականության: Տեղահանության ընթացքում այդ ուղղությամբ ինչ նախագուշական միջոցներ ձեռնարկեցիք:

Քեմալ թեյ- Նրանց, ամենայն հավանականությամբ, անվտանգ կերպով են տեղափոխել, էֆենդի:

Նախագահ- Տեղահանության գործին յոզդատցի որոշ անձանց մասնակից դարձրել եք: Եվ եթե դարձրել եք՝ առանձին-առանձին, թե՞ միասին:

Քեմալ թեյ- Այո՛, փաշա՛, մի անգամ 3 հոգու ընդգրկել եմ: Պատճառն էլ բռնություններից զերծ պահելու էր:

Դատախազ- Արդուլլահ անոնը կրող մեկին ժամաշուն եք: Այս գործը անհաջող է:

Քեմալ թեյ- Ձերքակալվածներից է, չ՞ե՞ն, ժամաշուն եմ:

Դատախազ- Բարավանը հսկողներից է եղել: Վայրուն է այս գործը:

Քեմալ թեյ- Այո՛: Միասին են հսկել:

Քեմալ թեյ- Միասին են ուղարկվել, էֆենդի:

Դատախազ- Նրան ինչու՞ են այդ գործի մեջ ներգրավել, եթե կառավարությունը կարգուկանոնն ապահովել էր:

Քեմալ թեյ- Անտեղի երևոյթներից խուսափելու համար:

Դատախազ- Պետական պաշտոնյաների առկայության պայմաններում նրանց ևս ուղարկելը հատուկ նպատակ էր հետապնդում:

Քեմալ թեյ- Ոչ մի հատուկ նպատակ չկա:

Նախագահ- Դե լավ, ասել էիք, թե [քարավանների] պաշտպանությունը կատարվում էր ժամդարմերիայի հրամանատարի միջոցով:

Քեմալ թեյ- Բավականաչափ ժամանակ է անցել. չեմ կարո-

դանում մտաքերել, թե ինչ անհրաժեշտության հիման վրա էր:

Դատախազ- Երբ թեմալ թեյը Յոզդատում էր գտնվում, 331թ. (1915) օգոստոսի 16-ի ամսաթվով մի նամակ է կնքում և ծրարի վրա նշում. «Հոյժ կարևոր է: Տվյալ նամակը պետք է արձանագրվի, ժամանակակից դրա մասնակից կողմից, ապա՝ պետք է բացվի և համատեղ ընթերցվի: Անհրաժեշտ է գործել՝ [նամակում] նշված հայրենասիրական մղումներին համապատասխան»: Նամակում հրահանգվում է հայերի գոյքը պահել Օսման փաշա դերվիշների մենաստանում և դուռը կնքել:

Քեմալ թեյ- Ձեր խոնարի ծառայի գրությունը չէ: Բնականաբար, չի էլ գրի նման բան:

Նախագահ- Իսկ վրայի կնիքը:

Քեմալ թեյ- Իմը չէ: Զկարողացա նոյնիսկ հասկանալ, թե որ գրասենյակի կնիքն է:

Նախագահ- Այս կապակցությամբ ի պաշտպանություն Ձեզ ինչ կարող եք ասել:

Քեմալ թեյ- Իմ գրած փաստաթղթում, ընդհակառակը, դրանք պահպանելու հրահանգ էի տվել:

Նախագահ- Ժամդարմերիայի սերժանտ Շյուլքուին Ձեր ստորագրությամբ մի գրություն է ուղարկվել, որում գրել եք, որ նեցուկ լինեն պատասխանատու քարտուղարներին: Նման իրավասություն ունեիք:

Քեմալ թեյ- Չեմ կարողանում իիշել, թե ինչ անհրաժեշտության հիման վրա է եղել:

Նախագահ- Այդ մարդիկ որևէ առնչություն ունեցեն են Լքված գոյքի հանձնաժողովի հետ:

Քեմալ թեյ- Հավանաբար:

Նախագահ- Ծանոթացնել եք այդ անձանց բնութագրին:

Ըեմալ բեյ- Ո'չ:

Նախագահ Ինչպես եք պաշտոնում նշանակել այն անձանց, որոնց բնութագրերին ծանոթ չեք եղել:

Ըեմալ բեյ- Հավանաբար նրանց համար երաշխավորել էին:

Նախագահ- Հետաքննիչ հանձնաժողովին Ձեր տված ցուցմունքների համաձայն՝ տեղահանությանը վերաբերող փաստաթղթերի մի մասը կարդալուց հետո այրելու հրաման է եղել, իսկ մնացածը որտեղ է:

Ըեմալ բեյ- Բոլորն էլ պահպանվել են, էֆենդի': Ճիշտն ասած՝ այդ օրը շատ հոգնած էի, [ճանապարհին] ութսուն հոգով մի վագոնում էինք: Եվ քանի որ քոնս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:

Դատախազ- Ես, Հետաքննիչ հանձնաժողովի անդամ լինելով, հայտնում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը. 3-4 ժամ մտածել է, հետո՝ գրել:

Ըեմալ բեյ- Դուք այնտեղ չեիք, էֆենդի': Խմիջիալոց, կառավարությունը տեղահանության հրամանը նոյն կերպ էր հայտնել Օսմանյան կայսրության բոլոր քասարաններին (գյուղաքաղաքներին) և վիլայեթներին (նահանգներին): Եթե նման իրահանգ ստացված լիներ, մյուս շրջաններում ևս կարելի էր այդ ուղղությամբ հետաքննություն կատարել, սակայն նման իրահանգ ո՞չ եղել է, ո՞չ էլ ստացել եմ:

Նախագահ- Յոզդատի մյութին Ձեզ խրատել է, իսկ դուք նրան ասել եք. «Դու կառավարությունից բարեգո՞թ ես»:

Ըեմալ բեյ- Դա եղել է ոչ թե Յոզդատի, այլ՝ Բողազլյանի մյութին: Մենք միասին էինք գինեկոմիսարիատում: Նման բան չի եղել, այնտեղ, մեզնից բացի, այլ անձինք էլ էին ներկա:

Նախագահ- Ինչ եք արել տեղահանության համար:

Ըեմալ բեյ- Ոչինչ էլ չեմ արել:

Նախագահ (դատական կատարածություն)- Ըեմալ բեյին տարեք, թող գա թեփիկ բեյը:

Նախագահ (Թեփիկ բեյին)- Տեղահանությանը ենթակա անձանց տարագրելու հանգամանքների վերաբերյալ որևէ հրաման ստացել ես և եթե ստացել ես, ապա այն բանավոր էնդել, թե գրավոր:

Թեփիկ բեյ- Տեղահանության մասին հրամանը տվել է կառավարությունը, ինձ գրանցամատյաններ են տվել: Ուղարկել եմ երկու քարավան. մեկը՝ Սվաս, մյուսը՝ Հալեպ: Հրամանները ստացել եմ գրավոր:

Նախագահ- Տեղահանվածներին առանձին քարավաններով էիր ուղարկում, թե միասին: Անվտանգության համար քարավաններին քանի ժամանակ էիր կցում: Դուք նրանց հետ եք եղել: Ինչ եք ձեռնարկել սննդի ուղղությամբ: Ինչ քանակությամբ իրեք էիր թույլ տալիս, որ իրենց հետ վերցնեն:

Թեփիկ բեյ- Ուղարկել եմ քարավան առ քարավան, նրանց անվտանգության համար ժամանակ եմ նշանակել՝ ըստ տարագրավածների քանակի: Ուղեկցել եմ Սվաս գնացող քարավանը: Կենտրոնից 4 ժամ հեռանալուց հետո մութասարրիֆ Զեմալ բեյից վերադարձի և քարավանը Զևադ բեյին հանձնելու հրահանգ եմ ստացել, որի հիման վրա կես ճանապարհից վերադարձել եմ: Ապահովել եմ նրանց հանգիստը՝ բոլոր առումներով:

Նախագահ- Ըեմալ բեյն ասում է, թե տեղահանության ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրով գրադպում էր

Ժանդարմերիայի հրամանատարը: Ինչ կասեք: 071 - ժարասխայ

Թևֆիկ բեյ- Ինչպես: Եթե կառավարությունը միջոցներ չէր տրամադրում, ես ինչ կարող էի ծեռնարկել, իմ գրպանից միջոցներ հատկացնեի: Դրա մասին պետք է կառավարությունը հոգար:

Նախագահ- Դուք պետական պաշտոնյա չեք:

Թևֆիկ բեյ- Իհարկե պետական պաշտոնյա եմ:

Նախագահ- Տեղյակ չէ՞ք, որ բնակչության շարքերում չուներում կային:

Թևֆիկ բեյ- Ինչ իմանամ, էֆենդի': Մարդկային պարտք կատարելով՝ ստիպված էի նրանց կերակրել, այդպես էլ վարվեցի:

Նախագահ- Եթե մարդկային պարտքը կատարելու փոխարեն զեր պաշտոնական պարտականությունները կատարեիք, ավելի լավ չէ՞ր լինի:

Թևֆիկ բեյ- Մտքովս չանցավ դրամ պահանջեմ:

Նախագահ- Ճանապարհին քարավանը լեյտենանտին հանձնելիս վկայագիր վերցրել եմ:

Թևֆիկ բեյ- Չեմ մտաբերում, թերևս վերցրել եմ:

Նախագահ- Զեր կողմից մինչև թաշփընար ուղարկված քարավանում որևէ դեպք արձանագրվել է:

Թևֆիկ բեյ- Ո՛չ, էֆենդի', չի արձանագրվել:

Այս ցուցմունքները տալուց հետո Թևֆիկ բեյը դուրս տարվեց. բերվեց Ֆեյյազ բեյը:

Նախագահ (Ֆեյյազ բեյին)- Յոզդատում, վաքըների վարիչից բացի, այլ պաշտոն ունեցեմ ես:

Ֆեյյազ բեյ- Ո՛չ: Պայման մեջնահանձնությունը հաջողակ է առնելու համար:

Նախագահ- Զեզ նշանակել են տեղահանության առնչվող գործերով զբաղվելու:

Ֆեյյազ բեյ- Ո՛չ: Պայման մեջնահանձնությունը հաջողակ է առնելու համար:

Նախագահ-Ասում են, թե նախագահել ես Յոզդատին վերաբերու գործերը. ինչ բնույթի էին դրանք:

Ֆեյյազ բեյ- Զեր խոնարի ծառան այդ կազմակերպության հետ առնչություն չի ունեցել:

Նախագահ- Կարող ես ներկայացնել դա հաստատող վկաներ:

Ֆեյյազ բեյ-Այո՛, էֆենդի': (Մի քանի անձանց անուններ է տալիս):

Նախագահ- Ասում են նաև, թե այն մատանին, որն այժմ կրում են, ձեռք ես բերել տեղահանության ժամանակ:

Ֆեյյազ բեյ -Այն գնել եմ աճուրդում 2600 դուրուշով: Դա հաստատող վկաներ էլ կարող եմ բերել:

Նախագահ- Ընդգրկված եղել ես Լքված գույքի հանձնաժողովի կազմում:

Ֆեյյազ բեյ- Այո՛, այնտեղ վճարովի աշխատել եմ:

Այդ պահին բերվեցին նաև Թևֆիկ և Քեմալ բեյերը:

Նախագահ (Քեմալ բեյին)- Տեղահանության խնդիրը վերաբերում էր ժանդարմերիայի հրամանատարությանը: Թևֆիկ բեյը հայտնեց, թե վկայագիր է վերցրել:

Քեմալ բեյ- Ո՛չ, ես տայիս էի ստացված հրամանը, իսկ

նրանք՝ կատարում: (Ընթերցվեցին հարցաքննության ընթացքում Զեմալ բեյին տրված այն հարցերը, որոնց նա պատասխանել էր առանձին):

Դատախազը, երկու կողմերի ձևավորմանը վերաբերող քննարկումները ներկայացնելով, հայտնեց, որ զինվորական-քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ քաղիայցվորները չեն կարող դատարանում ներկա գտնվել: Քաղիայցվորը, խնդիրը երկար քննարկելուց հետո, փորձեց հիմնավորել բոլոր դեպքերում իր ներկայության անհրաժեշտությունը և կոչ արեց չխախտել նախկին ռազմական ատյանի որոշումը:

Այնժամ դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ խնդիրը քննարկելու նպատակով: 1 ժամ, 10 րոպե տևողությամբ քննարկումից հետո դատարանի կազմը վերադարձավ դահլիճ: Ընդունված վճռի կարծ բովանդակությունը կայանում էր հետևյալում. ծայների մեծամասնությամբ կայացված որոշման համաձայն՝ հասարակական հայցվորը չպետք է ներկա գտնվի դատարանությանը:

Քաղիայցվոր Լևոն Ռեմզի Էֆենդիին լրեց դահլիճը:

Այնուհետև կրկին դատարան կանչվեց Օժենի անունը կրող վկան, որին նախագահը խնդրեց կրկնել նախկին ռազմական ատյանին տված իր ցուցմունքները: Օժենին իր վկայությունները կրկնելիս հայտարարեց. «Այս անգամ ավելի մանրամասն եմ ներկայացնելու, քանի որ նախկին դատարանում արդարադատություն չէի տեսնում»: Վկան ցուցմունքներ տվեց առ այն, որ առավոտյան, երբ ոստիկանը վկայություն տալու համար իրեն դատարանի ծանուցագիր էր բերել, չափազանց գեղեցիկ է համարել իր խոսվածքը և հանդես է եկել իրեն մի մահմեդականի տալու առաջարկով:

Դատախազը նրան հարցեց վերոհիշյալ ոստիկանի համա-

րը: Պարզվեց, որ 2021 համարովն է եղել:

Ֆեյյազ բեյը. Օժենիի ցուցմունքը բացարձակ զրպարտություն համարելով, հանդես եկավ նրա նախկին ցուցմունքն ընթերցելու պահանջով: Այն ընթերցվեց:

Նախագահ (Թևֆիկ բեյին)- Տեղահանվածների ձեռքերը կապում էին:

Թևֆիկ բեյ-Այր', Զեմալ բեյի պաշտոնավարման ժամանակ ապահովության համար մինչև քասարայից (գյուղաքաղաքից) դուրս գալը կապած էինք տանում:

Դատախազ- Հարկադրված եմ հերքել Զեմալ բեյի պես պատվարժան մի պետական պաշտոնյայի վերագրվող հանցանքը:

Այնուհետև ընթերցվեց Մարի անունը կրող մի կնոջ՝ Կայսերի դատախազության կողմից կատարված հետաքննության ընթացքում տված ցուցմունքը, որն ուղղված էր մեղադրյալների դեմ: Նիստի ավարտին Զեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ բեյերը հերքեցին վկայությունը՝ նամակի բովանդակությունը ամբողջությամբ զրպարտություն համարելով:

Քանի որ արդեն ժամը 17-ն անց էր 30 րոպե, որոշվեց դատը շարունակել առաջիկա չորեքշաբթի օրը՝ ժամը 10-ին: Դատարանի կազմը լրեց դահլիճը:

25-ը մարտի, 1919, «Ալեմդար»

Տեղահանության դատավարությունները. Յոզդատ

Երեկ ժամը 13:50-ին ռազմական արտակարգ ատյանում սկսվեց Յոզդատի տեղահանության և կոտորածներին վերաբերող

դատական նիստը: Դատարանի կազմում ընդգրկված էին հայտնի անձինք: Մեղադրյալներ Թևֆիկ և Ֆեյյազ բեյերը կրկին դուրս բերվեցին, և դահլիճում մնաց Թեմալ բեյը: Ակսվեց հետևյալ հարցաքննությունը:

Նախագահ- Բողազլյանի կազայի (գավառի) տեղահանությունը Դուք եք կատարել, թե՞ կատարել եք տվել:

Թեմալ բեյ- Տեղահանությունը ես չեմ կատարել. այն դեկավարվում էր ժամդարմերիայի հրամանատարության կողմից:

Նախագահ- Ո՞վ էր ժամդարմերիայի հրամանատարը:

Թեմալ բեյ- Լեյտենանտ Հովուսի բեյը:

Նախագահ- Մինչդեռ Դուք ամրող կազայի դեկավարն էիք: Ինչո՞ւ է նահիեի տեղահանության գործը հանձնարարվել նահիեի դեկավարությանը:

Թեմալ բեյ- Ես հրամանը ստանում էի կենտրոնից և նոյնությամբ հաղորդում ենթականերիս:

Նախագահ- Նահիեի տեղահանության համար ուղարկել էիք ամգրագետ մի սերժանտի: Ինչպես կարող էր այդքան կարևոր առաջադրանքը վստահվել նման մեկին:

Թեմալ բեյ- Հավանաբար նահիեի կառավարչի հետ միասին են կատարել, էֆենդի:

Նախագահ- Ինչ միջոցներ եք ձեռնարկել տեղահանվածներին խաղաղ կերպով տեղափոխելու ուղղությամբ:

Թեմալ բեյ- Այդ կապակցությամբ ձեռնարկված որևէ միջոցառում չի եղել:

Նախագահ- Ինչո՞ւ էին տեղահանվածների ձեռքերը կապ-

ված. նրանց չնք տեսել:

Թեմալ բեյ- Կապված լինել-չլինելու մասին տեղյակ չեմ եղել և չեմ տեսել:

Նախագահ- Լքված գույքի վերաբերյալ ընդունված օրենքում լրված իրերը խուզարկելու մասին որևէ հոդված եղել է:

Թեմալ բեյ- Չեմ հիշում: Ես գործել եմ կառավարության կողմից տրված հրամանին համապատասխան:

Դատախազ- Բաթթալ գյուղում լրված իրերը խուզարկելու հրաման տրվել է:

Թեմալ բեյ- Ո՛չ, էֆենդի՝, Ձեր խոնարի ծառան նման հրաման չի արձակել:

Նախագահ- Ինչ ձեռնարկեցիք տեղահանության ընթացքում կատարված որոշ անօրինականությունների դեմ:

Թեմալ բեյ- Հանցագործներին իսկոյն հանձնեցի ուազմական ատյանին:

Նախագահ- Քարավանները մաս-մաս ուղարկելով՝ ինչո՞ւ ոչինչ ձեռնարկեցիք, որպեսզի նրանք թշվառության չենթարկվեն և անվտանգ կերպով տեղ հասնեն:

Թեմալ բեյ- Արվել է հնարավոր ամեն ինչ, սակայն բոլոր քարավաններին փոխադրամիջոցներ տրամադրելն անիրական էր:

(Այնուհետև Թեմալ բեյը դահլիճից դուրս եկավ. ներս բերվեց Թևֆիկ բեյը):

Նախագահ (Թևֆիկ բեյին)- Գաղթականների ձեռքերը կապված էին, թե՞ ոչ: Այդ ուղղությամբ հետաքննություն չնք կատարել:

Թեժիկ բեյ- Քանի որ մոլասարրիֆն այնտեղ էր, հետաքննությունն անհրաժեշտ չհամարեցի:

Նախագահ- Չճը նկատել, որ բռնագաղթեցվածների քարավանները ձանապարհին վտանգների ենթարկվեն:

Թեժիկ բեյ- Փոխադրման ընթացքում չարաշահումներ կատարած զինվորներին պատժել եմ՝ յուրաքանչյուրին գավազանի 40 հարվածով և հանձնել ուղամական ատյանին:

Նախագահ- Այդ ընթացքում պատվիրակ Նեջարի բեյը բնակվում էր Ցողողատում՝, թե՞ չէր այցելում կենտրոնին ենթակա գավառները: Կամ տեղահանության ընթացքում այնտեղ գտնվել է: Դուք Նեջարի բեյի հետ հաղորդակցության մեջ եղել եք:

Թեժիկ բեյ- Նեջարի բեյն Անկարայի լիազոր ներկայացուցիչն էր: Այստեղ մեկ անգամ է եկել, վալիի հետ: Նրան «Բարի գալուստ» մաղթեցի:

Նախագահ- Սուլեյմանիում³⁹⁶ ագարակ եք գնել: Ինչպես ունեցաք նման հնարավորություն: Գուցե ժառանգությամբ ստացված հարստություն ունեիք:

Թեժիկ բեյ- Ծննդավայրս Բոյաբարձ³⁹⁷: Է: Այդ կողմերում հորիցս մնացած մեծաքանակ անշարժ գույք ունեմ: Հետևաբար՝ դրա կարիքը չունեի:

(Թեժիկ բեյը դուրս է տարվում, բերվում է Ֆեյյազ բեյը):

Նախագահ (Ֆեյյազ բեյին)- Զնայած պետական պաշտոնյաների կողմից լրված գույքը չյուրացնելուն վերաբերող Ներքին գործերի նախարարության կողմից տարածած շրջաբերականին՝ Դուք հա-

կառակ կերպ գործեցիք: Ինչո՞ւ:

Ֆեյյազ բեյ- Նման շրջաբերականի մասին տեղյակ չէ:

Նախագահ- Պատվիրակ Նեջարի բեյին ծանաչում եք, նրա հետ առնչություն ունենք:

Ֆեյյազ բեյ- Նրան գիտեմ, սակայն չեմ առնչվում:

Նախագահ- Տեսել եք, որ գաղթականների ծեռքերը կապված լինեն:

Ֆեյյազ բեյ- Ո՛չ, չեմ տեսել:

(Թեժիկ և Ջեմալ բեյերը կրկին դաիլիճ բերվեցին): **Նախագահ՝** դատական կատարածուին տված հրամանով վկաներից դաիլիճ բերվեց Հալիլ Ուջայի բեյը: Նախագահը նրանից պահանջեց կրկնել նախկին ցուցմունքը: Վերոհիշյալի վկայություններից հետո դատարանի դաիլիճ հրավիրվեց մադմուազել Օժենիի զարմուիին՝ մադմուազել Բեատրիսը: Նախագահը վերջինիս դիմեց հետևյալ խոսքերով.

-Ձեզ այստեղ ենք կանչել՝ ճշմարտությունը բացահայտելու նպատակով: Մեզ նորից պատմեք այն ամենը, ինչ ասել եք օրիորդ Օժենիին:

Բեատրիսը հանդես եկավ Ֆեյյազ բեյին ուղղված որոշ ցուցմունքներով: Ֆեյյազ բեյը փորձեց հերքել այդ վկայությունները: Այնուհետև նախագահը դատական կատարածուին հանձնարարեց առերեսում կատարել Օժենի և 2021 համարով ոստիկանի միջև:

Դատարան ավարտվեց ժամը 12:30-ին: Շարունակվելու է հաջորդ օրը ժամը 14:00-ին:

27-ը մարտի, 1919, «Ալեմդար»

³⁹⁶ Սուլեյմանին գյուղը գտնվում է ներկայիս Բուրսա նահանգի Յենիշեհիր գավառում:

³⁹⁷ Գավառ Սինոպ նահանգում:

Տեղահանության և կոտորածների դատավարությունը

Երեկ կեսօրից հետո՝ ժամը 14:25-ից սկսած, Նազղմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Յոզդատի տեղահանության և կոտորածների դատավարությունը։ Դատախազի պաշտոնում էր տեղակալներից Քուղրեթովակ քեյը։ Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո Ֆեյազ և Թեֆիկ քեյերը նախկինի պես դուրս տարվեցին. սկսվեց Զեմալ քեյի առանձին հարցաքննությունը։

Նախագահ- Ո՞վ էր Յոզդատի բաժանմունքի ղեկավարը։

Զեմալ քեյ- Ձեր խոնարի ծառայի օրոք Մուստաֆա և Սելամի քեյերն էին։

Նախագահ- Ճիշտն ասա՞ հայերին բնաշնչելու մտադրությունները անձնական, թե մեկ այլ դրդապատճառ ունեին։

Զեմալ քեյ- Քա՞վ լիցի, փաշա', հայերին բնաշնչելու հրահանգ երբեք չեմ տվել։

Նախագահ- Մի՞թե Յոզդատը գործողությունների թատերաբեմից դուրս էր։

Զեմալ քեյ- Ո՛չ, էֆենդի՛:

Նախագահ- Ինչո՞ւ մի խումբ աքսորյալներ բոնագաղթեցվեցին առանց փոխադրամիջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում։

Զեմալ քեյ- Միջոցներ չկային, էֆենդի՛, ես կատարել եմ կառավարության կողմից ստացված հրամանը։ Մահմեդական փախստականներն անգամ մինույն պայմաններում էին։

Նախագահ- Ըստ Ձեզ՝ ոչ մի չարագործություն չի եղել։

Զեմալ քեյ-Ո՛չ, ըստ իս՝ բացարձակապես չի եղել։

Նախագահ-Այդքան վկաների ցուցմունքները. նոյնիսկ մութասարդիք Զեմալ քեյի՝ Ձեզ վերաբերող վկայությունը խաբեություն է։

Զեմալ քեյ- Էֆենդի՛, վկաների բոլոր ցուցմունքներն էլ սուտ են։ Մութասարդիք Զեմալ քեյն էլ, կարծեմ, ասում էր, որ լսել է և ոչ թե տեսել։

Նախագահ- Զեմալ քեյը Ձեզնից նեղսրտելու առիթ երբնէ ունեցնէլ է։

Զեմալ քեյ- Այո՛, էֆենդի՛։ Մի արձանագրության կապակցությամբ մեր միջև մի փոքր գժտություն եղավ։ Նա մի բան էր առաջարկել, որը ես համարեցի Պետական խորհրդի որոշմանը հակասող և արձանագրությունը չստորագրեցի։

Զեմալ քեյը դուրս եկավ, ներս բերվեց Թեֆիկ քեյը։ Կրկին ընթերցվեց լուծարված ուղմական ատյանին նրա ներկայացրած զեկուցագիրը, որում նկարագրվում էին հայ ավազակների կողմից կատարված մի շարք չարագործություններ։

Նախագահ- Ձեզ հայերին արմատախիլ անելու հրաման է տրվել։ Ձեր գեկուցագրում նման բան էր գրված։

Թեֆիկ քեյ- Ո՛չ, էֆենդի՛, դա ոչ թե հայերին արմատախիլ անելու հրամար էր, այլ՝ չարագործություններ կատարած ավազակներին պատժելու։

Նախագահ- Քանի՞ հոգի էին այդ ավազակները, ումից էին բաղկացած ավազակախմբերը, և որք'ան էր ձեր թիվը։

Թեֆիկ քեյ- Այդ ավազակները տարբեր թվով էին, մոտավո-

րապես 300-800 հոգի: Կազմված էին նահանգներում ապրող հայերից: Այդ ավազակները շարունակում են գոյություն ունենալ 330 թվականից (1914) առ այսօր: Մեր ուժերը բավականին մեծաթիվ էին, քանի որ մեզ զորք էր տրամադրվել մյուս կազմներից (գավառներից):

Նախագահ- Ձեր գեկուցագրում նշել էք, թե չարագործությունների հեղինակ ավազակները նույնիսկ թնդանոթ են ունեցել: Դուք տեսնել եք, թե ինչ չափսի էր այն:

Թեմփիկ բեյ- Էֆենդի՛, գեկուցագրում նշված «թնդանոթը» թերևս վրիպակ է: Պետք է գրվեր «գնդացիր»: Թնդանոթին առնչվող խնդիրը տեղի է ունեցել տեղահանությունից առաջ թերգիլիում:

Թեմփիկ բեյը մի քանի հարցերի էլ պատասխանեց, որից հետո դաիլիմ թերվեցին նաև թեմալ և Ֆեյազ բեյերը: Ճշմարտությունը բացահայտելու նպատակով դատարան կանչվեց անգլիական գնդապետ Մեհմեդ բեյը՝ Վկայություն տալու համար: Անձնական տվյալները ներկայացնելուց հետո նրան դիմեցին Յոզդատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող հարցերով: Վերոհիշյալի կողմից տրված ցուցմունքների շնորհիվ պարզվեց, որ ինքն անձամբ տեսել է, թե ինչպիս են կացիններով և դաշույններով հայերին կոտորում, սակայն այդ պահին, ըստ նրա վկայության, մեղադրյալները ներկա չեն եղել³⁹⁸: Այդ ժամանակ թեմալ բեյը որոշ առարկություններ հայտնեց Մեհմեդ բեյի վկայությունների առնչությամբ: Մասնավորապես նշեց, թե բացարձակապես սխալ է տեղահանության՝ փետրվարին իրականացված լինելու մասին ցուցմունքը: Այնուհետև, առաջին անգամ ի նպաստ մեղադրյալների ցուցմունք տալու նպատակով, դատարան կանչվեց Սկյուտարի մութասարրիֆ Մեհմեդ Ալի բեյը, որը երդվելուց

³⁹⁸ Ըստ «Մեմեքեթ» օրաթերթի՝ գնդապետ Մեհմեդ վկայել է, թե հայերին կոտորել են Քարարուշ լեռնահովտում, տես՝ Kartl ve Tebcir Da'vâsi, "Memleket", 28 Mart 1919.

հետո հանդես եկավ մի շարք տեղեկություններով: Վերոհիշյալը հայտնեց, որ թեև ինքը տեղահանությունից մեկ ու կես տարի հետո է մեծարգության հետ Յոզդատ գնացել, սակայն երբեք չի լսել, թե Ֆեյազ բեյը որևէ առնչություն ունեցած լինի տեղահանությանը: Նա, ըստ վկայի ցուցմունքի, բարեխիղծ մի մարդ էր և չէր կարող նման բան անել, Ֆեյազ բեյը երբեք հարբեցող չի եղել և չի հանդիսացել Միություն և առաջադիմություն կուսակցության համախոհներից: Այս ցուցմունքներից հետո նախագահը նրան հարցեր տվեց թեմալ բեյի, ինչպես նաև՝ տեղահանության իրականացման հանգամանքների վերաբերյալ: Մեհմեդ Ալի բեյը հայտնեց, թե իրականում Գյովլեր կոչվող վայրում գաղթականներից շատ քերն են ոչնչացվել, սակայն դրան պաշտոնյաները և տեղի բնակչությունը չին կարող մասնակցած լինել, ծայրահեղ դեպքում դա կարող էր պատահել կառավարության գաղտնի իրամանի հիման վրա: Այս ցուցմունքները տալուց հետո Մեհմեդ Ալի բեյը դուքս եկավ: Դաիլիմ մտավ Անդրանիկը, որը հանդես եկավ մեղարյալների դեմ ուղղված որոշ ցուցմունքներով, որից հետո թեմալ, բեյը ոտքի կանգնելով, ասաց. «Մեծարգության վաշա, Ձեր խոնարի ծառան բացատրություն պահանջելու միջոցով կապացուցի, որ մինչ այժմ վկայություն տալու նպատակով եկած հայերի խոսքերը ամբողջովին զրպարտություններ են և հորինված են»: Այս խոսքերից հետո թեմալ բեյը մի քանի հարց տվեց Անդրանիկին, վերջինս տվեց հակընդիմ պատասխաններ: Այնուհետև դատապաշտպան Սալահեդին բեյը որոշ հարցեր տվեց սպանությունների մասին, որից հետո դատարան կանչվեց վկաներից Ազնիվը: Նրա վկայությունները ևս ամբողջովին ուղղված էին մեղադրյալների դեմ և առավել սուր բնույթ էին կրում: Վկաների ցուցմունքներից հետո մեղադրյալներն աշխատեցին հերքել վկաների խոսքերը՝ նախկինում արդեն իսկ արված որոշ հայտարարություններով և վկաների դեմ բա-

ցարկ հայտնեցին: Այնուհետև վկայության համար ներկայացավ Յոզդատի հաշվապահ Վեհրի բեյը: Վերջինիս հարցեր տվեցին նրա պաշտոնական պարտականությունների վերաբերյալ՝ ի նկատի ունենալով ժամանակին նրա՝ Լքված գույքի հանձնաժողովի անդամ լինելու հանգամանքը: Հարի բեյը պատասխանեց՝ ներկայացնելով որոշ փաստաթղթեր: Դատապաշտպան Հյուսին Համի բեյի պահանջի հիման վրա առերեսում կատարվեց նախապես հեռացված վկա Ազնիվի և Վեհրի բեյի միջև: Ժամանակի սղության պատճառով նիստն ավարտվեց: Շարունակվելու է շարաթ օրը:

28-ը մարտի, 1919, «Ալեմդար»

Յոզդատի դատավարության երեկով նիստը

Երեկ Յոզդատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող դատական նիստն սկսվեց ժամը 14:00-ին: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո դատարան կանչվեց վկաներից Յոզդատի նախկին հաշվապահ Վեհրի բեյը, որի ցուցմունքները հինգշաբթի օրն անվարտ էին մնացել՝ ժամանակի սղության պատճառով: Դատապաշտպաններից Հայրի բեյը բացատրությունները պահանջեց՝ աժուրդի միջոցով Ֆեյյազ բեյի՝ Լքված գույքին պատկանած մատանին գնած լինելու հարցի առնչությամբ: Վեհրի բեյը հայտնեց, որ մատանու արժեքը եղել է 25 լիրա, իսկ գաղթականներից վերցված դրամը՝ մետաղյա: Այնուհետև վկայի կարգավիճակով դատարան կանչվեց Շյուքրու Զառւշը: Ի պատասխան նախագահի այն հարցին, թե ինքը մեղադրյալների հետ որևէ համագործակցության մեջ եղել է, թե ոչ, Շյուքրու Զառւշը բացասական պատասխան տվեց: Այնժամ նախագահն ասաց. «Այդ դեպքում թեզ չենք կարող

մյուս ընկերներիդ հետ դատել»: Շյուքրու Զառւշին դրուս տարան:

Այնուհետև Թեմալ բեյը, ոտքի կանգնելով, մանրամասն կերպով ընթերցեց մի խնդրագիր՝ իրեն պաշտպանելու նպատակով հանդես եկող բոլոր վկաների՝ կանոնավոր կերպով խոսք ասելու վերաբերյալ, և այդ խնդրագիրը հանձնեց նախագահին: Իսկ Թեմալ բեյի դատապաշտպան Սալահեդդին բեյը միջնորդեց հետաձգել այդ խնդրագրի քննարկումը՝ մինչև պաշտպանող կողմի՝ այդ կապակցությամբ հանդես գալը, և արդարադատ դատարանից խնդրեց սրա հետ միասին ուշադրության արժանացնել նաև Թեմալ բեյի՝ նախկին ուազմական ատյանին ներկայացրած խնդրագիրը: Հյուսին Համի բեյն էլ նշեց, որ թեև դատախազի ներկայացրած վկաներից մի քանիսը շարժվում են վրեժիսնորության, թշնամության և ազգայնամոլության զգացմունքներով, բայց և այնպես Թեմալ բեյը որևէ ասելիք չի կարող ունենալ Յոզդատի մյուֆթիի և նախկին մոլասարրիֆ Զեմալ բեյի տված ցուցմունքների դեմ, և որ ինքն էլ Թեմալ բեյին լավ է ճանաչում, տեղյակ է, որ նա լավ կրթություն և դաստիարակություն է ստացել, վշտանում է, երբ տեսնում է, որ վերջինս, դժբախտաբար, այստեղ է գտնվում մեղադրյալի կարգավիճակով, և սակայն հանցավոր եղող մեկի օգտին եթե հազարավոր վկաներ էլ ունկնդրության արժանացվեն, միևնույն է՝ դրանից ոչ մի օգուտ չի լինի, այդ պատճառով էլ պահանջեց, որ այդ վկաներին չի արցաքննեն: Թեմալի դատապաշտպանները երկար-բարակ պաշտպանական խոսք ասելուց հետո հանդես եկան պաշտպան վկաներին հարցաքննելու պահանջով: Այդ ընթացքում Թեմալ բեյն աշխատեց հերքել դատախազի տեղակալի կողմից ներկայացված՝ Յոզդատի նախկին մոլասարրիֆ Զեմալ բեյի վերաբերյալ ցուցմունքը: Դատախազի տեղակալը ոտքի ելավ և, մանրամասն հայտարարություններով հանդես գալով, կրկին պահանջեց չի արցաքննել պաշտպանող կողմի ներկայացրած վկա-

Ներին: Դատապաշտպան Հյուսեին թեյը, դարձյալ որոշ ազդեցիկ բաներ ասելով, խնդրեց վերոհիշյալ վկաների հարցաքննությունը: Ժամը 15:00-ին դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ սույն հարցը քննարկելու նպատակով: Մի քանի ժամ տևած քննարկումներից հետո դատարանի կազմը վերադարձավ դատական դահլիճ: Դատական նիստի քարտուղարն ընթերցեց միաձայն ընդունված որոշումը, ըստ որի՝ չնայած նախկին՝ լուծարված ու ազմական ատյանի այդ կապակցությամբ ընդունված որոշմանը՝ մեղադրյալները դեռևս չեն հոգացել վկաների ծանապարհային ճախսերը, որի պատճառով դատարանը վճռում է իրաժարվել Ստամբուլում չընակվող վկաներին դատակոչելուց, և որ վկայության համար դատարան են հրավիրվելու միայն Ստամբուլի բնակիչները:

Նիստը հետաձգվեց մինչ երկուշաբթի՝ ժամը 10:00-ը:

30-ը մարտի, 1919, «Ալեմար»

Տեղահանությանը և կոտորածներին վերաբերող խնդիրները.

Յողջատի դատավարության երեկով նիստը

Երեկ՝ ժամը 11:15-ին, Նազըմ փաշայի նախագահությամբ վերսկսվեց Յողջատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող դատավարությունը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո նախագահի հրամանով Ֆեյյազ և Թեմալ թեյերը դուրս եկան, մնաց միայն Թեֆիկ թեյը:

Նախագահ- Տեղահանության ժամանակ քանի ժամդարմ կար Յողջատի ու ազմական բրիգադի մեջ:

Թեֆիկ թեյ- Գումարտակի անունով կար 191 հոգի:

Նախագահ- Երբ է սկսվել տեղահանությունը:

Թեֆիկ թեյ - 331 (1915) թվականին:

Նախագահ- Տեղահանությունն իրականացնելու նպատակով ժամդարմ ավելացրել եք:

Թեֆիկ թեյ- Ո՞չ, էֆենդի:

Այդ պահին դահլիճ թերվեցին նաև Թեմալ և Ֆեյյազ թեյերը:

Նախագահ (Թեմալ թեյին)- Երբ իշխանության եկաք, որքան էր ժամդարմների թիվը ու ազմական բրիգադում:

Թեմալ թեյ- Չգիտեմ:

Նախագահ- Միիս անունով գումարտակ եղել է:

Թեմալ թեյ- Հավանաբար եղել է, չգիտեմ:

Այնուհետև դատարան կանչվեցին պաշտպանող կողմի ներկայացրած վկաները: Ոչ մի վկա չէր ներկայացել՝ Թեֆիկ թեյին պաշտպանելու նպատակով եկած Բահրի թեյ անվամբ մի առևտրականից բացի: Բահրի թեյը երդվելուց հետո հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. իրեն հայտնել են, թե տեղահանության ընթացքում սպանության դեպքեր էլ են գրանցվել, ըստ խոսակցությունների՝ տեղահանությունն իրականացվում էր մե՛րթ ոստիկանության, մե՛րթ ժամդարմներիայի կողմից:

Նախագահը վկային հարցրեց, թե արդյոք նա որևէ տեղեկություն ունի Ֆեյյազ թեյի մասին: Վկան հայտնեց իր վստահությունը՝ Ֆեյյազ թեյի պատվարժան անձնավորություն լինելու հանդեպ: Ըստ վկայի՝ Ֆեյյազ թեյը չէր կարող մասնակից լինել նմանատիպ գործերի: Թեմալ թեյը, ոտքի ելնելով, նախագահին դիմեց հետևյալ խոսքերով:

-Մեծարգո՛ փաշա, թեև Բահրի բեյը իմ վկան չէ, այնուամենայնիվ կիսնդրեի նրան հարցնել, թե իրեն որևէ խոսակցություն հասնէ առ այն, թե ես Գյովլերում եմ եղել:

Վկան հայտնեց, թե իրեն նման լուրեր չեն հասել:

Դատապաշտպան Սաադեղդին Ֆերիդ բեյ- Էֆենդի', իմ պաշտպանյալ Ֆեյյազ բեյը եղել է արդյոք Միություն և առաջադիմություն կուսակցության համախոհներից:

Վկա- 328 թ. (1912) անդամագրվել է, սակայն հետագայում՝ նախքան տեղահանությունը, վերոհիշյալը խօել է իր կապերը:

Նախագահ- Ինչո՞ւ եք վկայից հարցնում Միություն և առաջադիմություն կուսակցությանն անդամագրվելու մասին:

Սաադեղդին Ֆերիդ բեյ- Այստեղ իրավիրված բոլոր վկանները հայտնել էին, թե իմ պաշտպանյալը եղել է Միություն և առաջադիմություն կուսակցության անդամներից, և որ ակտիվորեն մասնակցել է բոլոր գործերին: Այդ պատճառով անհրաժեշտ համարեցինք նման հարց ուղղել:

Այդ պահին նախագահը հայտնեց, թե ուզմական ատյանի հարցաքննությունն ավարտվել է: Պաշտպան փաստաբանը հիշեցրեց ցուցակն ուսումնասիրելու խնդրանքի մասին:

Նախագահ- Մենք դրանք արդեն ուսումնասիրել և կարծիք ենք կազմել: Դատավճռում կնշենք դրանց մասին:

Այդ պահին դահլիճից դուրս գենքի պայթյուն լսվեց, որը համբուխանուր իրարանցման պատճառ եղավ, թեև ունկնդիրների մեծ մասն արդեն պատրաստվում էր դուրս գալ: Երբ պարզվեց, որ պայթյունը միտումնավոր չէր և առաջացել էր մաուզերի ձգանը բաց թողնված լինելու հետևանքով, [դահլիճի] խաղաղությունը վերականգնվեց,

-և նիստը շարունակվեց: Քանի որ դատապաշտպանների կողմից որոշ առարկություններ եղան, դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ: Կես ժամ տևած քննարկումներից հետո դատարանի կազմը վերադարձավ դահլիճ:

Դատական նիստի քարտուղարն ընթերցեց հետևյալ որոշումը. «Ուսումնասիրված փաստաթղթերը դատապաշտպաններին և հաղորդվել են՝ զուտ նրանց կողմից ի նկատի առնվելու նպատակով, իսկ Ֆեյյազ բեյի գործը պիտի քննվի Յոզրատի տեղահանությանը և կոտորածներին մասնակից մյուս հանցակիցների հետ միասին»:

Որոշման ընթերցումից հետո Ֆեյյազ բեյը և դատապաշտպանները դուրս եկան դահլիճից. Եերս բերվեցին թևքիկ և թեմալ բեյերը: Դատախազի տեղակալը, ոտքի կանգնելով, ասաց. «Պահանջում եմ մեղադրյալներին դատել 56-րդ հոդվածի համաձայն»:

Քաղաքացիական-քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածը ծևակերպված էր հետևյալ կերպ. «Եթե Օսմանյան Կայսրության բնակիչներից որևէ մեկը զինված հարձակում է կատարում մեկ ուրիշի դեմ, կամ իրահրում, կամ էլ համարձակվում է որևէ շրջանում գրավման, կողոպուտի, ոչնչացման կամ սպանության գործողություններ կատարել, ինչպես նաև՝ եթե անկարգություններ է իրահրում կամ նման օրինակ է ցույց տալիս մյուսներին, ենթարկվում է մահապատժի»:

Հոդվածի ընթերցումից հետո դատապաշտպանները անհրաժեշտ ժամանակ խնդրեցին՝ պաշտպանական խոսքը նախապարաստելու համար, որին ի պատասխան՝ նախագահն ասաց. «Դատարանի կազմը համակողմանիորեն ուսումնասիրել է այս խնդիրները: Այնուամենայնիվ, որպեսզի չպատճառաբանեք, թե մենք որոշումներ կայացնում՝ առանց ծեր պաշտպանական խոսքն ունկնդիրելու, դատաքննությունը հետաձգում ենք մինչև չորեքշաբթի օրը՝ ժամը

10:00-ը: Կարծում եմ՝ այս ժամանակամիջոցը բավարար կիամարեց»:

Նիստն ավարտվեց ժամը 12:30-ին:

1-ր ապրիլի, 1919, «Այեմդար»

Յոզդատի տեղահանության և կոտորածների դատավարությունը

Յոզդատի նախկին մութասարդիք Ջեմալ բեյի տկարության պատճառով մի քանի օր հետաձգված դատը երեկ Վերսակսկեց՝ իր իսկ պահանջով և բժիշկների թույլտվությամբ, որոնք նրա առողջության մեջ նախորդ օրերի համեմատ բարելավում էին արձանագրել:

Թեմայի և Թեմայի բեյթրի՝ դահլիճ մտնելուց հետո՝ ժամը 15:00-ին, դատարան մտավ Նազըմ փաշայի նախագահության տակ գտնվող ռազմական արտակարգ ատյանի կազմը՝ դատապաշտպանների պաշտպանական խոսքն ունկնդրելու համար։ Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ռեշադ բեյը։ Նախ պաշտպանական խոսք ասաց Թեմայի դատապաշտպան Սալահեղին բեյը։ Հայերի և թուրքերի միջև եղած հարաբերությունների մասին երկար նախարարից հետո, խոսելով Սահմանադրության հոչակման, այն ժամանակվա հարաբերությունների, պատերազմին Օսմանյան Կայսրության ունեցած մասնակցության, պատերազմից բխած անհրաժեշտության հիման վրա կատարված տեղահանության, Օսմանյան Կայսրության՝ պատերազմից պարտված դուրս գալու, նախ և առաջ ժողովրդի ցանկությամբ խորը հետաքննություն կատարելու, այս խնդրի հետ առնչություն ունեցած անձանցից հարցություն ընդամենը մեկի ծերրակալ-

ման, ի վերջո՝ ռազմական արտակարգ ատյանի դատավորների՝ անաշառ դատավճիր ընդունելու հանդեպ իր վստահության, ինչպես նաև՝ բոլոր դատարաններում դատապաշտպաններին խոսքի հնարավորություն տալու մասին (որից ինքը ևս օգտվում է), անցավ հիմնական պաշտպանական խոսքին: Դատապաշտպանը հայտնեց, թե մեղադրող կողմից առավել մանրամասն և մանրազնին խոսքի էր սպասում, այդ պատճառով խորությամբ չէր ուսումնափել հետաքննության շնորհիկ ծեռք բերված նյութերը: 56-րդ հոդվածի մասին տեղեկանալով՝ խիստ զարմացել էր: Դատապաշտպանի համոզմունքով՝ անհրաժեշտ էր փոփոխություն կատարել, չե՞ն որ (56-րդ հոդվածն առնչվում էր) հաշտարար դատարանների՝ նման մեղադրյալների վերաբերյալ որոշում ընդունելուն կամ մեղադրանք հարուցելուն, իսկ տվյալ հանցագործությունները նման բնոյթ չեն կրում: 56-րդ հոդվածի ընթերցումից հետո պարզվեց, որ ամբաստանյալները մեղադրվում են քաղաքական հանցագործություն կատարելու մեջ, մինչդեռ, ըստ դատապաշտպանի, նրանց արարքը քաղաքական հանցագործություն չի եղել, այն կապված է եղել տեղահանության ժամանակ դրամի նկատմամբ ունեցած ազակությունից բխած անփոփոխան հետ: Դատապաշտպանը 56-րդ հոդվածն ընթերցելուց հետո մանրամասն կերպով պարզաբանեց այն: Դատապաշտպանն ընդգծեց, որ թե՛ թեմայի և թե՛ թեկիք բեյերը կոտորածներին երբեք անձամբ չեն մասնակցել, հետևաբար՝ այդ հոդվածով, ըստ դատապաշտպանի, չեն կարող դատվել, դատապաշտպանի համոզմունքով՝ պետք էր սահմանափակվել 55-րդ, 57-րդ և 58-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ կատարման մեջ մասնակիորեն են մեղավոր: Դատապաշտպանի կարծիքով՝ 56-րդ հոդվածի կիրառումն անթույլատրելի է, քանի որ մեղադրյալներն, ըստ էության, մասնակի կերպով են մասնակցություն ունեցել: Դատապաշտպանի խոսքերով՝ այդ հոդվածը չի կարելի կի-

րառել նոյնիսկ մահմեղական բնակչությանը կոտորած հայերի հանդեպ, որովհետև դեպքերը կատարվել են համանման պայմաններում: Դատապաշտպանը նշեց նաև այն, որ թեև սկզբում վճռված էր մեղադրյալներին հանձնել ոչ թե ռազմական, այլ՝ ուրիշ դատական ատյանների, սակայն դատաքննության արագ իրականացումն ապահովելու նպատակով գործի ուսումնասիրումը հանձնարարվեց ռազմական ատյաններին:

Այնուհետև դատապաշտպանն ընդգծեց մեղադրյալների՝ հանցագործությունն անձամբ կատարած չինելու հանգամանքը: Ըստ նրա՝ իրականությանը չեն համապատասխանում իր պաշտպանյալ քեմալ բեյի՝ հանցագործությունն անձամբ կատարած լինելու մասին վկայությունները: Ապա սկսեց վերլուծել վկաների ցուցմունքները: Նշեց, թե այդ վկայությունները չեն կարող արժանահավատ լինել: Թեև փաստ է, որ Յոզդատի շրջակայքում հայեր են կոտորվել, ամենայն հավանականությամբ այդ կողմերում նման բաներ եղել են, սակայն մեղադրյալներին որպես հանցագործ ներկայացնելն անօգուտ է: Ինչպես կարելի է եղրակացնել ոչ միայն թուրքերի, այլ նոյնիսկ արտասահմանցիների ներկայացրած զեկուցագրերից, հայերը կոտորել են մահմեղականների և գործողություններ են կատարել՝ թուրքական բանակի նահանջի գիծը փակելու ուղղությամբ: Ի հետևանք այս գործողությունների՝ կառավարությունն անհրաժեշտություն է համարել տեղահանությունը, հետևաբար՝ քեմալ բեյին պատճելը օրենքից չի բխում և անօրինական է: Այնուհետև դատապաշտպանն անդրադարձավ իրավագիտության ֆակուլտետի դասախոս և հայցվորի կարգավիճակ ունեցող մի հայի ցուցմունքներին, նշեց, որ թեև կառավարության կամքով բռնագաղթեցված հայերը ենթարկվել են գործողությունների, սակայն չեն պատճել է համանման վերաբերմունք դրսութեին (մահմեղականների հանդեպ), հետևաբար՝ արդարության աջը

պետք է տարածվի նաև հայերի վրա:

Տեղահանությանը և կոտորածներին առնչվող իրադարձություններին անդրադանալով՝ դատապաշտպանն ընդգծեց, թե հանցագործությունը կազմակերպելը այլ բան է, այն իրականացնելը՝ մեկ այլ, իսկ այդ իրադարձությունների մասին տեղեկանալուց հետո անդրաժեշտ միջոցներ չեն նարկելը՝ բոլորովին ուրիշ:

Այնուհետև դատապաշտպանն սկսեց ներկայացնել իր պաշտպանյալ թեմալ բեյի անձին վերաբերող տվյալները: Նշեց, որ թեմալը ծնվել է 300 թ. (1884) թերութում, որտեղ և ստացել է տարրական կրթությունը, միջնակարգն ավարտել է Խօմիրում, որից հետո թերութում ընդունվել է Վարչական պաշտոնյաների բարձրագույն դպրոց, որն ավարտել է փայլուն կերպով: Ապա գրադեցրել է տարրեր պաշտոններ: Երբեք իր պաշտոնը չի չարաշահել, հարստություն չի դիզել: Դատապաշտպանը նշեց, որ իր կողմից նշված հանգամանքների ընդգծումը պայմանավորված է քրեական օրենսգրքով նախատեսված նորմերով. իր պաշտոնը չչարաշահած, հարստություն չդիզած պաշտոնյան հայերի կոտորածներում ոչ մի շահագրգուվածություն չէր կարող ունենալ: Դատապաշտպանն ավելացրեց նաև, որ իր պաշտպանյալ՝ դեպքերին մասնակից լինելու ենթադրության դեպքում անգամ նրա հանդեպ պետք է գործադրվեն 45-րդ և 170-րդ հոդվածները: Դատապաշտպանն իր խոսքն ավարտեց «Դա եմ խնդրում և դատարանի արդարադատության հանդեպ իմ վստահությունն արտահայտելուց բացի այլ բան չեմ կարող ավելացնել» նախադասությամբ:

Սալահեդդին բեյն իր խոսքն ավարտեց ժամը 16:30-ին: Այնուհետև ընթերցվեց Թևֆիկ բեյի դատապաշտպան Համի բեյի պաշտպանական խոսքը, որն իր հիմնական բովանդակությամբ հար և նման էր մյուսին: Պաշտպանական խոսքի ընթերցումից հետո նա-

րառել նույնիսկ մահմեղական բնակչությանը կոտորած հայերի հանդեպ, որովհետև դեպքերը կատարվել են համանման պայմաններում: Դատապաշտպանը նշեց նաև այն, որ թեև սկզբում վճռված էր մեղադրյալներին հանձնել ոչ թե ռազմական, այլ՝ ուրիշ դատական ատյանների, սակայն դատաքննության արագ իրականացումն ապահովելու նպատակով գործի ուսումնասիրումը հանձնարարվեց ռազմական ատյաններին:

Այնուհետև դատապաշտպանն ընդգծեց մեղադրյալների՝ հանցագործությունն անձամբ կատարած չլինելու հանգամանքը: Ըստ նրա՝ իրականությանը չեն համապատասխանում իր պաշտպանյալ քեմալ բեյի՝ հանցագործությունն անձամբ կատարած լինելու մասին վկայությունները: Ապա սկսեց վերլուծել վկաների ցուցմունքները: Նշեց, թե այդ վկայությունները չեն կարող արժանահավատ լինել: Թեև փաստ է, որ Յոզդատի շրջակայքում հայեր են կոտորվել, ամենայն հավանականությամբ այդ կողմերում նման բաներ եղել են, սակայն մեղադրյալներին որպես հանցագործ ներկայացնելն անօգուտ է: Ինչպես կարելի է եղրակացնել ոչ միայն թուրքերի, այլ նույնիսկ արտասահմանցիների ներկայացրած զեկուցագրերից, հայերը կոտորել են մահմեղականների և գործողություններ են կատարել՝ թուրքական բանակի նահանջի գիծը փակելու ուղղությամբ: Ի հետևանք այս գործողությունների՝ կառավարությունն անհրաժեշտություն է համարել տեղահանությունը, հետևաբար՝ քեմալ բեյին պատժելը օրենքից չի բխում և անօրինական է: Այնուհետև դատապաշտպանն անդրադարձավ իրավագիտության ֆակուլտետի դասախոս և հայցվորի կարգավիճակ ունեցող մի հայի ցուցմունքներին, նշեց, որ թեև կառավարության կամքով բռնազարդեցված հայերը ենթարկվել են գործողությունների, սակայն չպետք է համանման վերաբերմունք դրսնորեին (մահմեղականների հանդեպ), հետևաբար՝ արդարության աջը

պետք է տարածվի նաև հայերի վրա:

Տեղահանությանը և կոտորածներին առնչվող իրադարձություններին անդրադառնալով՝ դատապաշտպանն ընդգծեց, թե հանցագործությունը կազմակերպելը այլ բան է, այն իրականացնելը՝ մեկ այլ, իսկ այդ իրադարձությունների մասին տեղեկանալուց հետո անդրաժեշտ միջոցներ չձեռնարկելը՝ բոլորովին ուրիշ:

Այնուհետև դատապաշտպանն սկսեց ներկայացնել իր պաշտպանյալ քեմալ բեյի անձին վերաբերող տվյալները: Նշեց, որ քեմալը ծնվել է 300 թ. (1884) թերությում, որտեղ և ստացել է տարրական կրթությունը, միջնակարգն ավարտել է հզմիրում, որից հետո թերությունը ծնդունվել է Վարչական պաշտոնյաների բարձրագույն դպրոց, որն ավարտել է փայլուն կերպով: Ապա զբաղեցրել է տարրեր պաշտոնները: Երբեք իր պաշտոնը չի չարաշահել, հարստություն չի դիզել: Դատապաշտպանը նշեց, որ իր կողմից նշված հանգամանքների ընդգծումը պայմանավորված է քրեական օրենսգրքով նախատեսված նորմերով. իր պաշտոնը չչարաշահած, հարստություն չդիզած պաշտոնյան հայերի կոտորածներում ոչ մի շահագրգուվածություն չէր կարող ունենալ: Դատապաշտպանն ավելացրեց նաև, որ իր պաշտպանյալ՝ դեպքերին մասնակից լինելու ենթադրության դեպքում անգամ նրա հանդեպ պետք է գործադրվեն 45-րդ և 170-րդ հոդվածները: Դատապաշտպանն իր խոսքն ավարտեց «Դա եմ խնդրում և դատարանի արդարադատության հանդեպ իմ վստահությունն արտահայտելուց բացի այլ բան չեմ կարող ավելացնել» նախադասությամբ:

Սալահեդդին բեյն իր խոսքն ավարտեց ժամը 16:30-ին: Այնուհետև ներերցվեց թևֆիկ բեյի դատապաշտպան Համի բեյի պաշտպանական խոսքը, որն իր հիմնական բովանդակությամբ հար և նման էր մյուսին: Պաշտպանական խոսքի ընթերցումից հետո նա-

խազահը դիմեց մեղադրյալներին.

-Որպես վերջին խոսք որևէ ասելիք ունեք:

Ձեմալ բեյը հանդես եկավ մանրամասն խոսքով՝ ի պաշտպանություն իրեն: Ապա դատարանից խնդրեց բարեգրություն և արդարադատություն:

Այնուհետև թեքիկ բեյզ որոշ տեղեկություններ տվեց իր անձի և ապստամբներին հետևելու ընթացքում կատարվածի վերաբերյալ:

Նիստի վերջում նախագահը մեղադրյալներին դիմեց հետևյալ խոսքերով. «Կարող եք լիովին վստահ լինել դատարանի արդարադատության համեմատ: Դատարանի կազմը մի քանի օրից ծեզ կհաղորդի իր խղճից թելադրված որոշումը»:

Նիստն ավարտվեց ժամը 18:45-ին՝ ժամանակի սղության պատճառով:

8-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Ըեմայ բեր Ենթարկվեց մահապատճի

Յոզդատի տեղահանության և կոտորածների հանցագործներից Յոզդատի նախկին փոխգավառապետ Քեմալ բեյը, որի՝ ուզմական արտակարգ ատյանի կողմից կատարվող դատաքննությունը Երևակ ավարտվեց, Վերոնշյալ դատարանի կողմից դատապարտվել է մահվան, և այդ կապակցությամբ կայացած դատավճիռը ներկայացվել է նորին մեծություն փաղիշահի սովորական իրամանին՝ Վերոհիշյալ պատժի գործադրման համար:

Երեկ երեկոյան՝ ժամը 19:20-ին, մահապատժի որոշումը գործադրվել է Բայազետ հրապարակում՝ Ռազմական նախարարություն

Եից դուքս գտնվող տեղում, շեհրէմինի³⁹⁹, Ստամբուլի պարետի, զիսավոր ոստիկանապետի, դատախազի և այլ պաշտոնյաների ու գինվորականների ներկայությամբ, որոնց՝ մահապատճի արարողությանը մասնակցելը պարտադիր էր:

Դարձյալ վերոհիշյալ տեղահանության կատարողներից Ցող-ղատի ժանդարմերիայի հրամանատար, հարյուրապետ Թևաչիկ բեյը դատապարտվել է 15 տարվա թիապարտության:

11-ը ապրիլի, 1919, «Ազնմղար»

³⁹⁹ Ουμάνιαν στην περιοδικότητα *Επιστήμη* της Αρμενίας ανέφερε ότι η παραγωγή της παραγάγει περισσότερη από 100.000 τόνους διοξειδίου του άνθρακα κάθε χρόνο, με την παραγωγή να αυξάνεται σε περισσότερα από 10% κάθε χρόνο.

ՏՐԱՎԻՉՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԼԻՍԵՐԸ

Տրավիջոնի տեղահանությունը

Երեկ՝ ժամը 14:30-ին, սկսվեց Տրավիջոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Մեղադրյալի աթոռին էին 7 հոգի՝ Մուստաֆա Նուրին, Մեհմեդ Ալին, Ցուառի Ռզզան, կայմակամ Թալեաթը, Ալի Սայիր, Նիազի և Նուրի բեյերը: Զանի որ մեղադրյալներից Տրավիջոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմի բեյը փախուստի մեջ էր գտնվում, դատարանը նրան հեռակա կարգով դատելու որոշում էր կայացրել: Դատապաշտպանների կարգավիճակով հանդես էին գալիս վծորաթեկ դատարանի նախկին նախագահ Օսմանը, ինչպես նաև՝ Շեքբեթ, Ջուղուսի, Սալահեդին և Իբրահիմ բեյերը:

Նախ՝ ներկայացվեցին գործակալ Մուստաֆա Նուրի էֆենդու անձնական տվյալները: Նշվեց, որ վերոհիշյալը ծագումով տրավիջոնցի է, միջին եկամուտների տեր և ամուսնացած: Ապա միևնույն հարցերն ուղղվեցին նաև մյուս մեղադրյալներին, որոնք հերթով պատասխանեցին որպանց: Պարզվեց, որ նրանցից ոչ մեկը նախկինում դատված չի եղել: Այնուհետև ընթերցվեցին նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումները, որից հետո դատախազը, իթիհադականների կողմից բռնագաղթեցվածների նկատմամբ կատարված արկածախնդիր և ամորալի արարքների մասին երկար ու ազդեցիկ ճառով հանդես գալուց հետո, պահանջեց ամբաստանյալներին մեղավոր ճանաչել նրանց մեղսագրվող արարքներում և դատապարտել: Դատախազի խոսքից հետո մեղադրյալներին դուրս

տարան. դահլիճում մնաց միայն գործակալ Մուստաֆա Նուրի բեյը: Նրան հարցեր տվեցին տեղահանության վերաբերյալ: Վերոհիշյալը որոշ հայտարարություններ անելուց հետո նշեց, թե ինքը հայերին ոչ թե ոչնչացրել է, այլ՝ պաշտպանել, նրանցից շատերին անգամ իր տանը թաքցրել: Նախագահը տարբեր հարցեր տվեց տեղահանության վերաբերյալ, որոնց պատասխանելուց հետո մեղադրյալը հայտնեց, թե ինքն այս «փորձանքի» մեջ ընկավ «Թուրքիյանիք» թերթում տպված և իր դեմ ուղղված որոշ հրապարակումներից հետո: Նշված հրապարակումների կապակցությամբ ինքը դիմել է քրեական գործերով դատարան:

Այս ցուցմունքները տալուց հետո Մուստաֆա Նուրի բեյը դուրս տարվեց. դահլիճ բերվեց մաքսային վարչության պետ Մեհմեդ Ալի բեյը: Վերջինիս հարցընթացին, թե ինչ տեղեկություններ ունի տեղահանության վերաբերյալ: Մեղադրյալը համառորեն պնդում էր, թե ոչ մի բան ո՛չ լսել է, ո՛չ տեսել, ո՛չ էլ իմացել: Այնտեղ ընթերցվեց նրա նախկին ցուցմունքը, և պարզվեց, որ նրա նախկին և ներկայիս ցուցմունքների միջև տարբերություններ են նկատվում: Մեհմեդ Ալի բեյը փորձեց արդարանալ, թե ինքն այդ պահին իսխստ հոգված վիճակում է եղել, և իր արագ խոսելու պատճառով թերևս իրեն սխալ են հասկացել:

Նախագահ- Մենք տեղեկություններ ունենք առ այն, որ Դուք ևս մասնակից եք եղել կոտորածներին, տեղահանությանը և կողոպուտին: Ինչ կասեք այդ կապակցությամբ:

Մեհմեդ Ալի- Բոլորովի՞ն: Ես, ըստ Էության, մաքսային պաշտոնյա եմ: Ինչպես կարող էի նման գործների խառնվել:

Նախագահ- Հետաքննության ընթացքում ազգությամբ հայ մի քանի հոգի վկայել են, որ Դուք առնչություն եք ունեցել տեղահա-

Նույանը: Հ ամսապահ առնելու մասին պահանջման նույանը

Մեհմեդ Ալի- Երբեք նման գործերով չեմ զբաղվել: Այդ հայերից մեկի հետ ծանոթ եմ, մյուսներն ինձ չեն ծանաչում, ես էլ՝ նրանց:

Մեհմեդ Ալին որոշ տեղեկություններ էլ տվեց Տրապիզոնի Կարմիր մահիկ հիվանդանոցի մասին և դուրս տարվեց:

Հարցաքննության համար դատական դահլիճ հրավիրվեց ալյուրի վաժառական Նիազի Էֆենդին: Նախագահը նրան տարբեր հարցեր տվեց տեղահանության, կոտորածների և կողոպուտի վերաբերյալ: Նիազի Էֆենդին հայտնեց, թե ինքը տեղեկություններ չունի, այդ ընթացքում գտնվել է Ստամբուլում և միայն ժամանակ առ ժամանակ է Տրապիզոն գնացել:

Անհամապատասխանություն բացահայտվեց նրա կողմից տրված նախկին և ներկայիս ցուցմունքներում նշված ամսաթվերի միջև, և ընթերցվեցին նրա նախկին ցուցմունքները:

Նախագահն ընդգծեց, թե քանի որ Նիազի Էֆենդին այդ ընթացքում Տրապիզոնում հյուրանոցատեր է եղել, ապա պետք է որ տեղյակ լիներ տեղահանությանն առնչված երևոյթներին: Այնժամ Նիազի Էֆենդին հայտնեց, թե ինքը ոչ թե հյուրանոցատեր է եղել, այլ այդ տունը վարձակալության է տվել՝ Տրապիզոնում առևտուր ընդարձակելու նպատակով: Ապա Նիազի Էֆենդին հայտարարեց. «Եթե իմ դեմ եղած բոլոր զրպարտանքներից գեր մեկը հաստատվի, ես ինքս էլ կպահանջեմ պատիժս ծանրացնել՝ իմ կրելիք պատժաշափերի հանրագումարով: Հետաքննության շնորհիվ պարզվել է, թե բռնագաղթը կատարվել է ժամանակամբների միջոցով: Քանի որ ժողովրդի ահն ու մահը հակառակ էր թե՛ խղճիս և թե՛ բնույթիս, նրանց վոնդեցի իմ տնից: Գյուղաքաղաքում կոտորած ընդհանրապես չի եղել: Ձեզ

ավելի հարմար է բոլոր գավառներում մեկական հետաքննիչ հանձնաժողով կազմել և մեզ պես անմեղների դատել, այն դեպքում, եթե հազարավոր մարդասպաններ ամենուր ազատ թրև են գալիս»:

Դատախազ- Ճիշտ կաներ, եթե մեզ հայտներ ազատ թրև եկող այդ մարդասպանների անունները:

Դատախազի հարցին ի պատախան՝ Նիազի Էֆենդին հայտնեց, թե ինքն անձամբ ծանաչում է [այդ մարդասպանների] մեծ մասին, սակայն՝ ոչ անուններով: Այնուամենայնիվ մեղադրյալը նշեց մեկ-երկու անուն: Սի քանի այլ հարցերի ևս պատախանելուց հետո Նիազի Էֆենդին դուրս եկավ դատական դահլիճից:

Ներս բերվեց ժանդարմերիայի տեսուչ թալեաթ թեյը: Իր մյուս ընկերների նման տեղահանության իրականացման հանգամանքների վերաբերյալ որոշ տեղեկություններով հանդես գալուց հետո ընդգծեց, թե ինքը բացարձակապես ոչ մի կապ չի ունեցել տեղահանության հետ: Նախագահության կողմից տրված հարցերին անհրաժեշտ պատախանները տալուց հետո նշեց, թե ինքը ոչ մի շփում չի ունեցել ժանդարմերիայի հետ, այլ եղել է Ռազմական հարկերի հանձնաժողովի անդամ և մշտապես այնտեղ է գտնվել:

Այս ցուցմունքները տալուց հետո թալեաթ թեյը դուրս տարվեց. դատական դահլիճ բերվեց առողջապահության տեսուչ Ալի Սայիր թեյը, որին դիմեցին տեղահանությանը և կոտորածներին վերաբերող հարցերով: Մեղադրյալը հայտնեց, թե ինքը իթթիհայտականների հետ ոչ մի կապ չի ունեցել, Սահմանադրության հոչակումից հետո, եթե վերադարձել է աքսորից, «Հուրութ-ու ումումի» թերթին արած իր խոստովանությունները թիրախ են դարձել, որի հետևանքով իրեն ծերբակալել են: Ապա մեղադրյալն սկսեց պատմել իր հետ պատահած մի քանի արկածի մասին:

Նիստն ավարտվեց: Շարունակվելու է շաբաթ օրը՝ ժամը 14:00-ին:

27-ը մարտի, 1919, «Ալեմդար»

Տրապիզոն - Երկրորդ դատավարություն

Երեկ՝ ժամը 11:00-ին, հայտնի անձանցից բաղկացած ռազմական արտակարգ ատյանը Նազրմ փաշայի նախագահությամբ շարունակեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը:

Վկաներից թեև հրավիրվել էին Նեմիզադե Աքք Քափթանը, Էրգրումի նախկին նահանգապետ Թահսին բեյը, ոռոսահպատակ Սամսոն Վալիդ Թեոդորովիչը և Տրապիզոնի զինկոմիսարիատի նախկին նախագահ, մայոր Նեջմեդին բեյը, սակայն չէին ներկայացել:

Դատական նիստի քարտուղարն ընթերցեց Երրորդ բանակի նախկին իրամանատար Վեհիր փաշայի գրավոր ցուցմունքը, որի համառոտ բովանդակությունը հետևյալն էր. «Արևելյան վիլայեթների մահմեդականները մի շարք վայրենությունների և բռնությունների են ենթարկվել, այդ թվում՝ բազմաթիվ մահմեդականներ են սպանվել հայ ավագակախմբերի կողմից, չսպանվածներն էլ քշվել են մինչև Ռուսաստանի խորքերը, ոտնակոխ են արվել երիտասարդ աղջիկների պատիվն ու անարտությունը, բանականության և տրամաբանության կողմից անընդունելի դեռ շատ բռնություններ և ստորություններ էլ են կատարվել. սպանվել են հազարավոր, հատկապես՝ երիտասարդ մահմեդականներ, որոնց ոսկորները ջրհորներն են նետել»: Քաղաքակիրթ պատմության վրա ստվեր նետած և բոլորի հանդեպ

կատարված այդ դեպքերը վշտացած կերպով պատմելով՝ Վեհիր փաշան պահանջում էր դատական պատասխանատվության ենթարկել բանակի գործողություններին արգելվ հանդիսացած, ուազմական գործողությունների դեմ բազմաթիվ բռնությունների, որքերգությունների և ստորությունների միջոցով խաղաղ բնակչության հանգիստը խաթարած Դաշնակցություն կոմիտեի անդամներին, ինչպես նաև՝ որոշ՝ կարեկցության արժանի իրադարձությունների տեղիք տված Միություն և առաջադիմություն կուսակցության դեկավար դիրքերում գտնվող անձանց և հատկապես՝ Բեհանդիդին Շաքիր բեյին:

Նախագահը բոլոր մեղադրյալներին դիմեց հետևյալ հարցով. «Այս մեղադրաններին ի պատասխան որևէ ասելիք ունե՞ք»:

Թեև մեղադրյալները հայտնեցին, թե ասելիք չունեն, սակայն նրանցից կենտրոնական կոմիտեի անդամ Ռզա բեյը ոտքի կանգնեց և փորձեց պաշտպանվել հետևյալ կերպ. «Ես կարող եմ ապացուցներով հերքել մեծարգո Վեհիր փաշայի մեղադրանքները՝ ուղղված Բեհանդիդին Շաքիր բեյին: Միություն և առաջադիմություն կուսակցությունը չէր կարող նման մեծաթիվ հանցագործություններ կատարել: Լուր էր ստացվել, ըստ որի՝ մեր ընկերներից մի քանիսը կուսակցության անունով յուրացրել են գերազույն կառավարության կողմից անհրաժեշտ համարված վայրեր տեղափոխված հայերի կողմից լրված գույքի մի մասը: Ակներև է, որ մինչ այժմ բարձր ու հոգևոր նպատակներ հետապնդող Միություն և առաջադիմություն կուսակցությունը չէր զարդարվի սրա-նրա իրերով: Այսօր պատմական իրադարձություններ ենք ապրում: Մենք թեև համոզված էինք, որ մեր կենտրոնական կոմիտեն նմանատիպ գործողությունների չի մասնակցել, բայց և այնպես տեղին համարեցինք լրված գույքի մեջ անգամ իրեր վերցրած անձանց նախազգուշացնել և 331 թ. (1915) սեպտեմբերի 14-ին մի հեռագիր ուղարկեցինք Բուլսայի կենտրոնական

կոմիտեին: Միություն և առաջադիմություն կուսակցությունը գուցե և սխալներ թոյլ տվել է իր համոզմունքների մեջ, սակայն միշտ էլ գործել է արժանապատվորեն»:

Այնժամ դատարանի կազմի անդամներից Մուստաֆա փաշան հանդես եկավ հետևյալ հարցով. «Այսինքն՝ կուսակցության որոշ կենտրոններ լրված գույքից իրեր յուրացնելու փորձ են կատարել, իսկ որ նահանգների»:

Ողջա բեյը պատասխանեց. «Այո՛, Բոլոսայում, Սվասում, Մամուրեթ-ու Ազիզում (Խարբերդ) նման դեպքեր գրանցվել են»:

Նախագահ- Արդյո՞ք Բոլոսայի պատասխանատու քարտուղար Իբրահիմ բեյը, պահանջելով լրված գույքն օրինականորեն և հրապարակայնորեն աճուրդի հանել, փորձել է այդ գործը կոծկել:

Ողջա բեյ- Այդ ուղղությամբ հանգամանալից հետաքննություն չեմ կատարել: Ինձ այնտեղ էին ուղարկել որպես կազմակերպության պաշտոնյա: Հետաքննություն կատարեցի՝ պաշտոնից բխած ողջ պատասխանատվությամբ, և փորձեցի այդ գույքը վերադարձնել:

Զերի փաշա (դատարանի կազմի անդամներից)-Կարծում եք՝ Բեհաեդին Շաքիրը կենտրոնական կոմիտեի կողմից պաշտոնապես չի ուղարկվել Բոլոսա, սակայն այնտեղ հանդես է եկել ինքնագլուխ գործողություններով:

Ողջա բեյ- Ընկերներիս ճանաչում եմ որպես պատվարժան անձնավորությունների: Համագործակցել եմ նրանց հետ: Բեհաեդին Շաքիր բեյը մի շարք վիլայեթներ է գնացել՝ անձնական և պաշտոնական դրդապատճառներից ելնելով: Իմ վերջնական կարծիքն այն է, որ կենտրոնական կոմիտեն իր պաշտոնյային չէր ուղարկի նման ամորալի արարքի համար:

Նախագահ- Կենտրոնական կոմիտեին բավարարնց Բոլոսայում Զեր կատարած հետաքննությունը:

Ողջա բեյ- Բավարար համարվեց, էֆենդի՛:

Նախագահ- Ինչ կերպով կատարվեց այդ անշարժ գույքերի վերադարձը:

Ողջա բեյ- Այդ մասին որևէ տեղեկություն չունեմ:

Նիստն ավարտվեց ժամը 12:15-ին:

30-ը մարտի, 1919, «Ալեմդար»

**Տրապիզոնի տեղահանության դատավարությունը
ու ազմական արտակարգ ատյանում**

Նիստ առաջին

Նազըմ փաշայի նախագահության տակ գտնվող ու ազմական արտակարգ ատյանը երեկ ժամը 10:15-ին սկսեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատաքննության երրորդ նիստը: Դատախազի աթոռին էր տեղակալներից Ռեշադ բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուն պես Էրզրումի նախկին նահանգապետ Թահսին բեյը հրավիրվեց վկայություն տալու: Վկան երդվելուց հետո հանդես եկավ տեղահանության մասին տեղեկություններով: Վերոհիշյան իր իմացածն ասելուց հետո դուրս եկավ, որից հետո ընթերցվեց տիկին Արարյանի տված ցուցմունքը, որն ուղղված էր մեղադրյալների դեմ:

Այնուհետև դատարան հրավիրվեց ռուսահպատակ Սամսոն Թեոդորովիչը, որը երդվեց ըստ օրենքի: Նախագահը նրան հրամայեց պատմել այն անօրինականությունների մասին, որոնք կատարվել

ԷՅԻ ՏՐԱՎԻԼՈՒՄ ՄԵԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱցՔՈՒՄ:

Մեղադրյալներից գործակալ Մուստաֆա և Յուսուֆ Ռըզա բեյքը, ինչպես նաև՝ դատապաշտպանները մի շարք հարցեր ուղղեցին Սամսոնին, որից հետո վկայություն տալու համար դատարան բերվեց Նեմլիզադե Աքիֆ Քափթանը: Աքիֆ բեյը նշեց, թե Տրավիլում ոչ մի հայ չի սպանվել, և քաղաքում որևէ բռնություն չի կատարվել:

Ապա վկաներից կանչվեց Նևարերը: Դատապաշտպաններից Օսման բեյի պահանջով Նևարերը ցուցմունքներ տվեց առանց երդվելու, քանի որ նաև քաղիայցվոր էր: Վկան պատմեց, որ իրենք բավականաչափ դրամ էին վերցրել իրենց հետ, և որ 50 ժանդարմներ ուղեկցորդ էին նշանակվել՝ իրենց պահպանելու նպատակով, սակայն ժանդարմները կոտորել էին անդամալույժներին և ժանապարհին սովոր ուժն ու կարողությունը կորցրած և այլևս քայլել չկարողացող հազարավոր մարդկանց: Ըստ վկայի՝ երեխաներին լցրել էին պարկերը և գետը նետել: Ինքը չորս ամիս, հազարավոր դժվարություններ հաղթահարելով, դիակների միջով գնացել է գյուղից գյուղ և, ի վերջո, կարողացել է հասնել Հայեա:

Այս վկայից հետո ներս մտավ վկա Տիգրան Նարդինյանը, որը նոյնպես ցուցմունքներով հանդես եկավ՝ առանց երդվելու, քանի որ քաղիայցվոր էր. դա պահանջեց դատապաշտպան Քուտրուախ բեյը: Նարդինյանը որոշ բաներ ասաց Ալի Սայիր բեյի դեմ: Ապա մեղադրյալները, դատապաշտպանները և դատախազի տեղակալը բազմաթիվ հարցեր ուղղեցին վկային և հերքեցին վերջինիս ասածները:

Հետո եկավ վկա Միրանուշ Մինաթյանը: Նա ևս տեղեկություններ տվեց տեղահանության մասին և որոշ բաներ ասաց մեղադրյալների դեմ, որից հետո դատն ընդմիջվեց մինչև երկրորդ Ծիստ:

Ծիստ Երկրորդ:

Ժամը 14:00-ին վերսկսվեց Տրավիլում տեղահանության դատաքննությունը: Վկաներից դատարան իրավիրվեց Սաթենիկը: Նա նոյնպես քաղիայցվոր լինելու պատճառով տեղահանության մասին տեղեկություններ տվեց՝ առանց երդվելու: Սաթենիկի ցուցմունքներն ուղղված եին մեղադրյալների դեմ:

Ապա եկավ Արասյան ազգանվամբ վկան, որի ցուցմունքները ևս մեղադրյալների դեմ էին: Բերվեց վկա Ֆլումենը: Նա ևս հանդես եկավ մեղադրյալների դեմ ուղղված վկայություններով:

Այնուհետև նախագահի հրամանով մյուս մեղադրյալները դուրս տարվեցին. մնաց միայն Սայիր բեյը:

Նախագահ- Դուք պաշտոն ունեցել եք Տեղահանության հանձնաժողովում:

Ալի Սայիր բեյ- Ո՞չ, էֆենդի!: Դա պետք է որ սխալ լինի:

Նախագահ- Ինչո՞ւ հեռացվեցիք թոնիայի բժշկական տնօրենի պաշտոնից, որում նշանակվել էիք Տրավիլումից հետո և ինչ գործ արեցիք, ու՞ր գնացիք վերոհիշյալ պաշտոնից ազատվելուց հետո:

Ալի Սայիր բեյ- Ասացին, որ վարչականորեն են ազատությունը: Խեր խոնարի ծառան էլ դեռևս չի կարողացել իմանալ բռն պատճառը: Աշխատանքից ազատվելուց հետո գնացի հզմիր և մտցիս որեցի այլևս երեք կառավարական պաշտոնյա չինել: Մինչև ծերբակալվելս հզմիրում գրադարձ եմ առևտորով և նման այլ գործերով:

Նախագահ- Կարմիր մահիկ հիվանդանոցում Ձեր գրադարձ պաշտոնը պետական էր:

Ալի Սայիր բեյ- Ո՞չ, ես այնտեղ պետական պաշտոն չեմ ունեցել: Միայն վերասուլում էի: Ո՞չ կառավարման էի միջամտություն, ո՞չ էլ պրակտիկ բժշկությամբ զբաղվում այնտեղ:

Նախագահ- Հիվանդանոց բերված հայերից ոչ ոք չի մահանալու գմուղ միայն լրացնությամբ մահանալու մաս յմասար քի

ցԵՐ: Առաջինի տևաժամունքում պահանջված գործությունները կատարվել են առաջին առաջ

Ալի Սայիբ թեյ- Ո՛չ, չգիտեմ: Զեր խոնարի ծառան վեց ամիսը մեկ վիճակագրական տեղեկագիր էր վերցնում:

Նախագահի հրամանով արձանագրող քարտուղարն ընթերցեց այդ խնդրի մասին գեկուցումը:

Զեկուցի համառոտ բովանդակությունը հետևյալն էր. Ալի Սայիբ թեյը թույն ներարկելու միջոցով հայերի է սպանել հիվանդանոցում և եղել այլ ողբերգությունների հեղինակ:

Զեկուցման ընթերցումից հետո Ալի Սայիբ թեյը նախագահին ներկայացրեց հայերեն և ֆրանսերեն թերթերից քարգմանված որոշ փաստաթղթերի բնագրեր և պատմեց, թե թերթերում ինչեր են գրվել իր դեմ, և թե ինչպես է ինքը այդ պատճառով ծերբակալվել:

Սայիբ թեյը նախագահին հայտնեց, որ եթե չամաչի խոսքը երկարացնելուց, ապա պաշտոնական փաստաթղթերով կապացուցի, որ հայերեն ու ֆրանսերեն թերթերում հրատարակված և թերներերան տարածվող բոլոր խոսակցությունները գրպարտություն են: Մեղադրյալը երկար-բարակ իրեն պաշտպանելով՝ ասաց, թե մի շարք վկաներ է ներկայացնելու, որպեսզի ապացուցի թե՛ այդ փաստաթղթերով հաստատվող հանգամանքների իսկությունը և թե՛ Տրապիզոնի տեղահանության իր առնչված չինելը, ու գրել տվեց որոշ վկաների անուններ, որոնց մեծ մասը հայկական էր: Իր ցուցմունքի վերջում ասաց, որ Տրապիզոնի Թեզեղեյյուտ⁴⁰⁰ կուսակցության պատասխանառու քարտուղար Սաղթեղին թեյի՝ այնտեղից հեռանալուց հետո ամեն ինչ իր դեմ ուղղվեց: Այս ցուցմունքից հետո Սայիբ թեյը դուրս բերվեց. Կանչվեց գործակալ Մուստաֆա Նորի էֆենդին:

Նախագահ- Զինվոր եղած ժամանակ դեռևս Տրապիզոնում

⁴⁰⁰ Թեզեղեյյուտ (Վերածնունդ) կուսակցությունը հիմնվել էր 1918 թ. նոյեմբերի 1-ին կայացած երիտրուքական կուսակցության համագումարում, որում որոշվել էր լուծարել Միություն և առաջադիմություն կուսակցությունը և վերջինիս որդ ունեցվածքը հանձնել Թեզեղեյյուտին:

գործակալի էր:

Մուստաֆա էֆենդի- Այո՛, պարո՞ն: Չէի ազատվել: Զինվորական ծառայություն էլ էի այնտեղ կատարում: Առանց այդ էլ այն ժամանակ փոստ չկար:

Նախագահ- Ծովով աքսորվողներն էլ էին առանց իրերի գնում, ինչպես ցամաքով գաղթեցվողները:

Մուստաֆա էֆենդի- Այո՛, առանց իրերի էին գնում:

Մուստաֆա էֆենդին որոշ հարցերի ևս պատասխանելուց հետո դուրս տարվեց, և ներս բերվեց մաքսատան վարիչ Մեհմեդ Ալի թեյը:

Նախագահ- Տրապիզոնի ոմրակոծության ժամանակ մաքսատան գործերը, բնականաբար, թեթևացան: Այնժամ ինչ պարտավորություններ դրվեցին Զեզ վրա:

Մեհմեդ Ալի թեյ- Ռազմական հարկերի հանձնաժողովում, ինչպես նաև՝ Կարմիր մահիկ հիվանդանոցում և Ռազմական արդյունաբերության մասնաճյուղի շինարարության հանձնաժողովում գրադեցրի նախագահի պաշտոնը:

Նախագահ- Հատուկ կազմակերպությունում (Թեշքիլաբ-ը մահսուսա), ինչպես նաև՝ Տեղահանության հանձնաժողովում որևէ պաշտոն ունեցել եք:

Մեհմեդ Ալի թեյ- Ո՛չ, էֆենդի՛: Իրականում ես չեմ էլ լսել ու ոչինչ չգիտեմ Տեղահանության հանձնաժողով անվան տակ գործող որևէ հանձնաժողովի մասին:

Նախագահ- Ինչ էր լինում աքսորվողների գույքը: Հանձնվում էր հանձնաժողովին:

Մեհմեդ Ալի թեյ- Հանձնաժողովին էր հանձնվում:

Նախագահ- Երբեմն գնում էիր Կարմիր մահիկ հիվանդանոց:

Մեհմեդ Ալի թեյ- Այո', գնում էի: Ես վարչական պաշտոնյա էի այնտեղ:

Ժամանակը լրանալու պատճառով դատը հետաձգվեց մինչև հինգշաբթի օրը՝ ժամը 10:00-ը: Նիստն ավարտեց ժամը 16-ին:

2-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Ռազմական արտակարգ ատյանում

Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը

Նիստ առաջին

Երեկ՝ ժամը 13:30-ից, ռազմական արտակարգ ատյանում Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո ընթերցվեց քաղաքացիության մեջի ընկերութիւն՝ տիկին Սիրանուշի գրավոր ցուցմունքը: Հայցվորը, հայերի հանդեպ կատարված բռնությունների մասին խոսելով, տեղեկացնում էր, թե բռնագաղթից փրկվելու նպատակով որոշ ժամանակով իսլամ է ընդունել, Միություն և առաջադիմություն կուսակցության որոշ անդամներ, որոնց անունները չէր կարողանում մտաբերել, տղամարդկանց բռնագաղթեցնելուց հետո բռնությունների էին ենթարկել նրանց, կանանց տղամարդկանցից առանձնացրել էին, այդ օրվանից ինքը չէր տեսել ո՞չ ամուսնուն, ո՞չ էլ ազգականին: Հայցվորը նաև հայտնում էր, որ վերցրել էին իր մոտ գտնվող մետաղադրամները, և որ կատարված վայրենությունը կրկին վերականգնվում էր իր աչքի առաջ:

Մեղադրյալներից կայմակամ Թալեաթ թեյը, ոտքի ելնելով,

հայտարարեց.

-Այդ կինը, որի վկայությունները քիչ առաջ ընթերցվեցին, հայտնում է, թե Տրապիզոնում այսպիսի բան է կատարվել, այնտեղ գտնվող կուսակցությունը այնպիսի որոշում է ընդունել և այլն: Մինչդեռ պետք է նշել, որ այդ գործը խիստ գաղտնի բնույթ էր կրում: Ինչպես կարող էր այդ կինը տեղյակ լինել նման կարևոր որոշումների մասին:

Թալեաթ թեյի վերոհիշյալ խոսքերից հետո նրան մի քանի հարց տվեցին: Մասնավորապես դատարանի կազմի անդամներից Մուսատաֆա փաշան նրան դիմեց հետևյալ կերպ. «Երկրում տեղահանությունն իրականացնելիս անհրաժեշտ էր, որ կատարեիք թե՝ Ձեր պաշտոնից և թե՝ մարդկային խղճից բխող պարտավորությունները»: Թալեաթ թեյը տվեց հետևյալ պատասխանը. «Ըստ Էլոքյան՝ ես ժամդարմերիայի տեսուչ եմ: Քանի որ իմ պաշտոնական պարտականությունները բազմաբնույթ են եղել, նման գործերով գրադարձու ժամանակ չեմ կարողացել գտնել և, բացի այդ, դրանում ես պատախանատու չեմ ու չեմ էլ կարող լինել»:

Այնուհետև ընթերցվեցին մի հայցվոր կնոջ՝ Հետաքննիչ հանձնաժողովին ներկայացված ցուցմունքները, համաձայն որոնց՝ Ձեմալ Ազմի թեյը, տղամարդկանց հավաքելով, նրանց նավակներով թումքալի⁴⁰¹ ուղարկելու հրահանգ էր տվել: Տեղափոխության ընթացքում բոլորին ոչնչացրել էին՝ մի մասին գնդակահարելով, մյուսներին՝ ջրախեղի անելով: Կինը նշել էր նաև, որ Վարդան⁴⁰² անունով

⁴⁰¹ Բումքալ շրջանը գտնվում է Չանաքքալ նահանգում:

⁴⁰² Ուսահպատակ Վարդանը Տրապիզոնում ջուրն էին գցել 40 հայ կուսակցական գործիչների և մտավորականների հետ միասին, սակայն Վարդանը, լինելով շառ ճարպիկ լողոր, կարողացել էր կապված ծեռերով լողանվ ափ հասնել: Դա այնպահ էր գարմացրել հայերի ոչնչացում հսկող ոստիկաններին, որ վերջիններս որոշել էին չափանիչ նրան, այլ տանել Կարմիր մահիկ հիվանդանոց: Սակայն այստեղ Վարդանին բռնավորելու ու սպանել

մեկն իրեն պարզաբանումներ էր արել, հետագայում այս Վարդանին վիրավոր վիճակում հիվանդանոց էին տարել, որտեղ և նրան թունավորել էին: Գաղղականների երեխանների մի մասին ուղարկել էին Դեյիրմենդերեի⁴⁰³ ուղղությամբ, իսկ մյուս մասին, Նիազի էֆենդու ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել: Ինքը կարողացել էր մահվանից խոսափել նախ՝ թուրքերի տանը, ապա՝ գերմանական բանկում թաքսուոց գտնելու շնորհիվ:

Նախագահ (դիմում է մեղադրյալներին)- Որևէ ասելիք ունեք:

Մուստաֆա թեյ- Էֆենդի՛, ինձ դիմած գաղթականների մեծ մասին փրկել եմ և անթերի կերպով հանձնել ինձ վստահված իրերը:

Նախագահ- Որոշ նահանգներում գործն ուսումնասիրվել է, իսկ ինչո՞ւ Տրապիզոնում չեն խորացել գործի էության մեջ:

Մուստաֆա թեյ- Ես տեղյակ չեմ՝ մյուս նահանգներում գործն ուսումնասիրվել է, թե ոչ: Ըստ էության՝ դրա համար կարելի՞ է կառավարությանը ըննադատել:

Դատախազ- Մենք տեղեկություններ ունենք առ այն, որ Հատուկ կազմակերպության մեջ պահեստային պաշտոնյայի տիպի ծառայություն է եղել:

Մուստաֆա թեյը, իր պաշտոնավարության վերաբերյալ երկար-բարակ տեղեկություններ տալուց հետո, խոսեց «Թուրքիյանիք» թերթում իր դեմ եղած հրապարակումների մասին:

Դատախազ- Մթերքի և այլ նման բաների համար նահանգապետի նախագահության տակ որևէ հանձնաժողով եղել է:

Մուստաֆա թեյ- Ո՞չ, Էֆենդի՛, նման հանձնաժողով գոյություն չի ունեցել:

Այնժամ դատախազը հայտնեց, որ տրապիզոնի հարյուրա-

պետ Մեհմեդ Ալի թեյի կողմից մի տեղեկագիր է ստացվել, և այն ներկայացրեց նախագահին:

Նախագահ- Ընթերցված ցուցմունքների դեմ որևէ առարկություն ունենք:

Նիազի թեյ- Հետևյալ կերպ կարող եմ հերքել երեխաններին ջրաղացը նետելու կամ էլ Դեյիրմենդերե ուղարկելուց հետո ոչնչացնելու՝ ինձ ուղղված զրպարտությունները. այդ դեպքերի ընթացքում ես գտնվել եմ Ստամբուլում: Այդ ուղղությամբ հետաքրքրություն կատարելու դեպքում ծշմարտությունը կրացահայտվի:

Այնուհետև ընթերցվեց Ռազմածովային նախարարությանը ներկայացված տեղեկագրին ի պատասխան թերված տեղեկանքը. ըստ որի՝ Նիազի էֆենդին 330 թ. (1914) մայիսի 25-ին տորպեդայով հասել է Ստամբուլ: Ապա Նիազի թեյը հանդես եկավ մի շարք մանրամասնություններով, որից հետո նախագահին դիմեց հետևյալ խոսքերով. «Մեծարգո՛ նախագահ, այդ բոլոր մեղադրանքները բացարձակապես չեն համապատասխանում ծշմարտությանը: Խնդրում եմ, որ այդ ուղղությամբ հետաքրքրություն կատարեք: Եթե այդ մեղադրանքներից գեթ մեկը հաստատվի, բոլոր ծշմարիտ կիամարեմ և ինքս կխնդրեմ իմ պատիժը»:

Այնուհետև ընթերցվեցին Նիազի էֆենդու՝ Հետաքրքրի հանձնաժողովին տված ցուցմունքները: Նիազի թեյը մեկ անգամ ևս համառորեն ընդգծեց տեղահանության ժամանակ իր՝ Ստամբուլում գտնված լինելու հանգամանքը:

Վկաներից դատարան հրավիրվեց Ավմի թեյը: Երդվելուց հետո նրան դիմեցին բազմազան հարցերով: Վերջինս հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանությունը սկսվել է մի հայտարարության հիման վրա, այն դեկավարվել է դոկտոր Բեհանդին Շաքիր թեյի կողմից, տեղահանության ընթացքում վալիի նախագահության

403 Գետ Տրապիզոնում:

տակ ոչ մի հանձնաժողով չի եղել, բոլոր գործողություններին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել վալին, գաղթականները ուղարկվել են հավաքական կերպով, որոշ խոսակցություններ են եղել նրանց՝ վտանգների ենթարկված լինելու մասին, այդ բոլորի ատյանը եղել է ոչ թե ռստիկանությունը, այլ՝ նահանգապետարանը, ինքը որևէ պաշտոն չի զբաղեցրել Կարմիր մահիկ հիվանդանոցում, այստեղի թունավորման դեպքերի մասին ոչինչ չի լսել, հիվանդանոցում Ալի Սայիր բեյը վարել է առողջապահության տեսչի պաշտոնը, իսկ հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյն ընդգրկված է եղել Կարմիր մահիկ հիվանդանոցի հանձնաժողովի կազմում և իր պաշտոնական պարտականությունները կատարել է արժանապատվորեն:

Նախագահ- Նշեցիք, որ տեղահանության ժամանակ որոշ չարագործություններ են գրանցվել: Ինչո՞ւ՝ չմիջամտեցիք՝ կատարելով Ձեր մարդկային պարտքը:

Վկա- Չկարողացա միջամտել, էֆենդի՛:

Նախագահ- Գործակալ Մուստաֆա բեյն ընկերական կապեր ունեցել է նահանգապետի հետ:

Վկա- Ընդհանրապես նահանգապետն ամենուր լինում էր և բոլորի հետ հանդիպում:

Առողջապահության տեսուչ Սայիր բեյ- Ինձ լուրեր են հասել, թե վկան այստեղ տեղափոխվելիս որոշ փաստաթղթեր է բերել. դա համապատասխանու՞մ է իրականությանը: Եվ արդյոք տեղյա՞կ էր, որ այդ փաստաթղթերում եղել է առողջապահության տեսչի ստորագրությունը:

Վկա- Փաստաթղթերի բովանդակությանը չեմ ծանոթացել:

Ժամանակի սղության պատճառով առաջին նիստն ավարտվեց ժամը 12:30-ին: Որոշվեց երկրորդ նիստն սկսել ժամը 14:00-ին:

Նիստ երկրորդ

Երկրորդ նիստն սկսվեց ժամը 14:50-ին: Վկաներից նախ դատարանի դահլիճ իրավիրվեց Արդուլ Քաղիր էֆենդին, որի երդումից հետո սկսվեց հարցաքննությունը: Արդուլ Քաղիր էֆենդին վկայեց, որ տեղահանության ժամանակ ինքը ծառայության մեջ է եղել Կարմիր մահիկ հիվանդանոցում, այդ ընթացքում ուղարկվել է հայերից բարկացած Երեք քարավան, վիրավորներին հիվանդանոցից դուրս են գրել՝ [հայ] գաղթականներին տեղ տալու նպատակով, դեղագործ հայ էր: Վկան նաև նշեց, թե ինքը տեղեկություններ չունի հիվանդանոցում կատարված թունավորման դեպքերի մասին:

Այնուհետև նախագահը հիվանդանոցին վերաբերող մի քանի հարց տվեց Մեհմեդ Ալի բեյին, քանի որ անհամապատասխանություն նկատեց նրա նախկին և ներկայիս ցուցմունքների միջև:

Մեհմեդ Ալի բեյը հայտնեց, որ հիվանդանոցն ազատելու հանգամանքը պայմանավորված էր Գիրեսումում 1-2 հիվանդանոց բացելու և նրանց այնտեղ տեղափոխելու պահանջով:

Այս վկայություններից հետո առողջապահության տեսուչ Ալի Սայիր բեյը քննարկման առարկա դարձրեց որոշ խնդիրներ: Ապա վկային տրվեցին այլ հարցեր: Մասնավորապես՝ դատապաշտպաններից Ըսթաթի բեյը վկային հարցրեց, թե նա ծանաչո՞ւմ է արդյոք իր պաշտպանյալները հանդիսացող Ռզա և Մուստաֆա բեյերին և, վկայի կարծիքով, նրանք տեղահանության առնչվել են, թե ոչ: Արդուլ Քաղիր էֆենդին նշեց, թե ինքը մեղադրյալներին ծանաչում է, սակայն նրանք, իր կարծիքով, տեղահանության հետ ոչ մի կապ չեն ունեցել:

Այնուհետև ընթերցվեց հանրային գործերի նախարար Ավճի փաշայի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Սայիթ բեյն իր պաշտոնական պարտականություններից դուրս որևէ այլ գործով չի գրաղվել:

Ապա վկայություն տալու համար դատարան հրավիրվեց երկորդ դիվիզիոնի նախկին հրամանատար Վասրֆ բեյը: Վկան հայտնեց, թե ինքը տեղահանության ժամանակ եղել է Տրավիզոնի զիսավոր շտարի պետը, իրենց դիվիզիոնը մասնակցություն չի ունեցել տեղահանության գործողություններին, իսկ տարագրության դեպքերին ինքը ականատես է եղել ճանապարհին՝ հանդիպելով հայերի 2 քառավանի: Վասրֆ բեյի վկայության համաձայն՝ գաղթականները նեղվել են միայն սովից, կոտորածների մասին բազմաթիվ լուրեր էին շրջում, բայց ինքը անձամբ ականատես չի եղել, ճանապարհին ուսների դեմ պատերազմի ժամանակ զոհված մահմեղականներից բացի՝ ուրիշ ոչ մի մահացածի չի հանդիպել, թեև այդ ժամանակ այնտեղ ուազմական դրություն էր հայտարարված, բայց և այնպես՝ բոլոր պաշտոնները նախկինի պես պատկանում էին նահանգապետարանին, հրամանատարությանը վերաբերող պարտականություններն անգամ իրականացվում էին նահանգապետի կողմից, այդ պատճառով թեև թե՛ ինքը, թե՛ հրամանատարը մի քանի անգամ իրաժարական են տվել, այն չի ընդունվել, իրենց պաշտոնին չղավաճանելու համար ստիպված էին նման բաների դիմանալ: Վկան նշեց, թե ինքը տեղյակ չի եղել տեղահանությանը վերաբերող իրահանգների մասին, տեղահանության գործողություններն իրականացվել են ոչ թե վայիի ստեղծած մի հանձնաժողովի, այլ՝ ընդամենը մի քանի հոգու կողմից: Ապա, Ալի Սայիթ բեյի՝ հիվանդանոցում մի քանի հոգու թունավորման մասին եղած խոսակցություններին անդրադառնալով, Վասրֆ բեյը հայտնեց, թե նման գործողություններ կատարելու համար Ալի Սայիթ բեյը պետք է որ անպատճառ մտերիմ լիներ նահանգապետի հետ,

մինչդեռ իրերի դրությունն այդպիսին չէր, քանի որ Ալի Սայիթ բեյը մտերիմ հարաբերությունների մեջ էր նախկին հրամանատար Ավճի փաշայի հետ, հանգամանք, որը հաօք չէր վալիին: Չնայած եղած հակասական լուրերին՝ վկայի համոզմունքով թունավորման խնդրին իրականում իրազեկ էր միայն ուզմական ատյանը:

Այնուհետև վկաններից դատարան հրավիրվեց հարկային տեսուչ Հաքբը բեյը, որի երդումից հետո սկսվեց տեղահանությանը վերաբերող հարցաքննությունը: Վերոհիշյալ հայտնեց, թե տեղահանության ընթացքում այնտեղ չի եղել, հետևաբար՝ տեղեկությունների չի տիրապետում, սակայն իրեն լուրեր են հասել այն մասին, թե Սայիթ բեյը տարածայնություններ է ունեցել նահանգապետի հետ, որոնց պատճառով դիմել է Ստամբուլի առողջապահության տեսչությանը՝ իրեն դժվարին պարտականություններից ազատելու խնդրանքով:

Այս ցուցմունքներից հետո բոլոր մեղադրյալներին դուրս տարան՝ բացի կենտրոնական կոմիտեի անդամ Յուսուֆ Ողզա բեյից, որը հարցաքննվեց առանց մյուս մեղադրյալների ներկայության:

Նիստն ավարտվեց ժամը 16:40-ին՝ ժամանակի սղության պատճառով: Որոշվեց նիստը շարունակել շաբաթ օրը՝ ժամը 10:00-ին:

4-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Տրավիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը

Թեև Նազըմ փաշայի նախագահության տակ գտնվող ուզմական արտակարգ ատյանը որոշել էր Տրավիզոնի տեղահանության և

կոտորածների դատավարությունը շարունակել շաբաթ օրը՝ ժամը 10:00-ին, սակայն երեկ մեղադրյալների՝ ոչ ժամանելու պատճառով դատն սկսվեց հազիվ ժամը 13:30-ին:

Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Քուղբեթովական քեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո դատարան իրավիրվեց Տրապիզոնի զինկոմիսարիատի նախկին նախագահի, պաշտոնաթող մայոր Նեջմենդին քեյը, որի երդումից հետո սկսվեց Տրապիզոնի տեղահանությանը վերաբերող հարցաքննությունը: Վերոհիշյալը հայտնեց, որ ինքը որոշ բաներ լսել է [տեղահանության մասին], սակայն անձամբ ոչինչ չի տեսել: Տեղահանության վերաբերյալ որոշ տեղեկություններով հանդես գալուց հետո Նեջմենդին քեյը դուրս եկավ. ներս բերվեց վկա Թափաջըյան էֆենդին, որը նրովելուց հետո նշեց, որ թեև ինքը մի քանի տարի պետական պաշտոնյա է եղել, սակայն տեղահանությունից չի կարողացել խոսափել, այդ ընթացքում բազում չարագործությունների է ենթարկվել ժամանակների կողմից, բազմաթիվ դժվարություններ կրելուց հետո Ալի Սայիր քեյի շնորհիվ կարողացել է Զոնիա փախչել, որտեղ նոյնպես խնդիրներ է ունեցել և դարձյալ Աստծո բարեգրությամբ տեղեկացել է, որ Ալի Սայիր քեյն այստեղ վարում է առողջապահության տեսչի պաշտոնը, կրկին նրան է դիմել և Ալի Սայիր քեյի բարեհած վերաբերմունքի շնորհիվ կարողացել է փրկվել:

Թափաջըյան էֆենդին Տրապիզոնի տեղահանության մասին մի քանի այլ տեղեկություններ ևս տվեց և դուրս եկավ:

Այնուհետև նախագահի հրամանով բոլոր մյուս մեղադրյալները դուրս եկան, դահլիճում մնաց միայն գործակալ Մուստաֆա քեյը, որին հարցեր ուղղեցին առողջապահության տեսուչ Ալի Սայիր քեյի և Տրապիզոնի քաղաքապետարանի բժիշկ Պետրոս էֆենդու միջև ե-

ղած հարաբերությունների, Պետրոս էֆենդու կնոջ և նրա մասին պտտվող որոշ լուրերի մասին: Մուստաֆա քեյի պատասխանելուց հետո նրան դուրս տարան. ներս բերվեց Ալի Սայիր քեյը: Վերջինիս հարցրեցին, թե արդյոք ընկերական կապերի մեջ եղնլ է Մուստաֆա էֆենդու հետ: Ալի Սայիր քեյը հայտնեց, որ ինքը 325 թ. (1909) ամենուր ակումբներ է բացել, որպես իր ուրախության արտահայտություն՝ սկսել է իրապարակել «Հուգուք-ու ումումիյե» անունը կրող մի պարբերական, որի գլխավոր խմբագրի և տնօրենի պատասխանատվությունն է ստանձնել Մևլան Զադե Ռիֆաաթը: Հետագայում «Հուգուք-ու ումումիյե» թերթի հետ այլս կապ չի ունեցել: Մարտի 31-ի իրադարձություններից հետո գնացել է Սամսոն, որտեղ գրադարձել է բժշկությամբ: Բալկանյան պատերազմն սկսվելուց անմիջապես հետո վերադարձել է և մտել Կարմիր մահիկ հիվանդանոց, հետագայում պաշտոն ստանալու ակնկալիքով դիմել է այն ժամանակվա ներքին գործերի նախարար Ռեշիդ քեյին, սակայն այդ պահին վարչակազմում փոփոխություններ են կատարվել, և իշխանության է եկել Մահմութ Շեքեթ փաշան: Որոշ ժամանակ անց ինքը նշանակում է ստացել Սպասի առողջապահական տեսչությունում, բայց ընդհանուր լեզու չի կարողացել գտնել վայի Մուսամմեր քեյի հետ: Ի վերջո պաշտոն է ստացել Տրապիզոնում, սակայն այնտեղ կրկին խնդիրներ են ծագել: Փորձել է իրաժարական տալ, սակայն իր իրաժարականը չի ընդունվել: Տրապիզոնում իր պաշտոնավարության ընթացքում կատարված դեպքերը մանրամասնորեն նկարագրելուց հետո Ալի Սայիր քեյը մի քանի իրադարձություն էլ պատմեց՝ Զոնիայում ունեցած իր պաշտոնի և պաշտոնաթողության առնչությամբ: Իր խոսքերը փորձեց հաստատել որոշ փաստաթղթերով:

Այնժամ նախագահը հանդես եկավ հետևյալ հարցով. «Ալի Սայիր քեյը բարեկամական հարաբերություններ ունեցել է տիկին Արսլանյա-

Մի հետ»: Մեղադրյալը մի քանի հայտարարություններ կատարեց վերջինիս վերաբերյալ:

Նախագահի թույլտվությամբ դատն ավարտվեց ժամը 15:00-ին: Շարունակվելու է երկուշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

6-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը

Նիստ առաջին

Երեկ՝ ժամը 13:30-ից սկսած, ուղարկան արտակարգ ասյանը Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս տեղակալներից Ռեշադ բեյը:

Վկաներից դահլիճ կանչվեց դադստանցի Աբդուլլահ էֆենդին, որը երդում տալու հետո հանդես եկավ տեղահանությանը վերաբերող տեղեկություններով: Վկան հայտնեց, որ տեղահանության ժամանակ գտնվել է Տրապիզոնում, սակայն իր ներկայության պահին տեղահանություն արդեն ավարտին մոտ էր, միայն կանանց և երեխաներին տեղափորում էին Բարալը կոչվող դպրոցներում: Վկան նշեց նաև, որ ինքը Արսլանյանին թերևս ծանաչում է, տիկին Արսլանյանը իր մոտ գտնվելիս բոլորովին դուրս չէր գալիս, տիկինը Մուստաֆա էֆենդու հետ ոչ մի առնչություն չի ունեցել: Աբդուլլահ էֆենդին հայտնեց նաև, թե իրեն տեղեկություններ են հասել, համաձայն որոնց՝ տիկին Արսլանյանի հեռանալուց հետո նրա ընտանիքին ծովն են նետել: Վկան կարծիք հայտնեց, թե այդ գործողությունը հավանաբար

կատարվել է մակույկավարների կողմից: Նախագահի հարցին ի պատասխան՝ հայտնեց, թե ինքը գործակալ Մուսատաֆա էֆենդուն գաղթականների հետ չի տեսել:

Մուսատաֆա փաշա- Տեղյակ եք, թե տիկին Արսլանյանն ում կողմից է տարագրվել:

Վկա- Ո՞չ, էֆենդի: Կարծում եմ՝ նահանգապետի:

Ուզա բեյ- Ինձ տեղահանության ժամանակ Տրապիզոնում տեսնել եք, էֆենդի:

Վկա- Ո՞չ, տեսել եմ տեղահանությունից մեկ ամիս առաջ:

Վկա Աբդուլլահ էֆենդին հայտնեց նաև, որ Նիազի էֆենդին իր մոտորանավակով ուղարկվել է ուղմական գերատեսչության հրամանով: Նա տեղահանությանը, վկայի համոզմունքով, չէր մասնակցել:

Ապա վկաներից դատարան իրավիրվեց ֆրանսահպատակ մայո Վիտալին, որը հանդես եկավ տեղահանությանը վերաբերող տեղեկություններով: Մայո Վիտալին վկայեց, որ տեղահանության ընթացքում գտնվել է Տրապիզոնում: Ծովով կատարվող տարագրությանն անդրադառնալով՝ նշեց, թե ծովից դուրս եկած Վարդանին հիվանդանոց են տարել ոստիկանները: «Գեղեցիկ տիկին» մականվամբ տիկինոջը զոյ են դարձել դիտավորյալ կերպով: Վկան որոշ ցուցմունքներ տվեց Ալի Սայիր բեյի դեմ: Հայտնեց նաև, որ տիկին Արսլանյանը բնակվում էր Հեքիմյան էֆենդու տանը: Երբ տիկինը հեռացել էր Աբդուլլահ էֆենդու տնից, իր զարդեղենի մի մասը թողել էր նրա մոտ, իսկ ինքը ոչ մի տեղեկություն չունի Տիկին Արսլանյանի թաղված դրամի և զարդեղենի մասին:

Այնժամ Ալի Սայիր բեյը ոտքի ելավ և երկար ցուցմունքների

միջոցով աշխատեց հերթել վկայի՝ դեպքերի վերաբերյալ կատարած հայտարարությունները:

Դատապաշտպան Սալահեղին բեյ- Այի Սայիր բեյի կողմից թումավորված Վարդանը Կարմիր մահիկ հիվանդանոցի որ մասնաձյուղում է գտնվել:

Վկան պատասխանեց, թե ինքը տեղյակ չէ, և որ նրա կինն այդ պահին դատարանում է գտնվում. Երանց կարող են ճշտել: Մսյո Վիտալին երդվելով հաստատեց, որ երեխանների վերաբերյալ իր պատմածները տեսել է սեփական աչքերով, և որ իր ցուցմունքները ժշմարիտ են:

Դատախազ- Նահանգապետի բոլոր խիստ գործողությունները միայն կոմիտեցիներին էին ուղղված:

Վկա (Մսյո Վիտալի)- Ո՛չ, բոլոր հայերն էին տարագրվում:

Նախագահ- Կարող եք հրապարակել Տրավիզոնից բռնագաղթեցվածների թիվը:

Վկա- Մոտ 18.000 հոգի:

Դատապաշտպան Շնքարի բեյ- Մեծարգո' փաշա, վկան կարող է ասել, թե ինչպես է տրամադրված իմ պաշտպանյալ Մուստաֆա բեյի հանդեպ:

Նախագահ- Արդեն իսկ հայտնեց, որ երախտապարտ է նրան:

Այնուհետև վկաններից դահլիճ բերվեց Պետրոս էֆենդին: Հրապարակեցին նրա անձնական տվյալները, որից հետո վկան երդվեց:

Նախագահ (Մեղադրյալներին մատնանշելով)- Նրանց մեջ

ծանոթներ ունեք:

Վկա (Պետրոս էֆենդին)- Ճանաչում եմ Այի Սայիր բեյին:

Նախագահ- Ինչպիսի տպավորություն եք ստացել Այի Սայիր բեյից:

Վկա- Այի Սայիր բեյը նախքան իր հեռանալը որոշ անձանց աջակցություն է ցուցաբերել, իսկ իր հետագա գործունեության մասին տեղեկություններ չունեմ:

Նիստն ավարտվեց ժամը 12:00-ին, որպեսզի շարունակվի մեկ ժամ ընդմիջումից հետո:

Նիստ երկրորդ

Երկրորդ նիստն սկսվեց ժամը 13:30-ին: Մեղադրյալներին դուրս տարան. դահլիճում մնաց միայն Նիազի էֆենդին:

Նախագահ- Տեղահանությունից հետո և Տրավիզոնի անկումից մեկ ամիս առաջ Դուք Ձեր մոտորանավակով տեղափոխել եք Տրավիզոնի մանուֆակտուրայի խանութներին և Լքված գույքի հանձնաժողովին պատկանող իրերը. Ինչ կերպ է կատարվել փոխադրումը:

Նիազի էֆենդի- Տրավիզոնի անկման ժամանակ այստեղի ապրանքները փրկելու նպատակով կնքվել է մի համաձայնագիր, ըստ որի՝ մակույկավարների միջոցով փոխադրված իրերի մի մասը պատկանելու էր ապրանքատիրոջը, իսկ մյուս մասը՝ փոխադրումը կատարած նավի անձնակազմին: Դրանք Լքված գույքի իրերն էին:

Ապա Նիազի էֆենդին որոշ ցուցմունքներ տվեց Տրավիզոնում Լքված գույքի հանձնաժողովի կողմից կատարված վաճառքի հանգամանքների մասին: Մեղադրյալը նշեց նաև, որ լքված գույքից

իրեն հասած իրերը ձեռք է բերել հրապարակային աճուրդի ժամապարհով. ինքը դրանք գնել է 200 օսմանյան լիրայով: Իսկ այն լուրերը, թե Ձեմալ Ազմին ոստիկանության միջոցով իրեն հրահանգել է վերոհիշյալ իրերն իր մոտ պահել, իրականությանը չեն համապատասխանում: Մեղադրյալը հայտնեց նաև, թե ինքը տեղյակ չէ Տրապահողնի տեղահանությունից մեկ ամիս առաջ վայի Ազմի բեյի և նրա աներձագ Ռամիզ էֆենդու կողմից լքված գոյքը 42 նավակով տեղափոխելու մասին: Ի պատասխան այն տեղեկությունների, համաձայն որոնց՝ ոստիկան Սալիմ էֆենդին Վարդարյանի խանութից մի քանի գործ է տեղափոխել Ձեմալ Ազմի բեյի տուն, մեղադրյալը հայտնեց, թե ինքը Սալիմ էֆենդուն չի ժանաչում: Նիազի էֆենդին ոչ ստոյց համարեց Տրապահողնի բոլոր ծովային միջոցներն իր ձեռքում գտնված լինելու մասին եղած խոսակցությունները:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո Նիազի էֆենդին դուրս տարվեց. դաիլիմ բերվեց գործակալ Մուստաֆա էֆենդին: Նախագահի տված հարցերին ի պատասխան՝ Մուստաֆա էֆենդին հայտնեց, թե ինքը ոչ մի առնչություն չի ունեցել հասարակական գործերի գլխավոր քարտուղար Հալիմ էֆենդու հետ, Վարդանին պատկանած դրամարկղն իր կողմից վայիին հասցվելու մասին տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: Մուստաֆա էֆենդին նաև նշեց, որ վիլայեթի հացի խնդիրը լուծելու նպատակով վայիից և առևտրականներից քաղկացած մի ընկերություն է կազմավորվել: Մեղադրյալի ցուցմունքների համաձայն՝ ինքը գլխավոր ինժեներ Ֆեհմի բեյին ժանաչում է, սակայն նրա հետ ընկերական հարաբերություններ չի ունեցել:

Մուստաֆա էֆենդին դուրս տարվեց. Եթես բերվեց ոստիկանական տեսուչ Նուրի էֆենդին: Սովորականի նման նրան հարցեր տվեց նախագահը: Նուրի էֆենդին հայտնեց, որ Լքված գոյքի հանձ-

նաժողովի կազմում ընդգրկված եղել է, սակայն չի հիշում այնպիսի մի դեպք, եթե 6000 լիրա արժողություն ունեցող իրերը Նիազի էֆենդուն տրվեին 200 լիրա գումարով (թեն գործում նման քան նշանած է եղել): Մեղադրյալ Նուրի էֆենդին նաև նշեց, որ վիլայեթում հացի կարիքը թեթևացնելու նպատակով ստեղծվել է մի կազմակերպություն, որը քաղկացած է եղել առևտրականներից և նահանգապետից: Նուրի էֆենդու ցուցմունքների համաձայն՝ տեղահանության ժամանակ ծովային ոստիկանությունը չի եղել, իսկ ինքը տեղյակ չէ: Նավերը և ծովային բոլոր փոխադրամիջոցները ղեկավարվել են Նիազի և Մուստաֆա էֆենդիների կողմից, թե ոչ: Վերոհիշյալը վկայեց նաև, որ Սալիմ էֆենդին պասիվ և իր պաշտոնից անտեղյակ մի մարդ էր, իսկ գաղթականների անունները որևէ ցուցակում չեն գրանցվել:

Նիազն ավարտվեց ժամը 14:30-ին: Շարունակվելու է հաջորդ օր՝ ժամը 13:30-ին:

8-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Տրապահողնի տեղահանության և կոտորածների դատավարությունը

Թեև Տրապահողնի տեղահանության և կոտորածների դատավարությունը պետք է շարունակվեր երեկ ժամը 13:30-ին, սակայն, քանի որ դատարանի կազմն անհրաժեշտ համարեց որոշ խնդիրներ քննարկել, այն սկսվեց հազիվ 15:30-ին: Դատախազի աթոռուն էր Ռեշադ բեյը: Քանի որ դատարանի կազմի անդամներից Ռեշեդի բեյը չէր եկել, նրան ստաժորներից փոխարինում էր գնդապետ Լյութֆի բեյը:

Վկաներից նախ եկավ ֆրանսիացի Փերլորանը. նրա վկայութ-

յունները թարգմանեց փաստաբանների կոլեգիայի նախագահ, դատապաշտպան Զելալեղին Արիֆ բեյը: Նրանք երկուսն էլ երդվեցին, որից հետո Փերլորանը հանդես եկավ տեղեկություններով: Վկան հայտնեց, թե տեղահանությունը կատարվել է հինգ օրվա ընթացքում և իրականացվել է թաղամաս առ թաղամաս, ըստ խոսակցությունների՝ սահմանից դուրս գալուն պես հայերի իրերը վերցրել են: Վկան հայտնեց, որ ճանաչում է բժիշկ Արալանյանին, բայց ոչ՝ նրա տիկնոջը, տեղյակ չէ բոլոր հիվանդանոցների թվի մասին, տեղահանության ժամանակ որևէ բան չի լսել կատարված թունավորումների մասին, սակայն տեղահանությունից հետո նման լուրեր իրեն էլ են հասել, տեսել է, որ տեղահանությունն իրականացվել է նավակների միջոցով, լսել է, որ դրանցից մեկը փրկվել է, մեղադրյալներից ճանաչում է միայն թալեաթ և Մուստաֆա բեյերին: Նրա վկայությունների համաձայն՝ քանի որ Մուստաֆա բեյն է պատճառ եղել, որ ինքն այնտեղ մնա, դրա համար էլ երախտապարտ է նրան: Ըստ վկայի՝ նա զբաղվում էր միայն նավահանգստից դեպի Ստամբուլ կատարվող առաքումներով, սակայն ոչ մի առնչություն չի ունեցել հայերի հետ, նոյնիսկ մի օր, երբ ինքը Մուստաֆա բեյի հետ նավահանգստում ֆրանսերենով զրուցում էր, վերջինս դեմ է արտահայտվել տեղահանությանը՝ ասելով: «Այս ամենից հետո ինչ երեսով եք Եվրոպա գնալու»:

Այնուհետև վկաններից եկավ Ֆինանսների նախարարության եկամտի տնօրեն Լյութֆի բեյը: Ըստ օրենքի երդվելոց հետո վկան տեղեկություններ տվեց տեղահանության մասին: Վերոնշյալ վկան հանդես եկավ մեղադրյալներից մի քանիսի, մասնավորապես՝ Մեհմեդ Ալի ու Նիազի բեյերի դեմ ուղղված ցուցմունքներով: Տեղակալներից Սալահադին բեյը և մեղադրյալները բազմաթիվ հարցեր տվեցին նրան: Այնուամենայնիվ, ժամանակի սղության պատճառով դատը 17:30-ին ընդիշվեց: Կշարունակվի այսօր՝ ժամը 10:30-ին, որի

ժամանակ դարձյալ ունկնդրության կարժանացվի Լյութֆի բեյի վկայությունը:

9-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը ուազմական արտակարգ ատյանում

Նիստ առաջին

Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարությունը երեկ շարունակվեց ժամը 11:15-ին: Դատախազի պաշտոնում էր տեղակալներից Ռեշադ բեյը:

Վկաններից դատարան իրավիրվեց Եկամտի տնօրեն Լյութֆի բեյը: Դատարանի կազմը լսեց երեկ սկսած նրա վկայության շարունակությունը: Լյութֆի բեյը հայտնեց, որ Լքալ գույքի վերաբերյալ Ֆինանսների նախարարությունից որևէ իրաման չի ստացվել, ծայրահեղ դեպքում նման իրաման կարող էր իրապարակել Ներքին գործերի նախարարությունը: Ըստ Լյութֆի բեյի՝ լրված գույքը հանձնվել է պահեստներ և կնքվել: Երբ ինքը գրավել է հանձնաժողովի նախագահի պաշտոնը, իրեն ոչ մի բան չի հանձնվել: Հանձնվել են միայն պահեստներում գտնվող իրերը: Իրեն որևէ իրահանգ չի հղվել՝ լրված գույքը պահպանելու ուղղությամբ: Լրված գույքի պահպանության համար ոչ մի դիմում որևէ արդյունք չէր կարողանալու ունենալ, որովհետև չէր համապատասխանում այն սկզբունքներին, որոնց հետևում էին այն ժամանակ: Տրապիզոնի անկման ժամանակ կարգավորող հանձնաժողովները հազիվ իրենց պարտականություններն էին կատարում, և ինքը կենտրոնից հեռացել էր Տրապիզոնի անկումից մեկ շաբաթ առաջ: Քարավանները տեղահանության ընթացքում խո-

զարկվել են, թամկարժեք իրերն ու կանխիկ դրամը վերցրել են հայերի մոտից, սակայն իրենց չեն հանձնվել:

Նախագահը, ոստիկանապետին դիմելով, նշեց, թե քանի որ վերջինս եղել է Խուզարկության հանձնաժողովի անդամ, պետք է որ տեղյակ լիներ լրված գույքի խնդրի մասին: Ոստիկանապետ Խորի թեյը երկար հայտարարությամբ հանդես գալու հետո ասաց. «Էֆենդի՛, Տրապիզոնի բնակիչներն ազնիվ են ու բարոյական: Նրանք ոչ մի կողոպուտով էլ չեն գրադարձել: Բացի այդ՝ չեն կարողացել լրված գոյքը տեղափորելու ժամանակ ցուցակագրել: Դրանից հետո Ձեր խոնարի ծառան նամակի միջոցով այս խնդիրը ներկայացրել է նահանգին: Այդ նամակն ուղարկվել էր հանձնաժողովի նախագահությանը»:

Նիազի էֆենդին նախագահին խնդրեց վկային հարցնել, թե տեղահանության ընթացքում իր վրա հատուկ պարտականություն դրված եղել է, թե՞ ոչ: Վկա Լյութֆի թեյն ասաց, թե նման բան չի լսել Նիազի թեյի առնչությամբ: Վկան նշեց նաև, թե տեղահանությունն իրականացվել է տարբեր միջոցներով:

Նախագահ- Ասում են, թե տեղահանությունից քիչ առաջ մակույկով տեղափոխվել են նահանգապետին և այլոց պատկանող որոշ իրեր. դրա մասին տեղեկություններ ունեք:

Վկա- Նիազի էֆենդին մակույկի տերն էր: Գալիս էր Ստամբուլ, գնում Գիրեսուն: Մի խոսքով՝ մակույկով ժամփորդում էր ամենուր: Սակայն որևէ բան չեմ լսել նման իրերի՝ Գիրեսուն փոխադրելու մասին:

Նախագահ- Արդյոք տեղյակ եք, թե ինչ հիմքի վրա էին ստեղծվել Նիազի էֆենդու և նահանգապետի ընկերական հարաբերությունները:

Վկա- Նիազի էֆենդին մի քանի մոտորանավակ ուներ: Օգտագործում էր դրանք և գրադարձ առաքումներով: Բնականաբար

հարստությունն էլ էր դիզել:

Վկայի վերոնշյալ խոսքերից հետո Նիազի էֆենդին, ուղիղ կանգնելով ու նահանգապետի և իր միջև եղած բարեկամական հարաբերություններին անդրադառնալով, ասաց, թե քանի ուշ ոմբակոծել էին Տրապիզոնը, որից հետո նավահանգստի մոտակայքում ինքնաշարժ ական էր դրվել, և մի մակույկ, այդ ականներից մեկին դիաչելով, խորտակվել էր: Ինքը, նավապետի ծիչը լսելով, նավակով գնացել էր՝ փրկելու նպատակով: Փրկել էր նավապետին: Վերջինս դրա, ինչպես նաև՝ հայրենիքին այլ բազմաթիվ ծառայություններ մատուցած լինելու համար իրեն կանչել էր և իր երախտագիտությունը հայտնել: Այդ մտերմությունն էլ առաջացել է միմիայն այդ ծառայությունների արդյունքում, և այսօր ոչ ոք չի կարող իրեն մեղադրել դրամ շորթելու և անօրինականություններ անելու մեջ: Նիազի էֆենդին ի պաշտպանություն իրեն դեռ շատ այլ բաներ ասաց:

Այնուհետև Լյութֆի թեյն աշխատեց հերքել Նիազի էֆենդու խոսքերը և իր պնդումներն ապացուցել՝ որոշ փաստաթղթեր ներկայացնելով: Լյութֆի թեյն ասաց նաև, թե ցավում է, որ կենտրոնական կոմիտեի անդամ Ռոզա թեյին տեսնում է մեղադրյալի աթոռին: Նա նաև նշեց, որ խիղճը տանջող այդ խնդիրների մասին հայտնել է ամիրին: Դրանք ևս ընթերցեց, որից հետո դատարանի կազմի անդամներից Մուստաֆա փաշան որոշ կարևոր հարցեր տվեց վկային: Հենց որ Լյութֆի թեյը պատասխանեց այդ հարցերի մի մասին, Ալի Սայիր թեյը, ոտքի ելնելով, ասաց, թե վկայի խոսքերն արժանահավատ չեն, և որ թեև Մահմուտ Թյամիլ փաշան իրեն կանչել է զինվորական ծառայության, սակայն նահանգապետ Ազմի թեյը չի ուղարկել: Դրա համար անհրաժեշտ էր, որ Լյութֆի թեյը նահանգապետի բարեկամությունը իրենցից ավելի շատ շահած լիներ:

Առաջին նիստն ավարտվեց ժամը 13:30-ին:

Նիստ Երկրորդ

Երկրորդ նիստն սկսվեց ժամը 14:30-ին: Այս անգամ Ռեզեփ Ֆերդի բեյին փոխարինում էր ստաժոր Լյութֆի բեյը: Նախ վկաներից դատարան հրավիրվեց Ավնի բեյը: Նրան տվեցին անցած անգամվա հարցերը, քանի որ նախորդ վկայության ժամանակ պատասխանները ոչ բավարար էին համարվել: Վկան այդ հարցերին պատասխանելուց հետո դուրս եկավ: Այնուհետև նախագահը որոշ հարցեր տվեց մաքսատան տեսուչ Մեհմեդ Ալի բեյին: Երկրորդ նիստն ավարտվեց ժամը 15:05-ին: Դատը շարունակվելու է հինգշաբթի օրը՝ ժամը 10-ին:

10-ը ապրիլի, 1919 թ., «Ալեմդար»

Ռազմական արտակարգ ատյանում Տրապիզոնի դատավարությունը

Նիստ առաջին

Երեկ՝ ժամը 11:20-ից, ռազմական արտակարգ ատյանն սկսեց ուսումնասիրել Տրապիզոնի հայերի տեղահանության գործը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս առաջին տեղակալ Թալիաթ բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուն պես բոլոր մեղադրյալներին դուրս տարած՝ բացի ոստիկանապետ Նորի բեյից: Հարցաքննությունն սկսվեց: Նորի բեյը հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. ինքը լրված գույքը ոստիկանների միջոցով ոչ մի տեղ չի տեղափոխել, հասարակական կարգուկանոնը պահպանելու նպատակով պատժել է փոքրոգություն ցուցաբերած ոստիկաններին, ամերիկան դպրոցի պահեստը չի դասակարգվել, այնտեղ է գտնվել միայն

թանկարժեք իրերի հանձնաժողովը, որում ընդգրկված են եղել գյուղատնտեսության տեսուչը, Ալի Սայիր բեյը և այլք: Հանձնաժողովի ցուցակները պահպանվում էին կոմիսար Ալի էֆենդու կողմից: Ինքը տեղյակ չէ՝ գոյքի մասին տեսչին անդորրագիր տրվել է, թե ոչ, սակայն երբ մի օր այնտեղ է գնացել, հաջորդ օրը նկատել է, որ մեկը յուրացրել է լրված իրերը: Զափազանցված են այն լուրերը, համաձայն որոնց՝ առաջին օրը յուրացվել է 3000 լիրա, 150 մանաթ և 80 կտոր արծաթ, բայց կոնկրետ քանակի մասին տեղեկություն չունի: Նորի բեյի ցուցմունքների համաձայն՝ վարձակալության տակ գտնվող տունը պատկանում էր ոչ թե հայերին, այլ ոմն Խսմայիլ էֆենդու վարձու տունն էր: Մեղադրյալը նշեց նաև, որ ինքը վերոհիշյալ տունը վարձել էր 3 լիրայով, տարագրված ընտանիքը հեռանալիս անդորրագրով հանձնել էր Խսմայիլ էֆենդուն, իսկ ինքը տունը վարձել էր՝ ներսի իրերը Խսմայիլ էֆենդուն պատկանելու մասին պաշտոնացին հավաստիանալուց հետո միայն: Տանը միայն խոհանոցային սպասք չի եղել: Բացարձակ սուս են իրերն իր կողմից յուրացվելու մասին լուրերը: Ըստ մեղադրյալի՝ խարենություն էին դադստանցի ոստիկան Նորի էֆենդու ցուցմունքները: Ինքը եղել է փախստականներից: Իր մասին հայտարարությունը սխալ է: Երկու ոստիկանի կողմից երկու հայ աղջկա նկատմամբ կատարված հարձակման մի դեպք է գրանցվել միայն, աղջկները հանձնվել են ոչ թե մետրոպոլիտին, այլ՝ Կոստակի էֆենդուն: Մեղադրյալը հայտնեց նաև, որ ինքը հիշում է Վարդանին պատկանած դրամապանակի մասին: Այդ կապակցությամբ գործակալ Մուստաֆա էֆենդու մոտ հետաքննություն է կատարել, որի արդյունքում Մուստաֆա էֆենդին հավաստիացրել է իրեն, թե դրամարկողը ինքը վալիին է հանձնել և, քանի որ Մուստաֆա էֆենդին հայտնի և պատվարժան անձնավորություն էր, ինքը վստահել

էր [նրա խոսքերին]: Աղջիկներին ամենամոտ թշնամու⁴⁰⁴ հպատակ հանդիսացող Կոստակի էֆենդուն հանձնելու հանգամանքը արժանացել էր նահանգապետի հավանությանը:

Մեղադրյալը վերոհիշյալ ցուցմունքներով համդես գալուց հետո դուրս եկավ:

Ներս բերվեց Նիազի էֆենդին, որին տրվեցին բազում և տարաբնույթ հարցեր: Նիազի էֆենդին հայտնեց, որ բանակից ստացված 2 խանութի իրերն իրեն են հասել աճուրդի ժամապարհով: Գնումները մանրամասնորեն թվարկելուց հետո (սրանցից մեկը գնվել էր 2500, իսկ մյուսը՝ 400 լիրայով) նշեց, թե ինքն աճուրդին միջնորդադրամ էր վճարել, իսկ մակլերներին ուղարկում էր քաղաքապետարանը: Մեղադրյալի համոզմամբ՝ ծշմարտությանը չեն համապատասխանում աճուրդի ժամանակ իր՝ վճարելու խոսքից հետ կանգնելու և իրերը յուրացնելու մասին տեղեկությունները. տեղահանության գործին երրկից մասնակցություն չի ունեցել, իսկ եթե մասնակցած լիներ և գոյքի հափշտակման հետ առնչություն ունեցած լիներ, ապա ցավով կիսոստովաներ դրա մասին և կկրեր իրեն հասանելիք պատիժը: Մեղադրյալն ընդգծեց, թե ինքն իր պաշտոնը երբեք չի չարաշահել այնպիսի անպատվարեր գործի նախաձեռնությամբ, ինչպիսին էր գոյքի յուրացումը:

Այնուհետև ընթերցվեց ոստիկան հսլամ էֆենդու ցուցմունքը: Նիազի էֆենդին մի քանի այլ մեկնաբանություններ ևս կատարեց, որից հետո, ժամանակի սղության պատճառով ժամը 12:30-ին նիստն ավարտվեց. հայտարարվեց ընդմիջում մինչև ժամը 15:00-ը:

⁴⁰⁴ Ի նկատի ունի՝ հույն:

Նիստ երկրորդ

Նևաբ բեյի դատավարությունը⁴⁰⁵

Ժամը 14:30-ին դատարանի կազմը մտավ դահլիճ, և սկսվեց Նևաբ բեյի գործի քննությունը: Դատախազի պաշտոնը գրադարձնում էր Ռեշադ բեյը: Սկզբում, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ կանչված վկան չէր ներկայացել, մեղադրյալին հարցաքննեցին Յակուր Զեմիլի խնդրի կապակցությամբ: Այնժամ դատապաշտպան Հայրի բեյը ոտքի ելավ և հայտարարեց, թե դրա մասին մեղադրյալը նախկինում ցուցմունքներ տվել էր, և միևնույն հարցերը տալու անհրաժեշտությունը չկար: Սակայն նրա առարկությունը չընդունվեց նախագահողի կողմից: Ապա դատապաշտպանին հարց տրվեց այն մասին, թե Յակուր Զեմիլի խնդրի հետ կապված վերոհիշյալ ուզմական ատյանը ինչ որոշում էր ընդունել: Հայրի բեյը հայտնեց, թե, ուզմական ատյանի որոշման համաձայն, Նևաբ բեյին աքսորել են Մոսովը: Այնժամ դատախազի տեղակալը նշեց, թե Բարձր Դոան դեպքերի ընթացքում կատարված Նազըմ փաշայի սպանության հեղինակն է Եղել Յակուր Զեմիլը, իսկ Նևաբ բեյը Բարձր Դոան խնդրի հետ առնչվել է Յակուր Զեմիլի հետ համատեղ: Այդ պահին Յակուր Զեմիլի գործի քննության հետ կապված որոշ վիճարանություններ եղան նախագահի, դատախազի և դատապաշտպանի միջև: Նախա-

⁴⁰⁵ Մոսովի նախկին գլխավոր հրամանատար Նևաբ բեյի դատաքննության շրջանակներում վկայություններ են արձանագրվել մեղադրյալի՝ արտղայալ հայերի մոտից մետաղադրամներ խելքու մասին: Մոսովի քաղաքաբանի խորհրդական Չերքեզ Բերին տվյալ ցուցմունքի համաձայն՝ Նևաբը փակել է տվյալ հայերի բոլոր խանութները, նրանց աքսորել դեպի անապատները և սպանել տվյալ: 1919 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած նորությունը ընթերցվել է Ստամբուլի մաքսատան վարչության վիճակագրական գումարային քարտուղարներից Զենալի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Մոսովլու «հայ կամաց ժամանակակից ներկավոր ողջ գիշեր»: Քանի որ Նևաբը 1919 թ. մայիսի 28-ին բրիտանացիների կողմէց Սալրա աքսորված մեղադրյալների շարքում է Եղել, նրա դատավարությունը հետաձգվել է և այլև չի շարունակվել: Վերոհիշյալ մեղադրյալը հետազայլ 1921 թ. սպառների 6-ին, փախնել է աքսորավայրից:

գահն ընդգծեց ամեն տեսակի հարց տալու իր իրավունքը, իսկ դատախազը պահանջեց, որ դատապաշտպանները ամեն ինչին չառարկեն:

Ապա հարցաքննությունը վերսկսվեց: Նևաբթ բեյը ցուցմունքներ տվեց այն մասին, որ ինքը քաղաքի պարետատանը չի հյուրընկալել Արդու Ռեզաք էֆենդուն, ոչ մի առնչություն չի ունեցել վալիի հետ: Թերևս ինքն առնչվել է Հալիլ բեյի հետ՝ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջինս զինվոր է եղել, իսկ ինքը՝ իրամանատար: Ապա մեղադրյալն ընդգծեց, թե ինքը չի սպանել Արդու Ռեզաք էֆենդուն, առավել ևս չի մասնակցել դիակը վերացնելուն ուղղված գործողություններին: Մեղադրյալի համոզմունքով՝ իրեն վերագրված բոլոր մեղադրանքներն անհիմն են. ինքը պատվախնդիր զինվոր է եղել, վկաների ցուցմունքները սուտ են: Ինքն իր պաշտոնական պարտականությունները կատարել է անթերի, հնարավորության դեպքում կարող է մատնանշել հօգուտ իրեն հանդես եկող վկաների:

Մեղադրյալի կողմից տրված այս ցուցմունքներից հետո, վկաների չժամանելու պատճառով, նիստը հետաձգվեց մինչև չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ը:

Տրապահությունը

Նիստ երրորդ

Տրապահությունի դատավարության նիստը երեկ վերսկսվեց ժամը 15:38-ին: Մեղադրող կողմը ներկայացնում էր [դատախազի] տեղակալներից Թալեաթ բեյը: Վկաներից նախ դաիլիճ իրավիրվեց զինվոր շտարի փոխգնդապետ Մուհետ բեյը, որի երդումից հետո հար-

ցաքննությունն սկսվեց: Վկան հայտնեց, որ տեղահանության ժամանակ բացակայել է Տրապահությունից, սակայն Գիրեսունում կայմակամ Արիֆ բեյից [տեղահանության մասին] տեղեկանալով՝ վերադարձել է Տրապահությունից, որտեղ իշխանել է նահանգապետ Ազմիի մոտ, որն իր վրա էր վերցրել արտահանման հետ կապված բոլոր գործերի պատասխանատվությունը: Ընդ որում՝ նահանգապետն այդ պաշտոնում նշանակվել էր բանակի [իրամանատարության] կողմից: Վկան նաև նշեց, թե [բանակի] իրամանատարության պարտականությունը սահմանափակվում էր միայն ջոկատների և ափերի ղեկավարությամբ: Մուհետ բեյը հայտնեց, որ մեղադրյալների մասին ինքը ոչինչ չի լսել: Միայն տեղյակ է, որ Ռյազա բեյը գրադիում էր բացառապետ Հատուկ կազմակերպության խնդիրներով, իսկ Մուստաֆա էֆենդին՝ տարագրության: Վկայի տեղեկությունների համաձայն՝ բժիշկ Ալի Սայիր բեյն առողջապահության տեսուչ է եղել ու, թեև ոչ մի հանցագործություն չի կատարել, ամեն դեպքում նրա դեմ ուղղված ցուցմունքներ են գրանցվել: Թալեաթ բեյին նմանապետ որպես պատվարժան պաշտոնյայի է ճանաչում, իսկ Նիազի բեյի հետ ծանոթ չի եղել: Վկայի խոսքերով՝ Մուստաֆա բեյը տեղահանությանը չի մասնակցել ո՛չ որպես մատակարար, ո՛չ էլ որպես պաշտոնյա: Մուհետ բեյը տեղեկություններ չուներ Էրզրումի նախկին վայի Թահիսին բեյի՝ ճանապարհին հանդիպած քարավանների անվտանգության համար մեկերկու ոստիկան առաքված լինելու մասին: Վկան հայտնեց նաև, որ Ալի Սայիր բեյը հաճախ է խոսել վայիի անմիտ քայլերի մասին: Վկան նշեց, թե տեղյակ է Կարմիր մահիկ հիվանդանոցի մասին: Այլ ուազմական օթևան-հիվանդանոցները նույնպես պատկանում էին նահանգապետին: Վկայի ցուցմունքների համաձայն՝ Մուստաֆա էֆենդուն վստահված պաշտոնական պարտականությունների կատարման մեջ հանցագործության ոչ մի դրդապատճառ չի նկատվել:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո վկան դուրս եկավ դահլիճից: Ներս մտավ հարյուրապես Մեհմեդ Ալի բեյը, որը երդվեց: Նախագահը վկային խնդրեց հայտնել մեղադրյալների մասին իր ունեցած տեղեկությունները: Մեհմեդ Ալի բեյը նշեց, թե հայերի տեղահանության ժամանակ ինքը գտնվել է ռազմածակատում, իսկ փոխադրման միջոցները պատկանել են մի քանի հոգու: Այս ցուցմունքներով հանդես գալուց հետո վկան դուրս եկավ:

Այնուհետև բոլոր մեղադրյալները դուրս տարվեցին՝ բացի Թալեաթ բեյից: Վերջինս հայտնեց, որ Տրապիզոնի ժանդարմերիայի հրամանատարը եղել է Թեֆիկ բեյը, որը հնարավորինս անթերի է կատարել իր պաշտոնական պարտականությունները: Մեղադրյալի ցուցմունքների համաձայն՝ տեղահանությունն իրականացվում էր զորահավաքի հոչակումից հետո կազմված շարժական ժանդարմերիայի գործի կողմից: Թալեաթ բեյը նշեց, որ ժանդարմերիայի գումարտակի հրամանատարի պաշտոնը գրադերել են տարրեր անձինք: Մեղադրյալը հավաստիացնում էր, թե լսված դեպքերի առնչությամբ պաշտոնապես քայլեր են ձեռնարկվել: Թալեաթ բեյը հայտնեց նաև, որ ռազմական հարկերի հանձնաժողովը բաղկացած է եղել 6 հոգուց, ինքը միշտ էլ արհեստավարժ աշխատող է եղել և երբեք որևէ կուսակցության չի հարել:

Մեղադրյալի վերոհիշյալ ցուցմունքներից հետո նիստը հետաձգվեց մինչև շաբաթ օրը՝ ժամը 13:00-ը:

11-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Տրապիզոնի տեղահանության դատավարությունը Ռազմական արտակարգ ատյանում

Տրապիզոնի դատավարությունը երեկ շարունակվեց ժամը 14:30-ին: Դատախազի պաշտոնում էր գլխավոր տեղակալ Թալեաթը: Վկաներից նախ դատարան իրավիրվեց ժանդարմերիայի ավագ լեյտենանտ Մյունիր Էֆենդին, որը հարցաքննության ընթարկվեց երդվելուց հետո: Վկան հայտնեց, որ ժանաչում է Նիազի և Թալեաթ բեյին: Ասաց, թե ինքը տեղահանության ժամանակ եղել է Տրապիզոնում, տեղահանությունն սկսվել է 331 թ. (1915) հունիսին, մանրամասն բացատրեց, թե Տրապիզոնում իր գտնված վայրում ինչպես է կատարվել տեղահանությունը, և մասնավորապես ինքը ինչ պարտականություններ է ունեցել տեղահանության ընթացքում: Մյունիր Էֆենդին նշեց, որ երբ մի օր հագուստը փոխելիս է եղել, Տրապիզոնի Պետական պարտքի գրասենյակի պաշտոնյան եկել և հայտնել է, թե հայերին լցուել են բեռնանավերը և ծովը նետելով՝ ոչնչացրել: Մի գիշեր, երբ ինքը անկողնում պառկած է եղել, մի քանի զինված անձինք ջարդել են իր դուռը. նրանց մեջ է եղել նաև քաղին⁴⁰⁶: Նրանք ներս մտնելուն պես մի նամակ են հանձնել իրեն: Նամակում հայերի տեղահանությանը վերաբերող հաղորդագրությամբ նշվում էր, թե ինքը գյուղական վարչական պաշտոնյաներից Օմեր Էֆենդու հետ մեկտեղ նշանակվել է տեղահանության համար պատասխանատու հրամանատար: Նամակին կցված է եղել հայերի տարագրվելու կերպի վերաբերյալ մի կանոնադրություն, որը բաղկացած է եղել 25 հոդվածներից: Տեղահանության համար իրեն տրվում էր 5 օր ժամանակ: Վկան պատմեց նաև այդ ընթացքում իր հետ պատահած դեպքերի մասին, որոնց պատճառով հեռացվել է ժանդարմությունից, քանի որ նկատի

⁴⁰⁶ Մահմեդական դատավոր:

Են առել Տրապիզոնի ժամարմերիայի հրամանատար Թեֆիկ բեյի չարաշահումները: Վկայի վերոնշյալ ցուցմունքներից հետո պարզ է, որ վկան թե՝ դատախազության պահանջով և թե՝ դատարանի կազմի կամքով չի ներկայացել վկայություն տալու համար: Նրան դուրս տարան, քանի որ երբ, որպես վերջին հարց, նրան հարցրեցին, թե մեղադրյալների մասին որևէ բան լսել է, նա հայտնեց, թե ոչինչ չգիտե, և պահանջեց միայն վերոհիշյալ Թեֆիկ բեյի դատապարտումը:

Այսուհետև դատարան հրավիրվեց ներկայում Սննդի նախարարությունում աշխատող Մեհմեդ Ալի բեյը, որը երդվեց ըստ ընդունված կարգի, ապա տեղեկություններ տվեց որոշ մեղադրյալների և տեղահանության ժամանակ կատարված չարագործությունների և սպանությունների վերաբերյալ: Ընթերցվեցին Հետաքննիչ հանձնաժողովին տված նրա ցուցմունքները, որից հետո թե՝ մեղադրյալ Մուստաֆան և թե՝ դատապաշտպան Շեֆքարին, ոտքի կանգնելով, ասացին, թե Մեհմեդ Ալի բեյը նախկինում դատված է եղել, և որ Մաքսատան վարչության մատյանից պարզ կդառնա, թե ինչ մարդ է նա իրականում: Ըստ վերոհիշյալների՝ Մեհմեդ Ալի բեյը անամոթաբար է վերաբերվել Տրապիզոնում իսլամացած մեկի հետ, որին զրկել է կուսությունից, ինչպես նաև՝ կողոպտել է հայերի գույքը: Նրանք պահանջեցին Մաքսատան վարչությունից բերել այդ գործի թարգմանությունը:

Նախագահը դարձյալ կանչեց վկա Աբդուլլահ Էֆենդուն, որին նկատեց ունկնդիրների շարքերում: Եվ երբ Աբդուլլահ Էֆենդին արդեն երկրորդ անգամ պատմեց, թե ինչպես է պաշտպանել տիկին Արսլանյանին, պարզվեց, որ Մեհմեդ Ալի բեյի պատմաճները ամբողջությամբ սուտ էին:

Այդ պահին դատախազի տեղակալը, ոտքի կանգնելով, պա-

հանջեց, որ Մեհմեդ Ալի բեյը պարզաբանի այն մեծ հակասությունը, որը նկատվեց նրա գրավոր ու բանավոր ցուցմունքների միջև: Դատախազի տեղակալը հարցրեց, թե քանի որ նրա խոսքերը լիովին բացարկվում են, ապա ինչի՞ վրա է հիմնվում նրա հայտարարությունը: Մեհմեդ Ալի բեյը կրկին ինչ-որ խոսափողական բաներ ասաց:

Նախագահը հայտարարեց. «Ծա՛տ լավ, բայց ի նկատի ունեցեք, որ երբ որևէ վկայի սուտ խոսելը հաստատվում է, նա պատժվում է ամենայն խոստությամբ»:

Ապա բոլոր մեղադրյալները դուրս տարվեցին՝ բացի Թալեաթ բեյից: Սկսվեց վերջինիս հարցաքննությունը: Նա հայտնեց, թե չէր կարող տեղյակ լինել Ռազմական հարկերի հանձնաժողովից մեղադրյալ Մեհմեդ Ալի բեյի՝ կոնյակ գնելուն վերաբերող որոշ գործերի մասին, անհրաժեշտ կլինի այդ հանգամանքը ճշտել Ռազմական հարկերի հանձնաժողովի թթապանակներից, և որ ինքը երբեք չէր հանդուրժի Մեհմեդ Ալի բեյի՝ կոնյակի հետ կապված չարաշահումները: Թալեաթն այս ամենն ասելուց հետո դուրս տարվեց: Ներս բերվեց Մեհմեդ Ալին: Վերջինիս հարցրեցին, թե Ռազմական հարկերի հանձնաժողովի անունից որևէ գնում արել է, թե ոչ: Նա ասաց, թե քանի որ Ռազմական հարկերի հանձնաժողովում ոչ մի պաշտոն չի ունեցել, ապա գնումներ էլ չէր կարող արած լինել: Նրա վերոհիշյալ խոսքերից հետո Թալեաթ բեյը դարձյալ բերվեց դատական դահլիճ, քանի որ հակասություն նկատեցին այս երկուսի ասածների միջև: Ծարունակվեց նրանց համատեղ հարցաքննությունը:

Նրանք երկուսն էլ հայտնեցին, թե մեկ-երկու թաղամասում գտնվող տնային ամբարներն այրվել են, պատմեցին իրենց լսածների մասին: Ասացին, որ Մեհմեդ Ալի բեյը դատվել է շաքարի խնդրի կապակցությամբ, դատարանում մենակ է եղել, և Ռազմական ատյան գոյություն չի ունեցել:

Այս ցուցմունքներից հետո նրանք երկուսն էլ դուրս տարվեցին. դատարան կանչվեց թիշկ Ալի Սայիր բեյը, որը պատմեց, թե Թանկարժեք իրերի հանձնաժողովում պաշտոնավարել է ընդամենը մեկ օր՝ այն էլ երկու ժամ, և թե ինչպես է ընդունել այդ երկժամանց պաշտոնը: Գոյություն է ունեցել իրերի ցուցակ: Ինքը չի կարողանում հիշել՝ դպրոցի տնօրենի բացակայության ժամանակ վերոհիշյալ ցուցակի մի բանի էջերը պոկված եղել են, թե ոչ: Նման բան չէր կարող պատահել: Այդ իրերի արժեքը գնահատված է եղել: Ինքը տեղյակ չէ, թե որքան է եղել դրանց ընդհանուր գումարը: Ինքը երբեք չարաշահումներ չի արել: Այդ գործի պատճառով ոչ ոք չէր արատավորի իր պատիվը: Եթե որևէ մեկը նման բան ասել ցանկանա, ապա անհրաժեշտ կլինի դա ապացուցել դատարանում: Եթե ապացուցներ գտնվեն, ապա ինքն էլ կապացուի, որ այդ հանձնաժողովում ոչ մի չարաշահում չի արել: Ինքը տեղահանությունից առաջ պատսպարել է մի մահմեղականի, ապա՝ մի հայի, սակայն իր երկրորդ բնակության վայրում երբեք լրված գոյք չի եղել: Եթե անզամ նման իրեր լինեին էլ, իր չափ ազնիվ պաշտոնյան նման ստորություն չէր անի: (Այդ պահին ընթերցվեց վկաներից մեկի ցուցմունքը՝ լրված գոյքը վերցնելու մասին):

Սայիր բեյն ասաց, որ անհրաժեշտության դեպքում ինքը կարող է վկաներ ներկայացնել, և դուրս եկավ:

Դատական դահլիճ թերվեց ոստիկանապետ Նուրի Էֆենդին: Վերջինս խոսեց այն մասին, որ մինչև տեղահանության վերջը, ուղամական դրությունից բխած անհրաժեշտության համաձայն, ժամը 15:00-ից հետո փողոց դուրս գալը արգելված է եղել: Ինքը տեղյակ չէ, թե որքան է տևել այդ արգելքը, և արդյոք լրված գոյքը տեղափոխելու հատուկ նպատակ եղել է, թե ոչ: Ոստիկանապետ Նուրին պատասխանեց նաև այլ հարցերի: Ժամանակի սղության պատճառով

ժամը 16:45-ին դատն ավարտվեց: Այն կշարունակվի հինգշաբթի օրը՝ ժամը 13:30-ին:

13-ը ապրիլի, 1919 թ., «Ալեմդար»

Տրապիզոնի կոտորածների և տեղահանության ամբաստանագրի ընթերցումը

Երեկ Ռազմական արտակարգ ատյանը դատարանի նախագահ Մուստաֆա ֆաշայի նախագահությամբ նիստ իրավիրեց և շարունակեց Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների մասնակցության մեջ մեղադրվողների դատարնությունը: Ընթերցվեց դատախազի կողմից կազմված ներքոհիշյալ ամբաստանագիրը.

«Տրապիզոնի վիլայեթում Միհություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կառավարության կողմից հայերի տեղահանության վերաբերյալ ընդունված որոշումների գործադրման ընթացքում նախ՝ հայ տղամարդկանց և ապա՝ կանանց ու երեխաներին նշանակված վայրեր տեղափոխելիս նրանց մի մասն անգրաբար սպանվել է Դեյիրմենդերեի կողմերում, իսկ կանայք ու երեխաներն էլ թեղնավորվել են նավակները և ջրախեղդ արվել: Հայերի մի մասին էլ, իբր բուժման նպատակով, թունավորել են տարբեր միջոցներով Կարմիր մահիկ հիվանդանոցում, որից հետո կողոպտվել է նրանց գոյքը. դրամը և թանկարժեք իրերը: Ողջ մարդկության կողմից անեծքով ու նողկանքով հիշվելու արժանի նման անամոք արարքների ու հանցագործությունների հանդանած և այժմ փախուստի մեջ գտնվող Տրապիզոնի նահանգապետ Զեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբաշենի Նայիլի, ինչպես նաև՝ դատարանում ներկա գտնվող Մեհմեդ Ալիի, Մուստաֆայի, Նիազիի,

Նորիի և մյուս հանցակիցների մասնակցությունն այդ վիթխարի կոտորածին հիմք են տալիս պատիճ սահմանելու համար: Նրանց հետաքննությունը, նախ և առաջ, բխում է օրենքի անհրաժեշտությունից: Եվ, ի վերջո, ովքեր են Ազմին ու Նայիլը: Սրանք ոչ թե պետական կամ վարչական պաշտոնյաներ են, այլ՝ ինը տարի առաջ պետության դեկը պատահարար ձեռք զցած, առանձին կամ խմբակային բռնությունների, կոտորածների, անօրինականությունների, անհատնում չարաշահումների հետևանքով սովորական կառավարությանն այսօրվա ողբայի վիճակին հասցրած կործանիչ ձեռքերից ու վայրենի ուղեղներից բաղկացած Միություն և առաջադիմություն կոչեցյալ ավագակախմբի հանցագործ ներկայացուցիչներն են Տրավիզոնում:

Մեղաղրող կողմը վերոնշյալով ներկայացրեց Զեմալ Ազմին ու Յենիբահչելի Նայիլն վերաբերող իր տեսակետն ու մեկնաբանությունը: Այսինքն՝ վերոհիշյալ երկուար զիխավոր հանցագործներն են, գործող անձինք: Բնականաբար միայն Զեմալ Ազմին ու Նայիլը չեն կարող այդ ահոելի սպանդն իրականացնել: Վերոհիշյալ ավագակախմբի ուժային մուահղացումները կյանքի կոչելու համար բազմաթիվ գործիքների կարիք էր զգացվում: Գաղափարը և կիրառվող մեթոդն էլ այն էր, որ որպես գործիք ընտրվեն պրիմիտիվ, սահմանափակ, արագ ազդեցության տակ ընկնող, սեփական ջանքերով առաջնորդաց գրանցելուն անկարող մարդիկ: Անկասկած է, որ թիւ թե շատ զարգացած մեկը չէր կարող ողջ մարդկությանը հուզած այդ ոժիրների մասնակիցը դառնալ: Այդ իսկ պատճառով կատարված հետաքննության և դատավարության ընթացքում հարցաքննված վկաների, ինչպես նաև՝ բազմաթիվ այլ անձանց տված հավաստի տեղեկություններից ու Վեհիր փաշայի փաստաթղթերի մեջ պահպանված գեկուցումներից արված մեր եզրակացության համաձայն, քանի որ Զեմալ Ազմին ու պատասխանատու բարտուղար Յենիբահչելի Նայիլը տվյալ դեպքե-

րին մասնակցել են միասին, նրանք պետք է պատճեն ըստ 45-րդ և 170-րդ հոդվածների: Քանի որ Նիազի, Մուստաֆա, Նորի, Միհմեն Ալի և բժիշկ Ալի Սայիր բեյերը տվյալ հանցագործություններին մասնակցություն են ունեցել մասնակի կերպով, ապա նրանք պետք է պատճեն 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ՝ 174-րդ հոդվածի համաձայն: Ինչ վերաբերում է Սայիր բեյին, ապա նա, որպես բժիշկ, հիվանդին թունավորելու անհրաժեշտությունը ցուներ. կարող էր հիվանդներին սպանել՝ դեղերի չափարաժինը մեծացնելով կամ սխալ բուժելով: Դա անընդունելի է բանականության, տրամաբանության և օրենքի կողմից: Եթե անգամ նրանց մարմինները թաղվել են կրոնական արարողությամբ, պետք է դիակները հանել և տեղում դիազնություն կատարելով՝ պարզել, թե որ թույնն է նրանց մահվան պատճառը դարձել, որից հետո, եթե այդ հանցագործությունը հաստատվի, բժիշկ Ալի Սայիրը կարող է լինել տվյալ հանցագործության կատարողը: Քանի որ այսօր նման հնարավորություն չունենք, պահանջում եմ, որպեսզի վերոնշյան այդ հարցում արդարացվի և միայն պատճենի երեխաներին մեծ կողովներով տեղափոխողների հանցագործ գործողություններին աջակից լինելու համար: Պահանջում եմ, որ Ալի Սայիրը մյուս հանցագործների հետ միասին պատճենի քրեական օրենսգրքի՝ տվյալ ոժիրներին վերաբերող 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ, 174-րդ հոդվածի համաձայն: Քանի որ կայմակամ Թալեաթ բեյի՝ տեղահանությանն ու կոտորածներին, ինչպես նաև՝ Ռազմական հարկերի հանձնաժողովներում տեղի ունեցած չարաշահումներին մասնակցություն ունենալու վերաբերյալ դույզն-ինչ ապացույց և հաստատող վկա անգամ չի գտնվել, պահանջում եմ, որ վերոհիշյալ արդարացվի»:

Ամբաստանագրի ընթերցումից հետո դատարանի նախագահը հաղորդեց, որ դատն ընդմիջվում է մինչև շաբաթ օրը՝ ժամը - ու սայսաւ սկսույթ ցույցը տարածության դրա առաջնորդը

9:30-ը, որպեսզի լսվեն դատապաշտպանների պաշտպանական ծառերը, և նիստն ավարտվեց:

16-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

**Ռազմական արտակարգ ատյանում
Տրապիզոնի տեղահանության և կոտորածների
դատավարությունը**

Երեկ ռազմական արտակարգ ատյանում շարունակվեց Տրապիզոնի տեղահանության դատավարությունը: Նիստն սկսվեց ժամը 14:15-ին: Նախ հարցաքննվեց Գիրեսունի կայյմակամ Արիֆ բեյը: Վերջինս հայտնեց, որ բացի Նիհազի բեյից՝ մնացած բոլոր մեղադրյալներին ժամանչում է, իր և նահանգապետի միջև ամեն բան պարզ է եղել, այդ իսկ պատճառով ինքը պաշտոնաթող է եղել, թեև Տրապիզոնում եղած ժամանակ իրեն որոշ խոսակցություններ հասել են առ այն, թե հայերը, իրենց իրերը պահպանության հանձնելուց հետո, հեռացել են, և որ որոշ ողբերգական դեպքեր են պատահել, սակայն դրա մասին իրեն ծշգրիտ ոչինչ հայտնի չէ:

Ապա այդ օրը հրավիրված վկաներից նավահանգստի ղեկավար Ասըմ Էֆենդին հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. «Նահանգապետը նավակները մշտապես իր հրամանի տակ չէր պահում. դա կախված էր լինում մեզ մոտ արված փաստաթղթային ծևակերպումներից: Մենք բոլորովին տեղյակ չէինք նավերի միջոցով կատարվող տարագրման մասին, նավաստիներից ևս որևէ բան իմանալն անհնարին էր, որովհետև միայն իրպեսներին և իր գործին ծեղուտու մարդկանց էր ներգրավում: Մյուսները նույնպես ոչինչ չէին կարողանում ասել: Վայի բռնակալությունը բոլորին այնպես էր ա-

հարեւել, որ, մեծարգո՞ փաշա, եթե Դուք էլ այնտեղ լինեիք, դարձյա՞չ էիք կարողանա որևէ բան ասել: Ես վայիին ոչինչ չէի կարող ամել՝ պաշտոնս կորցնելու վախի պատճառով: Ես թիկունք չունեցող մարդ էի: Գործակալ Մուստաֆա էֆենդին պատվարժան անձնավորույուն է, սակայն վայիի ահից հսկում էր նավերը»:

Այսուհետև մեղադրող կողմի պահանջի հիման վրա վկային հարց տվեցին, թե ինչ գիտի Ալի Սայիր բեյի՝ գիշերով մեծ կողովնով ուղարկված երեսաների մասին, որի առնչությամբ ցուցմունք է տվել վկա Վերժինը՝ գիշերով կատարված տեղահանության կապակցությամբ: Ի պատասխան՝ Ասըմ էֆենդին, իր խոսքը կրկնելով, հայտնեց, թե դա բացարձակ սուտ է, և որ ինքը նույնպես դրա մասին թերթերից է իմացել:

Ասըմ էֆենդուց հետո վկաներից դատական դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի նահանգային վարչության պաշտոնական գրությունների պատասխանատու Ֆուադ բեյը, որի ցուցմունքների համաձայն՝ ինքը տեղյակ չի եղել գաղտնի տեղեկությունների և փաստաթղթերի մասին, վիլայեթում երկու տեսակի գաղտնագիր է եղել, որոնցից մեկից օգնվել է միայն վային: Հավանական էր, որ տպարանում իր կողմից չնկատված որոշ բաներ տպագրվեին:

Ֆուադ բեյի՝ Թանկարժեք իրերի հետախուզական հանձնաժողովի կազմում ընդգրկված լինելու հանգամանքն ի նկատի ունենալով՝ նրան հարցրեցին վայիի կողմից գործակալ Մուստաֆա էֆենդուն տրված թանկարժեք զարդերով արկղիկի մասին: Վկան պատասխանեց, թե տեղեկություններ չունի:

Ապա որպես վկա հրավիրվեց եկամուտների տեսուչ Լյութֆի բեյը: Պարզվեց, որ Լյութֆի բեյը, Լքված գույքի հանձնաժողովում ընդգրկված լինելով հանդերձ, չի աշխատել Ֆուադ բեյի հետ միասին:

Երկուսն էլ տեղեկություններ տվեցին թանկարժեք զարդերով արկղիկի մասին: Լյութֆի բեյն ընդգծեց, թե հանձնման և ընդունման գործողությունները հանձնողների ներկայությամբ չեն կատարվել. դա անհրաժեշտ չեն համարել՝ վստահելով այդ մարդկանց խղճին:

Այի Սայիր բեյին տրված հարցին ի պատասխան՝ վերջինս հայտնեց, որ 100.000 լիրայանոց զարդեղն չի եղել, ինչպես ենթադրվում էր Տրապիզոնում. այն հանձնաժողովին հանձնված զարդեղնը, որում ինքն էլ է ընդգրկված եղել, հազիվ 3-4 հազար լիրա կարող էր կազմել, իսկ մնացածի մասին ինքը տեղեկություններ չունի:

Նախագահն էլ նշեց, թե այստեղ ուղարկված զարդեղնի ընդհանուր գինը 1000 լիրայից ցածր է եղել, և որ այդ ցուցակներն ինքը ցուց կտա Ֆուադ բեյին, առկա զարդեղնի չարաշակումը լիովին ապացուցվել է. այդ հանգամանքը նոյնպես նրանց անփութության ցուցանիշներից է: Ապա վկային հիշեցվեց, որ հաջորդ օրը նոյնպես գա՝ ցուցակը տեսնելու նպատակով:

Այնուհետև դահլիճ բերվեց մյուս վկան՝ Լյութֆի բեյը: Թեև Ֆուադ բեյն ասել էր, թե զարդեղնը Տրապիզոնից Ստամբուլ է բերվել Վիլայեթի ֆինանսական բաժնի վարիչ Լյութֆի բեյի միջոցով, սակայն ինքը հերթեց դա և հայտնեց, որ նահանգային վարչության պաշտոնական գրությունների պատասխանատուն, սեփական կարծիք ունեցող անձնավորություն չլինելով, ընդամեն վայիի հսկողության տակ գտնվող մի լրագրող է եղել, Տրապիզոնում կատարված չարաշակումներին միայն ինքն է արգելք եղել. եթե ինքն էլ չլիներ, ամեն ինչ կողոպտվելու էր: Բացի այդ, ըստ վկայի ցուցմունքների, զարդեղնի քանակը պետք է որ ավելին լիներ՝ ի նկատի ունենալով լրված գույքի մեծաքանակ լինելու հանգամանքը:

Այս վկայի դուրս գալուց հետո ունկնդրության արժանացվեց

տրապիզոնցի Մուլրադի հետևյալ ցուցմունքը. կարծ բովանդակությունը. «Ականատես եմ եղել, թե հայերի՝ Տրապիզոնից դուրս գալուց հետո ինչպես են նրանց բազմաքանակ իրերը, կտորներն ու աղամանդները վաճառվել: Ծախված իրերն ընկնում էին Նիազի էֆենդու և նրա ընկերների ձեռքը: Նիազի էֆենդին յուրացրեց իմ մոտորանավակը և այն վաճառեց Սինոպում: Դեֆթերդար բեյը⁴⁰⁷ ևս տեղյակ է այդ մասին»:

Ապա դատախազի պահանջով հաղորդվեց, որ Մուլրադ դատարան է ներկայացել ոչ թե որպես վկա, այլ՝ հայցվոր, և որ նիստի ավարտից հետո անդրադառնալու են նաև նրա հայցին:

Այնուհետև վկայությամբ հանդես եկավ Երկրորդ քարավանով Դալթաքան բռնագաղթեցված տիկին Սիշտուիին, որից հետո վկաներից հարցաքննվեց տիկին Մանթիկը:

Առաջինի՝ տեղահանության ժամանակ կատարված ողբերգական դեպքերի մանրամասն շարադրանքների և Երկրորդի է՝ Այի Սայիր բեյի՝ հիվանդանոցում կատարած չարագործությունների և մի կնոջ զննության ընթացքում նրան անհանգստացնելու մասին ցուցմունքներին ի պատասխան՝ Այի Սայիր բեյը, «Թեև մինչ այժմ անընդհատ ցուցմունքներ էին տալիս Նիազի և Ռըզա բեյերի դեմ, սակայն պարզվեց, որ նրանք տեղահանության ժամանակ ընդհանրապես բացակայել են քաղաքից. իիմա էլ սկսել են իմ նկատմամբ պահանջախնդրություն ունենալ» ասելով, փորձեց հերքել վկաների ցուցմունքները:

Այնուհետև դատարան հրավիրվեց հեռագրատան տեսուչ Ռիուշթյու էֆենդին, որը հայտնեց, թե ինքը, տիկին Արսլանյանին որպես հոգեքոյց ընդունելով, փրկել է նրան տարագրությունից, սակայն

⁴⁰⁷ Վիլայեթի ֆինանսական բաժնի վարիչը:

հաջողություն չի ունեցել երեխաներին ազատելու գործում:

Ոյուշթյուն է ֆենդին նաև վկայեց, որ տեղահանությունը դեկավարվել է վայի և Նայի բեյի կողմից, որ ինքը մեղադրյալներից բոլորին էլ ճանաչում է, սակայն տեղեկություններ չունի՝ նրանք տեղահանության գործին մասնակցել են, թե ոչ. նրանց տեսել է միայն իրենց վերաբերող գործերով գրաղվելիս:

Նիստն ընդմիջվեց ժամը 17:30-ին. շարունակվելու է չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

27-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Տրապիզոնի տեղահանության դատավարությունը

Երեկ՝ ժամը 13:45-ին, ուզմական ատյանում Նազըմ փաշան շարունակեց Տրապիզոնի տեղահանության առնչվող դեպքերի դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս տեղակալներից Նաբիթ բեյը:

Նախ դատարան կանչվեց և երդում տվեց վկաներից Վանի նախկին վայի Նազըմ բեյը, որը, իրեն ուղղված հարցերին պատասխանելով, հայտնեց, թե տեղահանության վերաբերյալ իր ունեցած տեղեկությունները հիմնականում հիմնված են խոսակցությունների վրա, Տրապիզոնի նախկին վայի Զեմալ Ազմի բեյի և իր միջև եղած թշնամության պատճառով չի կարող նրա մասին վկայություններ տալ, մեղադրյալներից ճանաչում է Ռըզա և Մուստաֆա բեյերին, սակայն նրանց՝ այդ գործերով գրաղվելու մասին ոչինչ չի լսել: Լրված գույքի մասին գիտի միայն, որ հայերի գույքը տեղավորել են պահստներում, դրանք եղել են խառնիխուն վիճակում, իր եղած նախ-

կին հանձնաժողովում և ցուցակները կարգավորված չեն եղել: Ծովում տեղի ունեցած անօրինականությունների մասին շատ բան է լսել, սակայն պատմել չի ցանկանում, քանի որ դրանք բոլորն եւ հիմնված են իրեն հասած խոսակցությունների վրա. ինքը դրանց չի հավատում:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև [Տրապիզոնի] նախկին նահանգապետ Զեմալ Ազմի բեյի կատարած չարագործությունների և Նորի ու Մեհմետ Ալի բեյերի կողմից մի հայ կնոջ և երեխաներին ծովը նետելու մասին:

Այս վկայությունները տալուց հետո Նազըմ բեյը դուրս եկավ:

Դատարանի դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի վերաբնիչ դատարանի նախագահ Հիլմի բեյը: Վկան հայտնեց, որ ինքն ընդգրկված է եղել տարաբնույթ հանձնաժողովների կազմում, Վածառքի հանձնաժողովի գործողությունների կանոնակարգումը կատարվել է գրասենյակում: Հիլմի բեյը նշեց, թե վային լավ մտադրություններ չի ունեցել. դրանով է պայմանավորված եղել Տեղահանության հանձնաժողովի անկազմակերպ լինելու հանգամանքը:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո վկան նկարագրեց նաև հանձնաժողովում կատարված գործողությունները:

Այնժամ նախագահը հարցեց. «Նման խճված գործի մեջ ինչո՞ւ խառնվեցիք: Չէ՞ք կարող հրաժարական տալ»:

Հիլմի բեյը պատասխանեց, որ թեև հրաժարական տվել է, սակայն այն չի ընդունվել, և որ եթե վային ցանկանար, կարող էր կանխել այդ բոլոր չարագործությունները: Վկան նաև նկարագրեց թանկարժեք իրերի հանձնաժողովի գործողությունները և դրանց հանգամանքները, ապա հայտնեց, որ հայերից վերցված զարդեղնը

նախ՝ պահպանվել է քաղաքապետարանում, ապա՝ այն լցրել են սնդուկների մեջ:

Հիմի բեյը նշեց նաև, թե ինքը գանձարկոյի մասին տեղեկություններ չունի, իսկ կուտակված զարդեղենի վերջնական արժեքը կարող էր 3-4 հազար լիրա կազմել: Անդրադառնալով թանկարժեք իրեք հանձնաժողովում կատարված չարաշահումներին՝ վկան հայտնեց, թե ինքը տեղյակ չի եղել դրանց մասին, քանի որ չարաշահումները հայտնի չդարձնելու համար որոշ էջեր պոկված են եղել:

Ապա ընթերցվեց այդ գործի կապակցությամբ հարցաքննված վկա Նազըմ բեյի գրավոր ցուցմունքը, որի առնչությամբ հարցեր տվեցին Հիլմի բեյին: Այնուհետև դահլիճ բերվեց վերոհիշյալ Նազըմ բեյը, որը հայտնեց, թե ճանաչում է Հիլմի բեյին, իսկ վերջինս նշեց, թե մեկ անգամ է տեսել Նազըմին:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև Վալիի կողմից արված հայտարարության առնչությամբ և դրու եկավ:

Վերսկսվեց Հիլմի բեյի առանձին հարցաքննությունը: Կատարված ողբերգական դեպքերին անդրադառնալով՝ նախագահը շեշտեց Տրապիզոնի դատախազի միջամտության անհրաժեշտությունը: Ի պատասխան՝ Հիլմի բեյը հայտարարեց. «Զմիջամտեց և չէր էլ կարող միջամտել»:

Այնուհետև դատարան կանչվեց առողջապահության տեսուչ Սաղրեթին բեյը: Նրա անձնական տվյալները հրապարակելուց հետո հարցաքննությունն սկսվեց: Սաղրեթին բեյը ցուցմունքներ տվեց առ այն, որ տեղահանության ժամանակ ինքը Տրապիզոնում չի եղել և ոչինչ չի լսել ողբերգական դեպքերի մասին, ծանոթ է եղել Ալի Սայիր բեյի հետ, սակայն վերջինս, վկայի ցուցմունքների համաձայն, ոչ մի առնչություն չի ունեցել Կարմիր մահիկ հիվանդանոցի հետ: Վկայի

վերոհիշյալ ցուցմունքներից հետո մեղադրյալներից Ալի Սայիր բեյը ոտքի կանգնելով, հայտարարեց, թե քանի որ վկայի ցուցմունքները ծշմարիտ են, ինքը հավելելու բան չունի, սակայն եթե անգամ բոլոր վկաների ցուցմունքները լիովին ապացուցվեն, միևնույն է՝ տեսայի գեկուցը չի համապատասխանում ծշմարտությանը. թեև Սաղրեթին բեյը նախակինում ասել էր, թե իր կողմից Տրապիզոնում կատարվելու մանրակրկիտ հետաքննությունը լավ արդյունք չէր կարող տալ, սակայն, ամբաստանյալ Ալի Սայիր բեյի կարծիքով, Սաղրեթին բեյի այդ խոսքերը բխում էին նրա ունեցած քաղաքական հայացքներից և այդ համոզմունքով էին ասվել:

Դրանից հետո Սաղրեթին բեյը դրվս եկավ:

Ներս բերվեց նավագնացության գործակալության նախկին պաշտոնյա Իրհամ էֆենդին, որը երդում տալուց հետո հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանության ժամանակ ինքը եղել է Ռազմական փախադրումների հանձնաժողովի նախագահը, բանակի հրամանատար Ավմի փաշան այդ գործը հանձնարարել էր վալիին, սակայն վերջինս առաջադրանքը, ինչպես հարկն է, չէր կարողացել կատարել և այն հանձնարարել էր իրեն: Քանի որ Մուտաֆա էֆենդին զինվոր էր, մթերք և ուզմամթերք էր առաքում Հատուկ կազմակերպությանը, ինչ վերաբերում է իրեն, ապա ինքը դեկավարել է ցամաքային տարածքով կատարվող առաքումները:

Վկան հայտնեց նաև, թե տեղահանության վերաբերյալ ինքը տեղեկություններ չունի, իսկ նավերը հեռացել են խումբ-խումբ:

Դատարանի կազմի կողմից հակասություն նկատվեց Իրհամ էֆենդու նախկին և ներկայիս ցուցմունքների միջև: Քանի որ պարզ վեց, որ նա նախակինում հանդես է եկել Ալի Սայիր բեյի դեմ ուղղված ցուցմունքով, վկան նեղն ընկավ և շփոթվեց, որովհետև ստիպված էր

բացատրել այդ հակասությունը:

Այդ պահին ժամանակի սղության պատճառով նիստն ավարտվեց. շարունակվելու է երկուշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

1-ը մայիսի, 1919, «Ալեմդար»

Ռազմական արտակարգ ատյանում
Տրապիզոնի տեղահանությանը վերաբերող
դատավարությունը

Երեք՝ ժամը 14:20-ից, շարունակվեց Տրապիզոնի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող գործի ուսումնաիրությունը:

Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ֆերիդուն թեյր:

Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո վկաներից հարցաքննվեց դատական քննիչ Թենան թեյր: Վերջինս հայտնեց, որ տեղահանության ժամանակ ինքը այնտեղ չի եղել, սակայն հետագայում, նախարարությունից ստացված հրահանգի հիման վրա, գրադաւոր է Լազիստանի, Զանիկի և Տրապիզոնի մերձակա շրջանների հետաքննությամբ: Երբ գնացել է Սամսոն, ուսուների կողմից առաջին ոմրակոնությունն արդեն սկսված է եղել: Թենան թեյր նշեց, թե տեղահանության իրականացման հանգամանքների մասին ինքը տեղեկացել է միայն լսելով, իսկ տեղահանությանն անձամբ ականատես է եղել Սամսոնում գտնվելու ժամանակ: Այդ տեղեկությունների համաձայն՝ Զեմալ Ազմի թեյր բազմաթիվ չարագործությունների հեղինակ է եղել. մասնավորապես՝ հայերին և հոյներին նավերն է լցորել և ոչնչացրել՝ ծովում խեղդելով: Ըստ վկայի ցուցումների՝ Ազմի թեյր իր յուրաքանչյուր քմահաճոյցն իրականացնող մի անձնավո-

րություն էր. երբ ինքը գտնվել է Սամսոնում, տեսել է, թե ինչպիս է կատարվում տեղահանությունը: Վկան նաև հայտնեց, որ Բաֆրայի⁴⁰⁸ կայմակամը սպանվել է հետաքննչական մարմնում:

Վկան հայտնեց նաև, որ թեև զորակոչին հետևած չարագործությունների կապակցությամբ հետաքննություն կատարելը կամ տեղի դատախազին այդ մասին տեղեկացնելն իր պաշտոնական պարտականություններից շրջանակներից դուրս էին և վերաբերում էին բանակի հրամանատարներին, այնուամենայնիվ ինքը կատարված չարագործությունների մասին մի քանի անգամ հայտնել է տեղի դատախազությանը:

Վկան նշեց նաև, որ մեղադրյալներից ծանաչում է միայն Թալեաթ և Մուստաֆա էֆենդիներին:

Երկրորդ անգամ որպես վկա դատարան հրավիրվեց Ոյուշթու էֆենդին, որին նախագահը հարց տվեց տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ և հիշեցրեց միայն ծշմարտությունն ասելու պահանջի մասին: Ոյուշթու էֆենդին պատասխանեց, թե ինքը ոչ մի տեղեկություն չունի տիկին Արսլանյանի դրամի մասին:

Նախագահ- Ասում են, թե այդ դրամը Դուք եք վերցրել:

Ոյուշթու էֆենդի- Սամսոնում նպարեղենի խանութ ունեմ: Կարող են այնտեղի ցուցակները ստուգել: Ես նման բան երբեմ չեմ վերցրել և դրա վերաբերյալ տեղեկություններ չունեմ:

Նախագահ- Ինչո՞ւ՝ եք համագործակցել Սայիր թեյի հետ:

Ոյուշթու էֆենդի- Զեմ համագործակցել: Նա երեխաներին էր զննում:

⁴⁰⁸ Գավառ, որը ներկայում գտնվում է Սամսոն նահանգում:

Այդ պահին Ալի Սայիբ բեյը նույնպես որոշ բաներ ասաց այդ կապակցությամբ: Այնուհետև Ռյուշյու էֆենդուն բազմաթիվ հարցեր ուղղեցին դրա վերաբերյալ:

Նախագահը նախկինում վկայությամբ հանդես եկած և այդ պահին ունկնդիրների շարքում գտնվող Արդուլլահ Էֆենդուն հարցրեց, թե արդյոք այդպես է եղել: Վերջինս նշեց, թե որոշ հանգամանքներ ինքը լավ չի մտարերում: Նախագահը վերոհիշյալին հրավիրեց ամբողնի մոտ՝ զուգմունքներ տալու:

Արդուլլահ էֆենդուն հարցեր տվեցին տիկին Արսլանյանի դրամի մասին, նաև թե՝ ինչու են թաքցնելու պահին նրանից իրեր և դրամ պահածել:

Վկան պատասխանեց, թե ինքը չի հիշում, որ տիկին Արևան-յանին փրկելու համար համագործակցելու ժամանակ նման նախաձեռնությամբ հանդես եկած լինի:

Նիստն ավարտվեց ժամը 15:30-ին. շարունակվելու է երեք-շաբաթի օրը՝ ժամը 10:00-ին:

11-ր մայիսի, 1919, «ԱրԵՄուր»

Ռազմական արտակարգ ատյանում
Տրապիզոնի տեղահանության դատաքննության ավարտը

Ուզմական արտակարգ ատյանը Մուստաֆա Նազըմ փաշա-
յի նախագահությամբ երեկ շարունակեց Տրապիզոնի տեղահանութ-
յանը և կոտորածներին մասնակից լինելու մեջ մեղադրվող անձանց
դատաքննությունը:

Վկաներից նախկին հեծելազորային լեյտենանտ Հարում քեյը հայտնեց, որ տեղահանության ընթացքում ինքը եղել է Շքանգեհ⁴⁹ համհարզն ու թարգանիչը, լսել է հիվանդանոցում հայերի բունավորման դեպքերի և Սամսոնում ու շրջակայքում հայերի ոչնչացման մասին:

Հարուն թեյը վկայեց նաև, որ Ռոզա թեյը դեկավարել է անկազմակերպ մի ջոկատ: Նմանատիպ զորամասերը, ըստ վկայի, այն ժամանակ «չեթե»⁴¹⁰ էին կոչվում, որոնց դեկավարում էին հրոսակախմբերի դեկավարները:

Հարուն թեյից վերոհիշյալ ցուցմունքներն ստանալուց հետո նախազարդ հայտարարեց.

- Հարցաքննության գործընթացն ավարտվեց: Մեղադրող և պաշտպանող կողմերի ծառերն ունկնդրելու համար նիստը հետաձգվում է մինչև հինգշաբթի օրը՝ ժամը 13:00-ը:

Դատապաշտպանների առարկության պատճառով որոշվեց հիմգշաբթի օրը՝ ժամը 13:00-ին, ունկնդրել մեղադրող կողմի մեղադրական ձառը, իսկ շաբաթ օրը՝ ժամը 9:30-ին՝ դատապաշտպանների պաշտպանական ձառերը:

Այս որոշումն ընդունվելուց հետո հիստոն ավարտվեց:
14-ր մայիսի, 1919, «Ալեմդար»

14-ը մայիսի, 1919, «Ալեմդար»

⁴⁰⁹ Գերմանացի փոխգնդապետ, որը եղել է Դատուկ կազմակերպության ղեկավարներից մեկը:

410 ԱՎԱՋԱԿԱԽՈՒՄԾ:

Բաց նամակ ռազմական ատյանի մեծարգու նախագահ Նազմը փաշային

Հարգելի՝ նախագահ,

Միաձայն կերպով կարող ենք հաստատել, որ Դուք հանդիսանում եք արդար և անաշարժ մի անձնավորություն, հատկանիշներ, որ ժառանգել եք մեր ժողովրդից:

Այդ իսկ պատճառով կցանկանայի կարծ և անկեղծ մի խոսակցություն ունենալ Ձերդ գերազանցություն հետ: Ես, աքսորված լինելու պատճառով, ականատես եմ եղել Անատոլիայի բազմաթիվ շրջաններում իրականացված տեղահանության ու կոտորածներին:

Տեղահանությանն ու կոտորածներին առավել ենթարկված շրջաններն են հանդիսանում Մուշը և Անկարան: Մի շրջան¹¹¹ գոյություն ունի, որից տարագրված հայերի թվաքանակը հազարների է հասնում. միթե այդ շրջանում տեղահանությունն ու կոտորածները կազմակերպողների և իրականացնողների քանակը սահմանափակվում է մահապատճի ենթարկված թեմայի և 15 տարվա բանտարկության դատապարտված թեմիկ թեմերով: Անձամբ միայն ինձ հայտնի է այդ խնդրին առնչված համարյա 20 հոգու անուն:

Իսկ որն է դրա անհրաժեշտությունը:

Երբ թեմայի դատավարության ընթացքում մի շարք անուններ բացահայտվեցին, անհրաժեշտ էր, որ դրանք պատշաճ ուշադրության արժանացվեին, Զեզ նման արդարադատ անձնավորությունը նրանց անմիջապես ծանուցագիր ուղարկեր, անհրաժեշտության դեպքում մի քանիսին ծերբակալեր և արագ կերպով իրականացներ

¹¹¹ Խոսքը Յողոտի մասին է:

նրանց դատաքննությունը: Արդյոք ինչ պատճառներից ելնելով է, որ կարևորություն չի տրվում այդ խնդրին:

Այդ ինչպես է, որ մենք այն տարածքներում, որը աքսորվել էինք՝ Մուշում և Սինոպում եղած ժամանակ, պաշտոնական անձ շիանդիսանալով հանդերձ, տեղյակ ենք, թե ինչ սահմոկեցուից կերպով են կատարվել Տրապիզոնի տեղահանությունն ու կոտորածները, որոնց դատաքննությունը ներկայում դեռ շարունակվում է, իսկ նման հնարավորությունների տեր Ձեր հարգարժան դատարանը չի կարողանում խորանալ մանրամասների մեջ:

Սինոպում մենք հանդիպեցինք առավոտները Տրապիզոնից դեպի Ստամբուլ մաքսանենց կերպով իրեր և սննդամթերք տեղափոխող լազ նավաստիների և կարողացանք մանրամասներ իմանալ այն մասին, թե ինչպես են մեր խեղճ հայ հայրենակիցները ոչնչացվել և բնաջնջվել վայի Ձեմալ Ազմիի և իթթիհադական հրոսակախմբին պատկանող իր չարագործ գործակիցների կողմից: Պարզվում է, որ այս խեղճերին՝ կանաց և երբեմն նույնիսկ երեխաներին էլ ներառյալ, Շումինիա ուղարկելու պատրվակով լցրել են առագաստանավերն ու մակույկները և շրջահայեցրեն ավից մեկ ժամ հեռացնելուց հետո անմիջապես ծովը նետել, իսկ երբ ծովում խեղդվողները փորձել են կառչել առագաստանավերի եղբերից, կացնով կտրել են նրանց մատները:

Անձամբ ականատես չենք եղել այդ արյունոտ և ցավոտ տեսարաններին, սակայն մի քանի ընկերներով ուշադրությամբ լսել ենք այդ ամենը սեփական աչքով տեսած 40-50 նավաստիների պատմածը: Բայց միթե այդ պահին Տրապիզոնում գտնված պատվավոր և անկողմնակալ անձանց՝ այդ կապակցությամբ ունեցած տեղեկությունները ստանալով՝ կարողացանք բացահայտել ողջ ողբերգությունը:

Այն ժամանակ Տրապիզոնի մաքսային գլխավոր վարչության ծառայող, ներկայում մաքսային տեսուչ թեսիմ բեյին ներկայացնում եմ որպես շատ ողջախոհ մի անձնավորություն: Այս մարդը պաշտոնից հեռացվել է Զեմալ Ազմիի դաժանության մասին անհրաժեշտ մարմիններին տեղեկացնելու պատճառով:

Իսկ երկրորդին՝ Թենան⁴¹² անունը կրող Երիտասարդին, հանդիպել եմ Չորումում՝ Ռեֆիկ Հալիդ բեյի տանը: Թենան բեյին ազատել էին Տրապիզոնի դատական քննչի պաշտոնից, որից հետո նա վերադարձել էր Ստամբուլ: Այս հերոսական անձնավորությունը հետ էր կանչվել այն ժամանակվա Արդարադատության նախարար Հալիդ բեյի կողմից՝ հայերի հետ կապված ողբերգական դեպքերի կապակցությամբ անմիջապես հետաքննություն կատարելու պահանջով հանդիս գալու պատճառով: Թենան բեյը չէր բավարարվել միայն իր պաշտոնական պարտականությունների իրականացմամբ. անձամբ լուսանկարել էր այդ ողբերգական տեսարանները, որոնց ականատես էր եղել: Այդ ազնիվ անձնավորությունը ինձ պատմել է Ամասիայում անձամբ (...)՝⁴¹³ հայեր սպանած և սրտխանոց առաջացնող մոհացիրներից Սեհմեն Թարաշ անունը կրող մի արնախում մարդու մասին, որի անունը, սակայն, չենք հանդիպում դատական արձանագրություններում:

Աղերսում ենք, որ թե՛ լուրջ վերաբերվեք ականատեսների վկայություններին և թե՛ այսուհետ տեղի ունենալիք դատավարությունների ընթացքում առավել աշալցությամբ ծանուցագիր ուղարկեք յուրաքանչյուր վկայակոչված անձնավորությանը:

Հուսով ենք, որ տրվելիք բացատրությունների միջոցով կհաս-

⁴¹² Դատական քննչի Թենանը Տրապիզոնի դատաքննության 1919 թ. մայիսի 10-ի նիստում որպես վկա ցուցմունքներ էր տվել դատարանին:

⁴¹³ Հոդվածի այս հատվածի տպագրումն արգելվել է գրաքննության կողմից:

տատվի, որ մեր անմեղ ազգը ոչ մի կապ չի ունեցել ավազակախմբերի կողմից կատարված հանցագործությունների հետ, իսկ հանցավորները հաստատապես կպատճենեն:

Արտասահմանցինները մեզ մեղադրում են վերոհիշյալ հանցագործներին թաքցնելու մեջ, մինչդեռ ժողովրդի մտքով երբեք չի անցել նրանց թաքցնել, որովհետև կատարված հանցագործությունների պատասխանատուն է ոչ թե ժողովուրդը, այլ իթթիհադական ավազակախումբը: Ժողովուրդն անմեղ է: Իսկ ծշմարտության լրիվ բացահայտումը իրականանալի է բոլոր հանցավորների դատապարտմամբ միայն:

Առիթից օգտվելով՝ արտահայտում եմ խորին հարգանքներիս հավաստիքը:

Ահմեղ Թաղրի⁴¹⁴

25-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

⁴¹⁴ Ահմեղ (Փեհլիվան) Թաղրին «Ալեմդար» օրաթերթի տնօրինն էր:

ԲՅՈՒՑՈՒՔ ԴԵՐԵՒ ՏԵՂԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՏՈՐՉՆՆԵՐԻ
ԴԱՏԱԿԱՆ ԼԻՍՏԵՐԸ

Ուզմական արտակարգ ատյանում
Բողազիչի (Բյուսուք Դերե) տեղահանության
դատավարությունը

Երեկ՝ ժամը 14:30-ին, ուզմական արտակարգ ատյանում սկսվեց Բյուսուք Դերեի տեղահանության դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս առաջին տեղակալ Ֆերիդուն բեյը: Մեղադրյալներն էին Բյուսուք Դերեի նախկին ոստիկանապետ Արդու Ջերիմ բեյը, Բարերի խանութպան, սալոնիկցի Ուժիկ Հռֆզը բեյը և հացի փոփ տեր Զելալ Էֆենդին: Մեղադրյալների դատապաշտպաններն էին Սելիմ Հյուսնի, Հաշմեթ և Մուստաֆա Աղիլ բեյերը:

Դատական նիստի քարտուղարն ընթերցեց այն հետաքննչական որոշումը, համաձայն որի՝ ամրաստամայները մեղադրվում էին Բյուսուք Դերեի շրջանում կատարված տեղահանության ժամանակ քրիստոնյա բնակչությանը կառավարության կողմից նշանակված ժամկետից ավելի վաղ տեղահանելու և բնակչությանը գոյքը լրել հարկադրելու մեջ:

Որոշման ընթերցումից հետո դատախազը հիմնավոր համարեց վերոհիշյալ գործողությունների՝ հանցագործություն հանդիսալու վերաբերյալ հայցը:

Ապա հարցաքննվեց նախկին պաշտոնյա Արդու Ջերիմ Էֆենդին, որը հայտնեց, թե երբ կառավարությունը տեղահանության մա-

սին որոշում է ընդունել, ամրացված դիրքերի հրամանատարը իր մոտ է կանչել իրեն, մի քարտեզ ցոյց տվել և հրահանգել 3 օրվա մեջ տեղահանել այդ շրջանների ոչ մահմեղական բնակչությանը՝ ուզմական դրության կապակցությամբ: Այնժամ ինքը առարկել է և ավելի հարմար համարել այդ ժամկետը մի շաբաթով երկարաձգել: Այդ գաղափարին կողմնակից է եղել նաև այն ժամանակվա ոստիկանապետ Բերիր բեյը: Ժամկետը կարողացել են երկարաձգել: Գործել են ոչ թե բանավոր, այլ՝ գրավոր հրաման ստանալուց հետո միայն: Ոչ թե բոնագաղթեցում, այլ՝ մի վայրից մյուսը տեղափոխում հանդիսացող այդ գործողության մասին հաղորդվել է ոչ մահմեղականների ավագանու հանձնաժողովին: հանգամանք, որի շնորհիվ տեղահանությունն իրականացվել է կազմակերպված կերպով: Ինչ վերաբերում էր գաղթականների գոյքին, այն պետք է ամբողջությամբ պահպանվեր և հետաքայում կամաց-կամաց տեղափոխվեր: Քանի որ թղթապանակներում դրա վերաբերյալ կային արձանագրություններ, ապա չարաշահումներ անելու միտումներին միայն իր պես գիշեր-ցերեկ տքնածան աշխատող ոստիկանն է արգելը եղել: Ժամանակի և միջոցների բացակայության պատճառով ամրող գոյքն իրենց հետ չվերցրած անձանց հաղորդվել է, որ իրենց իսկ հարմարության համար կարող են դրանք թողնել ու հեռանալ, և որ իրենց իրերը հսկելու համար պահակ է կարգվելու:

Արդու Ջերիմ Էֆենդին նաև հայտնեց, որ մի շաբաթ տևած տեղահանության ընթացքում անվտանգության ապահովման նպատակով հավելում է կատարվել պարեկախմբի թվակազմի մեջ: Արդու Ջերիմի ցուցմունքների համաձայն՝ իրականությանը չեն համապատասխանում այն լորերը, որոնց համաձայն՝ ինքը հարվածել է մի կույր երեխայի ու հացթուի Փանդելյանին սպանությանը միջոցով հարկադրել վերջինիս պատկանող հացի փուոր ցածր գնով վարձա-

կալորժան տալ Ձելալ էֆենդրւն: Արդու Քերիմը նաև նշեց, որ երբեք չի ծանաչել Ասքանազ անունով որևէ մեկին, առավել ևս՝ չի յուրացրել նրա իրերը, իողում չի թաղել ինչ-որ անձանց պատկանող սպասքը, և որ իրեն մեղսագրվող մյուս մեղադրանքները ևս հորինված են: Ըստ Արդու Քերիմի՝ թեև իր ընտանիքը բաղկացած է եղել ինը հուզուց, սակայն տանն ընդամենը հինգ արոռ են ունեցել, անգամ ստիպված են եղել սեղանի վրա նստել: Ամբաստանյալն իր զարմանքն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ իր նման մարդուն, որը իհմա անգամ երկու տեղանոց սեղանի մոտ է նստում, ինչպես կարելի է նման մեղադրանք հարուցել այն դեպքում, երբ իրենից շատ ավելի հանցավոր մարդիկ կան:

Արդու Քերիմը նաև հայտնեց, թե ինքը տեղեկություններ չունի Նիկոլի անվամբ մի հունահպատակի պատկանող 1000 լիրա արժողությամբ մոտորանավակի մասին: Այս ցուցմունքները տալուց հետո մեղադրյալն դուրս տարան:

Այնուհետև հարցաքննվեց տեղահանության ժամանակ Բյույութ Դերեի թաղային ավագանու պաշտոնը վարած Ձելալ էֆենդին, որին հարցեր տվեցին տեղահանության մասին հաղորդագրություններ ստանալու վերաբերյալ: Ձելալ էֆենդին հայտնեց, որ գետնում թաղված, իսկ հետագայում՝ Բեյքողի⁴¹⁵ կենտրոնական վարչության կողմից գտնված պղնձե մեծ կաթսայի վրա կնիք է եղել՝ ամրացված շրջաններին պատկանելու վերաբերյալ: Այդ կաթսան օգտագործվել է ձկան յուղ հալեցնելու նպատակով:

Ձելալ էֆենդուց հետո ամբաստանյալներից հարցաքննվեց Ռեֆիկ Հըֆզը բեյը, որը հերքեց Ձելալ բեյի հետ իր համագործակ-

ցությանը վերաբերող մեղադրանքը: Տեղահանության⁴¹⁶ գործողություններին անդրադառնալով՝ Ռեֆիկ Հըֆզը նշեց, որ թեև այդ խնդիրները չեն եղել իր պաշտոնական պարտականությունների շրջանակներում, սակայն ինքը տեղյակ է եղել դրանց մասին: Ըստ մեղադրյալի՝ ինքը ոչ մի ծնով չի օգտվել ուազմական գերատեսչության կողմից կատարված տների տեղափոխության հետևանքով առաջացած խառնաշփոթ իրավիճակից և, ընդհանրապես, դրա կարիքը չի ունեցել:

Կաթսայի մասին եղած խոսակցություններին անդրադառնալով՝ Ռեֆիկ Հըֆզը բեյը հայտնեց, որ Ռազմական նախարարության ծկնորսական ջկատը գրադպար է Սև ծովում դեֆին որսալու գործողություններով, իսկ կաթսան օգտագործվել է ձկան յուղ հալեցնելու նպատակով:

Կրկին դահլիճ բերվեց Արդու Քերիմ բեյը, որին հարցեր տվեցին այն մասին, թե տեղափոխության ընդհանուր ժամկետը 15 օրով երկարաձելու նրա ջանքերի հետ մեկտեղ, ինչո՞ւ են նախապես համապատասխան հանգամանքներ ապահովել որոշ անձանց համար՝ դրդելով նրանց ավելի վաղ գործողությունների: Նախագահի կողմից տրված վերոհիշյալ հարցին մեղադրյալը պատասխանեց, թե նման մի բան եղել է:

Այն հարցին, թե ինչու տեղահանության հրամանը միաժամանակ չի հաղորդվել թե՛ մահմեդական և թե՛ քրիստոնյա ավագանիներին, մեղադրյալը պատասխանեց, թե անհրաժեշտ չեն համարել առանձին-առանձին հաղորդելու, քանի որ քրիստոնյա բնակչության տեղահանությունը սերտորեն առնչվում էր իր սեփական գործերն ու հաշիվներն ունեցող և միևնույն գյուղում բնակվող մահմեդական

⁴¹⁵ Սուամբուլի շրջաններից մեկն է:

⁴¹⁶ Բառացի՝ դատարկման:

բնակչության գործերին:

Այս ցուցմունքներից հետո ժամանակի սղության պատճառով ժամը 16:10-ին նիստն ավարտվեց: Շարունակվելու է վաղը՝ ժամը 13:00-ին:

24-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

Բյույուք Դերեի դատավարությունը

Երեկ՝ ժամը 11:30-ից սկսած՝ Նազըմ փաշան ռազմական արտակարգ ատյանում շարունակեց Բողազիչի դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ֆերիդուն բեյը: Նախ դակիծ իրավիրվեց Վասիլյադիս անոնը կրող վկան:

Վասիլյադիսը վկայեց, որ Բյույուք Դերեում բեռնափոխադրման 2 նավ է գոյություն ունեցել, որոնցից մեկը պատկանում էր մզկիթին, իսկ մյուսը՝ եկեղեցուն: Երբ իրենք այնտեղ էին գնացել մզկիթին պատկանող բեռնակիր նավով, վերադարձին Զելալ և Մահմուտ Էֆենդիներն իրենց առաջարկել էին նավը գործածել, ապա վերանորոգել և վերադարձնել, սակայն 5-6 օր չէին վերադարձրել: Հետագայում ինքը լսել էր, թե մյուս նավը վաճառվել էր. այն գնել էր մեղադրյալներից Մահմուտ Էֆենդին 120 լիրայով (նավն այդքան էր գնահատել ընտրական կոմիտեն):

Այդ պահին Զելալ Էֆենդին ևս հանդես եկավ խնդրին առնչվող մեկնաբանություններով: Նա մասնավորապես վկայեց, թե նավերի վերադարձը կատարվել է Վասիլյադիսի և նրա կնոջ նախաձեռնությամբ ու խրախուսմամբ:

Այնուհետև Մահմուտ Էֆենդին նշեց, թե եթե անհրաժեշտ է

նավը վերադարձնել, և եթե այդ խնդրում իր կողմից կատարված որևէ չարաշահում է գրանցվել, ապա ինքը պատրաստ է նավն անվճար կերպով վերադարձնել:

Ապա պաշտպանական խոսքով հանդես եկավ դատապաշտպան Հասան բեյը.

«Նախորդ նիստում Ձերիմ բեյին հարցաքննելիս Դուք նրան դիմեցիք հետևյալ հարցով. արդյոք ինքը որևէ առնչություն ունեցել է այն ֆիրմայի հետ, որում ընդգրկված է եղել: Եթե Ձեր հարգարժան դատարանը հետաքննություն կատարի այդ ուղղությամբ, մենք կարող ենք շատ վկաներ ներկայացնել: Բացի այդ՝ կինդրեի, որ ծանուցագրեր ուղարկեիք ընտրական կոմիտեի կազմում ընդգրկված նախկին քաղաքապետեր Շաքիկ և Մուստաֆա բեյերին՝ որպես իմ պաշտպանյալի վկաների՝ Ձերիմ բեյի կողմից իր պաշտոնական պարտականությունների կատարման վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով»:

Ապա դատապաշտպաններից Ալիլ բեյը նախագահին խնդրեց Վասիլյադիսին հարցնել Ուժիկ բեյից ստացած իր տպավորությունների մասին: Այնժամ Վասիլյադիսը նշեց, թե Ուժիկ և Ձերիմ բեյերը լավ հարաբերությունների մեջ են եղել միմյանց հետ, սակայն Թալեարի օրոք Ուժիկ բեյի հետ որոշ հարցեր են քննարկվել. Ձերիմ բեյը հանդես է եկել իր դեմ ուղղված անօրինական գործողություններով: Ըստ վկայի՝ գույքի, իրերի և հողատարածքի կողոպտման հետևանքով տրվել էր 120.000 լիրայի վնաս: Վասիլյադիսը նաև հայտնեց, թե Ուժիկ և Զելալ բեյերը նունակես իրենց մեղքի բաժինն ունեն այդ գործում և նախագահին հանձնեց մի բողոքագիր:

Բնականաբար Վասիլյադիսի մեղադրանքներին պատասխանեց Ուժիկ բեյը, որն ընդգծեց, թե ոչ մի գործողության մեջ չի եղել

այդ մարդու հետ, նրա հետ իր ունեցած առնչությունները սահմանափակվել են իրար բարեկրով միայն, հայտարարությունը, իր կարծիքով, ամբողջովին հորինված է, իսկ Վասիլյադիսի վկայակոչած տան խոնդիրն էլ (...)⁴¹⁷ անդամ Սարբի բեյի օթևանած տունն է եղել, որը պատկանել է առևտրական թոքաթլրյան էֆենդուն:

Քերիմ բեյը ևս հայտնեց, թե չի կարող ընդունել Վասիլյադիսի վկայությունը:

Այնժամ դատարանի կազմը եզրակացրեց, թե անհրաժեշտ է առերես հարցաքննել այդ երկու վկաներին:

Նիստն ավարտվեց ժամը 12:10-ին. շարունակվելու է երկու շաբթի օրը՝ ժամը 13:00-ին:

11-ը մայիսի, 1919, «Ալեմդար»

Բյույուք Դերեի դատավարությունը

Ռազմական արտակարգ ատյանը երեկ Մուստաֆա Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակեց Բյույուք Դերեի տեղահանությանը մասնակից լինելու մեջ մեղադրվող վարչության նախկին պաշտոնյա Քերիմ բեյի, Բաքեր խանութի տեր Ռեֆիկ Հըֆզը, լազ Զելալ և Հաֆզը Մահմուտ էֆենդիների դատավարությունը:

Վկաներից Բյույուք Դերեի նախկին առաջին մոլուստար Նիազի բեյը հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով.

«332 (1916) թվականից ի վեր առաջին մոլուստար եմ⁴¹⁸: Ինձից առաջ այդ պաշտոնում է եղել Զելալ էֆենդին: Մենք ենք վաճա-

⁴¹⁷ Բազը ջնջված է:

⁴¹⁸ Գյուղապետ:

ոել մզկիթին պատկանող նավը, որովհետև նավապահեստարանն անհրաժեշտ էր նավագնացության գործակալությանը: Վեասված լինելու պատճառով նավն անհնար էր տեղափոխել: Ուստի ընտրական կոմիտեն նավը վաճառելու որոշում կայացրեց՝ ի նկատի ունենալով նրա հնացած լինելու հանգամանքը: Նախնական գնից ավել չտվեցին, Հետևաբար՝ նավը վաճառվեց 120 լիրայով՝ Մահմուտ էֆենդուն: Դրամը պահպանվում է:

Երկու ընտրական կոմիտեների կազմավորման ժամանակ նավը հետ վերցրեցին Հաջը Մահմուտ էֆենդուն, քանի որ այն անհրաժեշտ էր: Չնայած անհրաժեշտությանը՝ մենք այն դարձյալ վաճառեցինք՝ շատ վնասված լինելու պատճառով: Տեղեկություններ ունեմ առ այն, որ եկեղեցուն պատկանող նավը ևս տարվել է վերաբնակեցման ընթացքում»:

Վկաներից Սովեյման էֆենդին ևս, որը Բյույուք Դերեի ընտրական կոմիտեի անդամ էր, դատարանի մոլուստից հանդես եկավ հետևյալ վկայությամբ.

«Բյույուք Դերեում գոյություն ունեին 2 բեռնատար նավեր: Մեկը պատկանում էր մզկիթին, իսկ մյուաք՝ եկեղեցուն: Եկեղեցուն պատկանող նավը (...)՝ Մզկիթին պատկանող նավը վնասվել էր նավապահեստարանում, որի պատճառով դուրս էր տարվել: Ընտրական կոմիտեի կողմից ընդունված որոշման հիման վրա՝ այն 120 լիրայով վաճառվեց Հաջը Մահմուտ էֆենդուն: Մենք չկարողացանք միջամտել նավագնացության գործակալության կողմից նավապահեստարանը վնասելուն ուղղված գործողություններին, քանի որ այն ժամանակ արդեն մեկ տարի էր, ինչ Հաքքը բեյի անունը լսող յուրաքնչյուր ոք թողնում-փախչում էր: Բոլորս վրդովված էինք. չե՞ որ թամբա-

⁴¹⁹ Բազն անընթեռնելի է:

գործական արիեստանոցը պատրաստ էր»:

Այնուհետև հետևյալ վկայությամբ հանդես եկավ ընտրական կոմիտեի [անդամներից] Հաջի Մուստաֆա էֆենդին.

«Բյույուք Դերենում գոյություն ուներ երկու նավ, որոնցից մեկը պատկանում էր մզկիթին, իսկ մյուսը՝ Եկեղեցուն»:

Հաջի Մուստաֆա էֆենդին նոյնպես մյուս վկաների նման խոսեց նավի վնասված լինելու մասին, ընդգծեց Հաջի Մահմուտ էֆենդուն վաճառված լինելու հանգամանքը, ապա հայտնեց, որ նավը տվյալ պահին էլ գտնվում է վերջինիս մոտ, իսկ դրամը՝ իր:

Ապա վկաներից հետևյալ հայտարարությամբ հանդես եկավ Թոքարթյան Հովսեփ էֆենդու տանը պահակություն կատարած Մուստաֆա աղան.

«Թոքարթյան էֆենդին նախքան տարագրումը կողպել էր իր տան բոլոր սենյակների [դրսերը]: Կողպված չէր սրահներից մեկը միայն: Տեղահանությունից առաջ նա ինձ զգուշացրեց, որ եթե Ռեֆիկ բեյն ինձնից խնդրի նրա տան բանալիները, ես կարող եմ դրանք վստահել վերջինիս: Եթեք օր անց ինձ մոտ եկավ Սարբի բեյը և պահանջեց բանալին: Գնացի ու այդ մասին հայտնեցի Ռեֆիկ բեյին, սա ասաց՝ տուր, ես էլ տվեցի: Մի քանի օր անց նկատեցի, որ սենյակների բոլոր պատուհանները բաց են: Այդ մասին տեղյակ պահեցի Ռեֆիկ բեյին: Նա պատասխանեց, թե չի ուզում խառնվել: Իսկ Սարբի բեյը հեռանալով՝ իր հետ էր վերցրել տան բոլոր իրերը»:

Վկաներից չէր ներկայացել Թոփիան գործարանի հսկիչ, մայոր Հյուսնի էֆենդին, իսկ վկա Յունուս էֆենդին նախագահի այն հարցին, թե որևէ տեղեկություն ունի՞ Ռեֆիկ բեյի դեմ վկայություն տալու համար մեկին 300 լիրա առաջարկելու վերաբերյալ, վկան պատասխանեց, թե տեղյակ չէ:

Կրկին ունկնդրության արժանացավ նախորդ նիստում հարցաքննված վկա Վասիլյաղիս էֆենդին, որը կրկնեց իր նախկին ցուցմունքները:

Ապա վկաներից պաշտոնաթող մայոր Շևքեթ էֆենդին հայտնեց, որ Բյույուք Դերենի տեղահանության մասին հրամանը քրիստոնյաներին հաղորդվել է վարչության պաշտոնյայի միջոցով: Շատերը հարկադրաբար լցել են իրենց իրերը: [Բնակչության] տեղահանումից քիչ անց կողոպտվել են շատ տներ, իսկ վարչության պաշտոնյա քերիմ բեյն անտարբերություն է դրսորել թալանի նկատմամբ:

Այնուհետև հարցաքննության ենթարկվեց վկաներից ժանդարմ, տասնապես Ռեմիզը, որն ասաց, թե ինքը ոչ մի տեղեկություն չունի: Իսկ ամբաստանյալի օգտին վկայություն տալու նպատակով ներկայացած նախկին քաղաքապետ Ռեֆիկ բեյը նշեց.

«Տեղահանության ընթացքում ես եղել եմ Բյույուք Դերենում: Ծանոթ եմ մեղադրյալների հետ. նրանց մասին ոչինչ չեմ լսել: Քերիմ բեյին ճանաչում եմ որպես գործունյա պաշտոնյայի»:

Ապա Թոփիանեի կայմակամ Մուստաֆա էֆենդին հանդես եկավ հետևյալ վկայությամբ:

«Տեղահանության ժամանակ Բյույուք Դերենում չեմ գտնվել: Այնուհետև եմ եղել նախքան տեղահանությունը և դրանից հետո: Քերիմ բեյը պատվարժան և գործունյա պաշտոնյա է»:

Այնուհետև, քանի որ ավարտված էին ռազմական արտակարգ ատյանի հարցաքննությունները, նախագահը հաղորդեց, որ նիստը հետաձգվում է մինչև Երկուշաբթի՝ ժամը 10:00-ը՝ մեղադրական եզրակացության և պաշտպանական ժառերի ունկնդրության համար, որից հետո նիստն ավարտվեց:

14-ը մայիսի, 1919, «Ալեմդար»

ԽՄՐԵՐԴԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՏՈՐՉՈՒՆԵՐԻ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ

Ուզմական արտակարգ ատյանում

Մամուրեթ-ով Ազիզի տեղահանության դատավարությունը

Երեկ՝ կեսօրվա ժամը 14:15-ին, ուզմական արտակարգ ատյանում Ձերի փաշայի նախագահությամբ կայացավ նիստ, որի ընթացքում հարցաքննվեցին Մամուրեթ-ով Ազիզի տեղահանությանը մասնակից լինելու մեջ մեղադրվողներ հանրակրթական տեսուչ Ֆերիդ և Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրի բեյերը:

Որպես դատախազ հանդես էր գալիս Սուլի բեյը, իսկ պաշտպանության կողմը ներկայացնում էր Յորդակի էֆենդին:

Սկզբում իրապարակվեցին Ֆերիդ բեյի անձնական տվյալները, որից հետո վերջինս վկայեց, թե աշխատել է նախ՝ Մամուրեթ-ով Ազիզի, ապա՝ Քոնիայի հանրակրթական տեսչություններում:

Այնուհետև բացահայտվեց Մեհմեդ Նուրի բեյի ինքնությունը, որից հետո դատական նիստի քարտուղարն ընթերցեց որոշումը, համաձայն որի.

«ԲԵԿԱՅԵԴԻՆ Շաքիր և Նազըմ բեյերը եղել են Մամուրեթ-ով Ազիզի տեղահանությունն իրականացնողներից: 10 օրվա մեջ նրանց՝ ուզմական ատյան չներկայանալու դեպքում նրանք կգրկվեն քաղաքացիական իրավունքից»:

Ապա խոսքի իրավունք ստացավ Սուլի բեյը, որը պահանջեց առանձնացնել Մամուրեթ-ով Ազիզի նախկին նախագահական Նարիք բեյի և Խարբերդի նախկին մութասարդիքի գործերը, քանի որ վեր-

ջիններս աքսորվել էին Անտանտի պետությունների կողմից, իսկ այդ տեղահանության հետ առնչություն ունեցած երկու պատգամավորներին, որոնք ներկայում գտնվում են Դիարբեքիրում, դատել այստեղ գալու դեպքում, Ֆերիդ և Ուսնելի Նազըմ բեյերին դատել հեռակա կարգով՝ փախուատի մեջ գտնվելու պատճառով, իսկ Բեկայեդին բեյի դատաքննությունը հետաձգել, քանի որ նրա վերաբերյալ ավելի կարևոր թղթապահնակ է կազմվել:

Այս առաջարկը կարծատև քննարկումից հետո ընդունվեց դատարանի կազմի կողմից:

Այնուհետև ընթերցվեց հետաքննության կողմից ընդունված որոշումը, ըստ որի՝ Մամուրեթ-ով Ազիզի և Խարբերդի տեղահանության ընթացքում կատարված բռնությունների առնչությամբ Ֆերիդ և Մեհմեդ Նուրի բեյերը համարվում էին անուղղակի մասնակիցներ:

Ապա դատախազը մեղադրանքը պաշտպանելուց հետո պահանջեց, որ Նազըմ բեյը դատվի որպես Մամուրեթ-ով Ազիզի տեղահանության կազմակերպիչ և իրականացնող, իսկ Ֆերիդ և Մեհմեդ Նուրի բեյերը՝ որպես անուղղակի մասնակիցներ:

Նախագահի հարցին ի պատասխան՝ Նուրի բեյը հայտնեց, որ ինքը եղել է լիազորված անձ, իսկ Ֆերիդ բեյը՝ ոչ: Ըստ Ֆերիդ բեյին դուրս տարան դակիթից, և սկսվեց Մեհմեդ Նուրի բեյի դատական հարցաքննությունը: Վերջինս, տրված հարցերին ի պատասխան, հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով.

«Ուղարկված քարավաններից 9 հոգու ոչնչացման մասին լուրեր ստանալուց հետո նախագահական համապատասխան միջոցներ ձեռնարկեց: Ավանի ներսում որևէ դեպք չի գրանցվել, տեղահանգածներն իրենց հետ են վերցրել շարժական գույքը, իսկ ոչ շարժական գույքը ենթարկվել է բռնագրավման՝ հատուկ հանձնաժողովներով»:

րի կողմից: Տեղահանության ողջ ընթացքում ես գտնվել եմ կենտրոնում և աշխատել, ըստ կարելվոյն, պաշտպանել հայերին. իմ ազարակում պատսպարված հայերը կարողացել են խուսափել տեղահանությունից: Տեղահանության մասին նախապես տրված հրամանը համընդհանուր բնույթ էր կրում: Ես եմ իրականացրել հայերի տեղահանությունը: Սուս են այն տեղեկությունները, թե իբր ես կանանց՝ ինձ ուղղված այն հարցին, թե «Մեր տղամարդկանց ու՞ր եք տանում», պատասխանել եմ. «Նրանք գնում են ուտելիք գնելու: Լքված հողատարածքները ես լցնելու եմ մեղուներով»: Տեղահանությունն իրականացվում էր քաղաքացիական վարչության կողմից»:

Այս ցուցմունքները տալուց հետո վերոհիշյալը դուրս տարվեց. բերվեց Ֆերիդ բեյը, որը հետևյալ կերպ պատասխանեց իրեն ուղղված հարցերին.

«326 թ. (1910) մինչև 335 թ. (1919) ես աշխատել եմ Մամուրեթ-ով Ազիզի հանրակրթական տեսչությունում: Տեղահանության ընթացքում իիվանդացել եմ դիզենտերիայով: Իմ ունեցած տեղեկությունների համաձայն՝ տեղահանվածների մի մասը գնացել է Դիարբեքիրի, իսկ մյուսը՝ Մալաթիայի ուղղությամբ: Ըստ ինձ հասած լուրերի՝ թե՛ Մալաթիա և թե՛ Դիարբեքիր տարված քարավաններից միայն մեկական քարավան է ենթարկվել չարագործությունների, սակայն համոզված չեմ այդ լուրերի հավաստիության մեջ, քանի որ ես կապ չեմ ունեցել: Առնչություն չունենալու հետևանքով պատճառների մասին գաղափար չունեմ:

325 թ. (1909) անդամագրվել եմ Միություն և առաջադիմություն կուակցությանը: Տարագրված հայերի գույքը կորստի չի մատնվել, քանի որ հայերը հրապարակավ վաճառել են իրենց իրերի մի մասը, իսկ մնացածը՝ թողել: Ճշմարտությանը չեն համապատասխա-

նում այն լուրերը, որոնց համաձայն՝ ես նախագահել եմ Տեղահանության գործերը կարգավորող հանձնաժողովը: Բնական եմ համարում, որ տեղահանությունը դեկավարվել է նահանգապետի կողմից, քանի որ այն կատարվում էր օրենքի շրջանակներում»:

Դատախազը, նախագահի հարցին ի պատասխան, հայտնեց, որ որևէ դիտողություն չունի, որից հետո նիստը դադարեցվեց: Այն շարունակվելու է շաբաթ օրը՝ ժամը 15:00-ին:

30-ը հուլիսի, 1919, «Ալեմդար»

Մամուրեթ-ով Ազիզի տեղահանության դատավարությունը
Ռազմական արտակարգ ատյանը երեկ՝ եվրոպական ժամով ժամը 15:00-ին, Զեքի փաշայի նախագահությամբ նիստ գումարելով, շարունակեց Մամուրեթ-ով Ազիզի տեղահանության դատավարությունը: Որպես դատախազ՝ մասնակցում էր Սուլիի բեյը:

Մեղադրյալների աթոռներին էին հանրակրթական նախկին տեսուչ Ֆերիդ և Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրի բեյերը: Հարցաքննվելու նպատակով դահլիճ հրավիրվեց վկաներից Հալիլ փաշան, որը հայտնեց, թե մեղադրյալներին ճանաչում է կալանատնեց, մեկ այլ վայրում չի հանդիպել և ոչ մի առնչություն չի ունեցել Մամուրեթ-ով Ազիզի հետ:

Այդ պահին դատախազ Սուլիի բեյը, խոսքի իրավունք ստանալով, ընդգծեց, որ Հալիլ փաշային անհրաժեշտ է հարցաքննել ոչ թե որպես Մամուրեթ-ով Ազիզի և Խարբերդի տեղահանության անմիջական մասնակից, այլ պետք է նրան հարցեր տալ Հատուկ կազմակերպության և տեղահանության ժամանակամիջոցի վերաբերյալ՝ ի

Ակատի առնելով նրա՝ նախկինում տված ցուցմութերը, որոնց շնորհիվ պարզել է, որ նա տիրապետում է տեղեկությունների:

Այնժամ նախագահ Զերի փաշայի տված հարցերին պատասխանելով՝ Հայի փաշան հանդես եկավ հետևյալ գուզմունքներով.

«Հատուկ կազմակերպությունը ստեղծվել էր Սյուվեյման Ասքերի բեր կողմից, իսկ [այդ հաստատության կազմավորումը] կատարվել էր Ենթերի հրամանով»:

Դատախազի պահանջով և նախագահի հարցին պատասխանելով՝ Հայի փաշան հայտնեց, որ կենտրոնական շտաբում իր գունվելու ընթացքում Ռեսնելի Նազըմ և Բեհանդրին Շաքիր թեյերը կապ չեն ունեցել Հատուկ կազմակերպության հետ։ Այդ ժամանակահատվածում տվյալ գործերով զբաղվել են միայն դոկտոր Նազըմ և Արիֆ թեյերը։ Այս ցուցմունքները տալուց հետո Հայի փաշան դուրս եկավ դահլիճից։

Այնուինեւու վկաներից հարցաքննվեց Վանի նախկին նահանգապետ Թահսին բեյը, որը վկայեց, որ տեղահանության ժամանակ ինքը գտնվել է Էրզրումում, տեղահանությունը կատարվել է կառավարության հրամանով. քանի որ Դիարբեքիրի ժանապարհը վատն էր, Խարբերդից ուղարկվող քարավանները տարվել են Մալաթիայի ուղղությամբ: Թահսին բեյը նաև հայտնեց, որ Դիարբեքիրի ուղղությամբ ուղարկվածները Դերսիմի շրջանում մեծ մասամբ հարձակման են ենթարկվել, և որ այդ քարավանների վրա գրոհած անձինք ծերրակալվել են, դատվել ու ազմական ատյաններում ու դեռ այն ժամանակ դատապարտվել հինգ տարվա ազատազրկման: Վկան Շեց, որ Հատուկ կազմակերպության ղեկավարների շրջանում լավ ոստիկաններ էլ են եղել, այդ կազմակերպության պարտականությունների մեջ առաջին հերթին մտնում էին ու ազմական խնդիրները, Բեհաեղին Շա-

թիրը թե՛ Բարձր Դուն և թե՛ Ռազմական նախարարության հետ կապելու համար տիրապետում էր Երկու գաղտնագրի:

Ապա հարցաքննվեց գնդապետ Հասան Թոսուն բեյը, որը հայտնեց, թե մեղադրյալներին չի ծանաչում, տեղեկություններ չունի, թե ինչու է ստեղծվել և որտեղ է գտնվել Հատուկ կազմակերպությունը, որովհետև շփումներ չի ունեցել: Արևելյան գործերի ղեկավարությունը միջոցներ էր տրամադրում Աֆղանստան, Հնդկաստան և Իրան մեկնողներին, նաև խնամում էր տեղի բնակիչներին:

Նիստն ավարտվեց. շարունակվելու է երեքշաբթի օրը՝ ժամը
15:00-ին:

3-ը օպստոսի, 1919, «Ալեմդար»
-դժվակամ նախաղովմիր մզմզ ցնի
-մնդոյանամ սմբ զցոր դոխամումաք ոչ ծաշախտագ և ոչ ծանչուր
թամսեած նայումափառու ոսն և ուսա մեծ նյուունասոց ցնի

Մամուլեթ-ու Ազիգի տեղահանության դատավարությունը

Ռազմական արտակարգ ատյանը երեկ՝ ժամը 15:30-ին, դատարանի նախագահ Զեքի փաշայի նախագահությամբ շարունակեց Մամուլեթ-ով Ազիզի տեղահանության դատաքննությունը։ Դատախազի պաշտոնում էր Սույնի բեյը։ Մեղադրյալի աթոռին էին հանրակրթական տեսուչ Ֆերիդը և Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրին։ Նախ դատարան հրավիրվեց կայմակամ Հյուսամեղրին բեյը, որը երդվելուց հետո իրեն ուղղված հարցերին տվեց հետևյալ պատասխանները. ինքը եղել է թե՛ Հատուկ կազմակերպության անդամ և թե՛ տվյալ կազմակերպության լուծարումից հետո լուծարմանը լիազորված անձ։ Հատուկ կազմակերպության մեջ եղել է մի հանճնաժողով, որը նպատակ է ունեցել ապահովել իսլամական հաղորդակցումը։ Այդ խնդիրներով գրադվել են Սովեյման Ասքերի բեյն ու քաղաքի պա-

թետ Հայիլ բեյը, հետագայում՝ Ձևադ բեյը: Նա նշեց նաև, որ Հատուկ կազմակերպությունը հետագայում վերածվել է Արևելյան գործերի վարչության: Ըստ նրա՝ Հատուկ կազմակերպության հիմնադրման սկզբում, այսինքն՝ Ասքերի և Հայիլ բեյերի ժամանակ (Վերջիններս ներկայում ստացել են փաշայի կոչում) Աթըֆ, Նազըմ, Բեհաեղին Շաքիր ու Ռոզա բեյերը, որպես քաղաքացիական անձ, գտնվել են Հատուկ կազմակերպության կազմի մեջ, սակայն այդ քաղաքացիականները գրադարձել են ոչ թե գինվորական գործերով, այլ՝ գինվորական գործերը թերևացնող այլ խնդիրներով: Նա նշեց, թե իր կարծիքով Բեհաեղին Շաքիր բեյը պատերազմի սկզբում եղել է Արդահանի կողմերը գրոհող կամավոր զորամասի հրամանատարը, որովհետև Հատուկ կազմակերպությունը գրեթե գինվորական կազմակերպություն էր և բաղկացած էր կանոնավոր գործի պես կամավորներից: Հյուսամեղրին բեյն ասաց, թե ինքը տեղահանության ժամանակ եղել է Ստամբուլում և գրադարձել իրեն հանձնարարված պարտականությունների կատարմամբ:

Կայմակամ Հյուսամեղին թեյն այս ամենն ասելուց հետո դրիս տարվեց դահլիճից:

Այնուհետև վկաներից դատարան հրավիրվեց գնդապետ Նուստիկի թերը, որը հայտնեց, թե չի ճանաչում մեղադրյալներին և տեղահանության ընթացքում եղել է ոչ թե Մամուրեթ-ով Ազիզում, այլ՝ Բիթլիսում: Վկան Բիթլիսի տեղահանության մասին որոշ ցուցմունքներ տալուց հետո նշեց, որ տեղահանության ժամանակ կատարված կոտորածին տեղիք է տվել բինբաշի (մայոր) Ֆայիք թերը: Ապա դատախազի պահանջով Նուստիկի թերն սկսեց պարզաբանումներ անել և հայտնեց, թե ըստ իրեն հասած տեղեկությունների՝ բինբաշի Ֆայիք թերն այն ժամանակ դատվել է Մամուրեթ-ով Ազիզի ուզմական ատյանի կողմից և արդարացվել, իսկ Բիթլիսի փոխնահանգապետ և վիճակ հաստացնելու մասին նույնագույն գործությունը առաջարկվել է այս ժամանակ մասնաւոր առողջության համար:

լայեթի վարչության դիվանատան դեկանվար Մուստաֆա Վասըֆ բեյը
եռեւ է մի շատ ծովով ու շահամոլ անձնավորություն:

Այնուհետև դատապաշտպան Յորդաքի էֆենդին, խոսքի իրավունք ստանալով, ասաց.

-Արդեն երկու հիստ է, ինչ վկաները հարցաբնվում են այս դատական հայցի էության հետ կապ չունեցող հարցերի առնչությամբ: Ըստ էության՝ դատախազությունն էլ է այդ կարծիքին:

Նախագահը պատասխանեց

-Ըստ էության՝ մենք էլ ենք կիսում Ձեր կարծիքը: Դատը կշառունակենք իհնացարքի օրը՝ ժամը 15-ին:

1. անյառի վերոնշյալ խոսքերից հետո Ծիստն ավարտվեց:

8-ր օգոստոսի, 1919 թ., «Ալեմդար»

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արևիվային փաստաթղթերի հրապարակումներ

Գրքեր

1. Bardakçı M., Talât Paşa'nın Evrak-ı Metrukesi, Everest Yayımları, 2009.
2. Dadrian V. N., Akçam T., "Tehcir ve Taktıl", Divan-ı Harb-i Örfi Zabitları, İttihat ve Terakki'nin Yargılanması 1919-1922, İstanbul, 2008.
3. Kocahanoğlu O. S., İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), İstanbul, 1988.
4. Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Ankara, 1994.
5. Yeghiyan V., Malta Belgeleri, İngiltere Dışişleri Bakanlığı "Türk Savaş Suçları" Dosyası, Belge Yayımları, 2007.
6. Փափազեան Ա.Հ., Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտրութերի դատավարութեան փաստաթղթերի, Լու Անձելես, 2005:
7. Խեցւան Մ.Ռ., Սաական Պ.Ռ., Գеноцид Армян в Османской Империи, Ереван, 1982.

Ժամանակակիցների աշխատություններ

Գրքեր

8. Atay F. R., Zeytindağı, İstanbul, 1981.
9. Çavdar T., Talât Paşa, Bir Örgüt Ustasının Yaşamöyküsü, 4. Baskı, İmge Kitabevi, 2001.
10. Ertürk H., İki Devrin Perde Arkası, İstanbul, 1996.
11. Halil Paşa, İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş, Derleyen: Taylan Sorgun, Kamer Yayımları, İstanbul, 1997.
12. İttihat ve Terakki İçinde Dönener, Anlatan: Galip Vardar, Yazan: Samih Nafiz Tansu, İstanbul, Yeni Zamanlar Yayımları, 2003.

13. İttihat ve Terakki'nin Kurucu Üyelerinden Dr. Reşid Bey'in Hatıraları, "Sürgünden İntihara", Yayıma Hazırlayan: Ahmet Mehmetefendioğlu, İstanbul, Arba Yayımları, 1993.
14. Nadi Y., Kurtuluş Savaşı Anıları, İstanbul, 1978.
15. Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, Yay. Haz. İsmail Arar, Hürriyet Vakfı Yayımları, İstanbul, 1986.
16. Refik A. (Altunay), İki Komite, İki Kıtal, İstanbul, 1919.
17. Refik A., Kafkas Yollarında. İki Komite İki Kıtal, Temel Yayınları, İstanbul, 1998.
18. Şükrü M. (Bleda), İmparatorluğun Çöküşü, Remzi Kitabevi, İstanbul, 1979.
19. Talât Paşa'nın Hatıraları, H. Yalçın'ın Önsözüyle, İstanbul, 1958.
20. Անոնցյան Ա., Մեծ ոժիքը, Պուռըն, 1921:
21. Ակունի Խ., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, 1920:
22. Ամօք Հ., Տեղահանություն և ոչնչացում (Տեղահանության իրական պատկերը), օսմաներենից թարգմանությունը, Մերածական ու ծանոթությունները՝ Ա.Գ. Ավագյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2007:
23. Ллойд Джордж, Правда о мирных договорах, том второй, Москва, 1957.
24. Herbert A., Ben Kendim. A Record of Eastern Travel, London, 1924.

Հոդվածներ

25. Cevad R., Arabanın Beygirleri Nasıl İmiş?, "Alemdar", 20 Şubat 1919.
26. Cevad R., Bir Müdafaa Karşısında..., "Alemdar", 9 Nisan 1919.
27. Cevad R., Tehcir ve Taktıl Muhakemeleri, "Alemdar", 28 Mart 1919.
28. Cevad R., Tehcir ve Taktıl Münasebetiyle, "Alemdar" 14 Şubat 1919.
29. Cevad R., Ne Diyoruz, Ne İştiyoruz, "Alemdar", 10 Nisan 1919.
30. Kadri A., Divan-ı Harb-i Reisi Nazım Paşa Hazretlerine Açık Mektup, "Alemdar", 25 Nisan 1919.

Ժամանակի մամուլ

31. Alemdar, 1919.
32. Memleket, 1919.
33. Takvim-i Vekayi, 1919-1920.

34. Tasvir-i Efkâr, 1919.

35. Peyâm-i Sabah, 1920.

36. Ժողովորդ, 1919:

37. Ժողովորդի ծայնը, 1919:

ՀՅՈՒՍՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքեր

38. Akçam T., Ermeni Tabusu Aralarınırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, İstanbul, 2002.
39. Akçam T., İnsan Hakları ve Ermeni Sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İstanbul, 2002.
40. Akçam T., Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, Su Yayıncılık, 2001.
41. Akşin S., İstanbul Hükümetleri ve Millî Mucadele, İstanbul, 1983.
42. Ata F., İsgal İstanbul'unda Tehcir Yargılamları, Ankara, 2005.
43. Avcıoğlu D., Millî Kurtuluş Tarihi 1835den-1995e, 1. Cilt, İstanbul, 1996.
44. Bayur H. Y., Türk İnkilâbı Tarihi, Cilt 1, Giriş: Berlin Muahedesinden Trablus-Garp Savaşına Kadar, Maarif Matbaası, İstanbul, 1940.
45. Bilgi N., Ermeni Tehciri ve Boğazlıyan Kaymakamı Mehmed Kemal Bey'in Yargılanması, Ankara, 1999.
46. Dadrian V. N., Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosid, Belge Yayımları, 1995.
47. Günel G., İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, Belge Yayınları, İstanbul, 2006.
48. Saruhan Z., Kurtuluş Savaşı Günlüğü, I. Cilt, Mondros'tan Erzurum Kongresi'ne (30 Ekim 1918-22 Temmuz 1919), Öğretmen Yayınları, 1982.
49. Selek S., Anadolu İhtilali, Cilt 1, İstanbul, 2000.
50. Sorgun T., Mütareke Dönemi ve Bekiraga Bölüğü, Kamer Yayınları, İstanbul, 1998.
51. Şimşir B., Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985.
52. Tunaya T. Z., Türkiye'de Siyasal Partiler, Cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000.
53. Գրիկեր, Եղղատի հայասպանութեան վաերագրական պատմութիմը, Նի Եղբ, 1980:
54. Կիրակոսյան Զ. Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967:

55. Կիրակոսյան Զ.Ս., Երիտրութերը պատմության դատաստանի առաջ հասոր Երկրորդ, Երևան, 1983:
56. Ղազարեան Գ. Հայկազն, Ցեղասպան թուրք, Պէյրութ, 1968:
57. Պողոսյան Ս. Կ., Գոյատևման պայքարի բառույթներում, Երևան, 1988:
58. Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990:
59. Սաֆրաստյան Ռ.Ա., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնարանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:
60. Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիմը խորհրդարանային եւ պատմագիտական ըննարկումներով, տպ. «Պայքար», 1995.
61. Ավագյան Ա., Գеноциդ 1915 թ., Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999.
62. Ավագյան, Черкесский фактор в Османской империи и Турции, (вторая половина XIX-первая четверть XX вв.), Ереван, из. "Гитутюн", 2001.
63. Шамсутдинов А.М., Национально-освободительная борьба в Турции 1918-1923, Москва, 1966.
64. Zürcher E. J., The Unionist Factor. The Role of Committee of Union and Progress in Turkish National Movement 1906-1926, Leiden, 1984.
65. Dadrian V., Histoire du Génocide Arménien, Stock, 1996.
66. Garzou J.-M., Un Génocide Exemplaire: Arménie 1915, Paris, 1975.

Հողվածներ

67. Hür A., Malta Sürgünleri'ni Nasıl Bilirsiniz, "Taraflar", 28 Şubat 2010.
68. Hür A., Taşnak arşivini bırak, Osmanlı arşivine bak, "Taraflar" Gazetesi, 25.05.2008.
69. Անումյան Ս.Վ., Մեծ Եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում, «Քանրեր Հայաստանի արխիվների», N 1 (107), Երևան, 2006:
70. Անումյան Ս.Վ., Յոզդատի և Տրափիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարությունները ըստ «Ալեմդար» օրաթերթի, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 9, Երևան, 2004:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան 3
Ներածություն 11

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄՈԴԵՐՆԻ ԶԻՆԱԿԵՐԻ ԿՆՅՈՒՆԵ ՀԵՏ ԶԱՂԱՐԿԱՆ
ՄԹԱԼՈՐԾ ԹՈՒՐԳԻՎՅՈՒՄ ԵԿ ՀԱՅՑ
ԶԵՐԱՊԱԼՈՅԹԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԵՐԻ
ԴԵՐ ԻՐԿԱԿԱՆՑՎԱԾ ՀԵՏԱԲՆԱԼՈՅԹՈՒՆԵՐԸ 22

1. Մուղոսի գինադադարի Կնքումից հետո քաղաքական մբնոլորտը թուրքիայում	22
2. Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ հրավանագված հետաքրնությունները	45

ԳՈՒԽԱ ԵՐԿՐՈՅԴ

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾԵՐԻ
ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԽԹԹԵՎԱԴԱԿԱՆՆԵՐԻ
ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ ԵՎ ԴՐԱ
ԽԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԼԻԳՔԻԱՅՈՒՄ ԾԱԿԱՎՈՂ
ՔԵՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՉԱՐՈՒՄ 63

1. Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունը (1919 թ. ապրիլ-մայիս ամիսներ).....	63
2. Պատերազմի տարիներին կառավարած երիտթուրքական վարչակազմերի անդամների դատավարությունը (1919 թ. հունիս-հուլիս ամիսներ)	88
3. Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարությունը.....	96
4. Հայերի տեղահանության ու կոտորածների դատավարություններն ըստ շրջանների. առանձին	

անհատների դատաքննություններ	104
ՕՍՍԱՆՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՅԱՆՆԵՐՈՒՄ	
Կազմական ՀԱՅՈՑ ՏԵՂԱՎԱՆԻԹՅԱՆ ԵՒ	
ԿՈՏՈՐԱՅՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ	
ԸՆ «ԱԼԵՄԴՐ» ՕՐԱԹԵՐՁԻ	141

Յողատի տեղահանության ու կոտորածների դատական Ծիստերը.....	143
Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատական Ծիստերը.....	202
Բյույուք Հերեի տեղահանության և կոտորածների դատական Ծիստերը.....	264
Խարբերդի տեղահանության և կոտորածների դատական Ծիստերը.....	274
Օգտագործված սկզբնադրյուրների և գրականություն	282

ԱՐԵՎԱՏԱԿԱՅՈՑ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՀՐՈՒԹՅԱՆ ԿԵԼՏՐՈՆ
ԳԻՏՈՒՅՆՈՒԹՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Էլ. փոստ info@akunq.net

Էլ. կայք www.akunq.net/am/, www.akunq.net/tr/

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ

ԵՐԻՍԹՈՒՐՔԵՐԻ 1919-1921 թթ. ԴԱՏՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ԸՆՏ ՕՍՄԱՆՅԱՆ ՄԱՍԻՆ

ມະຫາວຸນຍາວ

2

Գեղարվեստական խմբագիր՝ Ա. Օհանջանյան
Համակարգչային ծևավորումը՝ Ն. Գևորգյանի
Սոբագրիչ՝ Ա. Քարտաշյան

Տպաքանակ 1000 օրինակ :
Տպագոված է «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» հրատարակչության տպարանում



914A.925
F-2A-64

۱۰۴

شامد — هل مان بی طایفم .
زیس باشانت هه هل مان نه خندهای
حسیاکن بودن هارزدره ؟ سوآله شامد هل
مان نکن من کیمیزه معاونتنه و لیعنی
بندون اهکا کنن موگره به استفاده
اویس و میم یلدیزکن سیان اموزرک
بر ساخت استخاندن موگره تکرار
لودره اون ایکیده بلسه به خانم

• 100 •

مکتبہ مدرسہ دارالعلوم راں احمدیہ
رائے وارثہ نسیم احمدیہ

مکہ

لکھاں میں اپنے دوستی کے
لئے بھائی تھے